

# ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 2, No 1, 2014



**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
2(1)**

**Յեղասպանագիտական հանդես 2(1), 2014**

Journal of Genocide Studies

Журнал исследований геноцида

Լույս է տեսնում 2013 թվականից

2(1), 2014

*Խմբագրական խորհուրդ*

Հայկ Դեմոյան, պ. գ. դ. (գլխ. խմբագիր)  
Սուրեն Մանուկյան, պ. գ. թ.  
(գլխ. խմբագրի տեղակալ)  
Արսեն Ավագյան, պ. գ. դ.  
Լևոն Աբրահամյան, պ. գ. դ.  
Հարություն Մարության, պ. գ. դ.  
Ռուբեն Սաֆրաստյան, պ. գ. դ.

Վալերի Թունյան, պ. գ. դ.  
Վարուժան Պողոսյան, պ. գ. դ.  
Թեհմինե Մարտոյան, պ. գ. թ.  
Գևորգ Վարդանյան, պ. գ. թ.  
Մելինե Անումյան, պ. գ. թ.  
Անահիտ Խոսրոնա, պ. գ. թ.  
Նարինե Մարգարյան, պ. գ. թ.

Յեղասպանագիտական հանդես, Երևան:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ. հրատ., 2014. - 160 էջ

Հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ

Հրատարակիչ՝ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Հասցեն՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Երևան, 0028

Հեռ.՝ (+374 10) 39 09 81, էլ. հասցեն՝ [handes@genocide-museum.am](mailto:handes@genocide-museum.am)

Յեղասպանագիտական հանդես, 2014

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### Հայկ Դեմոյան

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման հայեցակարգային մոտեցումների շուրջ.....9

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

### Պատմություն

#### Սեդա Պարսամյան

Հայկական մշակութային արժեքների ոչնչացումն ու դրա հետևանքները 1894-1896թթ. համիդյան կոտորածների տարիներին..... 18

#### Ռոբերտ Թաթոյան

Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին (աղբյուրների համեմատական վերլուծության փորձ) .....31

#### Անի Ոսկանյան

Հայերն օսմանյան բանակում. զորակոչ, զինաթափում, ոչնչացում.....58

#### Գևորգ Վարդանյան

Հայոց ցեղասպանության ժխտման պատմությունից. թուրքական մի վաղ հրատարակության քննական դիտարկում .....67

#### Գոհար Խանումյան

Պատերազմ, ցեղասպանություն և տարահանում. 1922թ. Յակոբ Բյունցլերի կողմից հայ որբերի տարահանումն Օսմանյան կայսրությունից ..... 78

#### Լուսինե Աբրահամյան

Ավստրալիայի ցուցաբերած մարդասիրական օգնությունը հայ գաղթականներին և որբերին 1915-1930թթ. ....87

#### Հայկ Մարտիրոսյան

Օսմանյան կայսրությունում «Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient» («Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության») միախոնրեական կայանների գործունեության դադարեցման դրդապատճառներն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո.....94

## **Սոցիոլոգիա և հոգեբանություն**

### **Սուրեն Մանուկյան**

*Դաժանության ռացիոնալացումը Հայոց ցեղասպանության տարիներին..... 104*

### **Հասմիկ Գրիգորյան**

*Հայոց ցեղասպանության «շարքային» իրականացնողները. երեխաների հանցագործությունների գործառնությանին առանձնահատկությունները ..... 111*

## **Իրավունք**

### **Էդիտա Գզոյան**

*Ցեղասպանության ժխտումը՝ որպես ռասիզմի դրսևորում. մոտեցումները միջազգային իրավունքում ..... 122*

## **Թանգարանագիտություն**

### **Խաչատուր Կոբեկյան**

*Թանգարանային առարկան՝ որպես ցեղասպանության հիշողությունը վերականգնող միավոր..... 128*

## **Լեզվաբանություն**

### **Սոնա Հակոբյան**

*Ամերիկյան քաղաքական խոսույթում ներկայացված Հայոց ցեղասպանության իմաստաբանական վերլուծություն..... 135*

## **Հաղորդումներ**

### **Մելինե Անումյան**

*Ծպտյալ և իսլամացած հայերի հարցի արծարծումը ժամանակակից թուրքական մամուլում..... 145*

### **Ինեսա Ստեփանյան**

*Արևմտահայության՝ 1895-1896թթ. զանգվածային կոտորածների արտացոլումը ֆրանսիական «Chocolaterie d'Aiguebelle» ընկերության գովազդային բացիկներում ..... 153*

## CONTENT

### EDITORIAL

#### **Hayk Demoyan**

|                                                                                                                            |          |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------|
| <i>On the Conceptual Approaches to the Organization of Events Dedicated to the Centenary of the Armenian Genocide.....</i> | <i>9</i> |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------|

### ARTICLES

#### **History**

#### **Seda Parsamyan**

|                                                                                                                      |           |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <i>Destruction of Armenian Cultural Property during the Hamidian Massacres (1894-1896) and Its Consequences.....</i> | <i>18</i> |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|

#### **Robert Tatoyan**

|                                                                                                                                                                                  |           |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <i>The Number of Armenian Population of the Erzurum Province of the Ottoman Empire on the Eve of the Armenian Genocide (An Attempt at Comparative Analysis of Sources) .....</i> | <i>31</i> |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|

#### **Ani Voskanyan**

|                                                                                    |           |
|------------------------------------------------------------------------------------|-----------|
| <i>Armenians in the Ottoman Army: Mobilization, Disarmament, Elimination .....</i> | <i>58</i> |
|------------------------------------------------------------------------------------|-----------|

#### **Gevorg Vardanyan**

|                                                                                                                |           |
|----------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <i>From the History of the Armenian Genocide Denial: Critical Review of an Early Turkish publication .....</i> | <i>67</i> |
|----------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|

#### **Gohar Khanumyan**

|                                                                                                                            |           |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <i>War, Genocide, Evacuation. The Evacuation of Armenian Orphans from the Ottoman Empire in 1922 by Jacob Kunzler.....</i> | <i>78</i> |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|

#### **Lousine Abrahamyan**

|                                                                                              |           |
|----------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <i>Australia's Relief Activities to the Armenian Refugees and Orphans in 1915-1930 .....</i> | <i>87</i> |
|----------------------------------------------------------------------------------------------|-----------|

#### **Hayk Martirosyan**

|                                                                                                                                                                                                                                                             |           |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <i>The Causes of the Termination of “Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient” (“German Society for Aid in Christian Charity Work in the Orient”) Missionary Stations’ Activities in the Ottoman Empire during and after the WWI .....</i> | <i>94</i> |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|

## **Sociology and Psychology**

**Suren Manukyan**

*Rationalization of Cruelty during the Armenian Genocide* .....104

**Hasmik Grigoryan**

*The Ordinary Executors of the Armenian Genocide: Functional Peculiarities of Perpetrator Children's Participation*..... 111

## **Law**

**Edita Gzoyan**

*Genocide Denial as a Form of Racism: Approaches in International Law* .....122

## **Museum Art**

**Khachatur Kobelyan**

*Museum Exhibit Items as Units of Genocide Memory Rebirth*.....128

## **Linguistics**

**Sona Hakobyan**

*The Semantic Analyses of Armenian Genocide in the American Political Discourse* .....135

## **REPORTS**

**Meline Anumyan**

*Crypto and Islamized Armenians' Issues in Modern Turkish Media* .....145

**Inessa Stepanyan**

*The Reflection of the 1895-1896 Armenian Massacres in the French “Chocolaterie d'Aiguebelle” Company Postcards* .....153

## СОДЕРЖАНИЕ

### РЕДАКЦИОННАЯ СТАТЬЯ

#### Гайк Демоян

*О концептуальных подходах организации мероприятий, посвящённых 100-летней годовщине Геноцида армян* .....9

### СТАТЬИ

#### История

#### Седа Парсамян

*Уничтожение армянских культурных ценностей в годы абдугамидовской резни (1894-1896 гг.) и его последствия* .....18

#### Роберт Татоян

*Численность армянского населения Эрзрумского вилайета Османской империи в преддверии Геноцида армян (попытка сравнительного анализа источников)* ..... 31

#### Ани Восканян

*Армяне в османской армии: мобилизация, разоружение и уничтожение* .....58

#### Геворг Варданян

*Из истории отрицания Геноцида армян: критическое рассмотрение одной ранней турецкой публикации* .....67

#### Гоар Ханумян

*Война, геноцид, эвакуация: эвакуация армянских сирот из Османской империи в 1922 году усилиями Якоба Кюнцлера* .....78

#### Лусине Абрамян

*Гуманитарная помощь армянским беженцам и сиротам, оказанная Австралией в 1915-1930 гг.* .....87

#### Гайк Мартиросян

*Причины прекращения деятельности миссионерских станций “Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient” (“Союза немецкой помощи христианской благотворительности на Востоке”) в Османской империи во время и после Первой мировой войны* .....94



## Социология и психология

**Сурен Манукян**

*Рационализация жестокости в годы Геноцида армян .....104*

**Асмик Григорян**

*"Рядовые" исполнители геноцида армян: функциональные особенности детских преступлений.....111*

## Право

**Эдита Гзоян**

*Отрицание Геноцида как форма расизма: международно-правовые подходы....122*

## Музейное дело

**Хачатур Кобелян**

*Музейный предмет как восстанавливающая единица памяти геноцида .....128*

## Лингвистика

**Сона Акопян**

*Семантический анализ Геноцида армян, в американском политическом дискурсе.....135*

## Сообщения

**Мелине Анумян**

*Обсуждение вопроса крипто и исламизированных армян в современной турецкой прессе .....145*

**Инецца Степанян**

*Отражение сцен массовых истреблений западных армян 1895-1896 гг. в открытках французской компании "Chocolaterie d'Aiguebelle" .....153*

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

*Հայկ Դեմոյան*

Հայոց ցեղասպանությունը և նրա հետևանքները հայ ինքնության և հիշողության համար ազգային ողբերգության, կորստի, բայց նաև մաքառման, ազգային վերածննդի ու կյանքի շարունակականության անբեկանելի բաղադրիչներն են դարձել: Այս տեսակետից պետք է արձանագրենք, որ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը կոչված է իրականացնելու կարևոր ու պատմական առաքելություն՝ Հայոց ցեղասպանության տարելիցի առթիվ նախատեսված հիշատակի ու ոգեկոչման միջոցառումների պատշաճ կազմակերպում, ազգային միասնականության ու համախմբման և ցեղասպանության հետևանքների վերացման հարցում ընդհանուր մոտեցումների ապահովում:

Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում, ԼՂՀ-ում և արտերկրում անցկացվելիք ոգեկոչման ու հիշատակի միջոցառումները պետք է նպաստեն Հայոց ցեղասպանության մասին միջազգային իրազեկման բարձրացմանը, իսկ այս ամենի՝ միասնական ջանքերով կազմակերպումը պետք է ծանրակշիռ ներդրում դառնա Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման, համահայկական շահի ու տեսլականի ձևավորման գործում: Այս համագործակցությունը, համոզված ենք, կխթանի նաև ցեղասպանության հետևանքների վերացման ուղղությամբ տարվող պայքարի ու պատասխանատվության հետ կապված ընդհանուր հիմնավորումների ու հստակ օրակարգի ձևակերպումը:

**Հայեցակարգային մոտեցումներ միջոցառումների  
անցկացման շուրջ**

Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցի կապակցությամբ անցկացվելիք բազմաթիվ միջոցառումներն ունենալու են թե՛ տեղական և թե՛ միջազգային նշանակություն ու հնչեղություն, հետևաբար պետք է խարսխվեն կուռ հայեցակարգային մոտեցումների վրա՝ ըստ այդմ ունենալով հստակ ուղերձներ, թիրախ լսարաններ և ակնկալվող արդյունքների տեսլական: Այս տեսակետից կարևոր են Հայոց ցեղասպանության թեման, նրա դասերն ու հետևանքները համաշխարհային ու տվյալ երկրի պատմության ու հիշողության համատեքստում ներկայացնելն ու մեկնաբանելը:

Պետական հանձնաժողովի համար կարևոր խնդիրներ պետք է դառնան Հայոց ցեղասպանության հետևանքների ու դրանց վերացման շուրջ հայեցակարգային հիմնավորումների, միջազգային հանրահռչակման ու հայկական կողմի ձևակերպումների հստակեցումը, ինչպես նաև հիշատակի ու ոգեկոչման արարողությունները տարբեր լսարաններին նոր մոտեցումներով, ընկալելի միջոցներով ու եղանակներով ներկայացնելը:

Այս առումով խիստ կարևոր ենք համարում կազմակերպվելիք միջոցառումներն ինքնանպատակ, հատվածային և հնացած արտահայտչաձևերից զերծ պահելը, փոխարենը հնարավորինս հիմնավոր ու համոզիչ ներկայացնելը Հայոց ցեղասպանության պատմական փաստն ու դրա հետևանքների վերացման անհրաժեշտությունը, այդ թվում՝ միջազգային իրավունքի տեսանկյունից:

## **Թանգարանային մշտական ցուցադրություններ**

Հայոց ցեղասպանության թեմայով մշտական հիմունքներով գործող թանգարանային ցուցադրությունների կազմակերպումը կարևոր նշանակություն ունի ծրագրվելիք միջոցառումների շարքում, քանզի Հայոց ցեղասպանության թեմայով այսպիսի ցուցադրությունների կազմակերպումը և թեմային առնչվող տեսողական նյութի մատուցումը նպաստելու են Հայոց ցեղասպանության մասին լիարժեք ու անընդհատ տեղեկություններ հաղորդելուն, հատկապես օտար լսարանի համար: Այսպիսի թանգարանների ցանցի կազմակերպումը մեծապես կնպաստի նաև Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ միջազգային իրազեկման բարձրացմանը և կրթադաստիարակչական կարևորագույն խնդիրների լուծմանը:

## **Ժամանակավոր ցուցադրություններ**

Ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպումը նպաստավոր ու շահեկան է դարձնելու Հայոց ցեղասպանության թեմայով տարաբնույթ ցուցադրությունների կազմակերպումը և հայկական ու միջազգային լսարաններին Մեծ եղեռնին առնչվող նորահայտ նյութերի մատուցումը: Գիտական նորույթ պարունակող և թանգարանային ցուցադրությունների ժամանակակից տեխնոլոգիաներով ու ցուցադրական նոր արտահայտչաձևերով բազմախորագիր ու բազմալեզու ցուցադրությունների միաժամանակյա կազմակերպումը աշխարհի տարբեր անկյուններում էապես կարող է նպաստել Հայոց ցեղասպանության միջազգային և տեղական լսարանների շրջանում գիտելիքների շեշտակի աճին: Չափազանց կարևոր է նմանատիպ ցուցադրությունների կազմակերպման ընթացքում տեղական արխիվային նյութերի ու հայ համայնքների տրամադրության տակ եղած բնօրինակ նյութերի ներմուծումը:

## **Գիտական ուսումնասիրություն և մասնագետների պատրաստումը**

Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրվածությունը և գիտական-փաստագրական մակարդակը բավարար հիմքեր են ստեղծել թեմայի միջազգային հանրահռչակման ու ժխտողականության դեմ պայքարելու համար: Այդուհանդերձ թեմայի շուրջ տակավին գոյություն ունեն չուսումնասիրված ոլորտներ և ուղղություններ, որոնք դեռ սպասում են իրենց հետազոտողին: Տակավին բաց է մնում ցեղասպանության հոգեբանական դրդապատճառների ու հետևանքների ուսումնասիրությունը: Դեռևս լիովին չըջանառության մեջ չեն դրվել Թուրքիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Վատիկանի և այլ երկրների, ինչպես նաև բազմաթիվ անհատական արխիվային նյութերը, որոնք, անշուշտ, կնպաստեն խնդրի շուրջ լիարժեք գիտելիքների ու փաստերի կուտակմանը և դրանց ներկայացմանը լայն լսարանին:

Այս համատեքստում կարևոր ենք համարում մասնագետների պատրաստման հարցը և գիտական սերնդափոխության ապահովման անհրաժեշտությունը: Այսօր արդեն հրատապ խնդիր է ՀՀ բուհական համակարգում մասնագիտական ամբիոնների ստեղծումը, որտեղ հնարավոր կլինի պատրաստել ցեղասպանագետներ, օսմանագետներ և այս ոլորտին առնչվող այլ մասնագետներ:

Մյուս կողմից պակաս կարևոր չէ օտարազգի մասնագետներ պատրաստելը՝ տարբեր դրամաշնորհների ու կրթական ծրագրերի, ամառային դպրոցների ու սեմինարների միջոցով ուսումնասիրություններ իրականացնելու հնարավորություն ընձեռնելով նրանց տեղերում կամ Հայաստանի Հանրապետության արխիվային ու թանգարանային նյութերի հիման վրա: Գիտնականների համախմբման և գիտական նորույթի քննարկման համար կարևորում ենք «Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների միջազգային ընկերակցության» ստեղծումը, որը կնպաստի այս ոլորտի մասնագետների սերտ համագործակցությանը և գիտական նորույթի արագ շրջանառությանը:

## **Գրահրատարակչություն**

Մոտակա տարիների ընթացքում Հայոց ցեղասպանության թեմայով հրատարակվելու են տասնյակ հատորներ: Ցանկալի է այս կարգի աշխատանքների շուրջ մշակել հստակ հայեցակարգ և մոտեցումներ՝ ռեսուրսների ավելորդ վատնումից խուսափելու համար: Հատկապես կարևորում ենք հազվագյուտ սկզբնաղբյուրային գրականության թարգմանության, վերահրատարակման, նոր ուսումնասիրությունների տպագրության, ինչպես նաև Հայոց ցեղասպանության թեմայով բազմալեզու էլեկտրոնային և տպագիր հանրագիտաբանների ու շտեմարանների պատրաստումը:

## **Թեմատիկ միջազգային գիտաժողովների անցկացում**

Գիտաժողովների անցկացումը հետևյալ հիմնական միտումն ունի՝ Հայոց ցեղասպանությունը ներկայացնել որպես համաշխարհային պատմության ու հիշողության մաս, նպաստել ցեղասպանության հետևանքների վերացման հարցում թուրքական պետության պատասխանատվության ու դրա իրավական հիմնավորումների ձևակերպմանը, ինչպես նաև հնարավորություն ընձեռել մասնագետ-ցեղասպանագետների շփումների համար: Այս տեսանկյունից հատկապես կարևոր ենք համարում 2015թ. Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության 12-րդ համաժողովի անցկացումը Երևանում հարյուրավոր ցեղասպանագետ-գիտնականների ու երիտասարդ գիտաշխատողների մասնակցությամբ, որը Հայաստանի Հանրապետությունում Հայոց ցեղասպանության հարյուրամյակի կապակցությամբ անցկացվելիք ծրագրերի մասն է կազմելու:

## **Տիպաբանական և ոգեկոչման արարողությունների կազմակերպում**

Բազմաբնույթ միջոցառումների թվում հատկապես կարևորում ենք մարդասիրական օգնության և Եղեռնը վերապրած հայերին օգնություն ցուցաբերած անձանց ու նրանց ժառանգների մեծարմանը նվիրված միջոցառումների կազմակերպումը: Ցեղասպանությանն առնչվող վայրերի ամրակայումը և հուշարձանների տեղադրումը ամենևին էլ ինքնանպատակ չեն լինելու և ոչ էլ պահի տակ ծնված գաղափարի ու ցանկության իրականացում: Այսպիսի նախաձեռնությունները պետք է լավ հիմնավորված և մշակված լինեն՝ տեղի հանրության համակրանքը շահելու, նրանց շրջանում ցեղասպանության մասին իրազեկության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև կրթադաստիարակչական խնդիրներին աջակցելու համար:

## **Ցեղասպանության թեմայի ուսուցումը**

Ցեղասպանության թեմայի ուսուցումը խիստ կարևորում ենք ՀՀ, ԼՂՀ և սփյուռքահայ մանուկներին Հայոց ցեղասպանության մասին ընդհանուր գիտելիքներ հաղորդելու, համապարփակ ու խորքային պատկերացումներ տալու տեսանկյունից: Հոլոքոստի և մյուս ցեղասպանությունների ուսուցումը կարևոր տեղ է զբաղեցնում թանգարանային և դպրոցական կրթության բնագավառներում և տարաբնույթ կրթադաստիարակչական նախաձեռնություններում: Հայ իրականության մեջ ցեղասպանության կրթության նշանակությունը կարևոր է մի քանի առումներով. նախ՝ այն պետք է նպաստի տեղի ունեցած ողբերգության մասին համապարփակ ու խորքային գիտելիքների մատուցմանը, սերունդների՝ հոգեբանական բարդությամբ ձեռքագատվելուն, և ամենակարևորը՝ այն պետք է կարևոր միջոց դառնա քաղաքացիական կրթության, նախորդ սերունդների կրած տառապանքի հանդեպ հարգանքի դրսևորման և մեր պետականության նկատմամբ պատասխանատվության և օրինապաշտության գիտակցության ամրապնդման համար: Ցեղասպանության թեմայի

ուսուցումը կարևոր է նաև պատմական արդարության վերականգնման ու ցեղասպանության հետևանքների վերացման անհրաժեշտության գիտակցումը հաջորդ սերունդներին փոխանցելու տեսանկյունից:

### **Գեղարվեստական ու վավերագրական ֆիլմերի ստեղծում**

Նախաձեռնությունների շարքում խիստ կարևոր են Հայոց ցեղասպանության թեմայով վավերագրական և գեղարվեստական կինոնկարների պատրաստումը և միջազգային լսարանին հրամցելը: Բազմաթիվ այսպիսի նախաձեռնությունների փոխարեն մեր ջանքերը կարելի է կենտրոնացնել համաշխարհային աստղերի մասնակցությամբ և հայտնի կինոստուդիաների կողմից երկու-երեք մեծակտավ գործերի պատրաստման ու դրանք համաշխարհային կինոփառատոներում հանրահռչակելու ուղղությամբ: Ըստ որում բոլորովին էլ պարտադիր չէ, որպեսզի այդ ֆիլմերը պատրաստվեն միմիայն ցեղասպանության հարյուրամյակի կապակցությամբ: Ուստի պետք է նկատի ունենալ նաև հաջորդ տարիներին նման ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

### **Կայքէջերի ու խտասկավառակների թողարկում**

Միջոցառումների շարքում կարևոր ուղղություններից մեկը վիրտուալ տարածքում նոր կայքէջերի ստեղծումն է, որը ենթադրում է նաև Հայոց ցեղասպանության թեմայով էլեկտրոնային շտեմարանների ստեղծում, սկզբնաղբյուրային նշանակության հնատիպ գրքերի և թվային տարբերակների հրատարակությունների գետեղմամբ կայքէջերի պատրաստում, խտասկավառակների թողարկում և այլն: Հրատապ խնդիր է նաև Մեծ եղեռնի վերապրողների բանավոր պատմությունների թվայնացման և մեկ միասնական հավաքածուի ու համահավաք ցանկի ստեղծումը, ինչը կնպաստի դրանք կորստից փրկելուն և գիտական ուսումնասիրությունների համար հասանելի դարձնելուն:

### **Աշխատանք արտասահմանյան ՁԼՄ-ների հետ**

Միջոցառումների կազմակերպման աշխատանքներին համընթաց խիստ կարևոր է նաև միջազգային հեղինակավոր լրատվամիջոցների ներկայացուցիչների այցերի կազմակերպումը Հայաստան, Սփյուռքի համայնքներ և Մեծ եղեռնի հետ կապված հիշողության վայրեր: Այս համատեքստում յուրօրինակ նախաձեռնություն կարող է հանդիսանալ արտասահմանյան տարբեր թերթերում ու հանդեսներում ժամանակին տպագրված և հայկական կոտորածները լուսաբանած հոդվածների վերահրատարակումը՝ այդ նույն թերթերում նախապես գետեղելով համապատասխան սյունակներ՝ «Հարյուր տարի առաջ» պայմանական խորագրով:

### **ՀՅԹԻ-ի մասնաշենքի ընդարձակում և նոր ցուցադրության կազմակերպում**

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի շենքային նոր հարմարություններն ու ցուցադրական մակերեսի ընդարձակումը կարևոր ենք համարում Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցը Հայաստանի Հանրապետությունում պատշաճ մակարդակով կազմակերպելու տեսանկյունից: Վերջին յոթ տարիների ընթացքում կուտակված բացառիկ թանգարանային արժեքներն ու այս թեման թանգարանային նորագույն ցուցադրական տեխնոլոգիաների միջոցով ներկայացնելը նոր հնարավորություններ են ընձեռելու թանգարանի առաքելությունն ավելի ընդարձակելու և բազմաթիվ նախաձեռնություններին աջակցելու տեսանկյունից:

\* \* \*

2015 թվականը բեկումնային է լինելու բոլոր առումներով. այն նոր հանգրվան է Հայոց ցեղասպանության թեմայի միջազգային ճանաչման և հանրահռչակման, ինչպես նաև արդարության վերականգնման ու ցեղասպանության հետևանքների վերացման ուղղությամբ տարվող նոր աշխատանքային ուղղություններ որդեգրելու հարցերում: Այս առումով նոր հնարավորություններ են բացվում թուրք հասարակության հետ և նրա ներսում աշխատելու և այդ հասարակության շրջանում Հայոց ցեղասպանության մասին իրազեկության նոր մակարդակ ապահովելու համար: Սա մի կարևոր հրամայական է, որին, ցավոք սրտի, մենք պատշաճ ուշադրություն չենք դարձնում: Պետք է առաջնորդվենք հետևյալ նշանաբանով. Հայոց ցեղասպանության թեման ոչ միայն Հայաստանի, հայ ժողովրդի ու համաշխարհային պատմության և հիշողության, այլ նաև Թուրքիայի և թուրք ժողովրդի հիշողության և պատմության մասն է կազմում:

Հայոց ցեղասպանության 100-ամյակը և սպասվելիք միջոցառումները հասկանալի պատճառներով խիստ անհանգստացնում են թուրքական կողմին: Անկարան չի թաքցնում այդ վախը, որն այդ երկրի առաջնորդները պատեհ ու անպատեհ առիթներով փորձում են կոծկել տարբեր հոխորտալից հայտարարություններով ու քարոզչական ձևակերպումներով ու նախաձեռնություններով: Սա պայմանավորված է մի քանի հանգամանքով: Նախ՝ թուրքական պետական մշակույթի մեջ ձևավորվել և իր հաստատուն տեղն է գտել հայկական թեմայի հանդեպ տաժաճ վախը: Վախ, որը տարբեր անուններ ունի՝ արմենոֆոբիա, Հայոց ցեղասպանություն թեմայի հանդեպ ունեցած վախ, երբեմն էլ՝ սևրոֆոբիա և այլն: Այդ վախերից մեկն էլ, թերևս Թուրքիայի՝ հավակնոտ պետականաստեղծ առասպելից զրկվելն է, այսինքն՝ այդ առասպելի պսակազերծումը:

Ի վերջո այսօրվա Թուրքիան Հայոց ցեղասպանության և քրիստոնյա բնակչության՝ ծրագրված բնաջնջման արդյունքն է: Նման պայմաններում ստեղծվեց հանրապետական Թուրքիան, և այստեղ է թաքնված թուրքական պետականության հիմքի գաղտնագիրը, որը թուրքական իշխանությունները վախենում են գաղտնազերծել: Թուրքիայի հիմնադիր հայրերն ուղղակիորեն ներգրավված են եղել Հայոց ցեղասպանության ծրագրման, իրականացման և արդյունքներից օգտվելու մեջ: Եվ այսօր դժվար է պատկերացնել, որ դեռևս ոչ ժողովրդավար Թուրքիան ուժ կգտնի իր մեջ, որպեսզի վերանայի և վերաշարադրի սեփական պատմությունը և նոր հայացք նետի սեփական պատմության և հիշողության, անցյալի մութ և սև էջերի վրա:

Հայկական կողմը միջազգային հանրության հետ միասին պետք է նպաստի, որպեսզի Թուրքիայում վաղ թե ուշ հաշվի նստեն Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման գիտակցման հետ: Հայկական կողմը ևս որևէ պարագայում և ոչ մի պայմանով չի հրաժարվի ոչ միայն բարոյական, այլ նաև նյութական, հոգեբանական և այլ կարգի վնասների փոխհատուցման պահանջներից: Այսօր Թուրքիայի Հանրապետությունը, որը ցեղասպանություն իրագործած Օսմանյան կայսրության իրավահաջորդն է, շարունակաբար հանդես է գալիս ուժի դիրքերից Հայաստանի Հանրապետության և ընդհանրապես հայության հետ քաղաքականություն իրականացնելիս: Եթե երիտթուրքական իշխանությունները բնաջնջեցին հայ ազգաբնակչությանն Արևմտյան Հայաստանում՝ իրենց պատմական հայրենիքում, ապա հանրապետական Թուրքիան փակել է Հայաստանի հետ սահմանը և սպառնալիքների ու նախապայմանների լեզվով է խոսում Հայաստանի Հանրապետության հետ, որի բնակչության 60 տոկոսից ավելին այդ ցեղասպանությունը վերապրածների ժառանգներն են: Ուրեմն արձանագրենք, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և ցեղասպանության հետևանքների վերացման հիմնախնդիրն ուղղակիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի անվտանգության ապահովմանը:

Մյուս կարևոր հանգամանքը երկու կողմերի միջև հաշտություն հաստատելու շուրջ խոսակցություններն ու ակնարկներն են, որոնք էլ ավելի են սաստկանալու հարյուրամյակի նախաշեմին: Մենք գտնում ենք, որ հայկական կողմը, դրսից և որևէ այլ երրորդ կողմից պարտադրված, չի կարող հանդես գալ որպես հաշտվող կողմ մինչև այն պահը, երբ թուրքական պետությունը ոչ միայն ներողություն կլիճողի իրագործված անմախաղեպ հանցագործության համար, այլ նաև քաղաքական կամք կդրսևորի՝ առնչվելու և առերեսվելու այդ հանցագործության հետևանքների վերացման անհրաժեշտությանը:

Թուրքական կողմի նախապատրաստական աշխատանքների մեջ մեծ տեղ են գրավում քարոզչական, տեղեկատվական գործողությունները, որոնք միտված են 2015 թվականին Թուրքիայի համար դրական կերպարի ապահովմանը և միաժամանակ նպատակ են հետապնդում խափանելու հայկական կողմի նախաձեռնությունների արդյունավետությունը: Սրանց թվում պետք է հիշատակել հայկական ավերված եկեղեցիների վերականգնման նախաձեռնությունները, Դարդանելի գործողության հարյուրամյակի կապակցությամբ կազմակերպվելիք քարոզչական միջոցառումները, գիտնականներին և համալսարանական ամբիոններին դրամական միջոցների տրամադրումը և այլն: Նպատակը մեկն է՝ թուլացնել Հայոց ցեղասպանության թեմայի վրա միջազգային հանրության ուշադրությունը կամ ուղղակի ապակողմնորոշել: Դրան էր միտված նաև Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի 2014 թ. ապրիլի 23-ի «պատմական» ուղերձը, որը որոշ արևմտյան շրջանակներում շտապեցին որակել որպես «ցավակցական» ուղերձ:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ պետք է աշխատանքներ տարվեն նաև հայ հանրության շրջանում, մշակվեն նոր ուղղություններ, հատկապես երիտասարդ սերնդին Հայոց ցեղասպանության պատմական եղելությունը, դրա պատճառները և հետևանքները ճիշտ, գրագետ ու խորքային մատուցելու և հիշողության պահպանման ու փոխանցման նոր մեխանիզմներ մշակելու առումով: Այս աշխատանքները պետք է նպաստեն տեղի ունեցած համազգային ողբերգության մասին մեր գիտելիքների և պատկերացումների ամբողջացմանն ու խորացմանը: Այդ տեսակետից շատ կարևոր են համահայկական ծրագրերի իրականացումը և մատաղ սերնդին՝ երեխաներին, դպրոցականներին, ցեղասպանության թեմայի դասավանդման միասնական համապարփակ ծրագրի մշակումը, որը պետք է դուրս բերել այլևս հնացած և կիրառման առումով անընդունելի ձևերից, որոնք այլևս չեն դիմանում ժամանակի քննությանը: Խիստ կարևոր են այս աշխատանքները թե՛ հայաստանյան, թե՛ սփյուռքյան կրթահամալիրներում, որտեղ Հայոց ցեղասպանության մասին գիտելիքների մատուցումը որոշակիորեն պետք է նպաստի Հայաստան-Սփյուռք հարաբերություններում առկա հիմնախնդիրների ու կարծրատիպերի թթափմանը:

Այս ոլորտում տասնամյակներ շարունակ կուտակված ու չլուծված հիմնախնդիրները, գիտակցված և չգիտակցված միմյանց հակադրվելու ցանկությունը մեծ վնաս են հասցնում և լրջորեն խոչընդոտում Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումները լիարժեք և արդյունավետ կազմակերպելը:

Այս առումով բացարձակ անհանդուրժելի է Հայոց ցեղասպանության թեմայի և 100-ամյակի միջոցառումների քաղաքականացումը՝ անձնական, խմբակային, կուսակցական և քաղաքական ինչ-ինչ շահերին սպասարկելու համար:

Ավելորդ է նշել, որ 100-ամյակի միջոցառումների անցկացման, դրանց հաջողության, միջազգային լսարանին հավուր պատշաճի ներկայանալու համար պատասխանատու ենք լինելու յուրաքանչյուրս:

Հասկանալի պատճառներով հայկական կողմը չպետք է բացահայտի նախատես-

ված բոլոր ծրագրերը, դրանց ժամանակացույցն ու անցկացման վայրը: Սա պարզունակ գաղտնապահություն է, այլ ուղղակի անվտանգության խնդիր, քանի որ քաջ գիտակցում ենք, որ թուրք-ադրբեջանական տանդեմը կփորձի ամեն գնով խանգարել այդ ծրագրերին: Պետական հանձնաժողովի աջակցությամբ աշխարհի տարբեր ծայրերում կկազմակերպվեն գիտաժողովներ, ցուցադրություններ, համերգներ, դասախոսություններ, մեծ թափ է ստանալու նաև գրահրատարակչությունը:

2015 թվականի ապրիլի քսանչորսին իր դռներն է բացելու Հայոց ցեղասպանության թանգարանի նոր գիտական ցուցադրությունը, որը նախկինի համեմատ շուրջ երկուս ու կես անգամ ավելի մեծ ցուցադրական տարածք է զբաղեցնելու և կազմակերպվելու է նոր հայեցակարգային հենքի վրա: Ավելին, նոր ցուցադրությունը հազեցած է լինելու թանգարանային նոր տեխնոլոգիաներով և սրահներով, որոնք էլ ավելի գրավիչ ու դիտարժան են դարձնելու թանգարանի մշտական ցուցադրությունը:

Ամփոփելով նշենք, որ Հայոց ցեղասպանության հարյուրամյակը, անկասկած, հոգեբանական մի սահմանագիծ է անցյալի և ներկայի միջև, սակայն այն չպետք է դիտել և ընկալել որպես մեր աշխատանքների վերջնագիծ կամ ավարտ: Ճիշտ հակառակը: Հարյուրամյակը պետք է դիտվի որպես ուժերի համախմբման նոր հանգրվան և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դրա հետևանքների վերացման համար մղվող պայքարի նոր մեկնարկ:

### **Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման հայեցակարգային մոտեցումների շուրջ**

*Հայկ Դեմոյան*

#### **Ամփոփում**

Հայոց ցեղասպանությունը և նրա հետևանքները հայ ինքնության և հիշողության համար ազգային ողբերգության, կորստի, բայց նաև մաքառման, ազգային վերածննդի ու կյանքի շարունակականության անբեկանելի բաղադրիչներն են դարձել: Այս տեսակետից պետք է արձանագրենք, որ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը կոչված է իրականացնելու կարևոր ու պատմական առաքելություն: Այդ առաքելությունը հանգում է Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ անցկացվելիք հիշատակի ու ոգեկոչման միջոցառումների պատշաճ կազմակերպմանը, ազգային միասնականության և համախմբման ու ցեղասպանության հետևանքների վերացման հարցում ընդհանուր մոտեցումների ապահովմանը: Նախատեսվելիք միջոցառումների շարքում հարկ է առանձնացնել թանգարանային մշտական և ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպումը, գիտական ուսումնասիրությունը և մասնագետների պատրաստումը, գրահրատարակչությունը, թեմատիկ միջազգային գիտաժողովների անցկացումը, հիշատակի և ոգեկոչման արարողությունների կազմակերպումը, ցեղասպանության թեմայի ուսուցումը, գեղարվեստական ու վավերագրական ֆիլմերի ստեղծումը, կայքէջերի ու խտասկավառակների թողարկումը, աշխատանք արտասահմանյան ՋԼՄ-ների հետ աշխատանքը, ՀՅԺԻ-ի մասնաշենքի ընդարձակումն ու նոր ցուցադրության կազմակերպումը և այլն:

Հայոց ցեղասպանության հարյուրամյակը, դիտելով որպես հոգեբանական մի սահմանագիծ անցյալի և ներկայի միջև, այդուհանդերձ այն չպետք է ընկալել որպես մեր աշխա-



տանքների վերջնագիծ կամ ավարտ: Ճիշտ հակառակը: Հարյուրամյակը պետք է դիտվի որպես ուժերի համախմբման նոր հանգրվան և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դրա հետևանքների վերացման համար մղվող պայքարի նոր մեկնակետ:

**Քանակի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, Հայոց ցեղասպանության հարյուրամյակ, հիշողություն, Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով:

## **On the Conceptual Approaches to the Organization of Events Dedicated to the Centenary of the Armenian Genocide**

*Hayk Demoyan*

### **Summary**

The Armenian Genocide and its consequences have become an irreversible component of not only the national tragedy and loss of the Armenian identity and memory, but also of the struggle, national revival, and continuation of life. Thus, the State commission on coordination of the events dedicated to the centenary of the Armenian Genocide intends to carry out an important and historical mission. The mission is meant to properly organize memorial events and provide common approaches to the issues of national unity and cohesion in eliminating the consequences of the Genocide.

Among the stipulated events we should highlight preparations for permanent and temporary exhibitions, organization of international thematic conferences and memorial events, Genocide education, academic research and training of field experts, as well as promotion of new publications, documentaries and movies, creation of websites, and work with the foreign media.

The centenary of the Armenian Genocide is a psychological boundary between the past and the present, but it should not be considered and perceived as the conclusion and the end of our works and activities. On the contrary, the centenary should be considered as an impetus for national cohesion and as a new starting point in the struggle for international recognition of the Genocide and the elimination of its consequences.

**Keywords:** Armenian Genocide, Centennial of Armenian Genocide, State commission on coordination of the events dedicated to the centenary of the Armenian Genocide.

## **О концептуальных подходах организации мероприятий, посвящённых 100-летней годовщине Геноцида армян**

*Гайк Демоян*

### **Резюме**

Геноцид армян и его последствия несомненно стали составной частью идентичности и памяти армян не только о национальной трагедии и потерях, но также борьбы, национального возрождения и продолжения жизни. С этой точки зрения надо отметить,

что государственная комиссия по координации мероприятий, посвящённых 100-летней годовщине Геноцида армян, призвана осуществить важную историческую миссию. Эта миссия сводится к достойной организации мемориальных мероприятий, проводимых в связи со 100-летней годовщиной Геноцида армян, и выработки общих подходов к вопросам национального единства и сплочённости в устранении последствий геноцида. В ряде предусмотренных мероприятий следует выделить организацию постоянной и временных музейных экспозиций, научные исследования и подготовку специалистов, публикации, проведение международных тематических конференций, организацию мемориальных мероприятий, создание художественных и документальных фильмов, создание сайтов, работа с иностранными СМИ и т.д.

Столетие Геноцида армян является психологической границей между прошлым и настоящим, тем не менее это не должно восприниматься и рассматриваться как итог и окончание наших работ. Скорее наоборот. Столетие должно рассматриваться как стимул к объединению национальных сил и исходная точка в борьбе за международное признание Геноцида армян и устранение его последствий.

**Ключевые слова:** Геноцид армян, столетие Геноцида армян, Государственная комиссия по координации мероприятий, посвящённых 100-летней годовщине Геноцида армян.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՂՆՉԱՅՈՒՄՆ ՈՒ ԳՐԱ  
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 1894-1896թթ. ՀԱՄԻՂ-ՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

*Սեդա Պարսամյան*

1894-96թթ. հայերի զանգվածային կոտորածներն ուղեկցվել են հայկական մշակութային ժառանգության համակարգված և հետևողականորեն իրագործված ոչնչացմամբ: Կասկածից վեր է, որ Օսմանյան կայսրությունում հայության ազգային զարթոնքի դեմ պայքարը սուլթան Աբդուլ Համիդ II-ի ներքին քաղաքականության առաջնային խնդիրներից էր: Այդ քաղաքականությունն առաջին հերթին ուղղված է եղել հայկական հոգևոր-մշակութային հաստատությունների դեմ: Հայտնի է, որ թուրքական բռնատիրության պայմաններում հայկական վանքերն ու եկեղեցիները պարզ աղոթատեղիներից և կրթամշակութային օջախներից վերածվել էին նաև հասարակությանը համախմբող, սատարող կառույցների՝ կատարելով ազգապահպանության կարևոր գործառույթ: Արևմտահայ իրականության մեջ եկեղեցին ու նրա գլուխ կանգնած պատրիարքը այն առանցքն էին, որի շուրջ կենտրոնանում էին բնակչության համար կենսական կարևորություն ունեցող խնդիրները և դրանց լուծմանը միտված մոտեցումները: Այս իմաստով հայկական վանքերի ու եկեղեցիների գոյությունն Օսմանյան կայսրությունում և դրանց այդչափ կարևոր դերակատարությունը հայերի ազգային-մշակութային կյանքի զարգացման գործում արդեն իսկ դարձել էին անցանկալի և նույնիսկ դիտվում էին որպես վտանգ ինչպես մոսուլման հասարակության մեծամասնության, այնպես էլ օսմանյան իշխանությունների կողմից: Համիդյան կոտորածները հարմար առիթ դարձան հայկական մշակութային արժեքների զանգվածային ոչնչացման համար: Ինչպես իրավացիորեն նկատել է դեպքերի ժամանակակից անգլիացի հոգևորական, հասարակական գործիչ Մալքոմ Մաքքոլը, հայերի դեմ ուղղված համիդյան քաղաքականությունն առաջին հերթին պատերազմ էր նրանց կրթության, մշակույթի և դավանանքի դեմ<sup>1</sup>:

Սույն հոդվածում փորձել ենք քննության առնել 1894-96թթ. համիդյան կոտորածների տարիներին հայկական մշակութային արժեքների, մասնավորապես վանքերի, եկեղեցիների, կրթօջախների, ձեռագրատների և գրադարանների ոչնչացման եղանակները՝ որպես արևմտահայության բնաջնջման պետական քաղաքականության բաղկացուցիչ մաս, և ներկայացնել դրա հետևանքները:

Ժամանակի բազմաթիվ վավերագրեր ու տեղեկագրեր, մասնավորապես օտարերկրյա դիվանագետների վկայությունները փաստում են, որ համիդյան կոտորածների ընթացքում հայկական մշակութային արժեքների ոչնչացումն իրագործվել է պետական քաղաքականության մակարդակով, կենտրոնական և տեղական իշխանությունների անմիջական հրահրմամբ ու հովանավորությամբ<sup>2</sup>: Ըստ Պոլ Կամբոնի վկայության՝ 1894թ. Մասունի

<sup>1</sup> Malcolm MacColl, *The Constantinople Massacre and its Lesson. The Contemporary Review*, vol. 68, New York, London, November, 1895. In *The Armenian Genocide. Documentation*, Vol. I, München, Institut für Armenische Fragen, 1987, p. 142.

<sup>2</sup> Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվի վավերագրերն ամփոփող «Դեղին գրքում» (*Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897*, Paris, Imprimerie Nationale, 1897, *Documents diplomatiques. Affaires arméniennes (Supplément). 1895-1896*, Paris, Imprimerie Nationale, 1897) ամփոփված են 1891-1897թթ. Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի, Օսմանյան կայսրության տարբեր տարածաշրջաններում հավատարմագրված ֆրանսիացի դիվանագետների՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանը հղած հայկական կոտորածները նկարագրող զեկուցագրերը, որոնցում բազմաթիվ վկայություններ կան համիդյան կոտորածների ընթացքում հայկական մշակութային արժեքների, մասնավորապես վանքերի, եկեղեցիների ավերման ու պղծման վերաբերյալ:

կոտորածի ընթացքում գնդապետ Իսմայիլ բեյը կարգադրել է զինվորներին հրո ճարակ դարձնել և ավերել գյուղերը՝ ավելացնելով, որ նրանք իրավասու են անելու այն ամենը, ինչ կամենում են, քանի որ այդպիսին է սուլթանի հրամանը<sup>3</sup>:

Կոտորածների ընթացքում հայկական մշակութային հաստատությունների կողմ-  
այումն ու ոչնչացումն ուղղորդել են թե՛ կենտրոնական ու տեղական իշխանությունները,  
թե՛ հոգևորական շրջանակները, թե՛ կանոնավոր զորքը և թե՛ մուսուլման ազգաբնակչու-  
թյան լայն զանգվածները: Ավելին, նրանք իրենց գործուն մասնակցությունն են ունեցել  
դրանց իրականացմանը՝ յուրաքանչյուրն իրեն հատուկ գործելակերպով: Անշուշտ, այս  
գործում կարևորագույն դերը պատկանում էր իշխանություններին, որոնք, փաստորեն,  
հրահրել և սադրել են ամբոխի գործողությունները, այնուհետև անպատիժ թողել իրա-  
կանացնողներին:

1895թ. փետրվարի 4-ին Կամբոնը հավաստում է, որ իշխանություններն իրենց օրինա-  
կով ու վարքագծով մոլեռանդություն էին հրահրում<sup>4</sup>: Ալեքսանդրեթի սանջակում Ֆրանսիայի  
փոխհյուպատոս Մ. Լոնգվիլը Կամբոնին հղած՝ 1896թ. հունվարի 3-ի թվակիր տեղեկագրում  
գրում էր. «Մեր կողմերում մահմեդականների մոլեռանդությունը հեռու է մարելուց: Վայրա-  
գությունները շարունակվում են ներքին նահանգների բազմաթիվ բնակավայրերում»<sup>5</sup>:

Կոտորածների ընթացքում թուրքերն ամենուր առանձնակի վայրագությամբ են կործանել  
հոգևոր-մշակութային հաստատությունները՝ կից շինություններով հանդերձ, և դաժանաբար  
սպանել քահանաներին ու վանականներին՝ որպես այդ հաստատությունների առաջնորդնե-  
րի՝ սպանությունները զուգակցելով խոշտանգումներով, ծանակումներով ու ողջակիզմամբ<sup>6</sup>:  
1896թ. հրատարակված տեղեկագրերից մեկում մասնավորապես հաղորդվում է.

«Մահմեդական խուժանն յուր կատաղությամբ ամենէն աւելի թափեց հայ վանօրէից,  
եկեղեցեաց, դպրոցաց և մատենադարանաց վրայ: Ատոնք այսօր առհասարակ աւերակաց  
կոյտեր դարձած են, մանաւանդ գիւղերու և գաւառներու մէջը»<sup>7</sup>:

Հակաքրիստոնեական տրամադրությունների բորբոքման, հայերի հանդեպ թուրք մոլե-  
ռանդ զանգվածի մեջ աստվածություն սերմանելու գործում մեծ է եղել հատկապես մուսուլման  
հոգևորականության դերը, ովքեր ջարդերից առաջ մզկիթներում մուսուլման ազգաբնակ-  
չությանը հորդորել են հնարավորինս բազմապատկել ոճիրների, կողոպուտների ու ավե-  
րածությունների թիվը՝ ըստ այդմ արժանանալով Մուհամմեդի գոհունակությանը<sup>8</sup>: Այդ  
հորդորները մեծապես նպաստում էին զանգվածների մոլեռանդության աճին, խթանում  
նրանց գործողությունների ազատությունը՝ պատճառ դառնալով նոր, ավելի մեծ չափերի  
հասնող ավերածությունների: Նման եղանակով 1895թ. հոկտեմբերի 20-ին Դիարբեքիրում

<sup>3</sup> Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 42.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>5</sup> Documents diplomatiques. Affaires arméniennes (Supplément). 1895-1896, p. 103.

<sup>6</sup> «Հայաստանի կոտորածները. ականատեսների վկայություններ» խորագրով փաստաթղթերի  
ժողովածուում ամփոփված Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի շուրջ 20 քաղաքներից ստացված  
հայ ականատեսների 34 անստորագիր նամակներում բազմաթիվ վկայություններ կան կոտորածների  
ընթացքում հայկական վանքերի ու եկեղեցիների հրկիզման, կողոպուման ու ավերման (տես *Les mas-  
sacres d'Arménie. Témoignages des victimes*, Préface de G. Clemenceau, Paris, édition DV Mercvre de France,  
1896, pp. 73, 74, 76, 105, 108, 110, 113, 115, 116, 118, 137, 177, 234-235), ինչպես նաև հայ հոգևորականների  
սպանությունների մասին (տես նույն տեղում, էջ 91, 104, 111-112, 131, 163, 235-236):

<sup>7</sup> Տես «Արարատ», Պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, Լ տարի,  
դեկտեմբեր, 1896, էջ 585:

<sup>8</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու,  
խմբագրությամբ Մ. Գ. Ներսիսյանի, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան,  
«Հայաստան», 1991, էջ 138:

Ֆաթիհ փաշայի մզկիթից դուրս գալով՝ ելուզակներն ավերել են Ս. Սարգիս եկեղեցին՝ առանձնակի դաժանությամբ կոտորելով ներսում գտնվող հոգևորականներին<sup>9</sup>։ Ականատեսի վկայության համաձայն. «Նրանք քանդեցին տաճարներն (խորանները) ու գարշելի պղծության գործածեցին անդ. պատառեցին, զնտակահարեցին սրբոց պատկերները, ս. գրյանց մատենադարանի և դպրոցի գրյանքը պատառելով՝ կոյուղիներն ու ջրհորները լեցուցին, վերջապես բնաջինջ ըրին թանկարժեք հնութիւնքը»<sup>10</sup>։

Բազմաթիվ փաստեր վկայում են հատկապես կանոնավոր զորքերի գործուն մասնակցության մասին հայկական ազգային-մշակութային հաստատությունների կողոպտման ու ավերման գործընթացին։ 1894թ. Սասունի կոտորածների ընթացքում թուրքական զորքերի ու քրդական հեծելազորի կողմից ամբողջովին ոչնչացվել ու հրկիզվել են շրջանի 48 գյուղեր՝ տասնյակ դպրոցներով ու եկեղեցիներով<sup>11</sup>։ Մերսինում (Ադանայի նահանգ) Ֆրանսիայի հյուպատոս Սումարիպայի՝ Կամբոնին հղած՝ 1895թ. նոյեմբերի 12-ի թվակիր տեղեկագրում հաղորդվում է, որ Միսիսում (ն/տ նոյեմբերի 9-ին) զինվորներն ու զափթիները մուտք են գործել հայկական եկեղեցի, ոտնատակ տվել սուրբ գրքերը, պղծել եկեղեցական սավորները<sup>12</sup>։ 1896թ. հունվարի 13-ին Կամբոնն այս առիթով գրում էր, որ Աղջագյունեում (գյուղ Տրապիզոնի նահանգի Ջանիկ գավառում) կանոնավոր բանակի զինվորները պատճառ են դարձել տարատեսակ անկարգությունների, պարաններով կապկաված քահանայի ներկայությամբ պղծել ու կողոպտել են տեղի հայկական եկեղեցին<sup>13</sup>։ Մեքաստիայում և Խարբերդում զինվորները բացահայտ հայտարարել են, որ հայերին թալանելու բարձրագույն հրաման ունեն. կառավարական զորքերը, ըստ այդ հրամանի, մուսուլման ամբոխի հետ մեկտեղ թալանել ու ավերել են Տիվրիկի, Շապին-Գարահիսարի, Ալնի և Արաբկիրի շրջակա բոլոր գյուղերը, այդ թվում՝ բազմաթիվ եկեղեցիներ՝ «ջարդ ու փշուր անելով» սրբապատկերները, ջահերն ու խորանները<sup>14</sup>։ Վանի նահանգից «Արարատ»-ի թղթակիցը հայտնում է, թե ինչպես են զինվորներն ու քրդերի խմբերը ձուլելու համար քաղաքներ տեղափոխել նահանգի բազմաթիվ վանքերից ու եկեղեցիներից կողոպտված եկեղեցական սպասքը, հնագույն ձեռագրերի արծաթե կազմերը, թանկարժեք շուրջառները<sup>15</sup>։ Ըստ 1896թ. տեղեկագրերից մեկի. «Նարեկայ վանուց մէջը գտնուած կենաց Փայտի մասունքն եւ ուրիշ զանազան մասունքներն ալ գերուեցան. իսկ Սբ. Գրիգոր Նարեկացիի գերեզմանն ալ խորտակուեցաւ։ Այսօր զօրքեր եւ ուրիշ թիւրք կամ քիւրդ աւարառուներն կը բերեն ու

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 140։

<sup>10</sup> Նույն տեղում։

<sup>11</sup> Тенишева В., *Позорь Цивилизации. По поводу турецкихъ дель*, С.-Петербург, типография Б. М. Вольфа, 1897, с. 11.

<sup>12</sup> *Documents diplomatiques. Affaires arméniennes (Supplément). 1895-1896*, p. 95-96, տնս նսլս՝ Charmetant F., *Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires*, Paris, Au bureau des ceuvres d'orient, s. d., p. 69.

Ֆրանսիացի հոգևորական հայր Ֆելիքս Շարմետանը (1844-1921) հիմնականում Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում գործող ֆրանսիացի միսիոներների հաղորդած տեղեկությունների հիման վրա սույն ժողովածուում ներկայացրել է համիլյան կոտորածների, այդ թվում՝ նաև կայսրության 11 վիլայեթներում հայկական ազգային-մշակութային հաստատությունների կորուստների ու ավերածությունների իրական պատկերը։ Նրա հաղորդած տեղեկությունները թեև ամբողջական պատկեր չեն ստեղծում, այդուհանդերձ արժեքավոր են։ Հայր Շարմետանի այս տեղեկագրից մի հատված՝ Տրապիզոնի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Մեքաստիայի, Խարբերդի նահանգների ընդգրկմամբ, հրատարակվել է «Արարատ» ամսագրում։ Տես «Արարատ», ԻԹ տարի, փետրուար, 1896, էջ 87-92։

<sup>13</sup> *Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897*, p. 195.

<sup>14</sup> «Դրօշակ», օրգան Հ. Յ. Դաշնակցութեան, Վիեննա, 1895, թիվ 20, 1 դեկտեմբեր, էջ 6-7։

<sup>15</sup> *Братская помощь пострадавшимъ въ Турціи армянамъ*, том II, отдель II, Москва, Типо-литография К. О. Александрова, 1897, с.124։

կը ծախսեն կամ ջարդել (ծուլել) կը տան արծաթեայ եւ ոսկեայ ծանրակշիռ սկիւհներ, խաչեր, գաւազաններ, թագեր, բուրվառներ, արծաթապատ կամ ոսկեպատ աւետարաններ եւ այլն»<sup>16</sup>:

Կողոպուտին ու ավերածություններին թուրքական զորքերի գործուն մասնակցության մասին է վկայում նաև դեպքերի ականատես, Այնթափում ամերիկացի միսիոներ և քարոզիչ Էդվին Բլիսը՝ հաղորդելով, որ թալանից հետո թուրքական զորքերն իրենց հետ բերված նավթով հրկիզել են բազմաթիվ տներ, եկեղեցիներ, վանքեր, դպրոցներ ու խանութներ<sup>17</sup>: Չկարողանալով հրկիզման միջոցով ոչնչացնել մեծ ու քարաշեն եկեղեցիները՝ նրանք դիմել են այլ միջոցների: Որոշ եկեղեցիներ փոխակերպվել են մզկիթների, այլ եկեղեցիներ՝ անարգվել, սուրբ գրքերը՝ բաժան-բաժան արվել<sup>18</sup>: Հաճախ հատկապես քաղաքներում, մզկիթները դարձնելով հենակետեր, զինվորները կրակ են բացել վանքերի ու եկեղեցիների վրա: Այսպես, Դիարբեքիրում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գուստավ Մեյրիեն, լինելով թուրքական գազանությունների ականատեսը, 1895թ. դեկտեմբերի 18-ի թվակիր իր գեկուցագրում գրում է.

«Կիրակի օրը՝ կեսօրվա ժամը երեքին իմ լուսամուտից տեսա, ինչպես բոլորը կարող էին տեսնել, զինվորների, զափթիների, քրդերի և մուսուլմանների, որոնք միասին տանիքներից ու միմարեթներից կրակ էին բացել հայ լուսավորչական եկեղեցու վրա»<sup>19</sup>:

Կոտորածների ընթացքում, հիմնականում քաղաքներում, մեծ թվով հոգևոր-մշակութային հաստատություններ զինվորներն ավերել են հատուկ այդ նպատակով բերված հրետանու օգնությամբ: 1895թ. Մարաշում (Հալեպի նահանգ) կենտրոնացնելով երեք թնդանոթ և նույնքան գնդացիր՝ զինվորները ռմբակոծել են Ս. Գևորգ եկեղեցին, որբանոցն ու զորանոցը<sup>20</sup>: Խարբերդի, Հուսեյնիկի և Մեզրեի ուղղությամբ երկուական հրանոթ կենտրոնացնելով՝ զինվորներն ավերակների են վերածել ազգային հաստատությունների մեծ մասը<sup>21</sup>: Այս մասին է վկայում նաև թուրքական կառավարության կողմից Մարզվանից վտարված բողոքական քարոզիչ Ջորջ Ֆիլյանը, ով, վկայակոչելով մուսուլման մի սպայի, գրում է, որ «Խարբերդ քաղաքի Վերին թաղի գրիգորյանների (լուսավորչականների) ու միսիոներների դպրոցները, եկեղեցիներն ու տները հրկիզվել էին թնդանոթների միջոցով»<sup>22</sup>: Ի դեպ, ավերածություններից զերծ չեն մնացել անգամ միսիոներական մշակութային հաստատությունները, որոնք ևս մեծ թիվ են կազմել<sup>23</sup>:

Այսպիսով, կանոնավոր զորքերի այսչափ գործուն մասնակցությունը հայկական մշակութային հաստատությունների կողոպտմանն ու ավերմանը, նրանց գործողությունների բացարձակ ազատությունն ու անպատժելիությունը ևս մեկ անգամ անուղղակիորեն փաստում են այդ գործընթացի կազմակերպումն ու իրագործումը պետական քաղաքականության մակարդակով:

<sup>16</sup> «Արարատ», Լ. տարի, դեկտեմբեր, 1896, էջ 585:

<sup>17</sup> Bliss Rev. Edwin M., *Turkey and the Armenian Atrocities*, New York, Edgewood Publishing Company, 1896, p. 444.

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> *Братская помощь пострадавшим в Турции армянам*, том II, отдель II, с. 104-105. Խոսքն ամենայն հավանականությամբ Ս. Կիրակոս եկեղեցու մասին է: Տե՛ս նաև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 144:

<sup>20</sup> Գալուստեան Հ. Գր., *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Ջեյթուն*, Նիւ Եորք, 1934, էջ 316:

<sup>21</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 121, տե՛ս նաև՝ Bliss Rev. E., նշվ. աղյ., էջ 444:

<sup>22</sup> «Նոր կեանք» (Լոնտոն), թիւ 8, 15 ապրիլ, 1898, էջ 263:

<sup>23</sup> Միսիոներական հաստատություններից մեծապես տուժել է «Եփրատ» քոլեջը, որի շենքերի մեծ մասը հրդեհվել է թնդանոթից արձակած կրակոցներից, տե՛ս *Յիշատակարան Եփրատ գոլէճի*, Պոսթըն, 1947, էջ 118:

Կոտորածների ընթացքում հայկական վանքերն ու եկեղեցիները հաճախ օգտագործվել են որպես հավաքատեղի սպանության, կանանց անարգման կամ ողջակիզման համար: Հայկական հոգևոր հաստատությունների պղծման այս եղանակը, թերևս, մահմեդական մոլեռանդության այն բազմաբնույթ դրսևորումներից է, որն ուղեկցվել է 1894-96թթ. կոտորածների ողջ ընթացքում: Ավելին, հուշարձանի պղծումն ու ոչնչացումը նման եղանակով ոճրագործների կողմից դիտվել են որպես խորհրդանշական զոհաբերության գործողություն, որը կոչված է խորագույն անարգանք հասցնել զոհ էթնիկ հանրության հոգևոր զգացումներին և ավանդույթներին: Ասվածի վառ ապացույցը, թերևս, Ուրֆայի (Հալեպի նահանգ) Մայր տաճարի հրկիզումն է: Ականատեսներից մեկի վկայությամբ 1895թ. դեկտեմբերի 29-ի կեսօրին Ուրֆայում թուրքերը, խմբվելով Մայր տաճարի առջև, որտեղ ապաստանել էր շուրջ 3.000 հայ՝ հիմնականում կանայք ու երեխաներ, կոտորում են եկեղեցու դուռը, ներս խուժում, սակայն տեսնելով, որ շատ ժամանակ կկորցնեն հայերին մեկ առ մեկ սպանելու համար, եկեղեցու բակում դրված 50 արկղ նավթը լցնում են Մայր տաճարի վրա՝ հրի ճարակ դարձնելով այն, միաժամանակ ողջակիզելով այնտեղ ապաստանած բնակչությանը<sup>24</sup>: Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի փոխյուպատոս Ջ. Հ. Ֆիցմորիսի<sup>25</sup> Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Ֆիլիպ Քերիին հղած՝ 1896թ. մարտի 16-ի թվակիր պաշտոնական տեղեկագրում Ուրֆայի եկեղեցու հրկիզումը որակվում է որպես. «արարք մը որ իր հրեշային բարբարոսությամբ անգերազանցելի կը մնայ վերջին հայկական կոտորածներու սարսափներէն որեւէ մէկէն, և որուն նման քանի մը դէպքեր հազիւ կարելի է գտնել պատմութեան տարեգրութեանց մէջ... անոնք կը կողոպտեն եկեղեցույ զանաք, խորանները եւ զարդերը, 4,000 թրքական ոսկի արժէքով, կը քանդեն ու կը փնացնեն նկարներն ու նշխարները»<sup>26</sup>:

Ի դեպ, համիդյան, ապա նաև 1909թ. Ադանայի ու հարակից շրջանների կոտորածների ընթացքում մարդկանց զանգվածային ողջակիզման նմանօրինակ դեպքերն են հիմք ստեղծել, որպեսզի ամերիկյան ու արևմտյան հրապարակումներում շրջանառության մեջ դրվի «Հոլոքոստ» բառը<sup>27</sup> որպես բնորոշիչ նորագույն ժամանակների զանգվածային կոտորածների<sup>28</sup>:

Նույն սկզբունքով են ոչնչացվել նաև Բուզու գյուղի (Խարբերդի նահանգ) եկեղեցին, Դիարբեքի քաղաքին ամենամոտը գտնվող Ալի-Փունար գյուղի Ս. Աստվածածին և Գըթրայի Ս. Թումայի եկեղեցիները<sup>29</sup>: Վերջինիս պարագայում, սակայն, թուրքերը,

<sup>24</sup> *Братская помощь пострадавшим в Турции армянам*, том II, отдель II, с. 53.

<sup>25</sup> 1895թ. մարտին դեսպան Ֆիլիպ Քերիի հանձնարարությամբ նա անձամբ եղել է Ուրֆայում, Ադիանամում, Բիրեջիքում, Բեհեսնիում և այլ բնակավայրերում՝ տարբեր տեղեկագրերի միջոցով տեղյակ պահելով դեսպանությանը հայկական կոտորածների մասին:

<sup>26</sup> Սահակեան Ա., *Դիցազնական Ուրֆան եւ իր հայորդիները*, Պէյրուք, «Ատլաս» տպարան, 1955, էջ 411-412:

<sup>27</sup> «Հոլոքոստ» բառը ծագում է հունարեն «holokauston» բառից, որը թարգմանաբար նշանակում է ամբողջությամբ կիզմամբ զոհաբերություն Աստծուն կամ ողջակիզում: «Shoah» (աղետ/calamity/беда, бедствие, катастрофа) բառը «Հոլոքոստ» բառերի երբայերեն համարժեքն է:

<sup>28</sup> 1895թ. սեպտեմբերի 10-ին «Նյու Յորք թայմսը» տպագրել է համիդյան կոտորածները նկարագրող «Մեկ այլ հայկական ողջակիզում» («Another Armenian Holocaust») վերնագրով հոդված, տես <http://query.nytimes.com/mem/archive-free/pdf?res=9D05E5DD113DE433A25753C1A96F9C94649ED7CF>: Կիլիկիահայության 1909թ. ջարդերի առիթով դեռևս 1911թ. ապրիլին գրվել և 1913թ. Լոնդոնում անգլերենով լույս է տեսել բրիտանացի լրագրող Ֆերիման Դաքեսի «Երիտթուրքերը և ճշմարտությունն Ադանայի ողջակիզման մասին Փոքր Ասիայում 1909թ. ապրիլի ընթացքում» աշխատությունը, որը 2009թ. նմանահանությամբ վերահրատարակել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Sten Duckett F., *The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor; during April, 1909*, Yerevan, 2009.

<sup>29</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 118, 142-143:



չկարողանալով կոտրել եկեղեցու դուռը, բարձրացել են տանիք, քանդել այն՝ ցած նետելով այրվող գերանները<sup>30</sup>։ Մեկ այլ դեպքում՝ Տավորիկ գյուղի (Մասունի գավառակ) բնակչության՝ 1894թ. կոտորածի ժամանակ, թուրքերը, հավաքելով 600 կին, լցրել են եկեղեցին. նրանցից հիսունին՝ առավել գեղեցիկներին, առանձնացրել են, մյուսներին՝ թողել զորքերի ու քրդերի քմահաճույքին։ Կանանց անարգելուց հետո կոտորել են, իսկ եկեղեցին քանդել հրանոթի կրակոցներով<sup>31</sup>։

Ատելության ու մոլեռանդության դրսևորումներն առանձնակի ընդգծված են եղել հայերի հոգևոր հաստատությունները պղծելու և ավերածությունների ենթարկելու թուրքական վարքագծում, որը հաճախ դրսևորվել է կոնկրետ խորհրդանշական գործողություններով, ինչպիսիք են օրինակ՝ խաչի ու զանգի տապալումը, եկեղեցական, սրբազան իրերի պղծումը և այլն։ Դրանով իսկ թուրքերը ցանկացել են ավելի նսեմացնել թիրախ դարձած էթնիկ հանրության դավանական զգացումները։ Նմանօրինակ գործողությունների ուղեկցությամբ 1895թ. ընթացքում ավերվել են հայկական բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ։ Հուսեյնիկում (Խարբերդի նահանգ) ոճրագործները, իջեցնելով հայկական եկեղեցու զանգը, գլորելով այն տարել են գետափ ու նետել ջուրը<sup>32</sup>։ Մալաթիա քաղաքի յոթ եկեղեցիներն ամայացրել են ու ավերել՝ ավետարաններն ու մյուս սուրբ գրքերը պատառոտելուց և խորանները պղծելուց հետո<sup>33</sup>։ Գուրլե գյուղում (Իզմիրի գավառակ) բաշիրգուլները լցվել են եկեղեցի, ավերածություններ արել, ավետարանի կազմի վրայից պոկել են արծաթյա խաչը, ավետարանը նետել արտաքնոց<sup>34</sup>։ Լուսոնք և Այմեղքա գյուղերի (Էրզրումի նահանգ, Բաբերդի գավառ) եկեղեցիները կողոպտելուց հետո դրանք պղծել են «աղտեղութիւններով»<sup>35</sup>։ Համընդհանուր ավերումից ու պղծումից զերծ չեն մնացել նաև հայկական գերեզմանոցները<sup>36</sup>։ Շատ դեպքերում ոճրագործները, եկեղեցական հագուստներ հագնելով, նմանակման միջոցով փորձել են ծաղրել քրիստոնեական հավատքն ու եկեղեցու խորհուրդը<sup>37</sup>։ Ուրֆայի Մայր տաճարի ավերումն ուղեկցվել է քրիստոնյաներին ու հայ հոգևորականությանն ուղղված բացահայտ ծաղրանքներով ու հայհոյանքներով<sup>38</sup>։ Ականատեսներից մեկի վկայությամբ. «ոմանք սրբազան անօթներու մէջ կապականեն և ոմանք եկեղեցական զգեստները ծաղր ու ծանակ կրնեն...Մին Կենաց փայտի խաչատուփը և սուրբ միւռնի ոսկեայ աղանին կը գրպանէ, և միւսը եպիսկոպոսական թագը հագած միմոսութիւններ կընէ։ Ոմանք խաչերը ոտքով կը փշրեն և այլք քահանայական սաղաւարտները և զգեստները հագած ծաղրածութիւններ կընեն»<sup>39</sup>։

Գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական, միսիոներ Յոհաննես Լեփսիուսը, ով 1896թ. գարնանը շրջել է Փոքր Ասիայում և վկայություններ հավաքել կոտորածների ականատեսներից, գրում է. «Երզնկայի մէջ հայ կաթոլիկ եկեղեցին հասարակաց ճեմիչի (արտաքնոցի) վերածեցին։ Հիւսնիմանսուրի մէջ եկեղեցին փլուեցաւ և սկիհը ճեմիչ նետեցին,

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 143։

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 51-52։

<sup>32</sup> *Les massacres d'Arménie. Témoignages des victimes*, pp. 132-133, տե՛ս նաև՝ *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*, էջ 120։

<sup>33</sup> *Les massacres d'Arménie. Témoignages des victimes*, pp. 177-178.

<sup>34</sup> Charmetant F., *նշվ. աշխ.*, էջ 70։

<sup>35</sup> «Արարատ», ԻԹ տարի, փետրուար, 1896, էջ 87-88։

<sup>36</sup> *Les massacres d'Arménie. Témoignages des victimes*, p. 237.

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 102։

<sup>38</sup> Սահակեան Ա., *նշվ. աշխ.*, էջ 360-361։

<sup>39</sup> Նույն տեղում։



ժանտարմները ծիսական հանդերձները հագան և հայիոյութիւններով պատարագը ծաղրեցին»<sup>40</sup>:

Հաճախ հոգևոր հաստատությունը պղծելուց հետո գազազած ամբոխը ոչնչացրել է նաև բազմադարյան վանքերի ու եկեղեցիների սրբապատկերները, զարդաքանդակներն ու խաչքարերը<sup>41</sup>, հրկիզել ազգային հաստատությունները: 1895թ. միայն Բաբերդում ու շրջակայքում կողոպտվել ու հրկիզվել է 36 եկեղեցի<sup>42</sup>, Երզնկայի գավառում՝ 12 վանք<sup>43</sup>, Սպարկերտում հիմնահատակ ավերվել են բոլոր եկեղեցիներն ու վանքերը, իսկ դրանց մի մասը վերափոխվել է մզկիթի<sup>44</sup>:

1894-96թթ. կոտորածների ու ավերածությունների քաղաքականությունը թեև ուղղված է եղել հիմնականում հայերի դեմ, այդուհանդերձ դրանից զերծ չեն մնացել նաև ասորիներն ու նրանց ազգային հաստատությունները<sup>45</sup>: 1898թ. Վանի ռուսական փոխիդուպատոս Վլ. Մանսկին, վկայակոչելով նեստորական ասորի վերապրածներից մեկի՝ մելիք Աբդիշույի պատմածը, գրում է, որ 1896թ. կոտորածների ժամանակ ասորիները ևս մեծ կորուստներ են ունեցել, և որ բազմաթիվ շինությունների հետ մեկտեղ քարուքանդ են արվել նաև ասորական եկեղեցիները<sup>46</sup>:

Համիդյան կոտորածների ընթացքում հայկական վանքերի ու եկեղեցիների ոչնչացման առավել հաճախ և կրկնվող եղանակներից է եղել նաև դրանց փոխակերպումը մզկիթների<sup>47</sup>: Հուշարձանների ոչնչացման այս եղանակը դարձյալ ուղեկցվել է ծիսական-կրոնական արարողակարգային այնպիսի տարրերով, ինչպիսիք են՝ մուսուլման հոգևորականի կողմից խաչի ու զանգի տապալումը և ազանի կոչը զանգակատնից, հայ հոգևորականին բռնի ու հրապարակայնորեն մուսուլմանացնելը և այլն: Հարկ է նշել, որ այլատյացության նմանատիպ դրսևորումները հաճախ խրախուսվել կամ ուղղորդվել են հենց թուրք պաշտոնյաների կողմից, ովքեր, թերևս, իրենց վարքագծով փորձել են օրինակ ծառայել մահմեդական զանգվածների համար: Այսպես, Ուրֆայի կոտորածի կազմակերպիչներից մեկը՝ Հուսեյն փաշան, ով բազմիցս երդվել էր, որ եկեղեցին գրավելուն պես ազանի կոչն այնտեղ պետք է հնչեցնի, 1895թ. դեկտեմբերի 17-ի վաղ առավոտյան՝ հարձակումից առաջ, անձամբ է եկել եկեղեցի՝ արարողությանը ներկա գտնվելու ցանկությամբ<sup>48</sup>:

Հայերի ու նրանց ազգային-մշակութային հաստատությունների հանդեպ կույր ատելության համատարած երևույթի հետ մեկտեղ եղել են նաև բացառություններ: Համիդյան կոտորածների տարիներին, ի տարբերություն Վանի շրջակա գյուղերի սրբավայրերի,

<sup>40</sup> Տոքթ. Եօհաննէս Լեւիսիուս, *Հայաստանի ջարդերը. գաղտնի տեղեկագիր*, Թարգմանեց՝ Միքայել Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 273:

<sup>41</sup> Քուեան Է., *Բարձր Հայք. Կարևոր գիտերը*, հատ. Բ, Վիեննա, 1926, էջ 26, 58-59, 78-79:

<sup>42</sup> Ավերված եկեղեցիներն ըստ բնակավայրերի տե՛ս «Դրօշակ», Վիեննա, 1896, թիւ 2, լուսար, էջ 15:

<sup>43</sup> «Դրօշակ», Վիեննա, 1896, թիւ 4, փետրւար, էջ 29:

<sup>44</sup> Հիշատակվում են Չարչարանաց Ս. Լուսավորիչ, Ս. Գևորգ, Ներսէս հայրապետ, Ս. Կիրակոս (այս անվանումով 2 վանք), Ս. Հակոբ, Ավագ վանք, Շողակաթ Ս. Աստվածածնի, Միավոր Ս. Կարապետ, Պողոս-Պետրոս, Ս. Նիկողոս, Սեպուհի Լուսավորիչ վանքերը: Տե՛ս «Դրօշակ», Վիեննա, 1896, թիւ 11, ապրիլ, էջ 86:

<sup>45</sup> 1895-96թթ. կոտորածների գոհ է դարձել շուրջ 55 հազար ասորի: Տե՛ս Naayem J., *Shall this Nation Die?*, New York: Chaldean Rescue, 1921, p. 274. Ի տարբերություն ասորիների՝ կայսրության հույները զերծ են մնացել 1894-96թթ. կոտորածներից ու ավերածություններից, քանի որ Աբդուլ Համիդը խուսափում էր Հունաստանի հետ հարաբերությունների նոր բարդացումից: Տե՛ս Hassiotis I., *The Greeks and the Armenian Massacres (1890-1896)*, Texas-Austin, 1981, p. 84.

<sup>46</sup> Տե՛ս Маевский В., *Несториане Ванского вилайета*, Изв. Штаба Кавк. Военного округа, N 35 Тифлис, 1913, с. 10-11.

<sup>47</sup> Մզկիթների փոխակերպված հայկական եկեղեցիների բազմաթիվ օրինակներ տե՛ս *Les massacres d'Arménie. Témoignages des victimes*. p. 62, 74, 82, 106, 110, 221, ինչպես նաև՝ Charmetant F., նշվ. աշխ., էջ 46-71:

<sup>48</sup> Սահակեան Ա., *նշվ. աշխ.*, էջ 359:

որոնց մեծ մասը հրկիզվել է ու ավերվել, բուն քաղաքը (թե՛ բնակչությունը և թե՛ շինությունները) համեմատաբար քիչ է տուժել՝ շնորհիվ չերքեզ հազարապետ Էմին բեկի<sup>49</sup>։ Նույն կերպ և Մոկսի գավառապետ Մահմուդ-գադե-Բեյդուլահ-բեյը, ով կոտորածի սկզբին բացակայել էր Մոկսից, Վանից շտապ վերադարձել է ու կանխել տեղի հայության կոտորածներն ու ավերածությունները<sup>50</sup>։ Ուլքիլիսեի (գյուղ Բայազետի գավառում) Ս. Հովհաննու վանքն ու շրջակա գյուղերն ավերումից խուսափել են շնորհիվ հայդարանցի Մուստաֆա բեկի, որին օգնել են Միրվա և Նադի աղաները<sup>51</sup>։ 1895-96թթ. շնորհիվ մի ազդեցիկ թուրքի՝ Ջապիթա Մեմուրուի, ջարդերից ու ավերածություններից խուսափել է նաև Չմշկաձագ քաղաքը (Խարբերդի նահանգ), թեև քրդերին հաջողվել է թալանել ու ավերել դրա շրջակա գյուղերի հայերին պատկանող տներն ու եկեղեցիները (առավել մեծ վնասներ են կրել Միատուն, Մուռնա, Բասաբուն, Բեդրեթիլ գյուղերը)<sup>52</sup>։

Այսպիսով, չնայած վերը նշված ազդեցիկ դեմքերի միջամտություններին, այնուամենայնիվ, 1894-96թթ. թե՛ Վանի և թե՛ հատկապես Խարբերդի նահանգներում հայկական մշակութային արժեքների կորուստը զգալի է եղել։ Ըստ սկզբնաղբյուրներից մեկի՝ Վանի նահանգի միայն ութ շրջաններում հաշվել են 125 կողոպտված, ավերված եկեղեցիներ ու վանքեր<sup>53</sup>։ Ինչ վերաբերում է Խարբերդին, ապա թալանն ու ավերածությունները ներառել են նահանգի գրեթե բոլոր բնակավայրերը։ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին ուղղված 1895թ. դեկտեմբերի 14-ի թվակիր մի նամակից տեղեկանում ենք, որ Խարբերդի վիլայեթում կոտորածն սկսվել է հին տոմարով հոկտեմբերի 10-ին Բերդակ գյուղի (Չարսանջակի գավառ) վրա տեղի ունեցած հարձակումով և տարածվել շրջակա գյուղերում. գրեթե ամենուր ազգային հաստատությունները՝ վանքերը, եկեղեցիները, պղծվել են ու հրկիզվել, իսկ քահանաներն ու ուսուցիչները կոտորվել են առանձնակի դաժանությամբ<sup>54</sup>։ 1895թ. Խարբերդի կոտորածից զերծ մնացած եզակի բնակավայրերից էր Ակն քաղաքը։ Սակայն արդեն 1896թ. սեպտեմբերին այն ավերելու համար Երզնկայից գործ է բերվել։ Վերին թաղը, որը զուտ հայաբնակ էր, ամբողջովին ավերվել է, այդ թվում և Ս. Աստվածածին եկեղեցին<sup>55</sup>։ Ըստ Բյիսի հաղորդման՝ միայն 1895թ. հոկտեմբերի ջարդերից հետո Խարբերդի նահանգի բնակավայրերում հաշվվել է 211 ավերված եկեղեցի, վանք ու դպրոց, որոնցից 108-ը՝ Խարբերդ քաղաքում և շրջակա 59 գյուղերում, 19-ը՝ Արաբկիրում և շրջակա գյուղերում, 38-ը՝ Ակնում և շրջակայքում, 6-ը՝ Կապան-Մադենի գավառակում, 13-ը՝ Մալաթիայում և շրջակայքում, 27-ը՝ Դերսիմի գավառում<sup>56</sup>։ Հայր Շարմեստանի հաղորդած տվյալների համաձայն՝ Խարբերդի թեմի շուրջ 60 գյուղերում 1896թ. փետրվարի դրությամբ գործող որևէ հոգևոր կամ ուսումնական հաստատություն չի եղել<sup>57</sup>։

1894-1896թթ. տեղի ունեցած հայկական մշակութային արժեքների ոչնչացումը ներառել է նաև հարյուրավոր ձեռագրատներ ու գրապահոցներ, որոնք պարունակել են հնագույն ձեռագրամատյանների եզակի նմուշներ։ Անշուշտ, համիդյան կոտորածների հետևանքով հայկական ձեռագրական կորստի անգամ մոտավոր պատկերը ստանալը գրեթե անհնար է։ Պատճառը մի կողմից՝ կոտորածներին նախորդող տարիներին

<sup>49</sup> Եփենց Գ., *Սրբավայրեր*, Թիֆլիս, տպ. ընկ. «Վերիչև և Կամենմախեր», 1902, էջ 29։

<sup>50</sup> *Братская помощь пострадавшим в Турции армянам*, том II, отделъ II, с. 123.

<sup>51</sup> «Դրոշակ», Վիեննա, 1896, թիւ 6, 20 փետրար, էջ 41։

<sup>52</sup> «Նոր կեանք», 1898, թիւ 8, 15 ապրիլ։

<sup>53</sup> *Les massacres d'Arménie. Témoignages des victimes*, pp. 97-101.

<sup>54</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 116-117, 119։

<sup>55</sup> Քեչեան Ա., *Ակն եւ ակնցիք*, հ. Բ, Փարիզ, Գեղ. տպ. Խ. Մաթիկեան, 1952, էջ 137։

<sup>56</sup> Bliss Rev. E., *նշվ. աշխ.*, էջ 445։

<sup>57</sup> Charnetant F., *նշվ. աշխ.*, էջ 64։

Օսմանյան կայսրությունում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում, պահպանված հայկական ձեռագրերին վերաբերող ամբողջական տվյալների, իսկ մյուս կողմից՝ կոտորածների ընթացքում ոչնչացված ձեռագրերի ու տպագիր մատյանների ցուցակների բացակայությունն է, անգամ գավառների կտրվածքով: Ինչ վերաբերում է կոտորածները նկարագրող տեղեկագրերին ու զեկուցագրերին, ապա դրանք ավելի հաճախ լուսաբանում են մարդկային կորուստները՝ մասամբ անդրադառնալով մշակութային հաստատությունների ոչնչացմանը, սրբավայրերի պղծմանը, երբեմն նաև ձեռագրերի ոչնչացման եղանակներին: Այդուհանդերձ, հաշվի առնելով համիդյան կոտորածների ընթացքում կողոպտված ու հրկիզված վանքերի ու եկեղեցիների մեծ թվաքանակն ու այն հանգամանքը, որ այդ տարիներին չի եղել կրոնական որևէ հաստատություն, որում նվազագույնը 10 կամ ավելի հնագույն ձեռագրերի նմուշներ չպահվեին<sup>58</sup>, կարելի է ընդամենը մոտավոր պատկերացում կազմել մշակութային այդ արժեքների ոչնչացման ծավալների մասին: Այս հարցում մեզ օգնության են գալիս կոտորածների ականատեսների հուշագրություններն ու տեղեկագրերը, որոնցում եզակի վկայություններ կան առանձին ձեռագրապահոցների կամ գրադարանների ոչնչացման մասին: Այսպես, 1895թ. Ուրֆայի Մայր տաճարի հրկիզումից առաջ թուրքերն ամբողջովին կողոպտել են ու ոչնչացրել նաև եկեղեցու գրապահոցը<sup>59</sup>: Խիզանի (Բիթլիսի նահանգ) Ս. Խաչ վանքում ապաստանած հայերից միակ վերապրողը եղել է շուրջ 1.000 հնատիպ գրքեր ու ձեռագրեր պարունակող գրապահոցի ոչնչացման ականատեսը<sup>60</sup>: 1895թ. թուրքերը Մարաշի Ս. Գևորգ եկեղեցու հրկիզման ժամանակ ոչնչացրել են նաև եկեղեցուն կից խցում պահվող մագաղաթյա սովոր հատորները, որոնք Հայսմավուրք, Ժամագիրք և եկեղեցական գրչագիր այլ մատյաններ են եղել<sup>61</sup>: 1895թ. մեծ կորուստներ է կրել նաև Վարազավանքի գրապահոց-թանգարանը<sup>62</sup>:

Այսպիսով, այսօրինակ եզակի վկայությունները, թեև թույլ չեն տալիս մեզ ամբողջական պատկերացում կազմել տվյալ ձեռագրատանը կամ թանգարանում պահվող ձեռագրերի քանակի ու դրանց ոչնչացման իրական ծավալների մասին, այդուհանդերձ փաստում են, որ համիդյան կոտորածների տարիներին հայկական մշակութային այլ արժեքների հետ զուգահեռ տեղի է ունեցել նաև ձեռագրական ժառանգության զանգվածային ոչնչացում:

Ինչպես արդեն նշվել է, հայկական եկեղեցիներն ու վանքերը միայն աղոթատեղիներ չեն եղել, եկեղեցու շուրջն է ձևավորվել արևմտահայ հոգևոր-մշակութային կյանքը, քաղաքական պայմանների բերումով եկեղեցուն կից և նրա հովանու ներքո են հիմնվել արևմտահայ առաջին կրթօջախները: Այս իմաստով կրթական հաստատությունները ևս կղիտարկենք որպես հայկական մշակութային արժեքների բաղադրիչ մաս:

1894-96թթ. համիդյան կոտորածները լրջորեն խաթարեցին նաև արևմտահայ կրթամշակութային կյանքի զարգացման բնականոն ընթացքը: 1895թ. կառավարության հրա-

<sup>58</sup> Ինչպես Լիմանապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանն է փաստում. «Վասպուրականի ինչպես շեն եղած բոլոր վանքերու մեջ, նույնպես բոլոր եկեղեցիներու մեջ չկար եկեղեցի մը, կամ գյուղ մը, ուր 10-20-30 կոտոր ձեռագիր չգտնվեին, նույնիսկ անհատներու քով, իրենց տուններու մեջը փաթաթված իբրև նվիրական սրբություն կհարգվեին կպահպանվեին»: Տե՛ս Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, Ե-Ձ-Է, մայիս, հունիս, հուլիս, էջ 144:

<sup>59</sup> *Եղեսիոյ տոսկալի դէպքը եւ ողբերգութիւն կոտորածին Եղեսիոյ*, գրեց եղեսիացի հայ մը, Շումլա, Պուլկարիա, տպարան Յ. Անտարանեան, 1904, էջ 15-18:

<sup>60</sup> «Դրօշակ», Վիեննա, 1896, թիւ 16, մայիս, էջ 123:

<sup>61</sup> Գալուստեան Հ. Գր., *նշվ. աշխ.*, էջ 429:

<sup>62</sup> *Հայրենագիտութիւն. Վան քաղաք եւ իւր շրջակաները*, հատոր Ա, Վան, Մելիքսեթեան տպարան, 1913, էջ 29:

մանով գրեթե բոլոր նահանգներում հայկական դպրոցները փակվեցին և ավելի քան մեկ տարի դադարեցին գործել<sup>63</sup>։ Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի պահանջով Տրապիզոնի տեր Ղևոնդ քահանայի կողմից 1896թ. կազմված տեղեկագրում մասնավորապես նշվում է. «Տրապիզոնի արեւելեան գիւղերը, որոնք կրթական մեծ յառաջդիմութիւն ունէին, այժմ միայն 2 դպրոց եւ 2 ուսուցիչ ունին 90 աշակերտներով։ Արեւմտեան կողմի գիւղերու բոլոր դպրոցները գոց են»<sup>64</sup>։ 1894-96թթ. կողոպտվել, ավերվել ու հրկիզվել են հարյուրավոր կրթօջախներ<sup>65</sup>։ Որոշ դեպքերում ժանդարմներն այրել են նաև վարժարաններին տրված արտոնագրերը՝ այդ կերպ լիովին բացառելով տվյալ հաստատության գոյությունը<sup>66</sup>։ Ի տարբերություն վանքերի ու եկեղեցիների՝ ազգային կրթօջախների կրած վնասներն ու ավերածություններն ամփոփող որևէ տեղեկագիր, անգամ գավառների կտրվածքով, մեզ չի հասել։ Մ. Իզմիրլյանի արխիվից դուրս բերված տվյալները վերաբերում են միայն հայ բողոքական վարժարաններին, որոնց համաձայն՝ ավերվել է ութ, հրկիզվել՝ մեկ, գորանցի վերածվել՝ մեկ վարժարան<sup>67</sup>, մինչդեռ հայ լուսավորչական ու կաթոլիկ համայնքներին պատկանող կրթական հաստատությունների կրած կորուստներն ավելի զգալի են եղել։

Այսպիսով, 1894-96թթ. հայկական մշակութային արժեքների ոչնչացման համիդյան քաղաքականությունը ներառել է Օսմանյան կայսրության 11 վարչական միավորներ, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները (Էրզրում, Վան, Բիթլիս, Սվազ, Խարբերդ, Դիարբեքիր, Տրապիզոն, Հալեպ, Ադանա, Իզմիր, Անգորա)։ 1896-1907թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաթիա Օրմանյանը, 1895թ. կոտորածների ընթացքը բաժանելով երեք ուղղությունների՝ 1. Տրապիզոնից Գյումուշխանե, Բաբերդ, Դերջան, Կարին, Բասեն, Բայազեդ, Քղի, Կամախ, Երզնկա, Արճեշ, Ալջավազ, Վան, Շատախ, Կարճկան, Սղերդ, Բաղեշ, Խիզան, Մուշ, Սասուն 2. Սամսոնից Ամասիա, Մարզվան, Եվդոկիա, Սեբաստիա, Նիկոպոլիս, Ջիլե, Կեսարիա, Խարբերդ, Ակն, Արաբկիր, Եդեսիա, Պիրեջիկ, Սևերեկ, Բալու, Դիարբեքիր, 3. Կիլիկիո թեմ՝ Կյուրին Ալպստան, Հաճըն, Գերմանիկ, Մելիտինե, Ադանա, Տարսուն, Մերսին, Չոքմարզվան, Ելնիջեքալե, Այնթափ, Բերիա, Իսկենդերուն, Անտիոք, գրում է, որ նշված թեմերը և քաղաքների շուրջը գտնվող գյուղերից և ոչ մեկը չի խուսափել արհավիրքից և միաժամանակ մանրամասնում է. «Այդ սահմաններու մէջ վանք չէ եղած, որ անձեռնմխելի մնացած ըլլայ, եկեղեցի չէ մնացած, որ կան քանդուած կան պղծուած կան մզկիթի փոխարկուած չլլայ. եկեղեցւոյ զարդ եւ սպաս բոլորովին անհետացած է, եկեղեցական պաշտամունք իսպառ դադարած են, քահանայական դասակարգէն կէսէն ավելին սպանուած և մնացածն ալ կրօնափոխութեամբ ազատած է»<sup>68</sup>։

Ավելին, վերոնշյալ նահանգներում ավերածությունները հաճախ ներառել են ամբողջ քաղամասեր կամ գյուղեր։ Ըստ ամերիկացի միսիոներ Ֆ. Գրինի վկայության՝ 1894-96թթ.

<sup>63</sup> Սիմոնեան Գ. Յ., *Յուշամատեն Պոնտական Ամասիո, Վենետիկ, Մխիթարեան հրատարակություն*, 1966, էջ 716-717։

<sup>64</sup> Յովակիմեան Յ., *Պատմություն հայկական Պոնտոսի*, Պէյրուք, 1967, էջ 168-169։

<sup>65</sup> Տե՛ս Charmetant F., *նշվ. աշխ.*, էջ 46-71, Վահէ Հ., *Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը*, Նիւ Եորք, 1959, էջ 389-392, 402-408, Ճիզմէճեան Մ. Գ., *Խարբերդ եւ իր զաւակները*, Ֆրէզնոյ, 1955, էջ 350, Գասպարեան Հ., *Չմշկածագ եւ իր գիւղերը*, «Պայքար» տպարան, 1969, էջ 247-248, Շէրենց Գ., *նշվ. աշխ.*, էջ 12, 85-86, 100։

<sup>66</sup> Զարդարեան Ե., *Պատմագիրք Տիւրիկ քաղաքի*, Լիբանան, 1972, էջ 282։

<sup>67</sup> Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարան, Մ. Իզմիրլյանի անձնական դիվան, ցուցակ 34, թղթ. 14, վավ. 615։

<sup>68</sup> Օրմանեան Մաղաթիա Արք., *Ազգապատում*, հատ. Գ, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1927, էջ 5028-5030։

կոտորածների արդյունքում 3.300 հայկական գյուղերից 2.500-ը ավերվել է<sup>69</sup>: Համիդյան կոտորածների հետևանքներն ամփոփող տեղեկագրերից ուշագրավ է հատկապես վիճակագրական եզակի աղյուսակը՝ կցված 1896թ. փետրվարին Բարձր դռանը ներկայացված «Վեց մեծ տերությունների դեսպանների կողեկով նուտային»<sup>70</sup>: Այդ տվյալների համաձայն՝ կայսրության 11 վարչական միավորներում 1895թ. թալանվել ու ավերվել են 2493 բնակավայր, 570 եկեղեցի<sup>71</sup>, 76 վանք<sup>72</sup>, 328 քրիստոնեական եկեղեցի վերածվել է մզկիթի, 191 հոգևորական ու քարոզիչ դաժանաբար սպանվել է, որից 12-ը՝ բարձրաստիճան հոգևորականներ: Թեև տեղեկագրում իրականությունն արտացոլված է մասնակիորեն, բացակայում է մասնավորապես ավերված հայկական կրթօջախների թվաքանակը, որոնք ևս զգալի թիվ են կազմել, այդուհանդերձ հնարավորություն է ընձեռում թալանի ու ավերածությունների ծավալները պատկերացնելու համար: Այս առումով կարևոր է նաև Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Իզմիրլյանի կազմած վիճակագրությունը, ըստ որի՝ նշված ժամանակահատվածում հայ լուսավորչական հուշարձաններից կողոպտվել են 791 եկեղեցի, 85 վանք, քանդվել՝ 157 եկեղեցի, 26 վանք, հրկիզվել՝ 50 եկեղեցի, 9 վանք, մզկիթի վերածվել՝ 48 եկեղեցի, 10 վանք, հայ բողոքական ժողովարաններից քանդվել է 11-ը, հրկիզվել՝ 19-ը, մզկիթի վերածվել՝ 1-ը, զորանոցի՝ 1-ը, հայ կաթոլիկ եկեղեցիներից կողոպտվել է 4-ը, ավերվել՝ 2-ը, մզկիթի վերածվել՝ 1-ը<sup>73</sup>:

Այս ամենից հետո ժամանակի մայրաքաղաքի թերթերը, որպես պաշտոնական տեղեկատվություն, գրել են, որ «բարձրագույն իրադեռլ յանձնախումբ մը կազմած է», որը պետք է հանգանակություն կազմակերպեր և հավաքված գումարով կառուցեր ու նորոգեր այն մզկիթները, որոնք վերջին շրջանում քանդվել էին ու վնասվել Անատոլիայում տեղի ունեցած անկարգությունների հետևանքով<sup>74</sup>: Ի պատասխան այդ կեղծիքի՝ 1896թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքն իր «Թաքրիք»-ով Բարձր դռանը հայտնում էր, որ «այդ պաշտոնական ծանուցումը բոլորովին սխալ է: Քանդվածներն ու վնասվածները հայոց սրբարաններն են, թույլ 400-էն անելի. իսկ մզկիթ ըլլալով, մէկ հատ միայն կայ, Արաբկիրի մէջ մզկիթ մը, որ հայոց թաղին կից ըլլալով, այրած է կրակի տուրած հայոց տուններուն հետ»<sup>75</sup>: Պատրիարքարանի այս «Թաքրիքը», սակայն, մնացել է անպատասխան<sup>76</sup>: Արաբկիր քաղաքի ընդհանուր հրդեհի ընթացքում միակ մզկիթի հրկիզման մասին վկայություն կա նաև 1897թ. «Հնչակ» թերթում հրապարակված՝ «Արաբկիրի անլուր կոտորածը» խորագրով տեղեկագրում, ըստ որի՝ քաղաքի հայկական երեք եկեղեցիները և բազմաթիվ դպրոցներ այրվել են, բացառությամբ Մայր տաճարի և առաջնորդարանի, որոնք ամբողջովին կողոպտված են և կիսավեր. «...քաղաքի շուկան ծայրէ իծայր այրուած է մէջտեղի մզկիթով մէկտեղ»<sup>77</sup>:

<sup>69</sup> Greene F., *Armenian Massacres or the Sword of Mohammed*, Philadelphia and Chicago, International Publishing Co., 1896, p. 424.

<sup>70</sup> Stü Lepsius Joh., *Armenien und Europa. Eine Anklageschrift wider der christlichen Großmächte und an das christliche Deutschland*, Berlin, Verlag der Akademischen Buchhandlung W. Faber & Co, 1896, s. 238-243.

<sup>71</sup> Բնագրում՝ աղյուսակի վերջնահաշվարկում, ինչպես նաև գրականության մեջ հանդիպող 568 թվաքանակն անճշտություն է: Տես նույն տեղում, էջ 243, ինչպես նաև Հայրունի Ա., *Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը*, Երևան, 2002, էջ 38:

<sup>72</sup> Բնագրում՝ աղյուսակի վերջնահաշվարկում, ինչպես նաև գրականության մեջ հանդիպող 77 թվաքանակն անճշտություն է: Տես նույն տեղում:

<sup>73</sup> Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարան, Մ. Իզմիրլյանի անձնական դիվան, ցուցակ 34, թղթ. 14, վավ. 615:

<sup>74</sup> «Դրօշակ», Վիեննա, 1896, թիւ 13, 15 մայիս, էջ 100:

<sup>75</sup> Նույն տեղում:

<sup>76</sup> Նույն տեղում:

<sup>77</sup> «Հնչակ», Կենտրոնական օրգան Հնչակեան կուսակցութեան, Լոնդոն, 1897, թիւ 2, 20 փետրվար, էջ 14:

Այսպիսով, 1894-96թթ. համիդյան կոտորածների ընթացքում իրագործված հայկական մշակութային արժեքների զանգվածային ոչնչացումը, անկասկած, արևմտահայության բնաջնջման պետական քաղաքականության բաղկացուցիչ մաս է կազմել: Հայկական մշակութային արժեքները թալանվելուց ու պղծվելուց հետո ավելի հաճախ ոչնչացվել են հրկիզումների, հատուկ այդ նպատակով բերված հրետանու միջոցով, մզկիթների փոխակերպման, պարզապես ավերածությունների իրագործման տարատեսակ եղանակներով:

## **Հայկական մշակութային արժեքների ոչնչացումն ու դրա հետևանքները 1894-1896թթ. համիդյան կոտորածների տարիներին**

*Սեդա Պարսամյան*

### **Ամփոփում**

1894-96թթ. համիդյան կոտորածների տարիներին գրանցվել է հայկական մշակութային արժեքների համակարգված ու զանգվածային ոչնչացում՝ ընդգրկելով կայսրության բոլոր այն նահանգները, որտեղ իրագործվել են կոտորածներ: Ամենուր թուրքերն առանձնակի կատաղությամբ են կործանել հոգևոր-մշակութային հաստատությունները՝ կից շինություններով, և առանձնակի դաժանությամբ սպանել հոգևորականներին: Սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել 1894-96թթ. համիդյան կոտորածների ընթացքում հայկական մշակութային արժեքների, մասնավորապես վանքերի, եկեղեցիների, կրթօջախների, ձեռագրատների, գրադարանների ոչնչացման եղանակները և դրանց հետևանքները:

1894-96թթ. հայկական հոգևոր-մշակութային արժեքները թալանվելուց ու պղծվելուց հետո ավելի հաճախ ոչնչացվել են՝

- հատուկ այդ նպատակով բերված հրետանու միջոցով,
- հրկիզումներով,
- մզկիթների փոխակերպելով,
- պարզապես ավերածությունների միջոցով՝ վերացնելով սրբապատկերները, զարդաքանդակներն ու խաչքարերը,
- հայկական հնագույն ձեռագրերը ոչնչացնելով:

**Քանակի բառեր՝** մշակութային արժեք, մշակութային հաստատություն, մշակութային վանդալիզմ, վանքեր, եկեղեցիներ, ձեռագրատներ, գրադարաններ, ոչնչացում, պետական քաղաքականություն:

## **Destruction of Armenian Cultural Property during the Hamidian Massacres (1894-1896) and Its Consequences**

*Seda Parsamyan*

### **Summary**

During 1894-1896 Hamidian massacres, systematic large-scale destruction of Armenian cultural property took place in all provinces of the empire where the massacres were being carried out. The Turks destroyed religious and cultural buildings and massacred the clergy with meticulous brutality.

This article is an attempt to present the methods and consequences of the destruction of Armenian cultural property, especially churches, monasteries, schools and scriptoriums.

After plunder and desecration in 1894-1896, Armenian cultural property was mostly destroyed by means of:

- artillery, provided specially for that purpose
- arson
- conversion of monasteries and churches into mosques
- destruction of icons, sculptures and khachkars (cross-stones)
- desecration and trampling of ancient Armenian manuscripts.

**Keywords:** destruction, cultural property, cultural vandalism, monasteries, churches, scriptoriums, destruction, libraries, state policy.

### **Уничтожение армянских культурных ценностей в годы абдулгамидовской резни (1894-1896 гг.) и его последствия**

*Седа Парсамян*

#### **Резюме**

Во время гамидовской резни 1894-96 годов было зафиксировано систематическое и массовое уничтожение армянских культурных ценностей, охватывающее все те области империи, где происходила резня. Турки повсюду с особым ожесточением уничтожали духовно-культурные учреждения с прилегающими к ним строениями и с особой жестокостью убивали представителей духовенства.

В данной статье предпринята попытка представить последствия и методы уничтожения армянских культурных ценностей, в особенности церквей, монастырей, учебных заведений, хранилищ рукописей.

После ограбления и осквернения, армянские духовно-культурные ценности чаще всего уничтожались посредством:

- Специально для этой цели привезенной артиллерии,
- Поджога,
- Переделывания храмов и церквей в мечети,
- Разрушения и уничтожения икон, хачкаров и скульптур,
- Уничтожения армянских старинных рукописей.

**Ключевые слова:** культурные ценности, культурные заведения, культурный вандализм, церкви, монастыри, хранилища рукописей, уничтожение, государственная политика.



**ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ  
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ  
(աղբյուրների համեմատական վերլուծության փորձ)**

*Ռոբերտ Թաթոյան*

Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրության և մասնավորապես Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի խնդիրը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության բաղկացուցիչ մասերից մեկն է:

Թուրքիայի կառավարող շրջանները և նրանց կողմից հրահանգավորվող ժխտողական պատմագրությունը լայնորեն շահարկում են արևմտահայության թվաքանակի վերաբերյալ՝ 1878-1914թթ. հաճախ հակասական վիճակագրական տվյալները՝ ձգտելով ապացուցել, որ առաջին «ժողովրդագրության տեսանկյունից Օսմանյան կայսրությունում որևէ Հայաստան գոյություն չի ունեցել», և դրանով իսկ անհիմն էին Հայկական հարցի համատեքստում բարեփոխումներ իրականացնելու արևմտահայության պահանջները, և երկրորդ՝ Հայոց ցեղասպանությանը չէր կարող գոհ գնալ 1,5 միլիոն հայ, քանի որ այդքան հայ բնակչություն Օսմանյան կայսրությունում չկար<sup>1</sup>:

Հոդվածում ներկայացվում և վերլուծության են ենթարկվում Էրզրումի նահանգի<sup>2</sup> 1878-1914թթ. հայ բնակչության թվաքանակին վերաբերող հիմնական ամբողջական վիճակագրական տվյալները՝ դասակարգված ըստ ծագման՝ օսմանյան, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, հայկական այլ, ռուսական և արևմտյան: Կազմվել են օսմանյան, հայկական, ռուսական ու արևմտյան հեղինակների տվյալների ընդհանրական-համեմատական աղյուսակներ:

Փորձ է արվել ներկայացնելու Մեծ եղեռնի նախօրյակին Էրզրումի նահանգի հայ բնակչության մոտավոր թվաքանակը գավառակ առ գավառակ՝ հաշվումները հիմնելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների վրա և ճշտելով դրանք Մեծ եղեռնը վերապրածների կողմից հաղորդվող տեղեկությունների, արևմտահայ փախստականների հաշվառման տվյալների<sup>3</sup> և հայկական օժանդակ այլ սկզբնաղբյուրների միջոցով:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ McCarthy Justin, *Armenian Terrorism: History as a Poison and Antidote*, Louisville University, Kentucky, USA, *Proceedings of Symposium on International Terrorism*, Ankara University Press, 1984, էջ 91:

<sup>2</sup> Օսմանյան կայսրության տարածքը տրոհված էր վարչատարածքային մեծ և փոքր միավորների: Դրանցից խոշորագույնը վիլայեթներն էին (հայկական աղբյուրներում՝ նահանգ), դրանք բաժանվում էին սանջակների (գավառ), սանջակները՝ կազաների (գավառակ), իսկ կազաները՝ նահիեների (գյուղախումբ): Վերոհիշյալ վարչատարածքային միավորների համար մենք հավասարապես գործածում ենք թե՛ թուրքերեն պաշտոնական «վիլայեթ», «սանջակ», «կազա», «նահիե», թե՛, համապատասխանաբար, հայերեն պատմագիտական գրականության մեջ ընդունված «նահանգ», «գավառ», «գավառակ» և «գյուղախումբ» համարժեք անվանումները:

Էրզրումի նահանգի գավառների, գավառակների և բնակավայրերի անունները տրված են ըստ Հայկական համառոտ հանրագիտարանի «Էրզրումի նահանգ» բառոցովածում զետեղված ցուցակի (տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Դաստակերտ-Կովսական, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 1995, էջ 239-242):

<sup>3</sup> Փախստականների հաշվառման տվյալների միջոցով Էրզրումի նահանգի որոշ գավառակների հայ բնակչության թվաքանակի ճշտման մեթոդը կիրառվել է հայ ուսումնասիրող Գեղամ Բադալյանի կողմից (տե՛ս Բադալյան Գ., Էրզրումի վիլայեթի որոշ կազանների հայ բնակչության թվաքանակի ճշգրտման ըստ Արեւելեան Հայաստանում ապաստանած արեւմտահայ գաղթականների 1914-1915ին կազմուած վիճակագրական ցուցակների, *Հայկազեան Հայագիտական Հանդես*, Պէրթուր, 2000, էջ 207-224):



### ա. Էրզրումի նահանգի վարչատարածքային բաժանումը 1878-1914թթ.

Էրզրումի նահանգը կազմավորվել է 16-րդ դարում<sup>4</sup>: 19-րդ դարի 30-60-ական թթ. այն ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի մեծ մասը: 1875թ. դրությամբ բաժանվում էր Էրզրումի, Կարս-Չլդըրի, Վանի, Բիթլիսի, Հաքյարիի և Խոզաթի (Դերսիմ) գավառների<sup>5</sup>: 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանին են անցնում Արդահանն ու Կարսը, իսկ օսմանյան վերահսկողության տակ մնացած նահանգի տարածքի կազմից դուրս են հանվում Վանը և Մուշը:

1880-ական թթ. սկզբներին Էրզրումի նահանգը բաժանվում էր 4 սանջակների, 20 կազանների և 142 նահիեների: Դրանք էին՝ 1) Էրզրումի սանջակ. բաժանված էր 7 կազանների՝ Օվա, Բասեն, Թորթում, Խնուս, Քըղի, Դերջան և Կիսկիմ, 2) Բաբերդի սանջակ, որի կազմի մեջ էին մտնում Բաբերդ, Սպեր, Քաղկիթ և Շեյրան կազանները, 3) Երզնկայի սանջակ. կազաններն էին՝ Երզնկա, Կամախ, Ռեֆահիե (Կերճանիս), Գուրուչայ, 4) Բայազետի սանջակ՝ Բայազետ, Դիադին, Ղարաքիլիսե, Ալաշկերտ և Այնթափ կազաններով<sup>6</sup>:

1888թ. Բաբերդի սանջակը լուծարվում է, Բաբերդը և Սպերը՝ որպես կազաներ, ընդգրկվում են Երզնկայի սանջակի կազմի մեջ, այնուհետև մտնում են Էրզրումի սանջակի կազմի մեջ (1890-ական թթ. սկզբին): Քաղկիթն ու Շեյրանը մտնում են Տրապիզոնի նահանգի Գյումուշխանե գավառի կազմի մեջ<sup>7</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Էրզրումի նահանգի վարչական բաժանումն ուներ արդեն հետևյալ պատկերը. 1) Էրզրումի գավառ. բաղկացած էր 9 գավառակներից՝ Էրզրում, Բաբերդ, Բասեն, Խնուս, Քըղի, Դերջան, Կիսկիմ, Սպեր և Նամրվան. 2) Երզնկայի գավառ, որի կազաններն էին 5-ը՝ Երզնկա, Կամախ, Ռեֆահիե (Կերճանիս), Գուրուչայ և Բոլոմեր. 3) Բայազետի գավառ՝ կազմված Բայազետի, Դիադինի, Ղարաքիլիսեի, Ալաշկերտի և Այնթափի կազաններից<sup>8</sup>:

Էրզրումի նահանգը բաժանված էր 8 եկեղեցական թեմերի միջև, որոնք էին՝ 1) Կարինի արքեպիսկոպոսական վիճակ (պարունակում էր Էրզրումի, Խնուսի, Թորթումի, Սպերի և Կիսկիմի գավառակները). 2) Երզնկայի եպիսկոպոսական վիճակ (ընդգրկում էր Երզնկայի, Ռեֆահիեի, Գուրուչայի գավառակները). 3) Բաբերդի եպիսկոպոսական վիճակ (իրավասությունները տարածվում էին Բաբերդի գավառակի վրա). 4) Բասենի եպիսկոպոսական վիճակ (Բասենի գավառակ). 5) Դերջանի եպիսկոպոսական վիճակ (Դերջանի գավառակ). 6) Կամախի վանական վիճակ (ընդգրկում էր Քեմախ և Գուրուչայ գավառակները). 7) Խորճեանի (Քըղիի) եպիսկոպոսական վիճակ (Քըղիի գավառակ). 8) Բագրևանդի եպիսկոպոսական վիճակ (ընդգրկում էր Բայազետի սանջակը)<sup>9</sup>:

<sup>4</sup> 1533թ.՝ սկզբնապես՝ որպես «Էյալեթ», իսկ ըստ 1864 թ. վարչական բարեփոխումների օրենքի՝ «վիլայեթ»:

<sup>5</sup> Տե՛ս Krikorian Mesrob K., *Armenians in the Service of the Ottoman Empire: 1860-1908*, Routledge & Kegan Paul, London, 1977 էջ 39:

<sup>6</sup> Տե՛ս Փափագեանց Վ., *Թյուրքահայաստանի վիլայեթները*, «Տարագ», 1891, հունվար 13:

<sup>7</sup> Տե՛ս Birken A., *Die Provinzen des Osmanischen Reiches*, Wiesbaden, Reichert, 1976, էջ 147:

<sup>8</sup> Տե՛ս Պիպեճեան Ա., *Օսմանեան պետություն*, Կ. Պոլիս, Տպագրութիւն Արշակ Կարօեան, Պապը Ալի ճատեւի, 1913, էջ 11:

<sup>9</sup> Տե՛ս Օրմանեան Մ., *Հայոց եկեղեցին եւ իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը*, Կ. Պոլիս, հրատարակիչը Վ. եւ Հ. Տեր-Ներսեսեան, 1911, էջ 261:

**բ. Օսմանյան աղբյուրները Էրզրումի նահանգի հայ բնակչության  
թվաքանակի վերաբերյալ**

Օսմանյան վիճակագրական տվյալները ներկայացնում են 1878-1914թթ. Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի հետևյալ պատկերը.

1. 1880թ. վիճակագրություն՝ 49,599 շունչ (միայն արական բնակչություն)<sup>10</sup>:
2. 1887թ.՝ 106,768 շունչ<sup>11</sup>:
3. 1881/82-1893թթ. մարդահամար՝ 109,808 շունչ<sup>12</sup>:
4. 1906թ. մարդահամար՝ 118,169 շունչ<sup>13</sup>:
5. 1914թ. վիճակագրական տվյալներ՝ 136,618 շունչ<sup>14</sup>:

**Աղյուսակ 1. Օսմանյան մարդահամարների տվյալները Էրզրումի վիլայեթի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914թթ.<sup>15</sup>**

|   | Վարչական միավոր | 1887թ.         | 1881/82-1893թթ. |        |        |        | 1906թ.         |        |        | 1914թ.         |
|---|-----------------|----------------|-----------------|--------|--------|--------|----------------|--------|--------|----------------|
|   |                 | ընդհ.          | ար.             | իգ.    | ընդհ.  | ար.    | իգ.            | ընդհ.  | ընդհ.  |                |
| 1 | Էրզրումի գավառ  | 67,792         | 44,591          | 36,342 | 80,933 | 39,926 | 37,788         | 77,714 | 97,744 |                |
| 2 | Երզնկայի գավառ  | 31,091         | 9,926           | 9,334  | 19,260 | 12,161 | 11,481         | 23,642 | 25,462 |                |
| 3 | Բայազետի գավառ  | 7,885          | 5,228           | 4,387  | 9,615  | 4,183  | 3,740          | 7,923  | 13,412 |                |
| 4 | Խնուսի գավառ    | -              | -               | -      | -      | 5,002  | 3,888          | 8,890  | -      |                |
|   | <b>Ընդամենը</b> | <b>106,768</b> | <b>109,808</b>  |        |        |        | <b>118,169</b> |        |        | <b>136,618</b> |

Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան մարդահամարների տվյալները քիչ աղերս ունեն իրականության հետ: Նախ, ինչպես ակնհայտ երևում է աղյուսակում բերված տվյալներից, իգական բնակչությունը պարզապես թերհաշվառվել է շուրջ 20%-ով<sup>16</sup>:

<sup>10</sup> Տե՛ս *British Documents on Ottoman Armenians*, vol. 2, Ankara, Türk Tarih kurumu, 1983, էջ 129:

<sup>11</sup> Այս տվյալները գետնելված են 1887 թ. British Consular Trade Report – ում, որից օգտվել է անգլիացի ճանապարհորդ Հ. Լինչը՝ նշելով, որ դրանք պետք է ավելացնել 7%-ով (տե՛ս Линч Х.Ф.Б., *Армения. Путевые очерки и этюды*, т.2, Тифлис, типография М. Мартиросянца, 1910, էջ 532):

<sup>12</sup> Տե՛ս Karpaz Kemal H., *Ottoman population 1830-1914: Demographic and Social Characteristics*, Wisconsin, The University of Wisconsin Press, 1985, էջ 124: Այդ թվում կաթոլիկներ՝ 6,730 շունչ, բողոքականներ՝ 1,940 (մարդահամարում նշվում են առանց ազգային պատկանելության):

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 162. հայ կաթոլիկների թիվն էր՝ 6,870 շունչ, բողոքականների՝ 1,989:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 170. հայ կաթոլիկներ՝ 8,720 շունչ, բողոքականներ՝ 2,241:

<sup>15</sup> Հաշվարկը կատարվել է մեր կողմից ըստ աղբյուրում առկա տվյալների:

<sup>16</sup> Ամերիկացի պատմաբան Ջասթին ՄաքՔարթին, գլխավորապես հաշվի առնելով հենց այդ հանգամանքը, փորձում է շտկել 1914թ. թուրքական տվյալը՝ հասցնելով նահանգի հայ բնակչության թիվը մինչև 163,218-ի (տե՛ս McCarthy Justin, *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*, N.Y. University Press, 1983, էջ 77): Ավելորդ է նշել, որ այդ թիվը նույնպես իրականից ցածր է:

Բացի դրանից, օսմանյան տվյալների՝ իրականությանը չհամապատասխանելը բացահայտ երևում է Առաջին աշխարհամարտի առաջին ամիսներին Արևելյան Հայաստանում ապաստանած Էրզրումի նահանգից գաղթականների հաշվառման տվյալների հետ դրանց համադրման միջոցով: Բաղդատենք 1914թ. օսմանյան վիճակագրությունը 1915թ. հունվարի 30-ին կատարած գաղթականների մեկօրյա մարդահամարի տվյալների հետ<sup>17</sup>:

**Աղյուսակ 2. Էրզրումի նահանգի մի քանի գավառակների հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին**

|   | Վարչական միավոր     | 1914թ. Օսմանյան վիճակագրություն | 1915թ. Մեկօրյա վիճակագրություն | Տարբերությունը,% |
|---|---------------------|---------------------------------|--------------------------------|------------------|
| 1 | Բասենի գավառակ      | 10,046                          | 12,914                         | 28,5             |
| 2 | Նամրվանի գավառակ    | 556                             | 655                            | 17,8             |
| 3 | Դիադինի գավառակ     | 904                             | 1,111                          | 22,8             |
| 4 | Ղարաքիլիսեի գավառակ | 3,195                           | 6,034                          | 88,8             |
| 5 | Ալաշկերտի գավառակ   | 4,202                           | 7,732                          | 84,0             |
|   | <b>Ընդամենը</b>     | <b>18,903</b>                   | <b>28,446</b>                  | <b>50,4</b>      |

Ինչպես տեսնում ենք, թեև մեկօրյա մարդահամարի ցուցակը թերի է, ոչ բոլոր հայկական գյուղերի բնակիչներին էր հաջողվել խուսափել կոտորածից և հաղթահարել գաղթի ճանապարհի դժվարությունները, սակայն անգամ դրա թերի տվյալներով Ռուսաստանին սահմանակից գավառակներն ունեին շուրջ 50%-ով ավել բնակչություն, քան ցույց է տրված թուրքական վիճակագրության կողմից:

**գ. Հայկական աղբյուրները Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ**

**§ 1. Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակն ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալների**

1878-1914թթ. Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ առատ վիճակագրական նյութ են պարունակում հայկական աղբյուրները:

Այսպես, համաձայն Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից 1878-80թթ. Արևմտյան Հայաստանում անցկացված մարդահամարի արդյունքների, որոնք 1880թ. ամռանը

<sup>17</sup> Стн Однодневная перепись беженцев из Турции, Персии и из местъ, пограничныхъ съ Турцией (армянъ, айсоровъ, грековъ и пр.) 1914-1915г., Эриванъ, Типография "Луйсь", 1915, էջ 68:

պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից ներկայացվել էին Օսմանյան Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջորջ Գոշենին, նահանգում բնակվում էր 134,000 հայ<sup>18</sup> (1881թ. հայոց պատրիարքարանի նորացված և ճշտված ցուցակի տվյալներով՝ 136,147 հայ)<sup>19</sup>:

1902թ. Օսմանյան կայսրության հայկական եկեղեցական թեմեր ուղարկված շրջաբերական նամակով հայ բնակչության ընդհանուր հաշվառում է նախաձեռնել պատրիարք Մաղաքիա Օրմանյանը<sup>20</sup>: Օրմանյանի տվյալների համաձայն՝ նահանգի հայ բնակչության ընդհանուր թիվն էր 203,400 շունչ<sup>21</sup>:

1912թ. Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ հայոց պատրիարքարանին կից ստեղծված Ապահովության հանձնաժողովը պատրիարքարանի տվյալների հիման վրա պատրաստել և մեծ տերությունների դեսպաններին է ներկայացրել երկու վիճակագրական աղյուսակներ, որոնք արտացոլում էին 1882 և 1912թթ. Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակը: Ըստ այդ տվյալների՝ 1882թ. Էրզրումի նահանգի հայ բնակչության թիվն էր 280,000<sup>22</sup>, իսկ 1912թ.՝ 215,000 շունչ<sup>23</sup>:

Հայոց պատրիարքարանի կողմից Էրզրումի նահանգի հայ բնակչության հաշվառում է իրականացվել և Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 1913-14թթ.: Այդ մարդահամարի տվյալներով<sup>24</sup> նահանգում բնակվում էր 202,389 հայ<sup>25</sup>:

<sup>18</sup> Այդ թվում՝ լուսավորչական՝ 110,000, կաթոլիկ՝ 10,000, բողոքական՝ 1,000, ալևի և դզլաշ հայեր՝ 10,000, բոշա՝ 3,000 (տե՛ս *British documents...*, էջ 83): ՀՀ գրականության և արվեստի թանգարանի Թ. Ազատյանի ֆոնդում պահպանվել են պատրիարքարանի՝ 1878-80թթ. մարդահամարի վիճակագրական գյուղացուցակները նահանգի որոշ թեմական վիճակների համար՝ կազմված Գարեգին Սրվանձտյանցի կողմից: Այդ վիճակագրական ցուցակների տվյալներն են. Էրզրումի գավառակ՝ 31,200, Սպեր՝ 3,000, Կիսկիմ՝ 8,350, Դերջան՝ 12,000, Բասեն՝ 18,000, Բայազետ և Ալաշկերտ՝ 13,000, Քեմախ՝ 6,500, Կերմանիս (Ռեֆահիյե)՝ 1,100 շունչ հայ (տե՛ս Սրվանձտյանց Գ., *Երկեր*, հ.2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 479-514):

<sup>19</sup> Այդ թվում՝ լուսավորչական՝ 118,763, կաթոլիկ՝ 9,056, բողոքական՝ 659, մահմեդական (ալևի և դզլաշ հայեր)՝ 7,669 (տվյալները տրամադրվել են Ավստրիայի դեսպանին, այլ մանրամասներ բացակայում են (տե՛ս *Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи (26 ноября 1912 г.-10 мая 1914 г.)*, Петроград, государственная типография, 1915, էջ 273):

<sup>20</sup> Այդ հաշվառման տվյալները հրապարակվել են 1906թ. բելգիացի դիվանագետ վան դեն Սթեյնի «Ոչ մահմեդական օսմանահպատակների իրավական դրությունը» երկում (տե՛ս van den Steen de Jehay F., *De La Situation Legale des Sujets Ottomans Non-Musulmans*, Bruxelles, Oscar Schepens & Co, 1906, էջ 51 (միայն լուսավորչական հայերի թիվը)), այնուհետև Օրմանյանի՝ 1910 թ. «Հայոց եկեղեցի» ուսումնասիրությանը կից:

<sup>21</sup> Որից՝ լուսավորչական հայեր՝ 190,000, կաթոլիկներ՝ 9,500, բողոքականներ՝ 3,900 (տե՛ս Օրմանեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 261):

<sup>22</sup> Բնակչության բաշխումն ըստ գավառների և գավառակների բացակայում է (տե՛ս *Population Armenienne da la Turquie avant la Guerre. Statistics etablies par le Patriarcat Armenien de Constantinople*, 1920, էջ 9):

<sup>23</sup> Տե՛ս Թեղդիկ, *Ամենուն տարեցոյցը*, Կ.Պոլիս, տպագրութիւն Մ. Յովակիմեան, 1922, էջ 261 (բաշխումն ըստ գավառների տե՛ս աղյուսակ 3):

<sup>24</sup> Պատրիարքարանը հասկանալի պատճառներով չէր հասցրել ամփոփել և հրատարակել 1913-14թթ. մարդահամարի արդյունքները: Այս մարդահամարի գյուղացուցակները ավելի ուշ հանրագումարի է բերել ֆրանսահայ ուսումնասիրող Ռայմոն Գևորգյանը (տե՛ս Kevorkian Raymond H., Paboudjian Paul B., *Les Armeniens dans l'Empire Ottoman a la veille du genocide*. Editions d'Art et d'Histoire ARHIS, Paris, 1992):

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 59, 417-460: Էրզրումի գավառակում մարդահամարը կատարվել է 1913 թ. ամռանը (օգոստոսի 12-31), անմիջական կատարողն էր «Ազգագրական մասնաժողովը» (տե՛ս Բուեան Յ., *Բարձր Հայք*, հատոր Ա, *Կարին քաղաքը*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1925, էջ 86):

1914թ. ամռանը Արևմտյան Հայաստան ուխտագնացություն է կատարել ռուսահպատակ հայ հոգևորական Ռ. Բեկզուլյանցը: Իր ճանապարհորդությանը նվիրված գրքում հեղինակը գետեղում է նաև 1914 թ. Կարնո առաջնորդարանի մարդահամարի ցուցակը, որի տվյալները փոքր-ինչ տարբերվում են վերոնշյալ թվերից: Ըստ Ռ. Բեկզուլյանցի՝ նահանգի հայ բնակչության թիվն էր 196,230, որից

**Աղյուսակ 3. Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակն ըստ հայոց պատրիարքարանի տվյալների, 1878-1914թթ.**

|   | Վարչական միավոր | 1880թ.         | 1882թ.         | 1902-10թթ.     | 1912թ.         | 1914թ.         |
|---|-----------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|
| 1 | Էրզրումի գավառ  | -              | -              | 152,500        | 163,000        | 138,526        |
| 2 | Երզնկայի գավառ  | -              | -              | 35,700         | 32,000         | 37,612         |
| 3 | Բայազետի գավառ  | -              | -              | 15,200         | 20,000         | 26,251         |
|   | <b>Ընդամենը</b> | <b>136,147</b> | <b>280,000</b> | <b>203,400</b> | <b>215,000</b> | <b>202,389</b> |

Մեծ եղեռնի նախօրյակին Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակին վերաբերող հայոց պատրիարքարանի տվյալները (203,000-215,000 շունչ) շուրջ 1,5 անգամ բարձր են օսմանյան տվյալից (136,618 շունչ) և այդ առումով շատ ավելի մոտ իրականությանը, սակայն գավառակ առ գավառակ պատրիարքարանի տվյալների քննությունը ցույց է տալիս, որ դրանք որոշ դեպքերում զերծ չեն թերություններից<sup>26</sup>:

**§ 2. Հայկական այլ աղբյուրների վիճակագրական տվյալները**

Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ ուսումնասիրողներից նահանգի հայ բնակչության վերաբերյալ ամբողջական վիճակագրական տվյալներ են հաղորդում Վահան վարդապետ Պարտիզակցին, Ալեքսանդր Երիցյանը, Մ. Ավետիսյանը, Ա. Դոն և այլք:

Ըստ Վահան Պարտիզակցու՝ 1879թ. լույս տեսած «Խոսք զՀայրենեաց» աշխատությանը կից վիճակագրության՝ նահանգի հայ բնակչության թիվն էր 170,000 շունչ<sup>27</sup>: 1880թ. նոյեմբերի 15-ին «Մասիս» թերթում հրապարակվում է Վահան Պարտիզակցու վիճակագրական մեկ այլ ցուցակ, որի համաձայն՝ նահանգն ուներ 17,900 տուն հայ բնակչություն<sup>28</sup>: Հեղինակը նշում է, որ վիճակագրությունը քաղել է «կէս պաշ-

5,723-ը ժամանակավորապես բացակայում էին (տե՛ս Бекгульянц Р., *По Турецкой Армении. Впечатления от поездки летом в 1914 году*, Ростов на Дону. Типография Я. М. Искандарова, 1914, էջ 68). Ռ. Բեկգուլյանցը Կեռնանիս և Ալաշկերտ քաղաքների բնակչության թվաքանակի մասին տվյալները (2,821 շունչ) վերցրել է Ա.-Դոյից՝ ստանալով հանրագումար թիվը՝ 200,278 շունչ:

Գ. Բադալյանի կարծիքով Ռ. Բեկգուլյանցի կողմից բերվող վիճակագրական աղյուսակի տվյալները պատրիարքարանի 1913-14թթ. մարդահամարի նախնական տարբերակն են (տե՛ս Բադալյան Գ., *նշվ. աշխ.*, էջ 221):

<sup>26</sup> Հայոց պատրիարքարանի վերոնշյալ հինգ տվյալներից այն հիմքերը, որոնց վրա կատարվել են հաշվումները, այսինքն՝ մարդահամարների ամբողջական գյուղացուցակներն առկա են միայն 1878-80թթ. և 1913-14թթ. համար: Օսմանյան մարդահամարների դեպքում գյուղացուցակներն ընդհանրապես բացակայում են և առ այսօր հայտնի չեն անգամ թուրքական պատմագրությանը:

<sup>27</sup> Տե՛ս Պարտիզակցի Վ., *Խոսք զՀայրենեաց*, Կ. Պոլիս, տպ. Յ. Գ. Փալազաշեան, 1911, էջ 49 (տվյալների բաշխումն ըստ գավառների տե՛ս աղյուսակ 4):

<sup>28</sup> Տե՛ս «Վիճակագիր Հայոց ի Թուրքիա», «Մասիս», 1880թ., նոյեմբեր 15/27 (տե՛ս նաև աղյուսակ 4):

տօնական կամ անձնական կերպով գտած աղբիւրներէ»<sup>29</sup>: Ըստ Վահան Պարտիզակցու՝ հայ բնակչության հստակ թվաքանակ տալ անկարելի է, «վասնզի Թուրքիոյ մէջ անձ համբերը անհնար է, ո՛չ Օսմանեան պետութիւնը եւ ո՛չ ազգային որեւէ իշխանութիւն կարող է առ այդ»: Հեղինակի դիտարկմամբ մեկ տան շնչերի միջին թիվը գյուղերում պէտք է ընդունել 8, իսկ քաղաքներում՝ 5-6 շունչ, ընդհանուր միջինը՝ 7 շունչ<sup>30</sup>:

Հայ ուսումնասիրող Ա. Երիցյանցի՝ 1880թ. կազմած վիճակագրությամբ նահանգն ուներ 176,490 շունչ հայ բնակչություն<sup>31</sup>: Հեղինակն իր հաշվարկները կատարելիս որպէս աղբյուր օգտագործել է զինապարտների և աշարի<sup>32</sup> զանձման ցուցակները, Էրզրումի առաջնորդարանի արխիվի նյութերը, թուրքական նահանգային սպանմաններից<sup>33</sup> և այլ տպագիր աղբյուրներից քաղված տվյալներ:

1890թ. Օսմանյան կայսրության, այդ թվում և Էրզրումի վիլայեթի ազգաբնակչության վերաբերյալ վիճակագրական տվյալներ է հաղորդում հայ ուսումնասիրող Մ. Ավետիսյանը, որոնց համաձայն՝ նահանգում բնակվում էր 420,000 հայ<sup>34</sup>:

1912թ. լույս է տեսել հայ պատմաբան, տնտեսագետ և վիճակագիր Ա.-Դոյի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը ներկայացնում է Էրզրումի վիլայեթի վիճակագրական պատկերը 1909թ. Արևմտյան Հայաստան կատարած իր ճանապարհորդության ընթացքում հավաքած նյութերի հիման վրա: Ա.-Դոն իր վիճակագրությունը կազմելիս հիմնականում օգտվել է առաջնորդարաններում պահվող տարբեր ցուցակներից: Ըստ Ա.-Դոյի՝ նահանգի հայ բնակչության թիվն էր 159,593 շունչ<sup>35</sup>:

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Տե՛ս «Մասիս», 1881թ., փետրվար 5/17: 1880-ական թթ. սկզբներին հայկական բարեփոխումների անցկացման շուրջ ակտիվ քննարկումների փուլում Վահան Պարտիզակցին արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տվյալներ է տրամադրել նաև Օսմանյան Թուրքիայում անգլիացի և իտալացի դիվանագետներին: Մասնավորապես, համաձայն Տրապիզոնում Բուալիայի հյուպատոս Սոլանելլիի տվյալների (1881թ.)՝ նահանգում կար 17,200 տուն հայ, այդ թվում՝ Էրզրումի գավառ՝ 10,600, Երզնկայի գավառ՝ 5,100 և Բայազետի գավառ՝ 1,500 տուն: Ինչպես նշում է Սոլանելլին, վիճակագրական տեղեկությունները նրան տրամադրվել է «հատուկ առաքելությամբ մը շրջող անձն մը գրեթե հայերեն բնակուած Տաճկաստանի ամեն գավառներուն մէջ, ուստի և բնականապես մեծագույն ճշտության երևույթ ունի» (տե՛ս Սոլանելլի Կ., Տեսություն ի վերայ գավառաց Հայաստանի, «Բազմավեպ», 1882, հ. 40, էջ 291: Անգլիացի դիվանագետներին Վահան Պարտիզակցու հաղորդած տվյալները տե՛ս British documents..., էջ 131):

<sup>31</sup> Տե՛ս Ерицов А., *Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении*, Тифлис, Тип. Глав. Упр. Наместника Кавказскаго, 1881, էջ 29-35 (տե՛ս նաև աղյուսակ 4):

<sup>32</sup> Հարկի տեսակ Օսմանյան կայսրությունում:

<sup>33</sup> Նահանգային իշխանությունների կողմից հրատարակվող տարեգրքեր, որոնք տեղեկություններ էին պարունակում տվյալ նահանգի սահմանների և վարչատարածքային բաժանման, բնակավայրերի, բնակչության թվաքանակի, կառավարման մարմինների մասին:

<sup>34</sup> Տե՛ս Մ. Ա., Թուրքիայի հայերն եւ իրենց դրացիներ, Մարսել, տպ. Մ. Փորթուգալեանի, 1890, էջ 44 (տե՛ս նաև աղյուսակ 4): Հեղինակը նշում է, որ վիճակագրական աղյուսակը կազմելիս օգտվել է թուրքական, հայկական և արևմտյան մի շարք աղբյուրներից, այդ թվում «Թուրքաց 1878ի Սալնամեն եւ 1889ին երկրին մէկ մասին պաշտօնապէս շինուած ազգահամարը, Ազգային պատրիարքարանի պաշտօնեաների տեղեկագիրները, եւրոպական մի քանի կարեւոր աշխարհագիրների վիճակագրութիւնները եւ ադոնց վրայ աւելցունելով ստացուած նորագոյն ծանօթութիւններ» (նույն տեղում, էջ Թ):

<sup>35</sup> Տե՛ս Ա.-Դո, *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները*, Երևան, տպ. «Կուլտուրա», 1912, էջ 226-227 (տե՛ս նաև աղյուսակ 4):

**Աղյուսակ 4. 1878-1914թթ. Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հայկական ոչ պաշտոնական աղբյուրների վիճակագրական տվյալները**

|                          | Էրզրումի<br>գավառ              | Բայազետի<br>գավառ             | Երզնկայի<br>գավառ             | Գումար                   |
|--------------------------|--------------------------------|-------------------------------|-------------------------------|--------------------------|
| 1879թ.,<br>Վ. Պարտիզակցի | 120,000                        |                               | 50,000                        | <b>170,000</b>           |
| 1880թ.,<br>Վ. Պարտիզակցի | 12,800<br>(տուն) <sup>36</sup> | 1,500<br>(տուն) <sup>37</sup> | 3,600<br>(տուն) <sup>38</sup> | <b>17,900<br/>(տուն)</b> |
| 1880թ.,<br>Ա. Երիցյանց   | 89,916                         | 10,354                        | 76,220                        | <b>176,490</b>           |
| 1890թ.,<br>Մ. Ավետիսյան  | 390,000                        |                               | 30,000                        | <b>420,000</b>           |
| 1909թ., Ա-Դո             | 117,817                        | 25,095                        | 16,681                        | <b>159,593</b>           |

Վերոնշյալ տվյալներից արժեքավոր աղբյուրագիտական նշանակություն ունեն և կարող են օգտագործվել համապատասխան ժամանակաշրջանին վերաբերող հայոց պատրիարքարանի վիճակագրությունը ճշտելու համար թերևս միայն Երիցյանցի և Ա-Դոյի տվյալները, քանի որ միայն դրանք են պարունակում գյուղացուցակներ<sup>37</sup>։ Որոշակի արժեք են ներկայացնում Վահան Պարտիզակցու ըստ թեմերի տվյալները, քանի որ հեղինակը նշում է տվյալ թեմում հաշվառված հայաբնակ բնակավայրերի թիվը, ինչը հնարավորություն է տալիս այն համեմատելու եկեղեցական ծագում ունեցող այլ վիճակագրական ցուցակների հետ։

**դ. Ռ-ուս և արևմտյան հեղինակների վիճակագրական տվյալները Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ**

Նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական ամբողջական տվյալներ են պարունակում անգլիական և ռուսական դիվանագիտական ներկայացուցիչների (հյուպատոսների) զեկույցները, ռազմական հետախույզների տեղեկագրերը։ Օտարերկրյա ճանապարհորդների և ուսումնասիրողների վիճակագրական տվյալներից լայն տարածում է գտել Վիտալ Քիների վիճակագրությունը։

Ըստ Վ. Քիների վիճակագրության՝ նահանգի հայ բնակչության թիվը կազմում էր 134,967 շունչ<sup>40</sup>։

<sup>36</sup> Այդ թվում՝ Կարինի թեմ (Սպեր, Կիսկիմ, Նարման, Խոտորջուր)՝ 84 հայաբնակ գյուղ, 7000 տուն, Բաբերդի թեմ՝ 22 գյուղ, 900 տուն, Բասենի թեմ՝ 34 գյուղ, 1500 տուն, Դերջանի թեմ՝ 43 գյուղ, 1200 տուն, Քողիի թեմ՝ 64 գյուղ, 2200 տուն։

<sup>37</sup> 33 հայաբնակ գյուղ։

<sup>38</sup> Այդ թվում՝ Երիզա՝ 35 հայաբնակ գյուղ, 2500 տուն, Կամախ՝ 26 գյուղ, 1100 տուն։

<sup>39</sup> Բացի դրանից, քանի որ առաջնորդարանների տեղեկագրերը, որոնցից Ա-Դոն քաղել է իր տվյալները, մեզ չեն հասել (չի բացառվում, որ դրանք առաջնորդարանների դիվանատների այլ փաստաթղթերի հետ Մեծ եղեռնի ժամանակ մատնվել են անտերության, ոչնչացվել կամ անհետացել են), «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» երկը ձեռք է բերում սկզբնաղբյուրի նշանակություն։

<sup>40</sup> Stén Cuinet V., *La Turquie d'Asie*, v.1, Paris, Ernest Leroux editeur, 1892, էջ 137 (տե՛ս նաև՝ աղյուսակ 5)։ Քիների տվյալները օգտագործել է նաև Ֆրանսիայի արտգործնախարարությունը՝ զետեղելով դրանք «Դեղին գրքում» (տե՛ս *Documents diplomatiques: affaires arméniennes; projets de reforme dans l'Empire ottoman 1893-1897*, Paris, Imprimerie nationale, 1897, էջ 1-8)։

Օսմանյան կայսրության և մասնավորապես Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1880-90-ական թթ. բրիտանացի դիվանագետների կողմից կատարված հաշվումները հանրագումարի են բերված «Քուրդիստանում» Մեծ Բրիտանիայի նախկին հյուպատոս գեղապետ Վիլյամ Էվերեթի կողմից 1895թ. մայիսին պատրաստած զեկուցագրում<sup>41</sup>։ Էվերեթը նշելով, որ վիճակագրական տվյալներն իրար հակասում են, Էրզրումի նահանգի համար հաղորդում է 134,902 հայ բնակչության մասին, որից 10,000-ը՝ կաթոլիկ, 905-ը՝ բողոքական<sup>42</sup>։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Էրզրումի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ են հաղորդում նաև ժուսական դիվանագիտական աղբյուրները։ Այսպես, ըստ Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Շտիրների՝ Կ. Պոլսում ժուս դեսպանին հասցեագրված 1912թ. նոյեմբերի 19-ի հեռագրի, նահանգում բնակվում էր 210,000 հայ<sup>43</sup>։ Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Ադամովի տվյալներով 1914թ. նահանգն ուներ շուրջ 200,000 հայ բնակչություն<sup>44</sup>։

**Աղյուսակ 5. Ռուս և արևմտյան հեղինակների վիճակագրական տվյալները Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ (1878-1914թթ.)**

| Վարչական միավոր | 1892թ. Քինե          | 1895թ. Էվերեթ  | 1912թ. Շտիրներ | 1914թ. Ադամով  |
|-----------------|----------------------|----------------|----------------|----------------|
| Էրզրումի գավառ  | 89,944               | 104,006        | -              | -              |
| Երզնկայի գավառ  | 34,518 <sup>45</sup> | 24,896         | -              | -              |
| Բայազետի գավառ  | 10,505               | 6,000          | -              | -              |
| <b>Ընդամենը</b> | <b>134,967</b>       | <b>134,902</b> | <b>210,000</b> | <b>200,000</b> |

Վերոնշյալ հեղինակներից Վ. Քինեն և Վ. Էվերեթը իրենց հաշվարկները հիմնում են թուրքական տվյալների վրա, Շտիրների և Ադամովի տեղեկությունների աղբյուրը հայտնի չէ, թեև նրանք ըստ էության երկրորդում են նույն թվականներին Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ հայոց պատրիարքարանի հրապարակած տվյալները։ Հատկանշական է, որ վերոնշյալ բոլոր հեղինակները Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի իրենց հաշվումներում անհրաժեշտ են համարել թուրքական վիճակագրական տվյալների համեմատ ավելացնել հայերի թիվը շուրջ 30-100%-ով։

<sup>41</sup> Տե՛ս CAB 37/38/26 (*Report on the population of Asia Minor and the Turkish Provinces to the eastward, compiled by Colonel William Everett, C.M.G., Assistant Adjutant-General, Intelligence Division, War Office, formerly Her Majesty's Consul for Kurdistan, May 11, 1895*):

<sup>42</sup> Էվերեթը նաև առանձին նշում է Երզնկայի սանջակի հայ բնակչության թվաքանակը՝ 29,272 շունչ (նույն տեղում, էջ 23)։

<sup>43</sup> Տե՛ս Сборник дипломатических документов..., էջ 275։

<sup>44</sup> Տե՛ս Минорский В. Ф. , *Курды. Заметки и впечатления*, Петроград, Типогр. В.Киршбаума, Дворц. пл., д. М-ва финансов, 1915, էջ 5։

<sup>45</sup> Երզնկայի սանջակի վիճակագրության մեջ Քինեն ընդգրկել է նաև Բաբերդի և Սպերի տվյալները։



## Ե. Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին՝ ըստ գավառակների

Մեծ եղեռնի նախօրյակին նահանգի հայ բնակչության թվաքանակը որոշելու համար ելակետային ենք ընդունում հայոց պատրիարքարանի՝ 1914թ. վիճակագրությունը՝ այն ճշտելով օժանդակ արժանահավատ նյութերի միջոցով, որոնք են՝ փախստականների հաշվառման ցուցակները, Մեծ եղեռնը վերապրածների կողմից հաղորդվող տվյալները, ռուսական զորքերի կողմից Էրզրումի գրավումից անմիջապես հետո՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնակատար եկեղեցական պաշտոնյաների կողմից 1916թ. վերջերին և 1917թ. սկզբներին կազմված վիճակագրական ցուցակները<sup>46</sup>:

### 1. Էրզրումի գավառ

#### § 1.1. Էրզրումի գավառակ

Ըստ հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների՝ գավառակի 43 հայաբնակ բնակավայրերում ապրում էր 37,480 շունչ հայ (6,355 տուն)<sup>47</sup>: Այս տվյալի համադրումը Մեծ եղեռնը վերապրածներից քաղած տեղեկությունների հետ ցույց է տալիս, որ պատրիարքարանը թերհաշվառել է Էրզրումի գավառակի հայ բնակչությանը: Այսպես, համաձայն «Կարնո և շրջանի հոգևոր տեսուչ» Զավեն վարդապետի<sup>48</sup> 1916թ. դեկտեմբերին կազմած վիճակագրության՝ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի 37 գյուղերում (առանց Էրզրում քաղաքի) բնակվել է 35,578 շունչ հայ<sup>49</sup>:

Պատրիարքարանի տվյալներից բարձր է նաև Մեծ եղեռնը վերապրածների հաղորդած տեղեկությունների հիման վրա 1917թ. Ամատունու<sup>50</sup> կողմից կազմված վիճակագրությունը: Ստորև համեմատենք Պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի, Զավեն վարդապետի և Ամատունու ցուցակներում առկա մի քանի բնակավայրերի տվյալները:

<sup>46</sup> Ռուսական զորքերի կողմից Կարինն ու Երզնկան գրավելուց հետո՝ 1916թ. վերջին – 1917թ. սկզբին, Էրզրումի նահանգի մի քանի գավառների և գավառակների վերաբերյալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնարարությամբ տեղեկագրեր են կազմվում, որտեղ նաև առանձին ուշադրություն է դարձվում նախքան պատերազմը տվյալ գավառի/գավառակի հայ բնակչության վիճակագրությանը: Նշված տեղեկագրերում առկա տվյալները հիմնված են վերապրած և իրենց նախկին բնակության վայրեր վերադարձած փախստական բնակչության հարցաքննության արդյունքում ստացված տեղեկությունների վրա:

<sup>47</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 429, այդ թվում Էրզրում քաղաքում՝ 2,470 տուն հայ, 11,735 շունչ: Կարնո գավառակի համար 1913-14թթ. մարդահամարի տվյալները իրենց երկերում զետեղում են նաև Հակոբ Քոսյանը (տե՛ս Քոսեան Յ., *նշվ. աշխ.*, էջ 86-90) և Ղազար-Չարըզը (տե՛ս Ղազար-Չարըզ, *Հուշամատեն Բարձր Հայրի. Կարինսպատում, Պէյրուք, Մշակ*, 1957, էջ 3):

<sup>48</sup> Զավեն վարդապետ Մահտեսի Բաբայանը այդ պաշտոնը ստանձնել է 1916 թ. առանց՝ ռուսական զորքերի կողմից Էրզրումի և Երզնկայի գրավումից հետո: 1917 թ. նա օծվել է եպիսկոպոս: Զավեն վարդապետը նաև Կարինում «Եղբայրական օգնության միության» ներկայացուցիչն էր (տե՛ս Ղազար-Չարըզ, *նշվ. աշխ.*, էջ 499):

<sup>49</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 142, թ. 36-41: Այդուսակը կազմվել է տեղի հայ բնակչության մնացորդների, վերադարձած փախստականների հարցաքննության արդյունքների հիման վրա: Հետաքրքիր է, որ իր զեկուցագրում Զավեն վարդապետը նաև նշում է, որ նախքան պատերազմը Կարնո ամրոցը նահանգն ունեցել է մոտ 230,000 հայ ազգաբնակչություն, որից 1917-ի դրությամբ մնացել է շուրջ 32,000-ը (նույն տեղում, թ. 28):

<sup>50</sup> Ամատունին այն զործակատարներից մեկն էր, որոնք 1916-17թթ. Հայ հեղափոխական դաշնակցության Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ տեղեկություններ են հավաքել հայ փախստականների շրջանում Արևմտյան Հայաստանի հայ բնակչության կոտորածների կազմակերպման և իրականացման վերաբերյալ: Ամատունու և այլ հավաքագրողների առջև մասնավորապես նպատակ էր դրված «ճշտել վերջին պատերազմի պատճառով Թուրքիայում հայերի ունեցած զոհերի քանակը, նիպական կորուստների ծաւալը, կուտուրական վնասի չափը, այլև գծել հայերի կրած սարսափների ու տանջանքների իսկական մերկ պատկերը» (տե՛ս *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու*, գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան, հատոր I, *Վանի նահանգ*, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2012, էջ 4):

### Աղյուսակ 6. Կարնո գավառակի մի քանի գյուղերի հայ բնակչությունը Մեծ եղեռնի նախօրյակին

|    | Բնակավայր       | 1913-14թթ.<br>Հայոց<br>պատրիարքարան <sup>51</sup> |               | 1916թ.<br>Զավեն<br>վարդապետ | 1917թ.<br>Ամատունի <sup>52</sup> |               |
|----|-----------------|---------------------------------------------------|---------------|-----------------------------|----------------------------------|---------------|
|    |                 | տուն                                              | շունչ         | շունչ                       | տուն                             | շունչ         |
| 1  | Ապլինտի         | 27                                                | 170           | 200                         | 25                               | 235           |
| 2  | Գեղախոռ         | 45                                                | 350           | 550                         | 48                               | 500           |
| 3  | Գրիչք           | 74                                                | 704           | 700                         | 76                               | 650           |
| 4  | Թարգունի        | 75                                                | 637           | 800                         | 75                               | 840           |
| 5  | Թվանջ           | 45                                                | 660           | 1,000                       | -                                | 695           |
| 6  | Իլիջա           | 66                                                | 635           | 800                         | 85                               | 1,080         |
| 7  | Կան             | 317                                               | 2,600         | 5,000                       | 300                              | 5,000         |
| 8  | Կրճնկոց         | 30                                                | 240           | 300                         | 26                               | 350           |
| 9  | Հինձք           | 120                                               | 1,210         | 2,000                       | 196                              | 2,225         |
| 10 | Մուտուրկու      | 148                                               | 1,160         | 1,900                       | 180                              | 2,050         |
| 11 | Նորաշեն         | 25                                                | 170           | 240                         | 25                               | 240           |
| 12 | Շխնոց           | 56                                                | 449           | 715                         | 75                               | 700           |
| 13 | Չիֆթլիկ         | 200                                               | 1,625         | 3,000                       | 250                              | 2,700         |
| 14 | Պատիշեն         | 40                                                | 403           | 600                         | 40                               | 520           |
| 15 | Սալաճոր         | 27                                                | 180           | 250                         | 35                               | 260           |
| 16 | Ումուտում       | 90                                                | 900           | 1,000                       | 80                               | 750           |
| 17 | Օձնի            | 200                                               | 1,580         | 4,000                       | 300                              | 3,000         |
|    | <b>Ընդամենը</b> | <b>1,585</b>                                      | <b>13,673</b> | <b>23,055</b>               | <b>1,816</b>                     | <b>21,795</b> |

Պատրիարքարանի և վերապրածների հաղորդած վերոնշյալ տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ վերապրածները շուրջ 20%-ով ավելի բարձր են նշում տների թիվը, իսկ շնչերի թիվը բարձր է մի դեպքում (Ամատունի)՝ շուրջ 60, մյուս դեպքում (Զավեն

<sup>51</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 429-433:

<sup>52</sup> Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան, հատոր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքրի, Սերաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2012, էջ 414-419:

վարդապետ)՝ շուրջ 68%-ով: Մեկ տանը, ըստ պատրիարքարանի տվյալների, հասնում է միջինը 8.6 շունչ, իսկ ըստ Ամատունու՝ 12 շունչ<sup>53</sup>:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի հայ բնակչության թվաքանակը կազմել է շուրջ 53,000 շունչ, որից 18,000-ը՝ Էրզրում քաղաքում<sup>54</sup>, 35,000-ը՝ գավառակի հայաբնակ գյուղերում<sup>55</sup>:

### § 1.2. Խնուսի գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի 25 հայաբնակ բնակավայրերում կար 2,732 տուն հայ՝ 21,382 շունչ բնակչությամբ<sup>56</sup>:

Մեծ եղեռնի նախօրյակին Խնուսի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հայոց պատրիարքարանի տվյալներն էականորեն չեն տարբերվում վերապրածների վկայությունների հիման վրա կազմված վիճակագրություններից: Դրանք են՝

1. Խնուսի Եղիշե Մելիքյանի գյուղացուցակը՝ 34 հայաբնակ գյուղ՝ 25,000 բնակչությամբ<sup>57</sup>,
2. 1915թ. Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քին. Տ. Ավետիսյանի կազմած ցուցակը՝ 27 հայաբնակ գյուղ՝ 2,915 տուն բնակչությամբ<sup>58</sup>,
3. Ն. Մարտիրոսյանի ցուցակը՝ 34 հայաբնակ գյուղ, 2,991 տուն՝ 22,344 հայ բնակչությամբ<sup>59</sup>:

Հաշվի առնելով աղբյուրների համաձայնությունը՝ կարելի է իրականությանը մոտ համաբեղ, որ Մեծ եղեռնի նախօրյակին Խնուսի գավառակն ուներ շուրջ 22,000 հայ բնակիչ<sup>60</sup>:

### § 1.3. Քըղիի գավառակ

Համաձայն հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների՝ գավառակի 51 հայաբնակ բնակավայրերում հաշվառվել էր 19,859 շունչ հայ<sup>61</sup>:

Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի «Հայոց եկեղեցի» երկում զետեղված վիճակագրական

<sup>53</sup> Որպես կանոն՝ պատրիարքարանի տվյալներից ավելի բարձր են նաև արևմտահայկական հայրենակցական միությունների՝ իրենց ծննդավայրերի մասին հրատարակած ուսումնասիրություններում (դրանք հիմնականում կազմվում էին վերապրածների կողմից կամ նրանց տեղեկությունների հիման վրա) զետեղված թվերը: Այսպես, համաձայն Էրզրումի գավառակի Ձիթող գյուղի պատմությանը նվիրված երկի տվյալների, Մեծ եղեռնի նախօրյակին այն ուներ շուրջ 300 տուն, 3,000 շունչ հայ բնակչություն (տես Կոճողզեան-Հովհաննիսեան Վ., *Ձիթող դաշտի Կարնոյ, Պէյրոյթ, Համագալին, 1972, էջ 68*), համեմատության համար՝ պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներն են՝ 230 տուն, 2,066 շունչ:

<sup>54</sup> Տես Կիրակոսյան Զ., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, էջ 342:

<sup>55</sup> Համեմատության համար, ըստ օսմանյան վիճակագրական տվյալների, 1914թ. գավառակն ուներ 34,542 շունչ հայ բնակչություն (տես Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դոն (1909թ.) Էրզրում քաղաքի և Կարնո դաշտի 51 հայաբնակ գյուղերի համար հաղորդում է 5,268 տուն հայ՝ 34,376 շունչ բնակչությամբ (տես Ա-Դո, *նշվ. աշխ.*, էջ 173, 226): Որպես իր տվյալների աղբյուր՝ ուսումնասիրողը նշում է Կարնո առաջնորդարանի քարտուղար Վ. Սանդյանին: Արդյունքը ստացել է տների թիվը քաղաքի համար բազմապատկելով 6-ով, գյուղերի համար՝ 7-ով:

<sup>56</sup> Տես Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 434: Գյուղացուցակը տես նաև Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին*, Նիւ Եորք, 1985, էջ 546-547:

<sup>57</sup> Տես Մելիքեան Ե., *Վիճակագիր Խնուս (Հարք) գավառի*, New York, Yevrad press, 1943, էջ 11, 14-15:

<sup>58</sup> Տես «Արարատ», 1915, հուլիս, էջ 463: Հովհաննես Տեր-Ավետիսյանը Գևորգ 5-րդ կաթողիկոսին հասցեագրած 1915թ. մայիսի 28-ի իր նամակում Խնուսի հայ ծխերի համար նշում է մի փոքր այլ թիվ՝ 3,222 (տես Ներսիսյան Մ., Նյութեր հայկական կոտորածների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, N1, էջ 89):

<sup>59</sup> Տես «Վան-Տոսպ», 1916, N 15, էջ 9:

<sup>60</sup> 1914թ. օսմանյան տվյալները Խնուսի գավառակի համար տալիս են 7,779 շունչ հայ (Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

<sup>61</sup> Տես Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 435-437: Գյուղացուցակը տես նաև՝ Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 545-546:

աղյուսակի (տվյալները վերաբերում են 1902թ.)՝ Քրդիի թեմն իր 56 բնակավայրով (մոտավորապես համապատասխանում է գավառակի տարածքին) ուներ շուրջ 25,000 հայ բնակչություն<sup>62</sup>:

Ա-Դոն (1909թ.) գավառակի 50 հայաբնակ բնակավայրի համար հաղորդում է 2,676 տուն, 18,705 շունչ հայ բնակչություն<sup>63</sup>:

Գավառակի հայ բնակչության թվաքանակի մասին տվյալներ են պարունակում 1916-17թթ. ընթացքում կազմված հետևյալ փաստաթղթերը.

1. Գարեգին Թուրքիյանի կողմից 1917թ. սկզբին կազմված «Քրդիի գավառակի տեղեկագիրը», որի համաձայն՝ 1908թ. գավառակն ուներ շուրջ 27,000 շունչ հայ բնակչություն<sup>64</sup>:
2. Վերապրած բնիկ քղեցի Նազարեթ Փոստոյանի վկայությունը, համաձայն որի գավառակը Մեծ եղեռնի նախօրյակին ունեցել է 4,537 տուն՝ 33,177 հայ բնակչությամբ<sup>65</sup>:
3. Վերապրածների վկայությունների հիման վրա Ամատունու կազմած գյուղացուցակը, որի տվյալներով գավառակի 49 հայաբնակ բնակավայրերում կար 33,336 շունչ ընդհանուր բնակչություն, որը բաժին էր ընկնում 4,981 տուն հայի (28,963 շունչ) և 752 տուն քրդի (4,373 շունչ)<sup>66</sup>:
4. 1916թ. դեկտեմբերի 5-ին կազմված վիճակագրական ցուցակով գավառակի 51 հայաբնակ բնակավայրերում Մեծ եղեռնի նախօրյակին կար 3,535 տուն հայ՝ 25,685 շունչ բնակչությամբ<sup>67</sup>:

Կիրառելով վերոնշյալ յոթ տվյալներից միջին թիվը հանելու մեթոդը՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակում բնակվել է շուրջ 25,500 հայ<sup>68</sup>:

#### Յ 1.4. Դերջանի գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի 41 հայաբնակ բնակավայրերում ապրում էր 11,690 հայ<sup>69</sup>:

Մաղաքիա արք. Օրմանյանի տվյալների համաձայն (1902թ.)՝ Դերջանի թեմը (մոտավորապես համապատասխանում է գավառակի տարածքին) իր 38 հայաբնակ բնակավայրերով ուներ շուրջ 15,000 հայ բնակչություն<sup>70</sup>:

Ինչպես կարելի է տեսնել, 1913-14թթ. մարդահամարի թիվը ավելի վաղ շրջանին վերաբերող Օրմանյանի տվյալի համեմատ ցածր է, ինչը վկայում է հայ բնակչության թերհաշվառման մասին:

Դա են հաստատում նաև 1917թ. սկզբներին Կարինի առաջնորդարանի և Գարեգին

<sup>62</sup> Որից 1000-ը՝ բողոքական հայեր (Օրմանեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 261):

<sup>63</sup> Տե՛ս Ա-Դո, *նշվ. աշխ.*, էջ 192: Տեղեկությունները քաղել է Կարինի առաջնորդարանից: Մեկ տան վրա հաշվում է 7 շունչ:

<sup>64</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 126, թ. 8: Թուրքիյանը (ծնունդով քղեցի) գրում է, որ 1908-ին օսմանյան երեսիփոխանական ընտրությունների առիթով անձամբ շրջել է Քրդիի գավառակի հայաբնակ բնակավայրերով և կարողացել է ճշգրտորեն ուսումնասիրել «ժողովրդի բարքերն ու սովորությունները» (նույն տեղում):

<sup>65</sup> Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում..., հ. III, էջ 123-148: Տե՛ս նաև Զատիկյան Հ., Կարինի նահանգի Քրդիի գավառակը 19-րդ դարի երկրորդ կեսին, «Բանբեր Հայաստանի արխիվների», N1 (101), 2003, էջ 178:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 157-158: Ըստ ցուցակի՝ շնչերի թվի հաշվարկը կատարվել է մեր կողմից:

<sup>67</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 8-9 (հաշվումները կատարվել են մեր կողմից ըստ գյուղացուցակի): Այս տվյալը երկրորդում է սփյուռքահայ ուսումնասիրող Ղազար Չարբզը, համաձայն որի գավառակը Մեծ եղեռնի նախօրյակին ուներ շուրջ 25,500 հայ բնակչություն (տե՛ս Ղազար-Չարբզ, *նշվ. աշխ.*, էջ 3):

<sup>68</sup> Ըստ օսմանյան վիճակագրական տվյալների՝ 1914թ. Քրդիի գավառակում կար 13,621 շունչ հայ (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

<sup>69</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 437-438: Հմմտ.՝ Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 546-547:

<sup>70</sup> Տե՛ս Օրմանեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 261:

Թուրիկյանի կողմից պատրաստված Դերջանի գավառակի վիճակագրական երկու առանձին գյուղացուցակները<sup>71</sup>: Այսպես,

1. ըստ Կարինի առաջնորդարանի ցուցակի՝ գավառակը նախքան պատերազմը ուներ 2,004 տուն հայ՝ 20,272 շունչ բնակչությամբ<sup>72</sup>.
2. Գարեգին Թուրիկյանի ցուցակով գավառակի 37 հայաբնակ բնակավայրերում ապրում էր 23,519 հայ<sup>73</sup>:

Ինչպես տեսնում ենք, վերապրածներից հավաքված տեղեկությունների հիման վրա կազմված այդ գյուղացուցակների տվյալներով Մեծ եղեռնի նախօրյակին գավառակում բնակվում էր շուրջ 1,5-2 անգամ ավելի մարդ, քան հաշվառված էր պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի ընթացքում:

Կիրառելով վերոնշյալ չորս աղբյուրների տվյալների համադրման և միջին թիվը հանելու մեթոդը՝ կարելի է եզրակացնել, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակն ունեցել է շուրջ 18,000 հայ բնակչություն<sup>74</sup>:

### § 1.5. Բաբերդի գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի 30 հայաբնակ բնակավայրերում կար 2,685 տուն<sup>75</sup>՝ 17,914 հայ բնակչությամբ<sup>76</sup>:

Ըստ Մաղաթիա արք. Օրմանյանի տվյալների (1902թ.)՝ Բաբերդի թեմի (մոտավորապես համապատասխանում է գավառակի տարածքին) 30 հայաբնակ բնակավայրերի հայ բնակչությունը շուրջ 17,000 շունչ էր<sup>77</sup>:

Օրմանյանի և 1913-14թթ. մարդահամարի տվյալներն էապես չեն տարբերվում իրարից, ինչը վկայում է, որ դրանք մոտ են իրականությանը: Դա են հաստատում վերոնշյալ տվյալներից անկախ 1917թ. կազմված երկու վիճակագրական գյուղացուցակները.

1. ըստ «Բաբերդի շրջանի համառոտ տեղեկագրի» տվյալների՝ գավառակի 30 հայաբնակ բնակավայրերում նախքան պատերազմը ապրում էր 18,296 հայ<sup>78</sup>:
2. Գարեգին Թուրիկյանի կողմից 1917թ. սկզբներին կազմված հայ բնակչության վիճակացույցի տվյալներով Բաբերդի գավառակում Առաջին աշխարհամարտից առաջ բնակվում էր 20,365 հայ (2,600 տուն)<sup>79</sup>:

Այս տվյալներին համահունչ է Բաբերդի հայության պատմությանը նվիրված առանձին ուսումնասիրության հեղինակ Բաբկեն Արսլանյանի թիվը՝ 18,000 հայ<sup>80</sup>:

<sup>71</sup> Պահվում են Հայաստանի ազգային արխիվում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 159):

<sup>72</sup> Նույն տեղում, թ. 11-12: Հաշվումները կատարվել են մեր կողմից՝ ըստ գյուղացուցակի:

<sup>73</sup> Նույն տեղում, թ. 5-10: Հաշվումները կատարվել են մեր կողմից՝ ըստ գյուղացուցակի:

<sup>74</sup> Ըստ 1914թ. օսմանյան տվյալների՝ գավառակն ուներ 7,401 շունչ հայ բնակչություն (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դոյի (1909թ.) տվյալներով գավառակի 31 հայաբնակ բնակավայրերում կար 1,304 տուն հայ՝ 9,128 շունչ բնակչությամբ (տե՛ս Ա-Դօ, *նշվ. աշխ.*, էջ 190): Ա-Դոյի տեղեկությունների աղբյուրը Կարինի առաջնորդարանն է:

<sup>75</sup> Տե՛ս Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 546:

<sup>76</sup> Տե՛ս Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68: Գևորգյանը հաղորդում է 2,102 տուն (տվյալը վերցրել է Ա-Դոյից), 17,060 շունչ հայ (տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 439):

<sup>77</sup> Տե՛ս Օրմանեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 261:

<sup>78</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 165, թթ. 4-5: Հաշվումները կատարվել են մեր կողմից՝ ըստ փաստաթղթում առկա գյուղացուցակի տվյալների:

<sup>79</sup> Այդ թվում՝ 450 տուն, 2,500 շունչ՝ Բաբերդ քաղաքում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 2): Համագումար թիվը ստացվել է մեր կողմից՝ ըստ փաստաթղթի գյուղացուցակի տվյալների:

<sup>80</sup> Տե՛ս Արսլանեան Բաբգէն Քինյ., *Բաբերդ եւ իր շրջակայքները*, Փարիզ, «Արաքս» տպ., 1954, էջ 15:

Կիրառելով վերոնշյալ բոլոր տվյալներից միջին թիվը հանելու մեթոդը՝ տեսնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակն ունեցել է շուրջ 18,500 հայ բնակչություն<sup>81</sup>:

### § 1.6. Սպերի գավառակ

Ըստ հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի՝ գավառակի 17 հայաբնակ բնակավայրերում հաշվառվել էին 459 տուն, 2,602 հայ բնակիչ<sup>82</sup>:

1913-14թթ. մարդահամարի տվյալներն օսմանյան վիճակագրական տվյալներից ցածր են<sup>83</sup>, ինչը դրանց թերի լինելու ամուր փաստարկ է: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ, ըստ պատրիարքարանի տվյալների, մեկ տանը հասնում է միջինը 5,6 շունչ, ինչը ցածր է Էրզրումի գավառի այլ գավառակների համապատասխան ցուցանիշից (6-8 շունչ): Նույն ժամանակաշրջանին վերաբերող այլ տվյալների բացակայության պայմաններում Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի հայ բնակչության թվաքանակը որոշելու համար հիմք ենք ընդունում մարդահամարով հաշվառված տների թիվը՝ բազմապատկելով այն 7-ով, որի արդյունքում Սպերի գավառակի համար ստանում ենք շուրջ 3,200 շունչ հայ բնակչություն:

### § 1.7. Թորթումի գավառակ

Ըստ Ա-Դոյի՝ Թորթումն ուներ 13 հայաբնակ բնակավայր՝ 405 տուն՝ 2,829 շունչ հայ բնակչությամբ<sup>84</sup>:

Պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի հայ բնակչության թիվն էր 3,520 շունչ<sup>85</sup>:

Նշված ժամանակաշրջանին վերաբերող այլ տվյալների բացակայության պայմաններում, կարծում ենք, որ գավառակի համար 1913-14թթ. մարդահամարի տվյալներն ընդհանուր առմամբ ընդունելի են, և Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի հայ բնակչության թվաքանակը կազմել է շուրջ 3,500 հայ<sup>86</sup>:

### § 1.8. Կիսկիմի գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի 13 հայաբնակ բնակավայրերում բնակվում էր 8,136 շունչ հայ (1,597 տուն)<sup>87</sup>:

Այլ սկզբնաղբյուրների տվյալների հետ պատրիարքարանի վիճակագրության համե-

<sup>81</sup> Օսմանյան վիճակագրական տվյալներով 1914-ին գավառակի հայ բնակչության թվաքանակը կազմել է 12,025 շունչ (տե՛ս Karpas, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դոյի (1909թ.) տվյալներով գավառակն ուներ 2,102 տուն հայ՝ 14,314 շունչ բնակչությամբ (տե՛ս Ա-Դո, *նշվ. աշխ.*, էջ 190): Ա-Դոն տեղեկությունները քաղել է Կարինի առաջնորդարանից:

<sup>82</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 442: Ռ. Բեկգուլյանցի մոտ գավառակի համար տվյալը փոքր-ինչ տարբեր է՝ 2,624 հայ (տե՛ս Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68):

<sup>83</sup> Սպերի գավառակի հայ բնակչության համար 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալներն են՝ 2,920 շունչ (տե՛ս Karpas, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դոյի տվյալներով (1909թ.) գավառակի 18 հայաբնակ գյուղերում կար 446 տուն հայ՝ 3,122 շունչ բնակչությամբ. ուսումնասիրողը տեղեկությունները քաղել է Կարինի առաջնորդարանից (տե՛ս Ա-Դո, *նշվ. աշխ.*, էջ 197):

<sup>84</sup> Նույն տեղում, էջ 226: Ա-Դոն իր տվյալները քաղել է հայ աշխարհագրագետ Ս. Էփրիկյանի «Պատկերագրող բնաշխարհի բառարան»-ից (հ.1-2, Վենետիկ, 1903-1905): Ռ. Գևորգյանը երկրորդում է Ա-Դոյի տվյալները (տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 439):

<sup>85</sup> Տե՛ս Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68:

<sup>86</sup> Ըստ օսմանյան վիճակագրության՝ 1914-ին գավառակում բնակվում էր 1,223 շունչ հայ, այդ թվում՝ 507-ը՝ լուսավորչական, 716-ը՝ կաթոլիկ հայեր (տե՛ս Karpas, *նշվ. աշխ.*, էջ 170):

<sup>87</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 446-447, նաև՝ Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68:

մատուցությունը վկայում է այն մասին, որ Կիսկիմի հայ բնակչությունը ևս պատրիարքարանի կողմից թերհաշվառվել է, իսկ մեկ բնակավայր (Փրթիկներ) ընդհանրապես դուրս է մնացել հաշվառումից<sup>88</sup>:

Այսպես, ըստ «Հուշամատյան Խոտորջուրի» ուսումնասիրության մեջ զետեղված տվյալների (հեղինակը Մխիթարյան միաբանության անդամ, ծնունդով խոտորջուրցի Հարություն Հույունյանն է)՝ Խոտորջուրի 9 թաղերում նախքան 1915-ի տեղահանությունը կար 978 տուն՝ 6,906 շունչ հայ բնակչությամբ (պատրիարքարան՝ 850 տուն, 6,293 շունչ)<sup>89</sup>, Մոխրկուտ գյուղում՝ 250 տուն, 1,750 շունչ (պատրիարքարան՝ 70 տուն, 350 շունչ)<sup>90</sup>, Կարմիրքում՝ 170 տուն, 1,190 շունչ (պատրիարքարան՝ 120 տուն, 600 շունչ)<sup>91</sup>:

Հատկանշական է, որ այլ դեպքերում պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալները հավատարմորեն ներկայացնող Թեոդիկը Խոտորջուրի պարագայում հայ բնակչության թիվը նշում է շուրջ 10,000<sup>92</sup>:

Բացի դրանից, վերապրածների տեղեկությունների հիման վրա 1916թ. դեկտեմբերի 1-ին Կարնո առաջնորդարանի կողմից կազմված վիճակագրական ցուցակում առկա են նախքան Մեծ եղեռնը գավառակի երեք գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ, որոնք շուրջ 2-3 անգամ բարձր են պատրիարքարանի ներկայացրած թվերից:

#### Աղյուսակ 7. Կիսկիմի գավառակի մի քանի գյուղերի հայ բնակչության թիվը Մեծ եղեռնի նախօրյակին

|   | Բնակավայրի անունը | 1913-14թթ.<br>հայոց<br>պատրիարքարան |       | 1917թ.<br>Կարնո<br>առաջնորդարան <sup>93</sup> |
|---|-------------------|-------------------------------------|-------|-----------------------------------------------|
|   |                   | տուն                                | շունչ | շունչ                                         |
| 1 | Կուտրաշեն         | 37                                  | 432   | 900                                           |
| 2 | Նիխախ             | 12                                  | 57    | 195                                           |
| 3 | Փրթիկներ          | -                                   | -     | 550                                           |

Ելնելով վերոնշյալից՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակն ունեցել է շուրջ 11,000-12,000 հայ բնակչություն<sup>94</sup>:

<sup>88</sup> Բացի պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարին բնորոշ թերհաշվառման միտումից՝ Կիսկիմի գավառակի հայ բնակչության թերհաշվառումը գուցե պայմանավորված էր նաև նրանով, որ շրջանի բնակչության մեծ մասը հայ կաթոլիկներ էին, ինչն անշուշտ պետք է դժվարացներ մարդահամար անցկացնելու նպատակով շրջան գործուղված անձանց աշխատանքը:

<sup>89</sup> Տե՛ս Հույունյան Հ. Յարութիւն վ., Հաճեան Հ. Մատթեոս վ., *Յուշամատեն Խոտորջուրի*, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1964, էջ 17-64 (հաշվումները կատարվել են մեր կողմից՝ ըստ Խոտորջուրի թաղերի տվյալների):

<sup>90</sup> Նուն տեղում, էջ 83:

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>92</sup> Տե՛ս Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 545:

<sup>93</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 39:

<sup>94</sup> Ըստ օսմանյան վիճակագրության՝ 1914թ. Կիսկիմի գավառակի հայ բնակչության թվաքանակն էր 6,193 շունչ, այդ թվում՝ 908-ը լուսավորչական, 5,285-ը՝ կաթոլիկ հայեր (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170): Ա-Դոն (1909թ.) գավառակի 6 կամ 13 (9-ը գավառակի ամենամեծ գյուղի՝ կաթոլիկ հայերով բնակեցված «պգտիկ Հոմ» Խոտորջուրի թաղերն էին) հայաբնակ բնակավայրի համար հաղորդում է 1,092 տուն՝ 7,644 շունչ բնակչությամբ (տե՛ս Ա-Դո, *նշվ. աշխ.*, էջ 199, 226): Ուսումնասիրողը տվյալները ստացել է Կարինի առաջնորդարանից:



### § 1.9. Նամրվանի (Նարմանի) գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի երկու հայաբնակ գյուղերում բնակվում էր 748 հայ (103 տուն)<sup>95</sup>: Խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող այլ տվյալների բացակայության պատճառով ընդունում ենք պատրիարքարանի թիվը (շուրջ 750 հայ)<sup>96</sup>:

### § 1.10. Բասենի գավառակ

Մ. Օրմանյանի տվյալներն են (1902թ.)՝ 30 հայաբնակ բնակավայր, 10,500 շունչ<sup>97</sup>:

Ա-Դոյի տվյալներով (1909թ.) գավառակի 57 հայաբնակ գյուղերում կար 1,772 տուն՝ 12,404 շունչ հայ բնակչությամբ<sup>98</sup>:

Համաձայն հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների՝ նույն 57 բնակավայրի հայ բնակչության թիվն էր 16,740 շունչ<sup>99</sup>:

Արևելյան Հայաստանում ապաստանած Բասենի գավառակից փախստական հայերի վերաբերյալ տվյալները, որոնք հաշվառվել էին արդեն հիշատակված մեկօրյա մարդահամարի ընթացքում, հնարավորություն են ընձեռում ստուգելու պատրիարքարանի մարդահամարի տվյալների հավաստիությունը: Տարբերությունը երկու տվյալների միջև կազմում է շուրջ 25%, իսկ մի քանի դեպքերում մեկօրյա վիճակագրության տվյալները շուրջ 1,5-2 անգամ ավել են (տե՛ս աղյուսակ 8)<sup>100</sup>:

### Աղյուսակ 8. Բասենի գավառակի մի քանի գյուղերի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

|   | Բնակավայրի անունը | 1913-14թթ.<br>հայոց<br>պատրիարքարան | Մեկօրյա<br>վիճակագրություն <sup>101</sup> |
|---|-------------------|-------------------------------------|-------------------------------------------|
|   |                   | շունչ                               | շունչ                                     |
| 1 | Արունագրակ        | 1,075                               | 1,434                                     |
| 2 | Եղան              | 1,298                               | 1,308                                     |
| 3 | Էգեպատ            | 978                                 | 1,149                                     |
| 4 | Խըղըրէլյաղ        | 29                                  | 35                                        |

<sup>95</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 449, Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68, Թեղիկ, *նշվ. աշխ.*, էջ 546:

<sup>96</sup> Ըստ օսմանյան վիճակագրության՝ գավառակում 1914թ. ապրում էր 556 հայ (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

<sup>97</sup> Տե՛ս Օրմանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 261:

<sup>98</sup> Տե՛ս Ա-Դօ, *նշվ. աշխ.*, էջ 179-180, 226: Ա-Դօն իր տվյալները (տների թիվը) ստացել է Կարինի առաջնորդարանից: Մեկ տան վրա հաշվում է 7 շունչ հայ:

<sup>99</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 449-451, Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68:

<sup>100</sup> Բասենի գավառակի համար պատրիարքարանի 1913-14թթ. մարդահամարի և 1915թ. մեկօրյա վիճակագրության տվյալների համեմատական վերլուծությունը առաջին անգամ կատարվել է Գ. Բադալյանի կողմից (տե՛ս Բադալյան Գ., *նշվ. աշխ.*, էջ 216):

<sup>101</sup> Տե՛ս *Однодневная перепись...*, էջ 44-45:



|    |                      |              |              |
|----|----------------------|--------------|--------------|
| 5  | Կամուրջ (Քյոփրիքյոյ) | 810          | 1,076        |
| 6  | Կիրդաբազ             | 312          | 480          |
| 7  | Հարսներար            | 390          | 446          |
| 8  | Յուզվերան            | 608          | 777          |
| 9  | Ճռասուն              | 456          | 815          |
| 10 | Տոտի                 | 540          | 680          |
|    | <b>Ընդամենը</b>      | <b>6,496</b> | <b>8,200</b> |

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի հայ բնակչության թվաքանակը կազմել է շուրջ 21,000: Այդ արդյունքը մենք ստացել ենք 1913-14թթ. մարդահամարի տվյալը շուրջ 25%-ով ավելացնելու միջոցով<sup>102</sup>:

## § 2. Երզնկայի գավառ

### § 2.1. Երզնկայի գավառակ

Ըստ հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների՝ գավառակն ունեցել է 38 հայաբնակ բնակավայր՝ 25,795 շունչ հայ բնակչությամբ<sup>103</sup>:

Մեծ եղեռնի նախօրյակին Երզնկայի գավառակի հայ բնակչության թվաքանակը ճշտելու համար մենք հնարավորություն ունենք համադրելու պատրիարքարանի տվյալները վերապրածների տեղեկությունների հիման վրա պատրաստված երեք վիճակագրական գյուղացուցակների տվյալների հետ:

1. Ըստ սփյուռքահայ ուսումնասիրող Գ. Սյուրմենյանի գյուղացուցակի՝ Երզնկա քաղաքը և գավառակի հաշվառված 30 հայաբնակ գյուղերն ունեցել են 4,140 տուն հայ բնակչություն, ինչը մեկ տան վրա միջին 8 շունչ հաշվելու դեպքում տալիս է 33,120 շունչ հայ<sup>104</sup>:
2. 1916թ. հոկտեմբերին պատրաստված վիճակագրության համաձայն՝ գավառակի հայաբնակ 30 բնակավայրում նախքան պատերազմը կար 1,775 տուն հայ՝ 17,200 շունչ բնակչությամբ, իսկ Երզնկա քաղաքում՝ 3,000 տուն հայ՝ 15,000 շունչ բնակչությամբ<sup>105</sup>:
3. 1917թ. սկզբներին Ջավեն վարդապետի կողմից կազմված վիճակագրական աղյուսակի տվյալներով գավառակն ունեցել է 4,631 տուն, 34,994 շունչ հայ բնակչություն<sup>106</sup>:

<sup>102</sup> 1914թ. օսմանյան վիճակագրությունը Բասենի գավառակի հայ բնակչության համար հաղորդում է 10,046 շունչ (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

<sup>103</sup> Այդ թվում՝ Երզնկա քաղաք՝ 2,021 տուն, 13,109 շունչ հայ (տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 59): Ռ. Բեկգուլյանցի տվյալները փոքր-ինչ տարբերվում են՝ 23,902 շունչ (Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68): Տե՛ս նաև Թեոփիկ, *նշվ. աշխ.*, էջ 545:

<sup>104</sup> Տե՛ս Սիւրմենեան Գ., *Երզնկա*, Գահիրե, տպ. Սահակ-Մեսրոպ, 1947, էջ 72-73:

<sup>105</sup> Հաշվումները կատարվել են մեր կողմից՝ ըստ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 123, թ. 40-67: Փաստաթուղթը կրում է «Երիզայի դաշտի հայաբնակ գյուղերու վիճակի մանրամասները կոտորածից առաջ» վերնագիրը: Գավառակի բնակավայրերից երկուսի վիճակագրությունը բացակայում է՝ «ոչ որ կար այս գյուղը» բացատրությամբ:

<sup>106</sup> Գյուղացուցակը պարունակում է 30 բնակավայր (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 9-12):

Վերոնշյալ տվյալները վկայում են, որ Մեծ եղեռնի նախօրյակին Երզնկայի գավառա-  
կում բնակվել է շուրջ 31,000-32,000 հայ<sup>107</sup>:

## § 2.2. Բոլոմների գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի 4 հա-  
յաբնակ բնակավայրերում կային 85 տուն, 862 շունչ հայ<sup>108</sup>:

Հիմք ընդունելով պատրիարքարանի տվյալները՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօր-  
յակին գավառակն ունեցել է շուրջ 900 հայ բնակիչ<sup>109</sup>:

## § 2.3. Կամախի գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարը գավառակի 15 հայաբնակ  
բնակավայրի համար տալիս է 693 տուն, 6,396 շունչ հայ բնակչություն<sup>110</sup>:

Ըստ Մ. Օրմանյանի (1902թ.)՝ Կամախի և Եկեղեցական թեմի<sup>111</sup> տարածքը (19 հայաբ-  
նակ բնակավայր) ուներ շուրջ 10,000 շունչ հայ բնակչություն<sup>112</sup>:

Ինչպես և այլ դեպքերում, Մ. Օրմանյանի և 1913-14թթ. մարդահամարի տվյալնե-  
րի միջև առկա տարբերությունը վկայում է այն մասին, որ 1913-14թթ. մարդահամարի  
տվյալներն իրականությանը չեն համապատասխանում: Մենք հնարավորություն ունենք  
ճշտելու Մեծ եղեռնի նախօրյակին Կամախի գավառակի հայ բնակչության թվաքանա-  
կը՝ համադրելով պատրիարքարանի տվյալները Կարինի թեմի առաջնորդ Ջավեն վար-  
դապետի՝ 1917թ. հունվարի 14-ին կազմած վիճակագրության հետ, որտեղ հաշվառված  
է 12 հայաբնակ բնակավայր՝ 683 տուն՝ 7,069 շունչ հայ բնակչությամբ<sup>113</sup>: Լրացնելով  
ցուցակից դուրս մնացած երկու բնակավայրի<sup>114</sup> տվյալները (մոտ 1,000 շունչ)՝ գտնում  
ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակն ունեցել է շուրջ 8,000 հայ բնակիչ (տե՛ս  
աղյուսակ 9)<sup>115</sup>:

<sup>107</sup> Համաձայն օսմանյան վիճակագրական տվյալների՝ 1914թ. գավառակի հայ բնակչության թվաքա-  
նակը կազմում էր 16,144 շունչ հայ (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դ-ոն գավառակի համար հաղորդում է 2,524 տուն, 16,168 շունչ հայ, այդ թվում՝ Երզնկա քաղաք՝  
1,500 տուն, 9,000 շունչ (1 տանը միջին 6 շունչ հաշվարկով), գավառակի 31 բնակավայրեր՝ 1,024  
տուն, 7,168 շունչ (1 տանը միջինը 7 շունչ հաշվարկով): Ա-Դ-ոյի տվյալները վերաբերում են ավելի վաղ  
ժամանակաշրջանին, քաղված են Մ. Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարանից» (1903-1905թթ.), որն իր  
հերթին օգտվել է հայոց պատրիարքարանի՝ 1880թ. մարդահամարի գյուղացուցակներից (տե՛ս Ա-Դ-օ,  
*նշվ. աշխ.*, էջ 223, 226):

Օրմանյանի տվյալներով Երզնկայի թեմի (ընդգրկում էր Երզնկայի, Ռեֆահիեի (Կերճանիս) և  
Գուրուչայի (Արմտան) գավառակների տարածքները) 37 հայաբնակ բնակավայրերում ապրում էր 25,000  
հայ (տե՛ս Օրմանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 260):

<sup>108</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 455: Տե՛ս նաև Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 545: Ռ. Բեկգույանցի  
տվյալն է՝ 568 հայ (Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68): Ա-Դ-ոն գավառակի վերաբերյալ տվյալներ չի հաղորդում:

<sup>109</sup> Ըստ օսմանյան վիճակագրության՝ 1914-ին Բոլոմների գավառակում բնակվել է 511 շունչ հայ (տե՛ս  
Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

<sup>110</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 456, տե՛ս նաև Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 545: Ռ. Բեկգույանցի  
տվյալն է՝ 5,609 հայ (Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68):

<sup>111</sup> Ընդգրկում էր Կամախի և Գուրուչայի գավառակները:

<sup>112</sup> Տե՛ս Օրմանյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 261:

<sup>113</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 163, թ. 1-2:

<sup>114</sup> Գոմեր և Ուխտիք:

<sup>115</sup> Կամախի գավառակի համար 1914 թ. օսմանյան վիճակագրությունը հաղորդում է 4,741 շունչ հայ  
բնակչություն, այդ թվում՝ 144-ը բողոքական (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դ-ո (որպես աղբյուր նշում է Կամախի առաջնորդական փոխանորդից ստացած տվյալները)՝ 12  
հայաբնակ բնակավայր, 630 տուն, 4,781 շունչ հայ (տե՛ս Ա-Դ-օ, *նշվ. աշխ.*, էջ 225):

**Աղյուսակ 9. Կամախի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին**

|    | Բնակավայրի անունը  | 1913-14թթ.<br>հայոց<br>պատրիարքարան |              | 1917թ.<br>Կարնո<br>առաջնորդարան <sup>116</sup> |              |
|----|--------------------|-------------------------------------|--------------|------------------------------------------------|--------------|
|    |                    | տուն                                | շունչ        | տուն                                           | շունչ        |
| 1  | Կամախ              | 50                                  | 248          | 52                                             | 500          |
| 2  | Ավագ վանք          | -                                   | -            | 6                                              | 64           |
| 3  | Գառնի              | 25                                  | 240          | 20                                             | 116          |
| 4  | Գոմեր              | 58                                  | 438          | -                                              | -            |
| 5  | Ջաքարի             | 10                                  | 85           | 12                                             | 89           |
| 6  | Թավկներ            | 42                                  | 462          | 50                                             | 450          |
| 7  | Թորդան             | 46                                  | 430          | 48                                             | 450          |
| 8  | Հազարք             | 39                                  | 312          | 30                                             | 300          |
| 9  | Մարիք              | 82                                  | 627          | 105                                            | 735          |
| 10 | Բագառիճ Վերին      | 75                                  | 856          | 110                                            | 1560         |
| 11 | Բագառիճ Ստորին     | 150                                 | 1538         | 196                                            | 2175         |
| 12 | Սբ. Նշան վանք      | 20                                  | 240          | 30                                             | 425          |
| 13 | Ուխտիք (Հողուղերե) | -                                   | 500          | -                                              | -            |
| 14 | Ուռի               | 26                                  | 210          | 24                                             | 205          |
|    | <b>Ընդամենը</b>    | <b>623</b>                          | <b>6,186</b> | <b>683</b>                                     | <b>7,069</b> |

**§ 2.4. Ռեֆահիեի (Կերճանիսի) գավառակ**

Պատրիարքարանի՝ 1913-14թթ. տվյալներով գավառակի հայաբնակ 3 գյուղերում բնակվում էր 1,570 հայ (150 տուն)<sup>117</sup>:

Վերոնշյալից շուրջ երեք անգամ բարձր է գավառակի 3 գյուղերի համար Թեոդիկի տվյալը՝ 450 տուն<sup>118</sup>:

Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի հայ բնակչության մոտավոր թիվը ճշտելու համար օգտագործում ենք Թեոդիկի և 1913-14թթ. մարդահամարի տների թվաքանակից միջինը հանելու մեթոդը՝ 300 տուն՝ այն բազմապատկելով շնչերի միջին թվով՝ 8-ով և ստանալով շուրջ 2,500 շունչ<sup>119</sup>:

<sup>116</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց.5, գ.163, թ. 1-2:

<sup>117</sup> Տես Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 456: Ռ. Բեկգուլյանցի տվյալն է՝ 1,566 շունչ հայ (Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68):

<sup>118</sup> Տես Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 545:

<sup>119</sup> Օսմանյան վիճակագրական տվյալներով 1914-ին գավառակն ուներ 1,270 շունչ հայ բնակչություն (տես Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

### § 2.5. Գուրուչայի (Արմտանի) գավառակ

Համաձայն պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների՝ գավառակի հայ բնակչությունը կազմում էր 2,989 շունչ (489 տուն)<sup>120</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գուրուչայի գավառակի հայ բնակչության թվաքանակը ճշտելու համար մենք հնարավորություն ունենք 1913-14թթ. մարդահամարի տվյալները համադրելու 1917թ. սկզբներին Ջավեն վարդապետի կազմած գյուղացուցակի<sup>121</sup>, ինչպես նաև Գուրուչայի «Մնձուր» հայրենակցական միության կողմից 1919թ. օգոստոսի 6-ին կազմված տեղեկագրի տվյալների հետ<sup>122</sup> (տես աղյուսակ 10):

#### Աղյուսակ 10. Գուրուչայի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

|   |             | 1913-14թթ.<br>պատրիարքարան |       |        | 1909թ.<br>Ա-Դո | 1917թ.<br>տեղեկագիր<br>(Ջավեն<br>վարդապետ) |       | 1919թ.<br>տեղեկագիր<br>(«Մնձուր»<br>միություն) |       |
|---|-------------|----------------------------|-------|--------|----------------|--------------------------------------------|-------|------------------------------------------------|-------|
|   |             | Գևորգյան                   |       | Թեոդիկ |                |                                            |       |                                                |       |
|   |             | տուն                       | շունչ |        |                | տուն                                       | տուն  | շունչ                                          | տուն  |
| 1 | Հասանովա    | 46                         | 226   | -      | 44             | 50                                         | 236   | 80                                             | 320   |
| 2 | Ապուշտա     | 25                         | 119   | -      | 21             | 25                                         | 250   | 20                                             | 70    |
| 3 | Դարսակի     | 8                          | 70    | -      | -              | -                                          | -     | -                                              | -     |
| 4 | Թողուտ      | 95                         | 688   | -      | 93             | -                                          | -     | 90                                             | 600   |
| 5 | Մեծ Արմտան  | 241                        | 1,307 | 350    | 246            | 300                                        | 1,650 | 350                                            | 2,800 |
| 6 | Տանձի       | -                          | -     | 6      | 7              | -                                          | -     | 10                                             | 60    |
| 7 | Փոքր Արմտան | 74                         | 579   | 150    | 76             | 80                                         | 1,430 | 120                                            | 700   |
|   | Ընդամենը    | 489                        | 2,989 | 506    | 487            | 455                                        | 3,566 | 670                                            | 4,550 |

Լրացնելով 1917թ. տեղեկագրում պակասող երեք գյուղերի<sup>123</sup> տվյալները պատրիարքարանի գյուղացուցակից (շուրջ 100 տուն, 750 շունչ)՝ կարող ենք ստանալ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի հայ բնակչության թվաքանակը՝ շուրջ 4,200 շունչ<sup>124</sup>:

Ա-Դոն, որպես աղբյուր նշելով Քենախի առաջնորդական փոխանորդին, գավառակի 3 հայաբնակ բնակավայրի համար հաղորդում է 139 տուն, 1,421 շունչ հայ բնակչություն (տես Ա-Դո, *նշվ. աշխ.*, էջ 224):

<sup>120</sup> Տես Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 456: Ռ. Բեկգուլյանցի տվյալը նույնն է՝ 2,989 շունչ հայ (տես Бекгуляни, *նշվ. աշխ.*, էջ 68): Թեոդիկը տալիս է միայն գավառակի 3 գյուղի վիճակագրությունը՝ 506 տուն հայ (տես Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 545):

<sup>121</sup> Տես Համառոտ տեղեկագիր Արմտան գավառի, ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 162, թ. 4-5:

<sup>122</sup> Տես ՀԱԱ, ֆ. 1388, ց. 1, գ. 1, թ. 19:

<sup>123</sup> Դարսակի, Թողուտ, Տանձի:

<sup>124</sup> Օսմանյան վիճակագրական տվյալներով 1914-ին գավառակում կար 2,649 շունչ հայ բնակչություն (տես Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ըստ Ա-Դոյի՝ գավառակի 6 հայաբնակ գյուղերն ունեին 487 տուն՝ 2,725 շունչ հայ բնակչությամբ (տես Ա-Դո, *նշվ. աշխ.*, էջ 225): Որպես տեղեկությունների աղբյուր՝ նշված է Կամախի առաջնորդական փոխանորդը:

### § 3. Բայազետի գավառ

#### § 3.1. Բայազետի գավառակ

Ըստ հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների՝ գավառակի 5 հայաբնակ բնակավայրերում հաշվառվել էին 477 տուն, 4,886 շունչ հայ<sup>125</sup>:

Համեմատենք պատրիարքարանի տվյալները 1914-15թթ. կազմված երկու վիճակագրական գյուղացուցակների տվյալների հետ.

1. ըստ Ն. Մարտիրոսյանի<sup>126</sup> գավառակն ուներ 6 հայաբնակ բնակավայր՝ 498 տուն՝ 4,582 շունչ բնակչությամբ<sup>127</sup>:
2. Ա. Պապաջանյանի<sup>128</sup> տվյալների համաձայն՝ գավառակում կար 510 տուն հայ<sup>129</sup>:

Այսպիսով, վերոնշյալ տվյալները ցույց են տալիս, որ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակում բնակվում էր շուրջ 5,000 հայ<sup>130</sup>:

#### § 3.2. Դիադինի գավառակ

Պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի 8 հայաբնակ բնակավայրերում կար 1,649 շունչ հայ<sup>131</sup>:

Ն. Մարտիրոսյանը գավառակի 11 հայաբնակ բնակավայրերի համար հաղորդում է 212 տուն, 1,798 շունչ հայ<sup>132</sup>: Ա. Պապաջանյան՝ 8 հայաբնակ բնակավայր, 510 տուն հայ<sup>133</sup>:

Օգտագործելով վերոնշյալ տվյալներից միջին թիվը հանելու մեթոդը՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին Դիադինի գավառակում բնակվում էր շուրջ 1,750 հայ<sup>134</sup>:

<sup>125</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 458, Թեղդիկ, *նշվ. աշխ.*, էջ 547 (միայն տների թիվը): Ռ. Բեկգուլյանցի տվյալն է՝ 3,450 շունչ հայ (Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68):

<sup>126</sup> Հեղինակը՝ իբրև ուսուցիչ, Մշո առաջնորդարանի քարտուղար և թուրքական կառավարության ելևմտական վարչության պաշտոնյա, առիթ է ունեցել շուրջ 20 տարի շրջելու Մուշի, Խնուսի, Բուլանքլիսի, Մանազկերտի, Բաբերդի շրջանների գյուղերով:

<sup>127</sup> Ն. Մարտիրոսյանի տվյալները մեջբերում ենք ըստ՝ Գ. Բադալյանի (տե՛ս Բադալյան Գ., *նշվ. աշխ.*, էջ 217):

<sup>128</sup> Ա. Պապաջանյանը Կարնո շրջանի վարժարանների Միացյալ ընկերության տնօրենն էր, ըստ երևույթին մասնակցել է հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի կատարման աշխատանքներին:

<sup>129</sup> Տե՛ս «Արարատ», 1915թ. փետրվար-մարտ, էջ 168-169:

<sup>130</sup> 1914-ի օսմանյան վիճակագրական տվյալներով գավառակն ուներ 2,619 շունչ հայ բնակչություն (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դ-ոն գավառակի համար հաղորդում է 560 տուն՝ 3,920 շունչ հայ բնակչությամբ, այդ թվում՝ Բայազետ քաղաք՝ 350 տուն, 2,450 շունչ (1 տանը միջին 6 շունչ հաշվարկով), գավառակի 3 հայաբնակ գյուղեր՝ 210 տուն, 1,470 շունչ (1 տանը միջինը 7 շունչ հաշվարկով) (տե՛ս Ա-Դ-օ, *նշվ. աշխ.*, էջ 206, 226):

Բայազետի գավառի գավառակների հայ բնակչության հաշվարկ է կատարել նաև Գ. Բադալյանը: Ուսումնասիրողը, համադրելով հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի և Ն. Մարտիրոսյանի տվյալները, գավառակի հայ բնակչության հավանական թիվը որոշում է 4,735-4,805 շնչի սահմաններում (տե՛ս Բադալյան Գ., *նշվ. աշխ.*, էջ 217):

<sup>131</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 459, Թեղդիկ, *նշվ. աշխ.*, էջ 547 (միայն շնչերի թիվը): Ռ. Բեկգուլյանցի տվյալն է՝ 1,229 շունչ հայ (տե՛ս Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68):

<sup>132</sup> Տե՛ս Բադալյան Գ., *նշվ. աշխ.*, էջ 218:

<sup>133</sup> Տե՛ս «Արարատ», 1915թ. փետրվար-մարտ, էջ 168-169 (չի բացառվում, որ այս տվյալը (510 տուն) արտացոլում է փաստացի բնակչության թիվը):

<sup>134</sup> Ըստ օսմանյան վիճակագրության՝ 1914-ին գավառակում բնակվում էր 904 շունչ հայ (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դ-ոյի գյուղացուցակը (որպես տեղեկությունների աղբյուր նշված է Կարինի առաջնորդարանը) ընդգրկում է 7 հայաբնակ բնակավայր՝ 156 տուն՝ 1,092 շունչ հայ բնակչությամբ (1 տանը միջինը 7 շունչ հաշվարկով) (տե՛ս Ա-Դ-օ, *նշվ. աշխ.*, էջ 210, 226):

Գ. Բադալյանը գավառակի հայ բնակչության հավանական թիվը որոշում է 1,880 շունչ (տե՛ս Բադալյան Գ., *նշվ. աշխ.*, էջ 217):

### § 3.3. Ալաշկերտի գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի 12 հայաբնակ բնակավայրերում հաշվառվել էին 960 տուն, 9,914 հայ<sup>135</sup>:

Ինչպես և Բայազետի գավառի այլ գավառակների պարագայում, Ալաշկերտի հայ բնակչության թվաքանակը կարելի է ճշտել Ն. Մարտիրոսյանի և Ա. Պապաջանյանի վիճակագրական ցուցակների միջոցով: Ըստ Ն. Մարտիրոսյանի տվյալների՝ 1914-ին գավառակի 11 հայաբնակ բնակավայրերում կային 1,489 տուն, 12,577 շունչ հայ բնակչություն<sup>136</sup>: Պապաջանյանի ցուցակով գավառակի հայ տների թիվն էր 1,178<sup>137</sup>:

Ելնելով վերոնշյալ տվյալներից՝ կարծում ենք, որ գավառակում Մեծ եղեռնի նախօրյակին բնակվում էր շուրջ 11,000-12,000 հայ<sup>138</sup>:

### § 3.4. Ղարաբիլիսեի գավառակ

Ըստ պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների՝ գավառակի 12 հայաբնակ բնակավայրերում հաշվառվել էին 763 տուն, 8,180 շունչ հայ<sup>139</sup>:

Ն. Մարտիրոսյանի տվյալներով գավառակի 15 հայաբնակ բնակավայրերն ունեին 830 տուն, 6,828 շունչ հայ բնակչություն<sup>140</sup>, Ա. Պապաջանյանի տվյալներով՝ 510 տուն հայ<sup>141</sup>:

Գտնում ենք, որ գավառակի համար հայոց պատրիարքարանի տվյալներն ընդհանուր առմամբ արտացոլում են իրականությունը, և Մեծ եղեռնի նախօրյակին գավառակում բնակվում էր շուրջ 8,000 հայ<sup>142</sup>:

### § 3.5. Այնթափի (Դուրթաղի) գավառակ

Հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներով գավառակի 20 հայաբնակ բնակավայրում բնակվում էր 1,624 շունչ հայ<sup>143</sup>:

<sup>135</sup> Տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 460, Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 547: Ռ. Բեկզուլյանցի տվյալն է (առանց Ալաշկերտ քաղաքի)՝ 6,765 շունչ հայ (տե՛ս Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68):

<sup>136</sup> Տե՛ս Բաղալեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 219:

<sup>137</sup> Տե՛ս «Արարատ», 1915թ. փետրվար-մարտ, էջ 168-169:

<sup>138</sup> 1914թ. օսմանյան տվյալներ՝ 5,624 հայ, այդ թվում՝ 1,393 շունչ կաթոլիկ հայեր, 29-ը՝ բողոքական (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ա-Դոյի գյուղացուցակը (1909թ.) պարունակում է 12 հայաբնակ բնակավայր՝ 840 տուն՝ 5,880 շունչ հայ բնակչությամբ, այդ թվում՝ Ալաշկերտ (Թուփրակ կալե) քաղաք՝ 200 տուն, 1,400 շունչ, գավառակի 11 գյուղեր՝ 640 տուն, 4,480 շունչ (տե՛ս Ա-Դօ, *նշվ. աշխ.*, էջ 226):

Գավառակի համար Գ. Բաղալյանի կողմից հաշվարկված հավանական թիվն է՝ 12,013-12,015 շունչ: <sup>139</sup> Այդ թվում՝ Ղարաբիլիսե քաղաք՝ 320 տուն, 2,250 շունչ հայ (տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 459, Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 547 (միայն տների թիվը):

<sup>140</sup> Տե՛ս Բաղալեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 218:

<sup>141</sup> Տե՛ս «Արարատ», 1915թ. փետրվար-մարտ, էջ 168-169:

<sup>142</sup> 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալներով գավառակի հայ բնակչության թիվը կազմում էր 3,195 շունչ, այդ թվում՝ 18 շունչ կաթոլիկ (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 170):

Ըստ Ա-Դոյի տվյալների (արդյուր՝ Կարինի առաջնորդարան, 1909թ.)՝ Ղարաբիլիսեի 10 հայաբնակ բնակավայրերում կար 624 տուն՝ 4,368 շունչ հայ բնակչությամբ, այդ թվում՝ Ղարաբիլիսե քաղաք՝ 350 տուն, 2,450 շունչ (1 տանը միջին 6 շունչ հաշվարկով), գավառակի 9 հայաբնակ գյուղեր՝ 274 տուն, 1,918 շունչ (1 տանը միջինը 7 շունչ հաշվարկով) (տե՛ս Ա-Դօ, *նշվ. աշխ.*, էջ 212, 226):

Գավառակի հայ բնակչության համար Գ. Բաղալյանի կողմից հաշվարկված հավանական թիվն է՝ 7,540-7,580 շունչ:

<sup>143</sup> Գավառակի համար հաշվարկը կատարվել է Ա-Դոյի տվյալների հիման վրա. մեկ տան համար ընդունվել է 8 շունչ միջին թիվը (տե՛ս Kevorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 460): Գավառակի համար Ռ. Բեկզուլյանցի տվյալն է՝ 1,274 շունչ հայ (տե՛ս Бекгульянц, *նշվ. աշխ.*, էջ 68):

Ըստ Ն. Մարտիրոսյանի տվյալների՝ 1914-ին գավառակի 18 հայաբնակ բնակավայրում կար 287 տուն՝ 1,938 շունչ հայ բնակչությամբ<sup>144</sup>:

Ելնելով վերոնշյալ տվյալներից՝ կարծում ենք, որ Այնթափի գավառակում Մեծ եղեռնի նախօրյակին բնակվել է շուրջ 1,800 հայ<sup>145</sup>:

Այսպիսով, մեր հաշվարկը ցույց է տալիս, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Բայազետի գավառն ուներ շուրջ 28,000 հայ բնակչություն: Այս թիվը պետք է ընդունել որպես նվազագույն: Որոշ աղբյուրների հաղորդած տեղեկություններով Բայազետի հայ բնակչության թվաքանակը եղել է ավելի բարձր: Այսպես, ըստ Կարնո շրջանների վարժարանների Միացյալ ընկերության տնօրեն Ա. Պապաջանյանի գյուղացուցակի հանրագումար տվյալի, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Բայազետի գավառն ուներ 2,879 տուն հայ: Հեղինակը, որն անշուշտ քաջատեղյակ անձնավորություն է, գավառի հայ ընտանիքի նվազագույն միջին թիվը հաշվում է 12 շունչ, այս ցուցանիշը տների թվին բազմապատկելու արդյունքում ստանում ենք 34,548 հայ բնակչություն<sup>146</sup>:

Ամփոփենք: Հայկական տարբեր աղբյուրների տվյալների համադրության, վերլուծության և փոխլրացման միջոցով կատարված մեր հաշվումների համաձայն՝ Մեծ եղեռնի նախօրյակին Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը կազմում էր շուրջ 251,600 շունչ (բաշխումն ըստ գավառների և գավառակների տե՛ս աղյուսակ 11)<sup>147</sup>: Այս թիվը շուրջ երկու անգամ բարձր է 1914թ. օսմանյան վիճակագրության և շուրջ 25%-ով՝ հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալներից<sup>148</sup>: Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի համար մեր ստացած արդյունքին առավել մոտ են հայոց պատրիարքարանի՝ 1912-ի տվյալը՝ 215,000, ինչպես նաև Ջավեն վարդապետի արդեն հիշատակված ցուցանիշը՝ 230,000 հայ:

<sup>144</sup> Տե՛ս Բադալեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 218:

<sup>145</sup> Օսմանյան մարդահամարի տվյալներով 1914-ին գավառակն ուներ 1,070 հայ (տե՛ս Karpat, *նշվ. աշխ.*, էջ 1 70):

Ըստ Ա-Դոյի (1909թ.)՝ գավառակի 22 հայաբնակ բնակավայրում կար 203 տուն հայ՝ 1,421 շունչ բնակչությամբ (տե՛ս Ա-Դո, *նշվ. աշխ.*, էջ 217, 226): Ա-Դոն նշում է, որ տեղեկությունները քաղել է Կարմեն վարդապետի հուշատետրից:

Գավառակի հայ բնակչության համար Գ. Բադալյանի կողմից հաշվարկված հավանական թիվն է՝ 2,580-2,665 շունչ (առանձին գյուղերի համար տվյալները լրացվել են այլ աղբյուրներից):

<sup>146</sup> Տե՛ս «Արարատ», 1915թ. փետրվար-մարտ, էջ 169: Որպես Պապաջանյանի ասածի հավաստիության անողորակի ապացույց՝ մատնանշենք այն փաստը, որ Բայազետի գավառի համար 1913-14թթ. պատրիարքարանի մարդահամարով հաշվառված ընդհանուր հայ բնակչության (26,251 շունչ) և տների թվի (2,736) բաժանմամբ մեկ տանը միջինը հասնում է 9 շունչ, ինչը բարձր է Էրզրումի նահանգի այլ գավառների նույն մեթոդով որոշված շնչերի միջին թվից:

<sup>147</sup> Սահմանային սխալի գործակիցը՝ +/-3%:

<sup>148</sup> Նշենք, որ Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակի սեփական հաշվումներ են տալիս սփյուռքահայ ուսումնասիրողներ Սարգիս Կարաջյանը և Բյուզանդ Եղիայանը: Կարաջյանը, հիմք ընդունելով տարբեր հայրենակցական միությունների հրատարակությունների, ինչպես նաև Ս. Էփրիկյանի և Վ. Քինելի տվյալները, հանգում է այն եզրակացության, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նահանգի հայ բնակչության թիվն էր 199,568 շունչ (այդ թվում՝ Էրզրումի գավառ՝ 135,068, Երզնկայի գավառ՝ 48,500, Բայազետի գավառ՝ 16,000 շունչ (տե՛ս Karajian Sarkis J., *An Inquiry Into the Statistics of the Turkish Genocide of the Armenians 1915-1918, The Armenian Review*, 25, Winter 1972, էջ 13):

Ըստ Բյուզանդ Եղիայանի՝ Էրզրումի նահանգում 1914-ին բնակվում էր 251,050 շունչ հայ: Ուսումնասիրողն իր հաշվումների հիմքում դրել է Օրմանյանի տվյալները՝ ավելացնելով դրանք 10-15 առ հարյուր «մինչև 1914-15 բնակչության բնական աճումի համեմատությամբ» (տե՛ս Եղիայան Բ., *Ժամանակակից պատմություն Կաթողիկոսության Հայոց Կիլիկիոյ 1914-1972*, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, էջ 891)

**Աղյուսակ 11. Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին**

|                         | 1914թ.<br>թուրքական<br>տվյալներ | 1914թ.<br>հայոց<br>պատրիարքարան | 1914թ.<br>մեր<br>հաշվումները |
|-------------------------|---------------------------------|---------------------------------|------------------------------|
| <b>Էրզրումի գավառ</b>   |                                 |                                 |                              |
| Էրզրում                 | 34,545                          | 37,480                          | 53,000                       |
| Խնուս                   | 8,229                           | 21,382                          | 22,000                       |
| Քըղի                    | 14,609                          | 19,859                          | 25,500                       |
| Դերջան                  | 7,401                           | 11,690                          | 18,000                       |
| Բաբերդ                  | 12,025                          | 17,060                          | 18,500                       |
| Սալեր                   | 2,920                           | 2,602                           | 3,200                        |
| Թորթում                 | 1,223                           | 2,829                           | 3,500                        |
| Կիսկիմ                  | 6,190                           | 8,136                           | 11,000                       |
| Նարման                  | 556                             | 748                             | 750                          |
| Բասեն                   | 10,046                          | 16,740                          | 21,000                       |
| <b>Ընդամենը</b>         | <b>97,744</b>                   | <b>138,526</b>                  | <b>176,450</b>               |
| <b>Երզնկայի գավառ</b>   |                                 |                                 |                              |
| Երզնկա                  | 16,291                          | 25,795                          | 32,000                       |
| Բոլոմեր                 | 511                             | 862                             | 900                          |
| Կամախ                   | 4,741                           | 6,396                           | 8,000                        |
| Գուրուչայ               | 2,649                           | 2,989                           | 4,200                        |
| Ռեֆահիե                 | 1,270                           | 1,570                           | 2,500                        |
| <b>Ընդամենը</b>         | <b>25,462</b>                   | <b>37,612</b>                   | <b>47,600</b>                |
| <b>Բայազետի գավառ</b>   |                                 |                                 |                              |
| Բայազետ                 | 2,619                           | 4,884                           | 5,000                        |
| Դիադին                  | 904                             | 1,649                           | 1,750                        |
| Ղարաքիլիսե              | 3,195                           | 8,180                           | 8,000                        |
| Ալաշկերտ                | 5,624                           | 9,914                           | 11,000                       |
| Այնթափ                  | 1,070                           | 1,624                           | 1,800                        |
| <b>Ընդամենը</b>         | <b>13,412</b>                   | <b>26,251</b>                   | <b>27,550</b>                |
| <b>Ընդհանուր գումար</b> | <b>136,618</b>                  | <b>202,391</b>                  | <b>251,600</b>               |



**Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին  
(աղբյուրների համեմատական վերլուծության փորձ)**

*Ռոբերտ Թաթոյան*

**Ամփոփում**

Հոդվածում ներկայացվում և վերլուծության են ենթարկվում Էրզրումի նահանգի՝ 1878-1914թթ. հայ բնակչության թվաքանակին վերաբերող հիմնական ամբողջական վիճակագրական տվյալները՝ դասակարգված ըստ ծագման՝ օսմանյան, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, հայկական այլ, ռուսական և արևմտյան: Կազմվել են օսմանյան, հայկական, ռուսական ու արևմտյան հեղինակների տվյալների ընդհանրական-համեմատական աղյուսակներ:

Փորձ է արվել հաշվարկելու Մեծ եղեռնի նախօրյակին Էրզրումի նահանգի հայ բնակչության մոտավոր թվաքանակը գավառակ առ գավառակ՝ հաշվումները հիմնելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի՝ 1913-14թթ. մարդահամարի տվյալների վրա և ճշտելով դրանք Մեծ եղեռնը վերապրածների կողմից հաղորդվող տեղեկությունների, արևմտահայ փախստականների հաշվառման տվյալների և հայկական օժանդակ այլ սկզբնաղբյուրների միջոցով:

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, Էրզրումի նահանգ, վիճակագրություն, հայ բնակչության թվաքանակ, ժողովրդագրություն:

**The Number of Armenian Population of the Erzurum Province of the Ottoman Empire on the Eve of the Armenian Genocide (An Attempt at Comparative Analysis of Sources)**

*Robert Tatoyan*

**Summary**

This article presents and analyzes the main statistical sources on the Armenian population of the Erzurum province of the Ottoman Empire for the period of 1878-1914. The data is grouped by the source origin: Ottoman official, of the Armenian Patriarchate of Constantinople, data from other Armenian, Russian and Western sources. Comparative statistical tables of data provided by the Ottoman, Armenian, Russian and Western sources are compiled.

An attempt was made to estimate the number of the Armenian population of the Erzurum province by districts and sub-districts on the eve of the Armenian genocide. The calculations are based on the Armenian Patriarchate of Constantinople's 1913-14 census data, which are adjusted with figures found in Genocide survivors' accounts, refugees' registration data and other auxiliary sources.

**Keywords:** Armenian genocide, Erzurum vilayet, statistics, Armenian population, demography.

**Численность армянского населения Эрзрумского вилайета  
Османской империи в преддверии Геноцида армян  
(попытка сравнительного анализа источников)**

*Роберт Татоян*

**Резюме**

В статье представлены и проанализированы основные статистические источники по численности армянского населения Эрзрумского вилайета Османской империи за период с 1878 по 1914 гг. Статистика сгруппирована по принципу происхождения: турецкие данные, данные Армянского константинопольского патриархата, данные из других армянских источников, данные русских и западных источников. В конце каждого раздела представлены сравнительные статистические таблицы.

Сделана попытка рассчитать приблизительную численность армянского населения по отдельным административным единицам (округам) Эрзрумского вилайета накануне Геноцида, основываясь на данных переписи населения Патриархата 1913-14 гг. и уточняя их с использованием данных из свидетельств переживших Геноцид армян, данных по регистрации западноармянских беженцев и других вспомогательных источников.

**Ключевые слова:** Геноцид армян, Эрзрумский вилайет, статистика, численность армянского населения, демография.

## ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ. ՉՈՐԱԿՈՉ, ԶԻՆԱԹ-ԱՓՈՒՄ, ՈՉՆՉԱՅՈՒՄ

Անի Ոսկանյան

1908թ. օսմանյան սահմանադրության վերահռչակումից հետո կայսրության ոչ իսլամ ժողովուրդները, այդ թվում՝ նաև հայերը, բանակում ծառայելու իրավունք պահանջեցին: 1910թ. օսմանյան խորհրդարանը լուրջ քննարկումներից հետո ոչ իսլամներին զինվորագրվելու իրավունք տվեց: Հայ երիտասարդները սկսեցին զորակոչվել օսմանյան բանակ, իսկ զինվորական և ռազմաթշկական կրթություն ստացած հայ սպաները՝ ծառայել կայսրության գրեթե բոլոր զորամասերում:

1914թ. օգոստոսի 2-ին՝ Գերմանիայի հետ քաղաքական և ռազմական գաղտնի համաձայնագրի ստորագրումից հետո, իթթիհադական վարչակարգը հայտարարեց համընդհանուր զորահավաք: Զինվորական ծառայությանը պիտանի գրեթե բոլոր հայ տղամարդիկ զորակոչվեցին օսմանյան բանակ:

1914թ. համընդհանուր զորահավաքն իրականացվեց նույն թվականի մայիսի 12-ին ընդունված զորահավաքի մասին լրացուցիչ ժամանակավոր օրենքի հիման վրա (Mükellefiyeti Askeriye Kanuni Muvakkati)<sup>1</sup>:

Օսմանյան 1-ին և 2-րդ բանակները կենտրոնացվեցին մայրաքաղաք Ստամբուլի արևմուտքում և արևելքում, մինչդեռ 3-րդ բանակը հաստատվեց ռուսական ճակատում և տեղակայված էր Կովկասում: 1914թ. նոյեմբերին՝ Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելուց հետո, 4-րդ բանակը տեղակայվեց Սիրիայում: 5-րդ բանակը, որ հավաքագրվել է 1915թ. գարնանը, պաշտպանել է Ստամբուլի հարավային դարպասները: 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ բանակները ձևավորվել են ավելի ուշ<sup>2</sup>:

Հայ տղամարդիկ բանակ զորակոչվեցին 3 փուլով: Սկզբում զորակոչվեցին 20-45 տարեկան տղամարդիկ, այնուհետև՝ 15-ից 20, և վերջում՝ 45-ից 60 տարեկանները: Նոր զորակոչվածները միացան արդեն իսկ բանակում ծառայող հայ սպաներին ու զինվորներին: Որոշ տվյալներով Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին օսմանյան բանակ զորակոչվեց 100.000 հայ զինվոր<sup>3</sup>: Տարբեր հաշվարկներով պատերազմի ընթացքում շուրջ 300.000 արևմտահայ երիտասարդ է զինվորագրվել և կատարել իր զինվորական պարտականությունները<sup>4</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմին (1914-1918թթ.) մասնակցել է 38 պետություն՝ ավելի քան 1,5 միլիարդ բնակչությամբ, որը տվյալ ժամանակահատվածում կազմում էր երկրագնդի բնակչության 75 տոկոսը: Այդ ընթացքում զինվորագրվեց ավելի քան 75 միլիոն մարդ<sup>5</sup>: Թուրքական կառավարության հայտարարած զորակոչի արդյունքում սկզբում բանակ զորակոչվեց 650.000 մարդ, իսկ պատերազմի ընթացքում զորակոչիկների թիվը հասավ 4 միլիոնի<sup>6</sup>:

Զորակոչից հետո, կարճաժամկետ նախավարժանք անցնելով, հայ զինվորներն ուղարկվեցին տարբեր զորամասեր: Սակայն, մինչ ռազմական գործողությունների սկսվելը,

<sup>1</sup> Дадрян В., *Геноцид армян: Содержание преступления*, Ереван, МИГА, 2005, с. 11.

<sup>2</sup> Nicolle D., *The Ottoman Army 1914-1918*, Great Britain, Osprey publishing, 1994, p.12.

<sup>3</sup> Մնացականյան Ա.Ն., *Յուշամատենի Մեծ Եղեռնի 1915-1965*, Պեյրուք, հրատարակություն «Զարթոնք» օրաթերթի, 1965, էջ 31:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>5</sup> Միմոնյան Հր., *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը*, Երևան, «Հայաստան», 1986, էջ 323:

<sup>6</sup> Новичев А. Д., *Турция, краткая история*, Москва, “Наука”, 1965, с. 130.

դեռևս 1914թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, սկսվեց հայ զինվորների մասնակի զինաթափումը: Օսմանյան կառավարությունն իր առջև դրած ծրագրի մի մասն ավարտել էր. հայ տղամարդիկ հավաքագրված էին:

Այդ օրերի համար, թերևս, հատկանշական է օսմանյան բանակի սպա Հակոբ Սիրունու նկատառումը. «Մեր գումարտակին մեջ տասնեակ մը հայեր կայինք, տեսակ մը մտերմական խմբակ կազմած՝ գոր փոթորիկը ցրելս ցրելս պիտի ընէր շուտով»<sup>7</sup>:

Իսկ ավստրիացի փոխմարշալ, օսմանյան բանակի գլխավոր շտաբում ռազմական լիազոր ներկայացուցիչ Ժ. Պոմյանկովսկին գրել է. «Թուրքերը սկսեցին հայ առողջ տղամարդկանց ոչնչացումը, որպեսզի անպաշտպան դարձնեն բնակչության մնացած մասը»<sup>8</sup>:

1914թ. հոկտեմբերի 17-ին՝ գերմանա-թուրքական ռազմական նավատորմի կողմից ռուսական սեծովյան նավահանգիստների ռմբակոծությունից երեք օր անց, Ռուսաստանը պատերազմ է հայտարարում Օսմանյան կայսրությանը: Ակտիվ ռազմական գործողություններ են ծավալվում Կովկասյան ճակատում:

1915թ. հունվարին Էնվեր փաշայի 120.000-անոց բանակը ջախջախվեց Սարիղամիշի ճակատամարտում: Թուրքական սպայակույտը գերությունից փրկվեց հայ զինվորների հետոսական դիմադրության շնորհիվ<sup>9</sup>: Էնվեր փաշային անխուսափելի գերությունից փրկեց սերաստացի սպա Հովհաննես Ակինյանը, ով, ծանր վիրավորվելով, ավելի ուշ մահացավ: «Հակառակ որ Էնվերի կեանքը փրկուեր էր հայու արիւնով, դարձեալ ան յանուն Իթթի-հատի եռապետութեան, իբր իր կեանքի փրկագին, հրամայել էր թրքական բանակի հայ զօրքերուն զինաթափումը»<sup>10</sup>:

Սակայն այս հանգամանքը ևս հետ չպահեց երիտթուրքերին արդեն ծրագրված ցեղասպանությունն իրագործելուց:

1915թ. փետրվարի 23-ին տրվել է գլխավոր հրամանատար և պատերազմական նախարար Էնվեր փաշայի՝ կայսերական բանակում ծառայող բոլոր հայ զինվորականներին զինաթափելու և ոչնչացնելու, հայ սպաներին ձերբակալելու պաշտոնական հրամանը<sup>11</sup>:

Օսմանյան բանակի հայ զինվորներին զինաթափելուց հետո իշխանությունները նրանց ընդգրկեցին բանվորական (amele taburlari), բեռնափոխադրող (hamal taburlari), շինարարական (inşaat taburlari) և երկրագործական գումարտակներում (ziraat taburlari): Միաժամանակ սկսվեցին նաև հայ սպաների ձերբակալությունն ու մեկուսացումը:

Պատմաբան Հայկազն Ղազարյանը գրում է, որ դեռ Իթթիհադի Սալոնիկի համաժողովում կայացրած, ապա պառլամենտի կողմից վավերացրած քրիստոնյաների զինվորագրության բուն նպատակը հայրենիքի սահմանների պաշտպանությունից ավելի, ոչ թուրք զինվորներին բանակում վերահսկողության տակ վերցնելն էր՝ դյուրացնելու համար նրանց հետագա բնաջնջումը զինվորական միջոցներով<sup>12</sup>:

Թուրքագետ Ա. Ավագյանը ևս մատնանշում է, որ տվյալ հարցում ողջ կարգադրություններն արվում էին անմիջապես զինվորական ուղիներով, և որոշումները կայացնում էին զինվորական շրջանակները: Խոսքը հայ զինվորներին զինաթափելու և նրանց՝ թիկունքում աշխատանքների տեղափոխելու ու ոչնչացնելու մասին է<sup>13</sup>:

<sup>7</sup> Սիրունի Յ., *Ինքնակենսագրական նօթեր*, Երևան, 2006, էջ 198:

<sup>8</sup> Дадрян В., *նշվ. աշխ.*, էջ 11:

<sup>9</sup> Կարոյան Գ. Մ., *Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները*, Պոսթոն, 1957, էջ 18:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 110-111:

<sup>11</sup> Սարաջեան Խ., *Հայոց դերը Թուրքիոյ մէջ*, Երևան, Շիրակացու անուան համալսարանի հրատարակություն, 2000, էջ 44:

<sup>12</sup> Ղազարեան Հ., *Յեղասպան թուրքը*, Բեյրութ, տպարան Համագգային, 1968, էջ 21-22:

<sup>13</sup> Авакян А., *Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений*, Ереван, 1999, с. 102.

Չնայած արդեն սկսվել էին հայ զինվորականների զինաթափումն ու ոչնչացումը, այդուհանդերձ 1915թ. սկզբին Էնվեր փաշան Կոնիայի եպիսկոպոսին ուղղված իր նամակում գրում էր. «...օսմանյան բանակի հայ զինվորները բարեխղճորեն կատարում են իրենց պարտականությունները ռազմական գործողությունների թատերաբեմում, ինչը ես կարող եմ վկայել իմ սեփական դիտարկումներից»<sup>14</sup>:

Ֆրանսիացի լրագրող Անրի Բարբին նշում է, թե Սարիղամիշի պարտությունից հետո, որի իրական պատճառները թաքցնում էին զինվորական իշխանությունները, ամբողջ հանգանքը զցեցին զորագնդերի մեջ ծառայող հայ տարրերի վրա<sup>15</sup>: Այսպես, Քյուփրու-քոյի տակ պարտվել և փախուստի էր դիմել ամբողջ թուրքական բանակը, բայց դասալքության մեջ մեղադրվեցին և զնդակահարվեցին 50 հայ զինվորներ<sup>16</sup>:

Հրաշալի իմանալով, որ թուրքական բանակում համատարած բնույթ են կրում զանգվածային դասալքությունն ու զինվորական ծառայությունից խուսափելը, 9-րդ կորպուսի հրամանատար Իսհան փաշան հանդես է գալիս տարբեր առաջարկներով՝ օսմանյան բանակի ծանր բարոյահոգեբանական վիճակը կարգավորելու համար: Օսմանյան բանակում նման խնդիրներ առաջացան հենց պատերազմի սկզբից, ինչի մասին փաստում են դեռևս 1914թ. նոյեմբերին բարձրաստիճան սպաների կողմից արված հայտարարությունները:

Դիվիզիայի հրամանատար Ալի Օսմանը հիշեցնում էր իր ենթականերին.

«...լինի սպա թե զինվոր, ոչ ոք չի կարող թողնել իր զորամասը առանց հրամանի: Թեկուզ մի քանի րոպե զորամասը լքողը կհամարվի ռազմական գործողությունների վայրը լքող և համապատասխան արարքին կհետևի պատիժը...»<sup>17</sup>:

Զինվորական կարգապահությունը շատ խիստ էր հատկապես հայ զինվորների նկատմամբ: Հայ զինվորները փոքր հանցանքների կամ կարճ բացակայությունների համար պատժվում էին խստագույնա: Աղբյուրներից մեկի համաձայն՝ Կեսարիայի պատերազմական ատյանի կողմից մահվան են դատապարտվել որոշ հայ զինվորներ, իսկ մահապատիժն իրականացվել է նրանց հարազատների աչքի առջև<sup>18</sup>:

Յուրաքանչյուր անգամ դասալքության հարցն օգտագործվում էր ընդդեմ հայերի, ինչպես քաղաքական, այնպես էլ քարոզչական նպատակներով: Հաճախ լուրեր էին տարածվում, որ հայ բնակչությունը դիմադրել է զորակոչին, կամ հայ զինվորները լքել են դիրքերն ու միացել հակառակորդի բանակին: Հայերի կողմից դասալքության դեպքեր իսկապես եղել են, բայց հայ զինվորներն այդ կերպ հաճախ փորձել են փրկվել թիկունքում դաժանաբար սպանվելու հեռանկարից, ինչը չի կարելի ասել թուրք դասալիքների մասին, ովքեր պարզապես խուսափում էին ծառայությունից և թիկունքում զբաղվում հանցագործությամբ՝ մասնավորապես հայերի կոտորածով և կողոպուտով:

Հատկանշական է նաև 1915թ. ապրիլի 16-ին Վանի նահանգապետ Ջևդեթ Բեյին դասալքության հարցի շուրջ ներկայացված փաստաթղթերից մեկում արված այն դիտողությունը, թե դասալիք չի կարող համարվել այն զինվորը, ով զենք չունի<sup>19</sup>:

<sup>14</sup> Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում /1915-1918թթ./, ըստ կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող և առաջաբանի հեղինակ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Ա. Միրբայեյան, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2004, էջ 199-200:

<sup>15</sup> Պարալի Հ., Սարսափի երկրին մեջ, Պեյրուք, տպ. «Մեսրոպ», 1965, էջ 20:

<sup>16</sup> Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914-1916թթ., Երևան, «Հայաստան», 1965, էջ 221:

<sup>17</sup> Арутюнян А. О., *Кавказский фронт 1914-1917гг.*, Ереван, «Айастан», 1971, с. 157.

<sup>18</sup> Կեսարացի Վ., Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, էջ 347:

<sup>19</sup> Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 224-226:

Հարկավոր է նշել, որ դեռևս 1914թ. օգոստոսի համընդհանուր գորահավաքի սկզբում շատ զինակոչիկներ չեն ներկայացել գորակոչային կետեր: Մինչդեռ պատերազմական նախարար Էնվեր փաշան, խոսելով սուլթանի, թուրքական կառավարության և նույնիսկ Ալլահի անունից, ասում էր. «Մեր երկրում, վերջապես, պետք է ստեղծվի այնպիսի վիճակ, որ չմնա ոչ մի դասավիթ և անտարբեր»<sup>20</sup>:

Ուրֆայում շվեյցարացի միսիոներ Յ. Կյունցլերը 1915թ. փետրվարին գրում է, որ չորս հարյուր նորակոչիկ, այդ թվում՝ մի խումբ հայեր, մեկնել են Այնթափ: Նրանցից Այնթափի գորանոց ներկայացել է միայն չորս հոգի, ովքեր հայեր էին: Նրանց ընդունող սպան ծիծաղել է ու հրամայել քառյակին, որ նույնպես հեռանան<sup>21</sup>:

Օսմանյան բանակում ծառայող հայ զինվորները տարբեր ռազմաճակատներում ճշգրտորեն կատարում էին իրենց զինվորական պարտականությունները, նրանք շարունակում էին կռվել նույնիսկ սեփական ընտանիքներից լուր չունենալով կամ արդեն իսկ նրանց տեղահանության մասին տեղեկացած լինելով:

Թվում էր, թե զինվորագրության իրավունքը նրանց ոչ միայն օսմանյան պետության լիիրավ քաղաքացի է դարձնում, այլև օգնելու է պաշտպանել իրենց և իրենց ընտանիքները: Սակայն համընդհանուր գորակոչին այն մեծ թակարդն էր, որում հայտնվեց հայ ժողովրդի արական մասը. բանակում գտնվելը նպաստեց նրանց կազմակերպված ջարդին:

Նախապես կազմված ծրագրով ու հստակ հրամաններով նրանց ոչնչացնում էր այն բանակը, որտեղ նրանք գորակոչվել էին՝ հաշվի չառնելով նույնիսկ. «...որ զինուորական համազգեստով մարմին մը բաց տեղ մը ձգել անցնիլը **անպատուրթին էր պետութեան մը զինուորական համազգեստին**»<sup>22</sup>:

Տարբեր երկրների պաշտոնական արխիվների փաստաթղթերում կան բազմաթիվ վկայություններ հայ զինվորականներին ոչնչացնելու մասին հետևյալ սխտեմով՝ գորահավաք-զինաթափում-մեկուսացում-ոչնչացում:

Էնվեր փաշայի մտերիմ ընկեր, Թուրքիայում Գերմանիայի ծովային կցորդ, կապիտան-լեյտենանտ Հանս Հումանը նշում է, որ հայերին բանվորական աշխատանքների նշանակումը ոչ մի կերպ կապված չէր թուրքական բանակի թիկունքում ապստամբության հետ, ինչը հաճախ շեշտում են թուրքական աղբյուրները: Թուրքիայի պատերազմ մտնելուց 2 շաբաթ առաջ, այսինքն՝ 1914թ. հոկտեմբերի 16-ի զեկուցման մեջ նա հաղորդում է, որ հայերից և հույներից արդեն բանվորական գումարտակներ են ձևավորելու: Այսպիսով, դա տեղի է ունեցել շատ ավելի շուտ, քան հայերի մոտ կարող էր առիթ կամ պատճառ գտնվել ապստամբության մասին մտածելու կամ այն իրականացնելու<sup>23</sup>:

1914թ. հոկտեմբերին հայ զինվորներին զինաթափելու մասին այլ վկայություններ եւս կան. «Թուրքերը 1914 տարւոան Հոկտեմբեր 19էն սկսեալ հայ զինուորները զինաթափ ըրին եւ անոնցմէ կազմեցին բանուորական միութիւններ:

Հոկտեմբերի վերջաորութեան երբ Թուրքիա այլևս պատերազմի մէջ կը գտնուէր Համաձայնականներու դէմ եւ Կովկասի ճակատին վրայ զինուորական գործողութիւնները

<sup>20</sup> Арутюнян А. О., *նշվ. աշխ.*, էջ 157:

<sup>21</sup> Կյունցլեր Յ., *Արյան և արցունքների երկրում, Իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ, թարգմանեց՝ Ա. Հայրունի, Հ. Մարտիրոսյան, Ա. Միրզոյան, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011*, էջ 24:

<sup>22</sup> Կարոյեան Գ. Մ., *նշվ. աշխ.*, էջ 88:

<sup>23</sup> Дадрян В., *История Армянского геноцида, Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа*, Ереван, "Гладзор", 2007, с. 331.

սկսած էին արդեն, սպաներու տրամադրությունը հետզհետե կը փոխուէր բանակի մէջ մնացեալ հայ զինուորներուն հանդէպ»<sup>24</sup>:

1914թ. նոյեմբերին «Մշակ» թերթը գրել է, որ թուրք բժիշկները հրաժարվում էին օգնություն ցույց տալուց վիրավոր կամ հիվանդ հայ զինվորներին<sup>25</sup>: Իսկ դեկտեմբերի 16-ից հետո Կովկասյան ճակատից վերադարձող կառապանները պատմում էին, թե բանվորական խմբերը ջարդված էին մաս առ մաս<sup>26</sup>:

1915թ. հունվարի 26-ին Կոստանդնուպոլսում գրված Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական հաղորդագրություններից մեկում մասնավորապես ասվում է. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն»<sup>27</sup>:

Գերմանացի նշանավոր զինվորական ու դիվանագետ, 1915թ. Էրզրումի փոխյուպատոս Շոյքներ-Ռիխտերը 1915թ. օգոստոսի 5-ին Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հոհենլո-հե-Լանգենբուրգին տեղեկացնում է, թե հայոց տեղահանումն ավարտված է՝ միաժամանակ նշելով, որ կառավարությունն ու զինվորական իշխանությունները հայերի դեմ կիրառեցին անասելի դաժան միջոցներ: Բոլոր այն հայերը, որոնք դեռևս զենքը ձեռքներին ծառայում էին, դուրս հանվեցին բանակից և ընդգրկվեցին աշխատանքային գումարտակներում<sup>28</sup>:

Էրզրումի փոխյուպատոս Շոյքներ-Ռիխտերը հեշտությամբ հերքում է նաև հայերի կողմից կանխամտածված կամ նախապատրաստված որևէ խռովության մասին թուրքական կողմի պնդումները՝ վերոնշյալն ապացուցելով Էրզրումի օրինակով:

«Եթե այստեղ ծրագրվեր որևէ խռովություն, ապա դրա համար շատ հարմար ժամանակ էր հունվարը, երբ ռուսները կանգնած էին Էրզրումից 35կմ հեռավորության վրա, և ժանդարմերիան Էրզրումի կայազորում կազմված էր ընդամենը մի քանի հարյուր մարդուց, այն դեպքում, երբ Էրզրումում միայն աշխատանքային գումարտակներում ընդգրկված էր 3-4 հազար հայ»<sup>29</sup>:

1915թ. սեպտեմբերի 3-ին Հալեպում Գերմանիայի իյուպատոս Ռյոսլերն իր հաշվետվությանը կցում է Յակոբ Կյունցլերի նամակի պատճենը, որում կասկած կար այն մասին, որ հարյուրավոր ճանապարհաշինարար հայ բանվորներ սպանվեցին Խարանի դաշտում, որը հաստատվեց Բաղդադի երկաթգծի շահագործման ծառայության կողմից: Բաղդադի երկաթգծի վարչության տրամադրության տակ կա Թեյ-Աբիադի կայարանի պետի զեկուցագիրը, որին ժանդարմները պատմել են, որ իրենք բարձրաստիճան իշխանությունների հրամանով գնդակահարել են ճանապարհաշինարար բանվորներին<sup>30</sup>:

Հետաքրքրական է նաև 1915թ. Բաղդադի երկաթգծի գերմանացի ծառայողի հայտնած մեկ այլ տեղեկություն առ այն, որ զինվորները մեծամասամբ ներգրավված են միայն ճանապարհաշինության մեջ և զենք կրելու իրավունք չունեն: Իսկ նրանց ընտանիքներն աքսորված են անապատ<sup>31</sup>:

<sup>24</sup> Կեսարացի Վ., *Յուշամատենան Մեծ Եղեռնի 1915-1965*, էջ 346-347:

<sup>25</sup> «Մշակ», Թիֆլիս, 1914, 21 նոյեմբեր, N 264:

<sup>26</sup> Կեսարացի Վ., *Յուշամատենան Մեծ Եղեռնի 1915-1965*, էջ 347:

<sup>27</sup> *Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին /1915-1918/*, /փաստաթղթերի ժողովածու/, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Արտեմ Օհանջանյան, գերմաներենից թարգմանեց՝ Վառլամ Մարտիրոսյան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2004, էջ 12:

<sup>28</sup> *Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում*, էջ 5-6:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 67-68:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 147:

Երկաթուղիների շինարարության մեջ ներգրավված հայ զինվորները բաժանվում էին 300-500 մարդուց բաղկացած զորախմբերի, որոնք աշխատում էին միմյանցից մի քանի մետր հեռավորության վրա: Թուրքական կանոնավոր զնդերն անսպասելիորեն հարձակվում էին այդ բանվորական խմբերի վրա և, թույլ չտալով ուշքի գալ, նրանց զնդակահարում էին: Եթե որևէ մեկը փորձում էր փախչել, սպա նրանց հետապնդում էին և զնդակահարում<sup>32</sup>:

1915թ. սեպտեմբերի 4-ի՝ Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսության հաղորդագրության մեջ նշված է, որ թուրք սպայի հաղորդման համաձայն՝ հուլիսի առաջին օրերին Համզի-Քոյի մոտակայքում՝ Տրապիզոնից 52 կմ հեռավորության վրա, ռազմական աշխատանքներում ընդգրկված 132 հայ է զնդակահարվել<sup>33</sup>:

1915թ. հուլիսի 28-ի՝ Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օսկար Հայզերի հաղորդման մեջ ասվում է, որ նա խոսել է մի երիտասարդի հետ, ով ծառայության մեջ է գտնվել «İnşaat taburları»-ում և աշխատում է Գյումուշհանեի ուղղությամբ ճանապարհների շինարարության վրա: Բանվորական գումարտակում ծառայող զինաթափված զինվորը պատմել է, որ 14 օր առաջ բոլոր հայերը՝ 180 մարդ, առանձնացվել են մյուս բանվորներից: Նա լսել է հրացանների կրակոցներ և դրանից հետո հայտնվել է այն մարդկանց թվում, ում ուղարկել են դիակները թաղելու: Երիտասարդ զինվորը փաստել է, որ նրանք բոլորը մերկ էին, նրանցից խլել էին հագուստը<sup>34</sup>:

Խարբերդում ամերիկյան հյուպատոս Լեյսլի Դեյվիսի՝ 1915թ. հուլիսի 11-ի հաղորդումը նույնպես ներկայացնում է հայ զինվորականների արքային ու բանտարկությունը: Հյուպատոսը գրում է, որ ոչ մի տարբերություն չի դրվել, թե ով է վճարել իր օրինական հարկը՝ զինվորական ծառայությունից ազատվելու համար, իսկ ով՝ ոչ: Վերջիններից վերցրել են գումարը և հետո բանտարկել. «Ասում էին, որ նրանց պետք է տանեին ինչ-որ տեղ, որ նրանք աշխատեն ճանապարհներին, սակայն ոչ ոք այլևս նրանց մասին ոչինչ չի լսել, և նրանց աշխատանքը, անկասկած, միայն պատրվակ էր»<sup>35</sup>:

Իսկ Օսմանյան կայսրությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն գրում էր. «Շատ հաճախ հայ զինվորականներին ոչնչացնում էին խմբերով, քանզի սառնասիրտ կերպով նրանց զնդակահարելը դարձել էր ամենօրյա գործ»<sup>36</sup>:

Օսմանյան բանակի վեներաբլայի սպա Ռաֆայել դե Նոգալեսը, ով 1915թ. մայիս ամսին Խնուսում տեսել է զինաթափված հայ զինվորների, այդ առիթով գրում է.

«Նրանք զինաթափված էին և այլորի պարկեր էին տեղափոխում: Նրանց օրապահիկը հազիվ 500 գրամ հաց էր, որը կառավարությունն էր հատկացրել: Ջինաթափ հայերին ուղեկցող ժանդարմներից տեղեկացա, որ նրանց կեսից ավելին մնացել են ճանապարհին՝ մահանալով ցրտից և սովից»<sup>37</sup>:

Օսմանյան բանակի մեկ այլ սպա՝ Գալուստ Սյուրմենյանը ևս փաստում է. «Որոշված էր բոլոր հայ տղամարդիկը եղ թապուրիի անունին տակ հաւաքել տեղ մը եւ փնացնել զիրենք:

<sup>32</sup> Գիբբոնս Հ. Ա., *Ժամանակակից պատմության ամենասև էջը. 1915-ի դեպքերը Հայաստանում*. Փաստեր և պատասխանատվություններ, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2003, էջ 10-11:

<sup>33</sup> Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915-1918), էջ 59:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 160:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>36</sup> Morgenthau N., *Ambassador Morgenthau's Story*, New York, 1918, pp. 302-303.

<sup>37</sup> Rafael de Nogales, *Four Years Beneath the Crescent*, New York. London, Charles scribner's sons, 1926, pp. 53-54.



Երզնկայի շրջանին մէջ, այդ նպատակին համար ընտրուած էր Սանսայի ձորը, որ կը գտնուի Երզնկայի ու Դերջանի միջեւ, Ճիպիճէի լեռան հարաւակողմը, Սարըգայայի ու Տերսիմի լեռներուն միջեւ, ուր Եփրատը Երզնկայի դաշտը մտնելու համար նեղ անցք մը գտած է, 8-10 քիլոմէթր երկարությամբ»<sup>38</sup>:

Հ. Ղազարյանը գրում է, որ մինչև 1916թ. հունիս ամիսը Սեբաստիայում և նրա շրջակայքում կային դեռևս 10.000 հայ զինվորներ, որոնք աշխատել են զինվորական կայանում, ոմանք էլ՝ որպէս դերձակներ, կոշկակարներ «Իմալեթխանէ»-ում (արհեստանոց, գործարան), մյուսները՝ ալյուրի և հացի գործարաններում (դահնիլե): Արհեստավոր զինվորները կատարել էին նաև շինարարական աշխատանքներ և հայոց գերեզմանատան քարերով կառուցել են ուսուցչանոց, երեք զորանոց, հեծելազորի զորանոց, հիվանդանոց, Իթթիհադի ակումբ, պանդոկ և կազինո<sup>39</sup>:

Հայոց ցեղասպանության տարիներին բանակում զինաթափված զինվորներից և մեծահասակ տղամարդկանցից բացի, ովքեր հիմնականում որպէս բեռնակիր էին զորակոչվել, կանայք ևս ներգրավվել են աշխատանքային տարբեր գումարտակների մէջ և կատարել ցանկացած ծանր աշխատանք:

1914թ. դեկտեմբերին կազմվեցին «Օլամճի թապուր» բեռնակիր զնդերը: Այս բեռնակիր զնդերի մէջ ներգրավված հայ կանայք շալակած բեռ են տեղափոխել դեպի Կարին, Բասեն և Ալաշկերտ: Նրանցից շատերը մահացել են ցրտից ու սովից, ոմանք էլ համաճարակի զոհ են դարձել<sup>40</sup>:

Տղամարդկանց հետ միասին կանանց, այնուհետև երեխաներին բանակում տարբեր բանվորական աշխատանքների մէջ օգտագործելու մասին է փաստում նաև պատմաբան, հրապարակախոս Ա. Անտոնյանը. «Վերջում այս հայերը՝ իրենց կանանց և երեխաների հետ, մեծ մասամբ գործածվեցին զինվորական աշխատանոցների մէջ»<sup>41</sup>:

Պատերազմի վերջին օսմանյան իշխանությունները ևս մեկ որոշում են ընդունում դեռևս ողջ մնացած ու բանակի շարքերում գտնվող հայ տղամարդկանց ոչնչացնելու մասին: 1918թ. փետրվարի 27-ին գլխավոր հրամանատար և պատերազմական նախարար Էնվեր փաշայի ծածկագիր հեռագրում պահանջվում էր կայսերական բանակում դեռ ծառայող հայ զինվորներին զնդակահարել, իսկ սպաներին՝ բանտարկել՝ մինչև հետագա հրամանները: Հրաման կար նաև 5 տարեկանից բարձր հայ անունը կրող բոլոր «պաշլպօզուքները» քաղաքից դուրս տանել ու սպանել<sup>42</sup>:

Հրամանը Հալեպ հասավ մարտի սկզբին: 48 ժամ հետո ոստիկանությունը՝ իբր «անհրաժեշտ նախապատրաստութիւն», սկսեց հայերի տեղահանությունը, ինչպէս հանձնարարված էր Էնվեր փաշայի հեռագրում, սակայն «փոխանակ գործադրութեան հրամանին՝ հասաւ չգործադրելու հակահրամանը»<sup>43</sup>: Բայց քանի որ արդեն սկսել էին, հետ դառնալ չցանկացան:

«Պէտք եղաւ հեռագրական փոխանակութեան մը, որուն վրայ իսկոյն անուն մը տուին ձեռնարկուած նախապատրաստութիւններուն, առարկելով թէ բան մը չէ, գաղթականները զինուորագրելու հրաման եկած է, զինուորական տարիք ունեցողները կը փնտռուին»<sup>44</sup>:

<sup>38</sup> Սիրումէնեան Գ., *Տաճկահայ զինուոր եւ զինուորականութիւնը*, Պէյրութ, 1967, էջ 23:

<sup>39</sup> Ղազարեան Հ., *նշվ. աշխ.*, 1968, էջ 99:

<sup>40</sup> Մելիքեան Եղ., *Հարք-Խնուս*, Անթիլիաս, Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1964, էջ 271:

<sup>41</sup> Անտոնյան Ա., *Մեծ ճգիրը*, Երևան, Արևիկ, 1990, էջ 165:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 232-233:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 233:

<sup>44</sup> Նույն տեղում:

Այնուհետև սկսվում է հայ գաղթականների զինվորագրությունը. «...և որոնց համար տաժանքի նոր օրեր կը սկսեին, որովհետև կը զինուորագրուեին իբր «աշխատատու», - թիապարտի պես բան մը»<sup>45</sup>:

Օսմանյան բանակ զորակոչված հայ զինվորականները զանգվածաբար ոչնչացվեցին այն պետության կողմից, որին ծառայելու համար էին զորակոչվել: Պատերազմական դրության մեջ գտնվող պետության կողմից զինվորականին զինաթափելու և սպանելու մասին ընդունված որոշումը կարող է փաստել, որ գործ ունենք լավագույնս ծրագրված և նույնիսկ պատերազմում հաղթելու հեռանկարից էլ կարևոր մեկ այլ ծրագրի հետ, որն էր հայ ժողովրդին իր իսկ բնօրրանում ցեղասպանության ենթարկելը:

### **Հայերն օսմանյան բանակում. զորակոչ, զինաթափում, ոչնչացում**

*Անի Ոսկանյան*

#### **Ամփոփում**

1914թ. օգոստոսին օսմանահպատակ հայ տղամարդիկ զորակոչվեցին բանակ: Զինվորագրությունը կատարվեց երեք փուլով: Սկզբում զորակոչի ենթարկվեցին 20-ից 45 տարեկան տղամարդիկ, այնուհետև՝ 15-ից 20 և վերջում՝ 45-ից 60 տարեկանները: Նոր զորակոչվածները միացան արդեն իսկ բանակում ծառայող հայ սպաներին ու զինվորներին: Այնուհետև, նախապես մշակված ծրագրի համաձայն, հայ զինվորականները զինաթափվեցին և ընդգրկվեցին բանվորական ու բեռնափոխադրման գումարտակներ, որին էլ հաջորդեց նրանց զանգվածային ջարդը:

**Բանալի բառեր՝** Առաջին համաշխարհային պատերազմ, Հայոց ցեղասպանություն, օսմանյան բանակ, պատերազմական նախարարություն, զորակոչ, հայ զինվորներ և սպաներ, զինաթափման հրաման, բանվորական գումարտակներ:

### **Armenians in the Ottoman Army: Mobilization, Disarmament, Elimination**

*Ani Voskanyan*

#### **Summary**

In August 1914, Armenian men of draft age were mobilized into the Ottoman army. There were three drafts. The first draft was for men between 20 and 40 years of age, the second from 15 to 20 and the final from 45 to 60. The newly recruited men joined the Armenian officers and soldiers already serving in the army. Then, according to a previously developed plan, the Armenian soldiers were assigned to working battalions, after which came their mass elimination.

**Keywords:** World War I, Armenian Genocide, Ottoman army, the Ministry of War, Mobilization, Armenian soldiers and officers, decree to disarm, labour battalions.

<sup>45</sup> Նույն տեղում:

**Армяне в османской армии: мобилизация, разоружение, уничтожение**

*Ани Восканян*

**Резюме**

В августе 1914г. западные армяне призывного возраста были мобилизованы в армию. Призыв проводился в три этапа. Первый призыв коснулся возрастной категории 20-45 лет, следующие два - 15-20 и 45-60 лет. Новобранцы пополнили ряды армянских офицеров и солдат, уже состоявших на службе в османской армии. Затем по предварительно разработанному плану османского правительства армянские солдаты были разоружены и распределены в трудовые батальоны, после чего последовало их массовое уничтожение.

**Ключевые слова:** Первая мировая война, Геноцид армян, Османская армия, Военное министерство, мобилизация, армянские солдаты и офицеры, разоружение, трудовые батальоны.

## ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ԹՈՒՐԲԱԿԱՆ ՄԻ ՎԱՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Գևորգ Վարդանյան

Թուրքիայի կողմից շուրջ մեկ դար շարունակվում է Հայոց ցեղասպանության փաստի ժխտումը, որի «ակադեմիական» հենքն ապահովելու համար միտումնավոր շրջանցվում է արդարության, գիտական անաչառության ու անկողմնակալության սկզբունքը: Վերջին տասնամյակների ընթացքում Հայոց ցեղասպանության փաստը ժխտող մենագրությունների և հոդվածների պակաս չի նկատվել: Դրանցում ընդհանուր առմամբ զարգացվում են դեռևս կոտորածների ընթացքում շրջանառության մեջ դրված մի քանի թեզեր՝ փորձելով տարբեր «փաստարկներով» գիտական հանրությանը պարտադրել պատմության իրենց վարկածը: Այդ թեզերի ակունքները կարելի է գտնել Մեծ եղեռնի և դրան հաջորդած տարիներին երևան եկած մի շարք հրատարակություններում, որոնցում փորձ էր արվում միջազգային հանրության ուշադրությունը շեղել իրադարձությունների ընթացքից, աղավաղել փաստերը կամ պարզունակ կերպով հերքել հայերի ոչնչացման գործում թուրքական պետության դերակատարությանն առնչվող ցանկացած մեղադրանք:

Այս հոդվածում քննության է ենթարկվելու թուրքական վաղ հրատարակություններից մեկը, որը, իրավամբ, կարելի է համարել Հայոց ցեղասպանության ժխտման և կեղծարարության «հիմնարար մատյան»: Խոսքը վերաբերում է դեռևս 1916թ. Կ. Պոլսում օսմաներեն հրատարակված «Հայկական կոմիտեների նպատակները և հեղափոխական գործունեությունը Սահմանադրության հռչակումից առաջ և հետո» (այսուհետ՝ «Հայկական կոմիտեներ») խորագրով գրքին, որը մեկ տարի հետո լույս է տեսել նաև ֆրանսերեն թարգմանությամբ<sup>1</sup>: Մեր առջև դրված խնդիրը, սակայն, սահմանափակվելու է քարոզչական այս հրատարակությունում հայկական ավանդական կուսակցություններից երկուսի՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան և Հայ յեղափոխական դաշնակցության գործունեության լուսաբանման՝ այս գրքում կիրառվող որոշ մոտեցումների քննությամբ: Մասնավորապես, ժամանակագրական առումով դիտարկելու ենք Առաջին աշխարհամարտի նախօրեին հայկական երկու քաղաքական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող որոշ հարցերի թուրքական մեկնաբանությունը:

### Գրքի հրատարակման պատճառները և նպատակները

Այս հատորը կազմվել և հրատարակվել է Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության կողմից, որին տրվող կարևորությունն այնքան մեծ է եղել, որ այն շատ արագ թարգմանվել է նաև ֆրանսերեն: Բովանդակային առումով այն նվիրված է հայկական կուսակցությունների գործունեության, հայ ազգային-ազատագրական պայքարի և դրանում քաղաքական ուժերի դերակատարության լուսաբանմանը: Հատորը կազմվել է նաև որպես յուրահատուկ հակակշիռ լորդ Ջեյմս Բրայսի և պատմաբան Անուդ թոյնրիի կազմած փաստաթղթերի ժողովածուին՝ «Կապույտ գրքին»: Սակայն, ի տարբերություն

<sup>1</sup> *Ermeni Komiteleri'nin Âmal ve Harekât-ı İhtilâliyesi: İ'lân-ı Meşrûtiyet'ten Evvel ve Sonra*, İstanbul, 1332 (1916). Տե՛ս նույնի ֆրանսերեն թարգմանությունը՝ *Aspirations et agissements révolutionnaires des comités arméniens avant et après la proclamation de la Constitution Ottomane*, Constantinople, 1917: Հետագայում այս գիրքն ունեցել է մի քանի հրատարակություն՝ *Ermeni Meselesi ve Türkiye*, ed. Abdullah Yaman, İstanbul, Ota Yayınları, 1973; *Ermeni Komitelerinin İhtilal Hareketleri ve Besledikleri Emeller*, ed. İsmet Parmaksızoglu, Ankara, Kültür Bakanlığı, 1981; *Ermeni Terörünün Tarihçesi: Ermeni Komitelerinin Emelleri ve İhtilal Hareketleri*, ed. Enver Yasarbas, İstanbul, Petek Yayınları, 1984.

վերջինի, այն չուներ ոչ արժանահավատություն, ոչ գիտականություն<sup>2</sup>: Պատմաբան Ռ. Սաֆրաստյանը, հետազոտելով բազմաթիվ թուրքական աղբյուրներ, ընդգծում է այն փաստը, որ ժամանակակից թուրք հեղինակների կողմից կիրառվող կեղծիքի «ավանդույթի» սկզբնաղբյուրն այս գիրք-տեղեկագիրն է<sup>3</sup>: Ընդհանուր առմամբ, այս հրատարակության գլխավոր նպատակը ոչ միայն Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայության տեղահանությունների և կոտորածների համար պատասխանատվությունից խուսափելն էր, այլև զանազան արդարացումների միջոցով դրանց համար հայերին մեղադրելը:

### **«Կարևորությունը» և առաջին բնադատությունները**

Հատորում ամփոփված տեղեկությունները գլխավոր շրջում էին իրականությունը՝ բոլոր իրադարձությունները ներկայացնելով կողմնակալ և կեղծված: Ժամանակագրական առումով տեղեկագիրը սկսում է Օսմանյան կայսրության կազմում հայտնվելուց հետո հայերի «ապահով» և «արտոնյալ» դրության ներկայացմամբ՝ դրան հակադրելով արևելահայերի վիճակը: Կտրուկ անցում կատարելով XIX դար՝ գրքի հեղինակ(ներ)ը՝ ներկայացնում են հայ ազատագրական խմբակների կազմավորման, ինչպես նաև արևմտահայ և արևելահայ մամուլի պատմությունը: Այնուհետև գլուխ առ գլուխ հաղորդում են հայկական կուսակցությունների ծագման, ծրագրերի, դրանց անդամների գործելակերպի վերաբերյալ խեղաթյուրված, կեղծված կամ պարզապես հորինված տեղեկություններ: Այնուամենայնիվ, այս հատորը չի կարելի համարել միայն գիտականությունից և հավաստիությունից զուրկ, սուտ տեղեկությունների ժողովածու: Ամբողջ գրքում կարմիր թելի պես առաջ է տարվում այն գաղափարը, որ հայերի տեղահանությունների և կոտորածների գլխավոր մեղավորն իրենք՝ հայերն են: Այդ դրույթն ապացուցելու համար հայերին մեղադրում են դավաճանության, Օսմանյան կայսրությունը կործանելու, մուսուլման բնակչությանը ոչնչացնելու նպատակադրվածության մեջ և այլն: Հաշվի առնելով, որ տեղեկագիրը կազմվել և հրատարակվել է պետության կողմից, բնականաբար, արտահայտում էր հայերի կոտորածների վերաբերյալ վերջինիս պաշտոնական դիրքորոշումը:

Բավական ուշագրավ են հատորում ամփոփված լուսանկարները կամ դրանց նմանահանությունները: «Հայերի դավադրության» այս «անհերքելի ապացույցների» մեծ մասը ևս կեղծիք է: Այսպես, հավելվածում ներկայացված լուսանկարներից մեկում պատկերված են իբրև թե հայերի կողմից սպանված թուրքերի դիակներ, որոնց վրա սգում են թուրք կանայք: Սակայն նույն նկարն ուշադիր դիտարկելու դեպքում երևում է, որ դիակների մեծ մասի վրա հագուստ չկա, այլ միայն լուսանկարելուց առաջ են դրանք «հանդերձավորվել»՝ ծածկվելով կտորներով: Նույն տեսարանը լուսանկարվել է մի քանի դիտանկյունից: Իրականում դրանք հայ տղամարդիկ են, որոնց սպանել են թուրքերը: Զինաթափված և անպաշտպան հայերը տարագրության ճանապարհին ինչպե՞ս կարող էին սպանել թուրքերին, առավել ևս՝ թալանել նրանց հագուստը: Մեկ այլ լուսանկարում էլ ներկայացնում

<sup>2</sup> Մինչև հրատարակելը Զ. Բրայսը գիրքը ներկայացրել է երեք հեղինակավոր մասնագետների՝ Շեֆիլդի համալսարանի ռեկտորի տեղակալ նշանավոր պատմաբան Հ. Ա. Լ. Ֆիշերին, Օքսֆորդի համալսարանի հունարենի պրոֆեսոր Գ. Մյուռեին և ամերիկացի անվանի իրավաբան Մ. Սթորիին: Վերջիններս դրական գնահատական են տվել այդ գրքին: Տե՛ս Bryce James and Arnold Toynbee, *The Treatment of the Armenians in the Ottoman Empire, 1915-1916*: Documents Presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, by Viscount Bryce. With a preface by Viscount Bryce. London: H.M. Stationery Office, 1916, p. XXVII.

<sup>3</sup> Մասնավորապես անդրադառնալով գրքում «Տեղահանության օրենքի» ներկայացմանը՝ Ռ. Սաֆրաստյանը նշում է, որ դա արված է աղճատված և առանց ստորագրությունները դնողների անունների: Տե՛ս Սաֆրաստյան Ռ., *Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920)*, Եր., «Լուսակն» հրատ., 2009, էջ 184-185:

են «հայերից բռնագրավված» զենքերը: Չի ներկայացվում և ոչ մի ապացույց, որ դրանք պատկանել են հայերին<sup>4</sup>:

Հատորի տպագրությունը չէր կարող աննկատ մնալ ժամանակակիցների աչքից: Հրատարակությունից շատ չանցած՝ արևմտահայ մամուլում հայտնվեցին հոդվածներ, որոնք բացահայտում էին «Հայկական կոմիտեներ»-ում եղած կեղծարարությունները: Առաջին քննադատներից մեկը պատմաբան Լեոն էր, ով 1918թ. «Ժողովրդի ձայն» թերթի համարներում հանգամանալից անդրադարձել է խնդրո առարկա գրքին, քննադատել դրա կողմնակալությունն ու փաստարկների անհեթեթությունը: Առաջինը հենց Լեոն էր, որ ուշադրություն դարձրեց այն հանգամանքին, որ չնայած տիտղոսաթերթի վրա բացակայում է նշումը, որը կհաստատեր, որ հատորը տպագրվել է կառավարության կողմից, այնուամենայնիվ դա հաստատվում է հրատարակության բովանդակությունն ու ձևը դիտարկելիս: Անվանի պատմաբանը կարողացել է ճիշտ ընկալել նաև հրատարակման դրդապատճառները՝ նշելով, որ դրա միջոցով փորձ է արվել հայերի ոչնչացումը փաստող արևմտյան հրատարակություններին հակակշիռ ստեղծել<sup>5</sup>: Լեոյի քննադատությունը զգալիորեն ուղղվել է նաև հայկական կուսակցությունների դեմ: Սակայն ցավալին այն է, որ կուսակցությունների գործելակերպի՝ Լեոյի քննադատությունները հաճախ ոչ ընդունելի գնահատականներ են<sup>6</sup>:

«Հայկական կոմիտեներ...»-ում տեղ գտած կեղծարարությունների բացահայտման գործում մեծ աշխատանք է կատարել հայ գրական, հասարակական, քաղաքական գործիչ, «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» անդամ Տիգրան Հովհաննիսյանը (1865-1921)<sup>7</sup>: Հայ հեղինակի կողմից բացահայտված թուրքերի կեղծարարությունները հանգում էին հետևյալ կետերին՝ 1. Նախ, զուգահեռներ տանելով Հայոց ցեղասպանությունը փաստող հիմնական սկզբնաղբյուրներից մեկի՝ լորդ Բրայսի կազմած փաստաթղթերի ժողովածուի հետ՝ Տ. Հովհաննիսյանն ընդգծում է այն փաստը, որ ի տարբերություն «Կապույտ գրքի»՝ «Հայկական կոմիտեներ...»-ում պարունակվող բոլոր վկայությունների հեղինակները թուրքեր են: Այսինքն՝ հայերի կողմից մուսուլմանների սպանության պատմությունների վկաները, նրանց հարցաքննողները, ինչպես նաև արձանագրություն կազմողները եղել են թուրքեր (բնագրում՝ տաճիկ): 2. Հայկական

<sup>4</sup> Այս թեմայով հարցազրույց ունեցանք Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի հետ: Վերջինս նշեց, որ դա թուրքերի կողմից կիրառվող հնարք է, այսինքն՝ սեփական զենքերը լուսանկարների միջոցով ներկայացնել որպես հակառակորդի դավադրության ապացույց: Ավելին, Հայկ Դեմոյանը ընդգծեց այն հանգամանքը, որ քարոզչական այդ հնարքը Թուրքիայի կողմից օգտագործվում է ցայսօր: Բավական է հիշել, որ 1980-ական թթ.՝ Քրդական բանվորական կուսակցության անդամներին ձերբակալելուց հետո, թուրքական հեռուստաընկերությունները ցուցադրում էին «քրդերից բռնագրավված բազմաթիվ զենքերի լուսանկարներ», որոնց զգալի մասն իրականում թուրքական ծագում ունեին:

<sup>5</sup> «Ժողովրդի ձայն», N 54, 1918, էջ 2-3:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 3:

<sup>7</sup> Ինչպես այս, այնպես էլ ԱՄՆ-ում Օսմանյան կայսրության նախկին դեսպան Ահմեդ Ռուստեմ բեյի (22.06.1914-04.10.1914) գրքում (տե՛ս Ahmed Rustem Bey, *The World War and the Turco-Armenian Question*, Berne, 1918) տեղ գտած կեղծարարությունները բացահայտելու նպատակով Տիգրան Հովհաննիսյանը գրել է «Տաճիկ կառավարությունը և իթթիհաթը մարդկության դատարանի առաջ» խորագրով մի աշխատություն: Այն նախատեսված է եղել տպագրել հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն, սակայն ֆինանսական միջոցների անբավարարությունը խոչընդոտել է այդ ծրագրի իրականացումը: Այնուամենայնիվ, Տ. Հովհաննիսյանը նշված աշխատությունը հրատարակել է Թիֆլիսում լույս տեսնող «Հառաջ» թերթի 1919 թ. փետրվար և մարտ ամիսների մի քանի համարներում՝ «Թերթին» խորագրի ներքո: 2007 թ. այդ աշխատությունն առանձին գրքույկի տեսքով հրատարակվեց ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից: Տե՛ս Հովհաննիսյան Տ., *Տաճիկ կառավարությունը և իթթիհաթը մարդկության դատարանի առաջ*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2007:

կուսակցությունների գործունեությանն առնչվող փաստաթղթերը ներկայացվում են միտումնավոր թյուր և աղավաղված թարգմանությամբ: 3. Շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ անհայտ ծագման «փաստաթղթեր», հատկապես մասնավոր բնույթ կրող նամակներ, որոնք չեն պատասխանում այն հարցերին, թե ինչպես են թուրքերի ձեռքն ընկել, ինչ ապացույց կա, որ դրանք իրենք՝ թուրքերը չեն գրել, կամ եթե հայերն են գրել, ապա ո՞վ է թարգմանել դրանք, ինչ բարեխղճությամբ և հմտությամբ: 4. Գրքում առկա են ակնհայտ սուտ վկայություններ, որոնց հավաստիության գլխավոր երաշխիքը մուսուլման վկաների երդումն էր<sup>8</sup>:

«Հայկական կոմիտեներ...»-ում եղած կեղծարարություններին բավական ուժեղ հակահարված տվեց Գրիգոր Չալխուշյանը<sup>9</sup> (1861-1939)՝ 1919թ. հրատարակելով «Կարմիր գիրք» խորագրով մի աշխատություն<sup>10</sup>, որը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության առումով ունի սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն: Ինչպես հեղինակն է նշում, գրքի «կարմիր» անվանումը պայմանավորված է ոչ թե կազմի գույնով, այլ այն խորհրդանշում է հայ ժողովրդի թափած արյունը: «Կարմիր գիրքը» փաստորեն հրատարակվել էր թուրքերի կազմած տեղեկագրին հակակշիռ ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով: Այս հատորի հրատարակության մեջ օգտագործված փաստաթղթերի զգալի մասը նախկինում անհայտ էր և հետևաբար առաջին անգամ էր դրվում գիտական շրջանառության մեջ: Բացի այդ, ի տարբերություն «Հայկական կոմիտեներ...»-ի փաստաթղթերի մեծ մասի, «Կարմիր գրքում» նշվում էին օգտագործված սկզբնաղբյուրները:

«Հայկական կոմիտեներ...»-ի քննադատներից յուրաքանչյուրը փորձել է յուրովի բացահայտել և ապացուցել դրա կեղծիքները, որոնք այնքան շատ են, որ դրանցից յուրաքանչյուրին առանձին անդրադառնալու դեպքում հարկ կլիներ գրել մի ամբողջ հատոր:

**Հ. Յ. Դաշնակցություն և Ս. Դ. Հնչակյան կուսակցությունների գործունեության հետ կապված մի քանի հարցերի՝ թուրքական մեկնաբանություն: Փաստարկներ և հակափաստարկներ**

Նախ, կարևոր է Առաջին աշխարհամարտից առաջ՝ 1914թ. հուլիսի կեսին, տեղի ունեցած Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցության ութերորդ ընդհանուր ժողովի հետ կապված որոշ հարցերի պարզաբանումը: Հայտնի է, որ ժողովը հաստատեց «Միություն և առաջադիմություն» կուսակցությանն ընդդիմադիր լինելու իր դիրքորոշումը: Դրա արդյունքում ընդունված բանաձևում առկա էր հետևյալ ձևակերպումը. «Ժողովը չի ժխտել գործակցութեան սկզբունք այն համապետական կարևոր խնդիրներուն համար, որոնք համապատասխան են մեր կուսակցութեան ծրագրական պահանջներուն»<sup>11</sup>:

Այս նախադասությունը բացակայում է «Հայկական կոմիտեներ...»-ում ներկայացված հայերեն փաստաթղթի ֆրանսերեն թարգմանության մեջ, ինչն ամենևին էլ պատահական

<sup>8</sup> Տե՛ս Հովհաննիսյան Տ., *Տաճիկ կառավարությունը...*, 2007, էջ 14-37:

<sup>9</sup> Իրավաբան, պատմաբան, հասարակական գործիչ Գր. Չալխուշյանը 1918-1919թթ. եղել է Հայաստանի Հանրապետության փոխիշյուպատոսը Դոնի Ռոստովի շրջանում: Նա իրականացրել է Հայոց ցեղասպանությունը վերապրածներին օգնելու, գաղթականների տեղավորման, ինչպես նաև հանգանակությունների կազմակերպման աշխատանքներ:

<sup>10</sup> Տե՛ս Чалхушьян Г., *Красная книга*, Ростов-на-Дону: Ашхатанк, 1919. 2008 թ. Դոնի Ռոստովում «Կարմիր գիրքը» վերահրատարակվեց պ. գ. դ. Ս. Ս. Կազարովի գրած առաջաբանով, լրացումներով և ծանոթագրություններով: Տե՛ս Чалхушьян Г. X., *Красная книга, Переиздание с дополнениями, комментариями и примечаниями*, Ростов-на-Дону: Ростиздат, 2008.

<sup>11</sup> Լեո, *Թիրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը*, Հ. Բ, Փարիզ, Տպ. Պահրի Եղբարց, 1935, էջ 76:

չէ: Դրա փոխարեն թարգմանության մեջ ավելացվել է բնագրում գոյություն չունեցող մի նախադասություն («... և կխուսափեն որևէ առնչություն ունենալ նրա հետ ուրիշ հանգամանքներում»)<sup>12</sup>: Չբավարարվելով դրանով՝ նախադասությանը համապատասխան հղումով տողատակում ավելացվել է բառացիորեն հետևյալը՝ «*Cette décision a été prise à l'unanimité à la première reance (պետք է լիներ՝ séance - Գ. Վ.) du Congrée*» (հայերեն՝ «Այս որոշումը միաձայն ընդունվեց կոնգրեսի առաջին նիստին»)<sup>13</sup>, որն ակնհայտ կեղծիք է:

Դաշնակցությունը, չնայած իր ընդդիմադիր կեցվածքին, չէր գնում բացահայտ առճակատման, ինչը թելադրված էր արևմտահայության անվտանգության հարցի գիտակցմամբ: Այս ժողովի հետ կապված անցքերն ունեն բացառիկ նշանակություն Հայոց ցեղասպանության ժխտման հենքերից մեկի՝ «հայերի դավաճանության» թեզի ձևավորման առումով: Անշուշտ, «Հայկական կոմիտեներ...»-ի մեջ տեղ չեն գտել իրենց՝ թուրքերի կողմից ժողովի և ժողովականների վրա ճնշում գործադրելու մասին հիշատակումներ, մինչդեռ դեպքերի անաչառ հետազոտությունը ենթադրում է նաև դրանց դիտարկումը:

1914թ. հուլիսի վերջին Դաշնակցության Ընդհանուր ժողովի կողմից ընտրվել էր 9 հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որը պետք է զբաղվեր «առկալս մնացած հարցերով»<sup>14</sup>: Շուտով Էրզրում է ժամանում իթթիհադականներից կազմված մի պատվիրակություն և բանակցություններ սկսում դաշնակցականների հետ<sup>15</sup>: 1914թ. օգոստոսի 15-ին Էրզրումում տեղի է ունենում Դաշնակցություն ու «Միություն և առաջադիմություն» կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցություն: Իթթիհադի կողմից բանակցությունները վարում էին այստեղ շտապած Բեհաեդդին Շաքիրը, Նաջի բեյը և Խալիլ բեյը: Թուրքերի կողմից Դաշնակցությանն առաջարկվում է հետևյալը. «Ռուսաստանը և նրա դաշնակիցներն ի վիճակի չեն դիմակայելու կենտրոնական տերություններին. ամբողջ մահմեդական աշխարհը՝ Մարոկկոյից Բելուջիստան և Աֆղանստան, համախմբվել է Թուրքիայի շուրջը՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դեմ պայքարելու համար. Կովկասում մեզ կմիանան վրացիները և մուսուլմանական ցեղերը, որոնց Թուրքիան կկազմակերպի և կապահովի զենքով: Սակայն Կովկասում մեր հաջողությունն ամբողջությամբ ձեր ձեռքում է, և կովկասյան հակառուսական շարժումը գլխավորելով՝ ձեր համաձայնության դեպքում բավարար կլինի Կովկաս ուղղել 200-300 հազար մարդ, որպեսզի ռուսներին հետ շարտեն Կովկասյան լեռներից այն կողմ. ռուսների վտարումից հետո հյուսիս-արևմուտքում մենք կկազմավորենք ինքնավար Վրաստան՝ Քութայիսի, Թիֆլիսի, Բաթումի և Տրապիզոնի նահանգի մի մասի սահմաններում, հյուսիսարևելյան մասում կառանձնացնենք մուսուլմանական ինքնավար մարզ՝ ներառելով Դաղստանը, Բաքվի նահանգը և Ելիզավետպոլի նահանգի մի մասը, և վերջապես կենտրոնական մասում կկազմավորենք ինքնավար Հայաստան Երևանից, Կարսից և Ելիզավետպոլի նահանգի արևմտյան մասից՝ դրան միացնելով Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմանակից շրջանները»<sup>16</sup>:

Երիտթուրքերի առաջարկում թաքնված նպատակների մասին Լեոն Նշում է. «Երիտա-

<sup>12</sup> Ֆրանսերեն՝ «...et éviteront tout contact avec lui en d'autres circonstances»: Հայերեն տեքստի ֆրանսերեն թարգմանության մեջ տեղ գտած մյուս կեղծիքների մասին ավելի մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 20:

<sup>13</sup> *Aspirations et agissements révolutionnaires...*, p. 144.

<sup>14</sup> Մինախորեան Վ., 1915 թուականը, *Արհաիրքի օրեր*, Վենետիկ, Ս. Ղազար, Մխիթարյանների տպարան, 1949, էջ 69:

<sup>15</sup> Տաճնապետեան Հրաչ, Հ. Յ. *Դաշնակցությունը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհ. ժողով (1890-1924)*, Աթէնք, «Դրօշակ»-ի տպարան, էջ 108:

<sup>16</sup> *Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов.* (Под ред. М. Г. Нерисяна). – 2-е, доп. Изд. – Ер.: Айастан, 1983, N 177, стр. 333.



սարդ թիրքերի այս ծրագիրը Հարաւային Կովկասը հեշտութեամբ նաճելու ծրագիրն էր, որ ունէր, անշուշտ, գերմանական ծագում»<sup>17</sup>:

Առկա էր նաև ակնհայտ մի բան, որը միանգամից ուշադրություն է գրավում: Խոսքը հայերին *ինքնավարություն* (ընդգծումն իմն է՝ Գ. Վ.) տալու մասին է, ընդ որում երիտթուրքերի առաջարկած «*Ինքնավար Հայաստանի*» (ընդգծումն իմն է՝ Գ. Վ.) տարածքը Երևանի ու Ելիզավետպոլի նահանգներից և Կարսի մարզից բացի ընդգրկելու էր օսմանյան վարչական միավորներից Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմանակից շրջանները: Այսինքն՝ իրենք՝ երիտթուրքերն էին հայերին առաջարկում *ինքնավարություն*, մինչդեռ *ինքնավարության* գաղափարն այդքան ջանասիրաբար պախարակվում է «Հայկական կոմիտեներ...»-ում: Մյուս ուշագրավ հանգամանքն այն է, որ երիտթուրքերը, փաստորեն, ռուսների դեմ *ապստամբության* առաջարկ էին անում: Ավելին, Իթթիհադի լիազորներն իրենց հետ Էրզրում էին բերել մի քանի տասնյակ կովկասցի թուրքեր, որոնք հավաստիացնում էին, թե գնում են Կովկաս՝ խռովություններ և ապստամբություններ կազմակերպելու և հնարավոր պատերազմի դեպքում ռուսական բանակի թիկունքը կազմալուծելու նպատակով<sup>18</sup>: Ըստ Բեհաեդդին Շաքիրի և Նաջի բեյի՝ հայերի չմիանալը կարող էր ծանր հետևանքներ առաջացնել<sup>19</sup>: Անշուշտ, երիտթուրքերի այս խոստումները ոչ մի արժեք չունեին. նպատակը հայերին ռուսների դեմ օգտագործելն էր, սակայն գլխավորն այն է, որ նրանք առաջարկում էին մի բան, որի համար միշտ մեղադրել էին հայերին:

Օգոստոսյան խորհրդակցությանը Դաշնակցությունը ներկայացնում էին Ռոստոմը, Ակնունին և Վռամյանը: Ի պատասխան երիտթուրքերի առաջարկին՝ անփոփոխ է մնում Դաշնակցության յոթերորդ ընդհանուր ժողովի որոշումը, որի համաձայն՝ «պատերազմի պարագային, իւրաքանչիւր պետութեան քաղաքացի պէտք է կատարէ իր պարտականութիւնները՝ իր պետութեան նկատմամբ»<sup>20</sup>:

Բացի այդ Դաշնակցության ղեկավարները փորձում էին թուրքերին համոզել հրաժարվել պատերազմի մեջ մտնելու մտադրությունից, քանի որ *դա կարող էր վտանգավոր լինել կայսրության ապագայի համար*<sup>21</sup>:

Այս առումով ուշագրավ են Ուինսթոն Չերչիլի խոսքերը, ով հայերի կայացրած որոշման կապակցությամբ նշում է. «...Թուրքական կառավարությունը՝ հետամուտ սեփական շահերին, ջանում էր ապահովել հայերի օգնությունը, հատկապես Ռուսաստանում ապրող հայերի: Հայ ղեկավարների առջև սարսափելի այլընտրանք ծառացավ՝ արդյոք պետք է իրենց ժողովրդի ամբողջ ուժը դնել Ռուսաստանի կամ Թուրքիայի տրամադրության տակ, թե համաձայնել, որ իրենց ժողովուրդն առաջվա պես մնա բաժանված, և նրա որդիները թշնամական բանակներում պայքարեն միմյանց դեմ: Վերջիվերջո, նրանք եկան այն եզրակացության, որ պատերազմի դեպքում Թուրքիայում և Ռուսաստանում ապրող հայերը պետք է կատարեն իրենց պարտքն այն պետության նկատմամբ, որի հպատակներն են: Նրանք ավելի խելամիտ համարեցին գնալ եղբայրասպան պայքարի, մարտնչելով տարբեր ճամբարներում, քան իրենց ճակատագիրը կապելով կողմերից մեկի հաղթանակի հետ, վտանգել ազգի ամբողջական գոյությունը (ընդգծումն իմն է՝ Գ. Վ.)»<sup>22</sup>:

<sup>17</sup> Լեո, *նշվ. աշխ.*, էջ 78:

<sup>18</sup> Վրացյան Ս., *Հայաստանի Հանրապետություն*, Երևան, «Հայաստան», 1993, էջ 8-9:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>20</sup> Տաճնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, «Դրօշակ»-ի տպարան, էջ 108:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Черчилль У., *Мировой кризис*, М.-Л.: Госвоениздат, 1932, с. 276-277.

Դաշնակցության այս դիրքորոշումը թուրքերին ընկալեցին որպես դավաճանություն՝ որակելով այն ռուսասիրություն<sup>23</sup>։ Հետագայում արդեն ժխտողական պատմագրության մեջ թուրք հեղինակները սկսեցին «անպարարություններ» անել այս խեղաթյուրումների վրա<sup>24</sup>։ Այս առումով կարևոր նկատառում է արել թուրք սոցիոլոգ և պատմաբան Թ. Աքչամը, ով նշում է, որ երիտթուրքերի՝ Էրզրում ժամանելու գլխավոր նպատակը ոչ թե Դաշնակցության ժողովին մասնակցելն էր, այլ «Հատուկ կազմակերպության» ջոկատներ ստեղծելը։ Ժողովը միայն հարմար պատրվակ էր, որպեսզի նրանք ժամանեն Էրզրում՝ խնդիր ունենալով նաև չեզոքացնել ժողովի դաշնակցական մասնակիցներին<sup>25</sup>։ Աքչամի այս դիտարկումը, որը հիմնված է օսմանյան աղբյուրների վրա, լրիվ հաստատվում է, եթե հաշվի առնենք, որ օգոստոսի վերջին տեղական իշխանությունները ձերբակալում և բռնի Կ. Պոլիս և Սամսուն են արտաքսում դաշնակցական երկու ղեկավարներին՝ Ակնունուն (Խաչատուր Մալումյան) և Վահան Մինախորյանին<sup>26</sup>։

«Հայկական կոմիտեներ»-ի մեջ շատ է անդրադարձը Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությանը։ Դա ամենևին էլ պատահական չէ. Հնչակյան կուսակցությունը միշտ էլ աչքի է ընկել «Միություն և առաջադիմություն» կուսակցության նկատմամբ ընդգծված ընդդիմադիր կեցվածքով։ 1913թ. Կոստանցայի (Ռումինիա) համագումարից հետո, երբ հնչակ պատվիրակները ժամանեցին Կ. Պոլիս, ձերբակալվեցին և 1915թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Բայազետ հրապարակում կախաղան բարձրացվեցին։ Հնչակյան կուսակցության 20 գործիչների դատավարության դիտարկումն ունի կարևոր նշանակություն։ Ինչպես նշվում է Արսեն Կիտուրի կողմից խմբագրված՝ Հնչակյան կուսակցության պատմությունը ներկայացնող գրքի մեջ, հնչակյանների ձերբակալության հետ մեկտեղ երիտթուրքերն առգրավեցին նաև նրանց արխիվները, այդ թվում՝ Ս. Դ. Հնչակյան կուսակցության՝ Թուրքիայում կայացած Երրորդ պատգամավորական ժողովի արձանագրությունները<sup>27</sup>։ Ինքը՝ Արսեն Կիտուրը ևս ընդգծում է, որ Երրորդ պատգամավորական ժողովից մնացած որոշ պատասիկներ (ժողովի Ա նիստի հայերեն բնագիրը և հաջորդող երկու էջերի վրա Երրորդ պատգ. ժողովի վերջնական որոշումները (թուրքերեն) շրջաբերականի ձևով և դրանց թարգմանությունը) պահպանվել են «Հայկական կոմիտեներ»-ում։

Այստեղ անհրաժեշտ եմ համարում հնարավորության սահմաններում մանրակրկիտ դիտարկել փաստերը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «Հայկական կոմիտեներ»-ի մեջ հայկական կուսակցություններին ուղղված մեղադրանքները հատկապես ծանր են Հնչակյան կուսակցության դեպքում։ Գլխավոր խնդիրն այն է, որ հնչակյանների հասցեին հնչեցվող մեղադրանքները հիմնվում են վերը նշված մի քանի փաստաթղթերի վրա, որոնց բնագրերը չկան։ Երկրորդ՝ բռնագրավված փաստաթղթերն ամբողջությամբ չեն ներկայացվում, մյուս կողմից դժվար է որոշել, թե ներկայացված փաստաթղթերը որքանով են համապատասխանում իրականությանը՝ հաշվի առնելով «Հայկական կոմիտեներ»-ը կազմող(ներ)ի՝ թարգմանելու բարեխղճությունը։ Այս հարցի վրա անհրաժեշտություն էր առաջանա կանգ առնել, եթե այստեղ տեղ գտած որոշ քաղվածքներ ցայսօր չհղվեին թուրքական ժխտողական պատմագրության կողմից։

<sup>23</sup> Чалхушьян Г. X., *նշվ. աշխ.* (2008), էջ 27։

<sup>24</sup> Տե՛ս, օրինակ, Kamuran Gürün, *The Armenian File: The Myth of Innocence Exposed*, London-Nicosia-Istanbul: K. Rustem & Bro. and Weidenfeld & Nicolson Ltd, pp. 187-189.

<sup>25</sup> Akçam T., *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, London: Constable, 2007, p. 143-144.

<sup>26</sup> Մինախորյան Վ., *նշվ. աշխ.*, էջ 90-93։

<sup>27</sup> Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցության, 1887-1963թթ. (խմբագիր՝ Ա. Կիտուր), Բ հատոր, Պեյրուք, տպարան «Շիրակ», 1963, էջ 4։

Նախ «Հայկական կոմիտեներ»-ում ներկայացվում է Ս. Դ. Հնչակյան կուսակցության Կ. Պոլսում տեղի ունեցած Երրորդ պատգամավորական ժողովի յոթերորդ նիստին առնչվող տեքստ: Այն սկսվում է Կոզանը ներկայացնող պատվիրակ Մեծն Մուրադի (Համբարձում Պոյաճեան) խոսքով, որին հաջորդում է նիստը նախագահող Ջանգուլյանի խոսքը: Հաջորդիվ ներկայացված տեքստն առնչվում է կուսակցության մասնաճյուղերին ուղարկվելիք շրջաբերականներին<sup>28</sup>:

Ահա այս տեքստի մեջ է, որ ի հայտ է գալիս ակնհայտ կեղծարարությունը: Նախ, մեջբերելով շրջաբերականը, դրա մի հատվածի ֆրանսերեն թարգմանության մեջ, որտեղ խոսվում է հնչակյանների անհաջողությունների մասին, ավելացվում է մի «ծանոթագրություն»։ Անհաջողություն ռեֆորմներում, դավադրությունների կազմակերպման մեջ, արված ռուս քննիչների նշանակմանն ուղղված քարոզչության մեջ և այլն, և այլն<sup>29</sup>:

Տողատակում տրված այս «ծանոթագրություն» արդեն հորինվածք է և թուրքերի տեսակետը, քանզի այն չի եղել բնագրում: «Հայկական կոմիտեներ»-ի թուրքերեն տարբերակում հանդիպող ֆոտոպատճեններում առկա է միայն Հնչակյանների՝ Պոլսի պատգամավորական ժողովը ներկայացնող 5 էջ հայերեն փաստաթուղթ<sup>30</sup>: Դրանցից առաջինն արտատպված է Ա. Կիտուրի գրքում: Սակայն այդ հինգ թերթում բացակայում են մասնաճյուղերին տրվող շրջաբերականները: Ստացվում է, որ մի քանի էջ գրեթե ոչինչ չստող լուսապատճենված հայերեն տեքստը, որի մեծ մասը զբաղեցնում է ժողովի մասնակիցների անունների թվարկումը, դառնում է հնչակյանների «դավադրության անհերքելի ապացույց»: Իհարկե, հանուն ճշմարտության պետք է նշել, որ Արսեն Կիտուրը, ով մասնակցել է ժողովին, այլևս չունենալով բնագիրը և ստիպված իր գրքում արտատպելով այն<sup>31</sup>, ինչն արդեն տպագրվել էր «Հայկական կոմիտեներ»-ում, բուն տեքստի մասին դիտարկում չի անում, սակայն նա ևս ընդգծում է, որ «հայերեն բնագիրը զանցուած ըլլալով թրքերեն հրատարակութեան մէջ, թրքերեն բնագրին թարգմանութիւնը կը ներկայացնենք հանդիպակաց էջով»<sup>32</sup>: Այսինքն՝ նա ներկայացնում է թուրքերեն թարգմանության հայերեն տարբերակը: Իսկ քանի որ թուրքերեն հրատարակությունում շրջաբերականի ձևով վերջնական որոշումների ամբողջական լուսապատճենները չկան, այլ ներկայացվում են դրանց թուրքերեն կամ ֆրանսերեն թարգմանությունները, ապա պատկերը միանգամայն պարզ է դառնում:

Մյուս կարևոր փաստաթուղթը Հնչակյան կուսակցության՝ Բուլղարիայի մասնաճյուղերի գործադիր մարմնի հայտարարությունն է՝ թվագրված 1915թ. մարտի 9, Սոֆիա: «Հայկական կոմիտեներ»-ի թուրքերեն տարբերակում դրված է այդ փաստաթղթի հայերեն բնօրինակի պատճենը, իսկ առավել տարածված ֆրանսերեն տարբերակում՝ տեքստի ֆրանսերեն թարգմանությունը: Դա կարելի է ավելի շուտ փոխադրություն, քան թե թարգմանություն համարել: Ամենևին նպատակ չունենալով նախադասություն առ նախադասություն ներկայացնել, թե ինչպես է թարգմանվել տեքստը ֆրանսերեն՝ փորձենք նկատել, թե ինչպես է տեքստում աճապարարություն արվում «ինքնավարություն» և «անկախություն» բառերի հետ:

Ֆրանսերեն օրինակում առկա է հետևյալ տեքստը, որի թարգմանությունն է.

«Այսպիսին է ժողովրդի ներկա վիճակը: Այսօր նրա առջև կանգնած է իր անկախության՝ «լինելու կամ չլինելու» հարցը: Այսպիսով, մենք պարտավոր ենք ավելի

<sup>28</sup> *Aspirations et agissements révolutionnaires des comités arméniens ...*, pp. 146-149.

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 147:

<sup>30</sup> *Ermeni Komiteleri'nin...*, s. 134-138.

<sup>31</sup> Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան ..., էջ 6:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 4:

եռանդուն, քան երբևէ, առաջ տանել մեր անկախության համար ազգային քաղաքականությունը»<sup>33</sup>:

Հայերեն բնօրինակը հետևյալն է.

«Ինքնապաշտպանության խնդիր կայ դրուած Հայ ժողովրդի առջեւ, լինել չլինելու խնդիրը, ազգովին ապրելու խնդիրը: Առաւել քան երբէք հիմա է որ մենք պէտք է ստեղծենք մեր ազգային առնական քաղաքականութիւնը՝ հիմնուած գոյութեան կռուի երկաթէ օրէնքներու վրայ, որու տրամադրութիւնն է հաւաքական ինքնապաշտպանութիւնը իր իրաւունքներու եւ միջոցներու: «Յարձակման դէմ դիմադրութիւնը ոչ միայն արդարանալի այլ եւ հարկադրական է: Անդիմադրութիւնը կը մեղանջէ թէ եսասիրութեան եւ թէ այլասիրութեան դէմ միանգամայն»<sup>34</sup>:

Ակնհայտ է, թէ ինչպէս է տվյալ պարբերությունը թարգմանվել: Ֆրանսերեն տեքստում «լինել կամ չլինել» արտահայտությունը մգացված է, ինչը բացատրվում է նրանով, որ թարգմանության մեջ հայ ժողովրդի լինել-չլինելը կապվում է անկախության գաղափարի հետ՝ ի տարբերություն հայերեն բնագրի, որտեղ խոսվում է ինքնապաշտպանության մասին: Բացի այդ բնագրում դրան հաջորդող նախադասություններում հիմնավորվում է դիմադրության անհրաժեշտությունը, իսկ ֆրանսերեն տեքստում կրկին խոսվում է անկախության համար պայքարում եռանդուն լինելու մասին: Իհարկե, ասվածը մեկ անգամ ևս հաստատվում է, եթե կարդում ենք նաև դրան նախորդող երկու նախադասությունները:

«...Եւ Հնչակեան Կուսակցութիւնը իր միջոցները չպիտի խնայէ մինչեւ չստանայ իր բաղձանքներու իրական արժէքը՝ Հայաստանի տեղական Ինքնաւարութիւն՝ լայն ռամկավար կարգերով»<sup>35</sup>:

Ահա դրանց ֆրանսերեն թարգմանության հայերեն տարբերակը. «...Հետևաբար չպետք է անտեսվի ոչ մի միջոց Հայաստանի համար անկախության հասնելու՝ հիմնված ժողովրդավարական լայն հիմքի վրա»<sup>36</sup>:

Ակնհայտ է, որ գրքի հեղինակ(ներ)ը ջանք չեն խնայում ցույց տալու ինչ-որ դավադրության, հայերի կողմից անկախության ձգտումների մասին: Եվ այդ ամենը կատարվում է սխալ թարգմանության, բառերի արհեստական փոփոխության միջոցով: Ցայսօր այս գիրք-տեղեկագիրը թուրք և թուրքամետ հեղինակների համար չի կորցրել իր «արդիականությունը»: Ավելին՝ այն օգտագործվում է որպես «կարևոր» և «արժանահավատ» սկզբնաղբյուր: Ասվածի ապացույցներից մեկն էլ Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրված՝ Հայոց ցեղասպանությանն ու հայկական պահանջներին առնչվող երկու տեղեկագրերն են<sup>37</sup>, որոնցում, փաստորեն, ներկայացվում է հարցի վերաբերյալ Թուրքիայի Հանրապետության պաշտոնական տեսակետը:

<sup>33</sup> Ֆրանսերեն տարբերակը հետևյալն է՝ "Telle est la situation actuelle de la nation. Aujourd'hui se dresse devant elle la question de son indépendance, celle d' "**être ou de ne pas être**". Nous devons donc défendre plus vigoureusement que jamais la politique nationale pour à notre indépendance". Տե՛ս *Aspirations et agissements révolutionnaires des comités arméniens ...*, p. 153.

<sup>34</sup> Այս փաստաթղթի ֆոտոպատճենը, բաբերախտաբար, առկա է թուրքերեն հրատարակության մեջ: Տե՛ս *Ermeni Komiteleri 'nin...*, s. 360.

<sup>35</sup> Նույն տեղում:

<sup>36</sup> Ֆրանսերեն տեքստը հետևյալն է. "Il ne négligera conséquemment aucun moyen pour faire obtenir à l'Arménie une indépendance établie sur une large base démocratique": Տե՛ս *Aspirations et Agissements révolutionnaires des Comités Arméniens...*, pp. 152-153.

<sup>37</sup> *Armenian Claims and Historical Facts. Question and Answers*, Ankara: Center for Strategic Research, 2005, <http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/ErmeniIddialari/ArmenianClaimsandHistoricalFacts.pdf>  
The Armenian "Genocide"? Facts & Figures, Ankara: Center for Strategic Research, 2007, <http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/ErmeniIddialari/ArmenianGenocideFactsandFiguresRevised.pdf>

Անկարայի Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի կազմած զույգ տեղեկագրերում Հայոց ցեղասպանության փաստի ժխտման «փաստարկները» մեծապես հիմնվում են նաև «Հայկական կոմիտեների նպատակները և հեղափոխական գործողությունները Սահմանադրության հռչակումից առաջ և հետո» գրքի վրա: Չնայած թուրքական կողմի՝ դրան տրվող մեծ նշանակությանը, այնուամենայնիվ, գիրք-տեղեկագիրը, չունենալով հավաստիություն և գիտականություն, չի դիմանում որևէ փորձաքննության և միմիայն կարելի է դիտարկել որպես պետական քարոզչության դրսևորում:

**Հայոց ցեղասպանության ժխտման պատմությունից. թուրքական մի վաղ հրատարակության քննական դիտարկում**

Գևորգ Վարդանյան

**Ամփոփում**

Դեռևս թուրքական հանրապետական պատմագրության սկզբնավորումից առաջ լույս են տեսել մի շարք գրքեր, որոնցում կեղծվում է պատմությունը, հերքվում հայերի ոչնչացման գործում թուրքերի դերակատարությունը: Դրանցից առաջինը և ամենակարևորը 1916թ. Կ. Պոլսում լույս տեսած «Հայկական կոմիտեների նպատակները և հեղափոխական գործունեությունը» գիրքն է: Դրանով երիտթուրքերը ոչ միայն փորձում էին խուսափել Հայոց ցեղասպանության պատասխանատվությունից, այլև ամեն ինչում մեղադրել հայերին: Ընդհանուր առմամբ այս գրքում են առաջին անգամ գրավոր ձևակերպվել Հայոց ցեղասպանության ժխտման հիմնական թեզերը, որոնք հետագայում կրկնվել և զարգացվել են հանրապետական պատմագրության կողմից:

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, ժխտում, Թուրքիա, Օսմանյան կայսրություն, պատմագրություն:

**From the History of the Armenian Genocide Denial:  
Critical Review of an Early Turkish Publication**

Gevorg Vardanyan

**Summary**

Several books, falsifying history and denying the role of the Turks in the Armenian Genocide were published long before the birth of Turkish republican historiography.

First and the most important was the book titled “The Actions and Revolutionary Movements of the Armenian Committees” published in Constantinople in 1916. With the help of this publication, the Committee of Union and Progress wanted not only to avoid the responsibility for the Armenian Genocide, but also to blame the Armenians for everything.

In this book, all key elements of the Turkish denial of the Armenian Genocide have been presented in written form for the first time. Later Turkish official republican historiography not only repeated, but developed the main arguments of this book.

**Keywords:** Armenian Genocide, denial, Turkey, Ottoman Empire, historiography.

**Из истории отрицания Геноцида армян:  
критическое рассмотрение одной ранней турецкой публикации**

*Геворг Варданян*

**Резюме**

Еще до формирования турецкой республиканской историографии был опубликован ряд книг, в которых была сфальсифицирована история и отрицалась роль турок в геноциде армян. Первой и самой главной из них стала книга под названием "Цели и революционное движение армянских комитетов", которая была опубликована в Константинополе в 1916 году. Посредством данной публикации комитет "Единение и прогресс" стремился не только избежать ответственности за осуществление геноцида армян, но и обвинить самих армян в постигших их бедах. В данной книге впервые были письменно представлены все основные элементы отрицания геноцида армян. Позже турецкая республиканская историография не только повторила, но и развивала основные аргументы этой книги.

**Ключевые слова:** Геноцид армян, отрицание, Турция, Османская империя, историография.

**ՊԱՏԵՐԱԶՄ, ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐՀԱՆՈՒՄ.  
1922Թ. ՅԱԿՈԲ ՔՅՈՒՆՅԼԵՐԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՏԱՐՀԱՆՈՒՄՆ  
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

*Գոհար Խանումյան*

1915-1923թթ. Հայոց ցեղասպանության հետևանքով հազարավոր հայ երեխաներ որբացան և դավանափոխ եղան: Նրանց մեծ մասը հարազատների կորստից հետո հայտնվեց անմարդկային պայմաններում՝ զրկվելով կենցաղային ամենատարրական պայմաններից: Որբերից շատերը մահացան սովից և այդ տարիներին մոլեգնող տարբեր համաճարակներից: 1918թ. հոկտեմբերի 30-ի Մուղրոսի զինադադարից անմիջապես հետո հայ որբերին վերահաս կորստից փրկելու համար գործուն աշխատանքներ իրականացրին հայկական միությունները (Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), Ազգային խնամատարություն), հայոց եկեղեցին (Ազգային առաջնորդարաններ), անհատները՝ հատկապես Հայկական լեգեոնի և հայկական կամավորական զնդերի զինվորականները, օտարերկրյա նպաստամատույց կազմակերպությունները (Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե, Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդ, Դանիացի տիկնանց միություն, ռուսական Կարմիր խաչ, Ռուսաստանի քաղաքների միություն և այլն), ինչպես նաև միջազգային կազմակերպությունները (Կարմիր խաչ, Ազգերի լիգա):

Հայ որբերին հավաքագրում էին Օսմանյան կայսրության տարբեր հատվածներից, սիրիական անապատներից, Անդրկովկասից, մահմեդական ընտանիքներից, ազատագրում թուրքական պետական որբանոցներից: Որբահավաք աշխատանքների շնորհիվ 1918-21թթ. ընթացքում հավաքագրվեց ավելի քան 77 000 հայ երեխա<sup>1</sup>, որոնք տեղաբաշխվեցին Թուրքիայի, Կովկասի, Միջին Արևելքի հայկական և օտարերկրյա նպաստամատույց կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող պետական որբանոցներում:

Փոքր Ասիայում քեմալական (ազգայնական) շարժման ծավալմանը զուգընթաց՝ 1921-22թթ. Օսմանյան կայսրության որբանոցներում ապաստանած հայ երեխաների համար ստեղծվեց վտանգավոր իրավիճակ: Այն ավելի սրվեց Կիլիկիայում քեմալականների կողմից իրագործված հայկական կոտորածներից հետո, որի հետևանքով հազարավոր կիլիկիահայեր Այնթափից, Մարաշից, Հաճընից, Մերսինից և այլ վայրերից ստիպված էին լքել իրենց հայրենի բնակավայրերը: 1921թ. վերջին՝ կիլիկիահայերի զանգվածային գաղթի ընթացքում, շուրջ 7 500 հայ որբ Կիլիկիայից տեղափոխվեց Հալեպ, Բեյրութ, Դամասկոս և Ալեքսանդրեթ, որոնց մեծ մասը հայտնվեց Ազգային խնամատարության և Հայկական բարեգործական ընդհանուր միության խնամակալության տակ<sup>2</sup>: Փաստորեն, հայ որբերը երկրորդ անգամ էին տարահանվում Կիլիկիայից: Այս կապակցությամբ Հայոց ցեղասպանության վերապրող Հմայակ Գրանյանը<sup>3</sup> գրում է. «Դեկտեմբերի 31-ի [1921թ.-Գ.Խ.] առաւօտ, Միքայել Նաթանեանի հետ, Սիսուան եւ Քէլէկեան որբանոցներու բանալիները, կահ-կարասիներու ցուցակները եւ զոյգ շէնքերու ֆիզիքական նկարագրութիւնը ... տարիներ ֆրանսացի կառավարիչ՝ գնդապետ Քլեմանին յանձնեցինք եւ արցունքոտ աչքերով վերադարձանք որբերուն, առաջնորդելու համար երկաթուղագծին կայարանը եւ անկէ՝ Իսկենտերուն, վերջին անգամ ալ, մօտ հազար բերնով, երգելով:

<sup>1</sup> Տե՛ս Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1975, էջ 252:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Հմայակ Գրանեան - ՀԲԸՄ Տյորթ-Յոլի Սիսուան որբանոցի տեսուչ:

Ցանկամ տեսնել, զիմ Կիլիկիա...

Աշխարհ որ ինձ ետուր արեւ»<sup>4</sup>:

Կիլիկիայի՝ Մերսինի և Տյորք-Յոլի, երեք որբանոցներից տարհանված հայ որբերի համար 1922թ. սկզբին ՀԲԸ միության Բեյրութի մասնաճյուղի ջանքերով վերակազմավորվեց Քելեկյան-Սիսուան որբանոցը<sup>5</sup>:

Հայ երեխաներին Կիլիկիայից տարհանել է նաև դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենը<sup>6</sup>, ով 1922թ. հունվարին Քարեն Մարի Պետերսոնի հետ հայ որբերի մի մեծ խումբ փոխադրեց Բեյրութ: 1922թ. հուլիսին Կիլիկիայից տարհանված 208 որբերի հետ նա հաստատվեց Բիբլոս և Բեյրութ քաղաքների միջև գտնվող Զուբ Միքայիլ բնակավայրում, որտեղից հետագայում նրանց տեղափոխեցին Սայդա: Այս որբանոցում խնամք և հոգածություն էին ստանում ամենափոքրիկ հայ որբերը<sup>7</sup>:

1915-23թթ. երիտթուրքերի և քեմալականների կողմից իրագործված հայկական կոտորածների հետևանքով որբացած հազարավոր հայ երեխաների սպառնում էր ֆիզիկական ոչնչացման վտանգ Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Այս մտահոգությամբ պայմանավորված՝ 1922թ. փետրվարի 7-ին Հալեպում կայացավ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի աշխատակիցների և Սահակ Բ կաթողիկոսի<sup>8</sup> կողմից վավերացված հայկական պատվիրակության (Ազգային միության, Քաղաքական ժողովի ներկայացուցիչների, Մարաշի և Այնթափի որբանոցների հոգաբարձուների) ժողովը՝ Առաջնորդական փոխանորդ Հարություն քահանա Եսայանի նախագահությամբ<sup>9</sup>: Ժողովում քննարկվեց Թուրքիայում ստեղծված քաղաքական նոր իրավիճակը, և որոշվեց Թուրքիայի հարավային և հարավարևելյան շրջանների որբանոցներում ապաստանած հայ որբերին տեղափոխել Սիրիա և Լիբանան, իսկ հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջանների որբացած հայ երեխաներին՝ Հունաստան և Կովկաս<sup>10</sup>: Թուրքիայի ներքին կենտրոնական շրջանների՝ Կեսարիա, Կոնիա, Մերաստիա, ինչպես նաև հյուսիսային շրջանների՝ Տրապիզոն, Սամսուն, քրիստոնյա որբերը՝ հայ և հույն ծնողազուրկ երեխաները, Ամերիկյան նպաստամատույցի որոշմամբ ցամաքային ճանապարհով փոխադրվեցին Կ.Պոլիս, իսկ այնտեղից՝ նավով Հունաստան և տեղաբաշխվեցին 13 որբանոցներում: Քայքայվող Օսմանյան կայսրության մյուս շրջաններից՝ Թրակիայից, որբերը տեղափոխվեցին Ռումինիա և Բուլղարիա, իսկ Իզմիրից և Բուսայից Մարիցա գետով՝ Հունաստան<sup>11</sup>:

Հալեպում կայացած ժողովի մասնակիցները քննարկեցին և որոշեցին, որ «լավ է թրքական իշխանութեանց տակ գտնուած որբանոցները փոխադրել, անոնց տեղը պահելով

<sup>4</sup> Մեջբերված է ըստ՝ Մելքոնյան Է., *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն*, «Մուղնի» հրատարակչություն, Երևան, 2005, էջ 107-108:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>6</sup> Մարիա Յակոբսեն (1882-1960). դանիացի միսիոներուհի, Հայոց ցեղասպանության ականատես: 1906-ից՝ սկանդինավյան «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպության անդամ: 1919-22թթ. Օսմանյան կայսրության տարբեր հատվածներից հավաքագրել է շուրջ 3600 հայ որբերի: 1928-60թթ.՝ Ջրելլի «Թռչնոց բույն» որբանոցի տնօրեն:

<sup>7</sup> Տե՛ս <http://www.genocide-museum.am/arm/29.03.2013.php>:

<sup>8</sup> Սահակ Բ Խապայան-Կիլիկիայի Հայոց կաթողիկոս 1902-1939թթ.: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքական իշխանությունների կողմից արքայազն է Երուսաղեմ (1916), ապա՝ Դամասկոս (1917): Զինադադարից հետո վերադարձել է Ադանա (1919), 1921-ին Կիլիկիայի հայության հետ բռնագաղթել է Սիրիա: 1930-ից հաստատվել է Անթիլիասում (տես Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Երևան, 1984, էջ 135):

<sup>9</sup> Տե՛ս Եղիայեան Բ., *նշվ. աշխ.*, էջ 253:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 254:

<sup>11</sup> Տե՛ս Ազատեան Լ., *Հայ որբերը Մեծ եղեռնի*, Լոս Անճելլոս, 1995, էջ 39:



տեսակ մը միսիոնարական կազմակերպություններ, որոնք պիտի ծառայեն շրջաններու մէջ գտնուած որբերը հաւաքելու և պատսպարելու, զանոնք նկատելով իբր Բըլիֆի [*Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե-Գ.Խ.*] սաները: Որբանոցներուն կապուած պաշտօնեաներն ու գործատուներն ալ պէտք է փոխադրել որբերուն հետ. եւ պէտք է ձեպել-Լիբանան հիմնուելիք որբանոցներուն մէջ տալ հայկական դաստիարակություն»<sup>12</sup>:

Այսպիսով, ելնելով Թուրքիայում ստեղծված քաղաքական լարված իրավիճակից, ինչպես նաև հատկապես հայ որբերի կյանքին սպառնացող հնարավոր վտանգից, հայ հասարակական գործիչներն ու հոգևոր ներկայացուցիչները և Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն, որի աշխատակիցների որբահավաք աշխատանքների արդյունքում 1918-1921թթ. հավաքագրվել էր 132 000<sup>13</sup> հայ, հույն և ասորի որբ<sup>14</sup>, օրհասական համարեցին կայսրության տարածքի որբանոցներում ապաստանած քրիստոնյա որբերին տարհանել երեք հիմնական ուղղություններով.

1. Բալկաններ՝ Ռումինիա, Բուլղարիա, Հունաստան,
2. Կովկաս,
3. Միջին Արևելք՝ Սիրիա և Լիբանան:

Թուրքիայից որբերի *էվակուացիան* ապահովելու էր երեխաների հետագա ֆիզիկական անվտանգության, կեցության և ազգային դաստիարակության հարցը: Ըստ էության տարհանվում էին այն որբերը, որոնց զինադադարից հետո Կարմիր խաչի, Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի աշխատակիցները և հայ եկեղեցու ու հայկական բարեգործական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող հայ որբահավաքները հավաքագրել էին անմարդաբնակ վայրերից (անապատներից, անտառներից), փողոցներից, որտեղ նրանք զբաղվում էին մուրացկանությամբ, մահմեդական ընտանիքներից և թուրքական պետական որբանոցներից: Հայ որբերի դուրսբերումը Թուրքիայից իրականացվելու էր Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի ֆինանսական օժանդակության շնորհիվ: Իր հուշերում շվեյցարացի միսիոներ Յա. Քյունցլերը<sup>15</sup> գրում է. «Ամերիկացիները 1919 թվին ողջ Թուրքիայում աքսորի ժամանակ թուրքական, քրդական և արաբական տներ տարվա՞ծ ավելի քան տաս հազար որբ երեխաներ էին հավաքել, որոնք աքսորի ժամանակ տարվել էին թուրքերի, քրդերի և արաբների տները: Քանի որ շարունակ ուժեղացող քեմալական

<sup>12</sup> Եղիայեան Բ., *նշվ. աշխ.*, էջ 254:

<sup>13</sup> Sten Barton, J., *Story of Near East Relief (1915-1930) in interpretation*, New York, 1930, p. 211:

<sup>14</sup> Հավաքագրված 132 000 որբերի մեջ հայ երեխաների թիվը կազմում էր 65-70 000 (տես Եղիայեան Բ., *նշվ. աշխ.*, էջ 251):

<sup>15</sup> Յակոբ Քյունցլեր (1871-1949). շվեյցարացի բուժակ, հայասեր, Հայոց ցեղասպանության ակադեմիայի: Պատանեկության տարիներին եղել է հյուսն, ապա Բագելում ստացել է բժշկի օգնականի և հիվանդապահի մասնագիտություն: 1899թ. Յոհաննես Լեփսիուսի «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության հրավերով մեկնում է Ուրֆա և նշանակվում այդ կազմակերպության որբանոցային հաստատությանը կից ստեղծված հիվանդանոցի և կլինիկայի բժշկի՝ Հեման Խրիստի օգնական: Առաջին աշխարհամարտի տարիներին Յ. Քյունցլերը՝ իբրև չեզոք երկրի՝ Շվեյցարիայի քաղաքացի, հնարավորություն ունեցավ մնալու Ուրֆայում և դարձավ տեղի հայության հերոսական ինքնապաշտպանության ու թուրքական բանակի կողմից իրականացված դաժան կոտորածների ակադեմիայի: Ջինադադարից հետո Քյունցլերն իր կնոջ՝ Էլիզաբեթի հետ միասին ազատեց մահմեդականների տներում բռնի պահվող բազմաթիվ հայ կանանց և երեխաների: 1923թ. նա ստանձնեց Ղազիր որբանոցի ղեկավարումը, որտեղ ապաստանել էին 1400 հայ որբուհիներ: 1928թ. Քյունցլերը Հայ օգնության շվեյցարական ընկերության աջակցությամբ Ղազիրում 50 կույր որբերի համար հիմնեց առանձին կացարան: 1947թ. ստացել է Բագելի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում (տես Կյունցլեր, Յ., *Արյան և արցունքների երկրում. իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ (1914-1918)*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011, էջ 10-15):

կառավարությունը ամերիկացիների համար շատ տեղերում ամենուր դժվարություններ էր հարուցում, նրանց վերահսկում էր, նրանցից օգնություն էր պահանջում նաև մուսուլման որբերին օժանդակելու համար, որոնք Թուրքիայում ևս մեծ քանակությամբ կային, մինչդեռ նրանց համար հատկացվող գումարներն այլևս հնարավոր չէր լինում վերահսկել, «Օգնության...» ընկերությունը *[Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե-Գ.Խ.]* որոշեց իր հայ որբերին մի ոչ թուրքական երկիր տեղափոխել: Այդ ժամանակ հարավարևելյան Անատոլիայի համար, որպես հանգրվան ընտրվեց Լիբանանը»<sup>16</sup>:

Ի դեպ, պահպանվել է 33 վայրկյան տևողությամբ եզակի տեսաժապավեն, որտեղ ցուցադրվում է Օսմանյան կայսրությունից հայ որբերի էվակուացիան<sup>17</sup>:

Հայ երեխաների տարահանման դրվագներից է նաև 1921թ. դեկտեմբերին Բասրայի նահանգի Նահր էլ Օման ավանի հայկական գաղթականացի<sup>18</sup> 816 հայ որբ<sup>19</sup> նավով փոխադրվեցին Երուսաղեմ (փետրվար, 1922թ.), որտեղ նրանց դիմավորեցին Երուսաղեմի Հայոց պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, ազգային գործիչներ և մեծ թվով տեղացի հայեր<sup>20</sup>:

1922թ. Օսմանյան կայսրությունից տարահանվեցին ոչ միայն հայ, այլև մեծ թվով հույն որբեր, որոնք նույնպես գտնվում էին Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի խնամակալության տակ: Շուրջ 5 000 հույն, նաև հայ որբեր Ջմյուռնիայի աղետի ժամանակ տարահանվեցին Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի աշխատակից Սառա Քորնիկոզի ջանքերով (սեպտեմբեր, 1922թ.)<sup>21</sup>:

Թուրքիայի հարավային և հարավարևելյան շրջաններից (Ուրֆայի շրջակայքից, Մարդինից, Խարբեռլից, Ալնից և Մալաթիայից) հայ որբերի տարահանման պատասխանատուներ նշանակվեցին Յակոբ Քյունցլերը և նրա կինը՝ Էլիզաբեթը, ովքեր 1922թ.-ից աշխատում էին Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Ուրֆայի մասնաճյուղում և զբաղվում այդ կազմակերպության կողմից հավաքված հայ որբերի խնամքով<sup>22</sup>: Նրանց թեկնածության ընտրությունը պայմանավորված էր վերջիններիս՝ տարածքի և թուրքերենի փայլուն իմացությամբ: Այս կապակցությամբ Քյունցլերը նշում է. «Քանի որ ես և իմ կինը մեր լեզվական գիտելիքների և տեղանքի ճանաչողության պատճառով այդ աշխատանքի համար ավելի նպատակահարմար էինք, քան որևէ մեկը ամերիկյան «Օգնության...» *[Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե-Գ.Խ.]* աշխատակիցներից, որոնց մեծ մասը կարճ ժամանակով էին եղել երկրում, մեզ երկուսիս

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>17</sup> ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, Բ-4, ֆի 367:

<sup>18</sup> 1921թ. վերջին Միջագետքի բրիտանական իշխանությունները փակեցին Բասրայի նահանգի Նահր էլ Օման ավանի հայկական գաղթականը, որի հետևանքով դժվարին կացության մեջ հայտնվեց այստեղ ապաստանած շուրջ 3 000 հայ գաղթական: Խորհրդային Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչների հետ ունեցած բանակցությունների արդյունքում որոշվեց Միջագետքի հայ տարագիրներին նավով տեղափոխել Պոլիս-Բաթում, այնտեղից՝ Հայաստան: Վերջիններիս մեջ մեծ թիվ էին կազմում գաղթականի հայ որբերը: Հայ ազգային և հասարակական գործիչների պահանջով որոշվեց Նահր էլ Օմանի հայ որբերին տեղափոխել Երուսաղեմ: Նրանց փոխադրման դժվարին գործը ստանձնեց ՀԲԸ միությունը: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Մելքոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, «Մուղնի» հրատարակչություն, Երևան, 2005, էջ 116-118: Մելիքսեթյան Հ., *Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը*, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1985, էջ 74-85:

<sup>19</sup> Երուսաղեմ տեղափոխված 816 հայ որբերից 582-ը Վանից էին, 103-ը՝ Էրզրումից:

<sup>20</sup> Մելքոնյան Է., *նշվ. աշխ.*, էջ 108:

<sup>21</sup> Տես <http://www.genocide-museum.am/arm/05.10.2012.php>, 10.10.2013:

<sup>22</sup> Տես Կյունցլեր Յ., *նշվ. աշխ.*, էջ 12:

հանձնարարվեց Ուրֆայի շրջակայքից, Մարդինից, Դիարբեքիից, Խարբեքիից, Ակնից, Արաբկիրից և Մալաթիայից շուրջ 8000 երեխաների տեղափոխման գործը, մի աշխատանք, որը մեզ այնքան մեծ ուրախություն պատճառեց, որ մենք մեր կյանքի այս հատվածը կարող ենք լավագույններից մեկը համարել»<sup>23</sup>:

Բացի այդ տարածքի մահմեդական բնակչությունը ճանաչում էր Յ. Քյունցլերին, ինչի շնորհիվ կանխվեցին որբերի քարավանի թալանը, կոտորածը: Հարկ է նշել, որ Քյունցլերի անձնական հեղինակության շնորհիվ ապահովվեց երեխաների ֆիզիկական անվտանգությունը նրանց տարահանման ժամանակ:

Որբանոցներում ապաստանած հազարավոր երեխաներին հարյուրավոր կիլոմետրեր տեղափոխելը լուրջ խնդիրներ էր հարուցում, ուստի որոշվեց շուրջ 8000 որբերի տարահանումն իրականացնել փուլ առ փուլ՝ նրանց բաժանելով խմբերի:

Ինչպես իր հուշերում վկայում է Յա. Քյունցլերի դուստրը՝ Իդա Ալամեդդինը, հայրը ծրագրել էր հայ երեխաներին Թուրքիայից դուրս բերել դեռ 1915թ., երբ նա դարձավ Ուրֆայի հայության սարսափելի կոտորածների ականատես, սակայն այդ ցանկությունը կառողացավ իրագործել միայն 1922թ.<sup>24</sup>:

Երեխաների տեղափոխությունը մեծ ցնծություն առաջացրեց որբերի շրջանում, «քանի որ ինչ հաճությամբ պիտի հեռանային նրանք մի երկրից, ուր մահուան և կործանումի վտանգը կար շարունակ»<sup>25</sup>: Յուրաքանչյուր քարավանի մեկնումը վերածվում էր մի զվարճալի հանդիսության: Երեխաներն իրենց քարավանի ավանակներին զարդարում էին դրոշակներով և զանգակներով, իսկ նրանց ճանապարհող մահմեդական կանայք իրենց սովորության համաձայն, մեկնող երեխաների հետևից բացականչում էին՝ «լի-լի-լի-լի»: Իր հուշերում Քյունցլերը վկայում է, որ «լի-լի-լի-լի»-ն ոչ միայն ուրախության բարձրակոչ էր, այլև՝ ռազմակոչ, քանի որ «նրանք [մահմեդական կանայք-Գ.Խ.] այդ «լի-լի-լի-լի»-ն էին աղաղակել նույն այդ երեխաների ծնողների յետևից, երբ նրանց տանում էին ջարդելու»<sup>26</sup>:

Առաջին տարահանումն իրականացվեց 1922թ. մարտի վերջին Ուրֆայից<sup>27</sup>: Երբեմնի հայաշատ քաղաքում և նրա շրջակայքի որբանոցներում ապաստանել էին մոտ հազարի հասնող հայ որբեր, որոնք բերվել էին ինչպես Ուրֆայից և նրա հարակից շրջաններից, այնպես էլ կայսրության ամենահեռավոր բնակավայրերից: Այդ երեխաներից կազմված առաջին խումբը՝ մոտավորապես 130 հայ որբ, Յա. Քյունցլերի առաջնորդությամբ 10 օր հետիոտն անցավ Ուրֆայից մինչև Հալեպ՝ մոտ 90 կմ ճանապարհ: Որբերի տարահանման գործողությունը Յա. Քյունցլերը ներկայացրել է իր «Երեսուն տարի ծառայությունն Արեւելքի մէջ» հուշերում՝ «Որբերի մեծ ելքը երկրից» գլխում<sup>28</sup>: Ուրֆայի հայկական կոտորածների ականատես շվեյցարացի հայասերը հայ որբերի տարահանումը Թուրքիայից համեմատում էր հրեաների՝ եգիպտական գերությունից ազատագրվելու աստվածաշնչյան դրվագի հետ: Նա գրում է. «Ես հոգեպարար բաականություն էի զգում՝ երեխաների ծիծաղը լսելով և նրանց զուարթ դէմքերը տեսնելով: Նրանք կարծես՝ եգիպտական գերութիւնից ազատուած՝ Քանանի երկիր էին չում»<sup>29</sup>:

<sup>23</sup> Կյունցլեր Յ., *նշվ. աշխ.*, էջ 131:

<sup>24</sup> Տեն Իտա Ալեմեստին, *Փափա Քյունցլերը և հայերը*, Անթիլիաս, 1999, էջ 135:

<sup>25</sup> *Զուիցերացի հայասեր Եագոպ Քյունցլեր. իր հայանպաստ գործունեութեան 40-ամեակին առթիվ*, տպ. «Ռոթոս», Պէյրուք-Հալեպ, 1946, էջ 91:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>27</sup> Յակոբ Քյունցլերը 1899թ. սկսած, շուրջ 20 տարի որպես բժշկի օգնական, աշխատել է Ուրֆայի հիվանդանոցում:

<sup>28</sup> Տեն Զուիցերացի հայասեր Եագոպ Քյունցլեր, *նշվ. աշխ.*, էջ 57:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 91:

Տարհանվող առաջին խմբի երեխաները ստիպված էին հաղթահարել տասնյակ կիլոմետրեր դժվարին ճանապարհ եղանակային անբարենպաստ պայմաններում, ինչի հետևանքով նրանց մեծ մասը վարակվեց այդ ժամանակ տարածված գրիպի համաճարակով: Բացի այդ, նրանք հանդերձավորված չէին ցուրտ եղանակային պայմաններին համապատասխան: Որբերի մեծ մասը տեղափոխման ճանապարհը հաղթահարում էր ոտքով, առավել տկարները և մանկահասակները՝ սայլերով:

Երեխաների առաջին խմբի հետիոտն տեղափոխման դժվարությունները տարհանումը կազմակերպողներին ստիպեցին հաջորդ խմբերի որբերի տեղափոխումն իրականացնել միայն սայլերով և ավանակներով, ինչը հնարավորություն տվեց փոխադրելու միաժամանակ ավելի մեծ խմբով երեխաներ:

Թուրքիայից տարհանվող յուրաքանչյուր երեխայի տվյալներն արձանագրվում էին Քյունցլերի կողմից կազմված ցուցակներում, որոնք ստուգվում էին թուրքական ոստիկանական անցագրակետերում: Ցուցակների մանրակրկիտ ստուգումը թուրքական իշխանությունների կողմից կատարվում էր այն պատճառաբանությամբ, որ զինվորական տարիքի ոչ մի հպատակ իրավունք չունի լքել երկիրը<sup>30</sup>: Ի. Ալմեդդին այս կապակցությամբ իր հուշերում գրում է. «Մեծ արտագաղթը սկսաւ 1922ի գարնան սկիզբը: Ընդհանուր արտոնութիւնը եկավ Անգարայէն: Բայց իւրաքանչիւր խումբին համար պէտք էր արտոնութիւն առնուէր շրջանային իշխանութիւններէն. եւ որպէսզի ըլլար այդ արտոնութիւնը ստանալ, ցանկերը պէտք է պատրուաստուէին զգուշօրէն, տալով իւրաքանչիւր երեխայի տարիքն ու անունը: Պէյրուք գտնուող օգնութեան մարմնի գլխաւորները ի յառաջագունէ կարծած էին, որ երեխաները Ուրֆայէն մինչև Ճարապլուս սահմանային քաղաքը, 90 քիլոմէթր ճամբան, հետիոտն պիտի կտրէին: Ուրկէ ասդին՝ շոգեկառքով, Հալէպէն մինչև Պէյրուք: Մօտաւորապէս հազար որբեր կ'ապրէին Ուրֆայի եւ շրջակայքի որբանոցներու և ժամանակաւոր քեմիերու մէջ: Անոնք առաջին մեկնողները պիտի ըլլային»<sup>31</sup>:

Յա. Քյունցլերին այս դժվարին գործում մեծապես օգնում էր նրա կինը՝ Էլիզաբեթը, որը ղեկավարում էր Ուրֆայում ապաստանած հայ որբերի երկրորդ խմբի տարհանումը<sup>32</sup>:

Որբերի ամենասովոր խումբը՝ 5000 երեխա, 1922թ. ապրիլին տեղափոխվեց Խարբերդից և հարակից շրջաններից: Որբերի այս մեծաքանակ խմբի տեղափոխման ընթացքում Յակոբ և Էլիզաբեթ Քյունցլերները ծրագրեցին, որ 10-ական հոգուց բաղկացած յուրաքանչյուր խմբի ուղեկցի մեկ չափահաս որբ: Այս կերպ միաժամանակ լուծվում էր երկու խնդիր.

1. Կազմակերպվում էր մանկահասակ որբերի անվտանգ տեղափոխումը ավելի չափահաս որբերի հսկողության ներքո:
2. Իրականացվում էր զինապարտ տարիքի թուրքահպատակ երիտասարդ հայ որբերի դուրսբերումը Թուրքիայից, ինչը, ինչպես արդեն վերը նշվել է, փաստացի հնարավոր չէր տվյալ ժամանակահատվածում:

Այս խմբի երեխաների մեծ մասին սայլերով տեղափոխեցին Խարբերդ-Դիարբեքիր-Ճերապլուս, իսկ մյուսներին՝ ջորիներով, Խարբերդ-Մալաթիա-Ճերապլուս ուղղություններով:

Հայոց ցեղասպանության վերապրող, Խարբերդի ամերիկյան որբանոցի սան Արամ Թորիկյանը, ով Օսմանյան կայսրությունից տարհանված հազարավոր երեխաներից մեկն

<sup>30</sup> Իտա Ալեմեստին, նշվ. աշխ., էջ 136:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 135-136:

<sup>32</sup> Տես նույն տեղում, էջ 142:

էր, իր հուշերում գրում է. «1922թ. ամերիկացիները Խարբերդի որբանոցը տեղափոխեցին Հալեպ: Տղաները ձիերով, Մալաթիայի ճանապարհով գնում էին Հալեպ, իսկ աղջիկները՝ կառքերով՝ Տիգրանակերտի ճանապարհով: Մենք՝ տղաներս, դժվարին պայմաններում գնացինք Մալաթիա, դեպի այնտեղից ալ Հալեպ»<sup>33</sup>:

Հայ որբերի տեղափոխումը Խարբերդից ուներ իր ն՝ դրական, և՛ բացասական հետևանքները: Բացասական հետևանքներից կարելի է առանձնացնել ստորև նշված խնդիրները.

1. Երեխաների մեծ թվաքանակը դժվարացնում էր Խարբերդից Հալեպ երկարուճիգ՝ 10 օրվա ճանապարհը:

2. Լուրջ խնդիրներ էր հարուցում նաև մեծ թվով երեխաների անվտանգ տեղափոխումը:

Սակայն մյուս հանգամանքը՝ Խարբերդի վիլայեթից երեխաների մեծ խմբերի տեղափոխումը, պայմանավորված էր հետևյալ նկատառումներով. նախ տնտեսվում էին դրամական միջոցները, ապա անցագրակետերում խնայվում էր ահագին ժամանակ: Այս կապակցությամբ Յ. Քյունցլերն իր հուշերում գրում է. «Ինձ համար կարևոր էր որքան կարելի է մեծ խմբեր միանուագ փոխադրել Խարբերդից, որովհետև ստիպուած էի լինում ամեն մի խումբ առանձին ճամբելիս՝ կառավարական պաշտօնեաների իմացնել մեկնումի մասին, որպեսզի նրանք էլ ապա գային ստուգումի: Պէտք էր նրանցից յուրաքանչիւրի յետևիցն երթալ ինքնաշարժով ու բերել մեկնող որբերի կեցած տեղը: Նրանք մէկիկ-մէկիկ գնում էին որբերի դէմքերը: Մեկնողների մէջ չպետք է լինէր զինուորական տարիքի հասած որեւիցէ պատանի: Այս տեսակ մանրակրկիտ ստուգում, սկսուելով առաւօտեան, շատ երկար էր տևում, այնպէս որ մենք հազիւ իրիկունը կարողանում էինք ճամբայ ընկնել: Ապա՝ քաղաքից դուրս էլ, 2-3 ժամ անդին, նորից էր ստուգում կատարվում ոստիկանութեան կողմից, և ես հարկադրուած էի լինում նորից մէկիկ-մէկիկ ժողովել կառավարութեան մարդկանց ու բերել, հարկա՛ դարձեալ ինքնաշարժով»<sup>34</sup>:

Այսպիսով, 1922թ. սեպտեմբերին հայ որբերի տարահանումը Թուրքիայից ավարտվեց: Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի հատկացրած միջոցներով որբերին տեղափոխելու համար վարձակալվեցին 130 կառք և մոտ 200 գրաստ: Ըստ Յ. Քյունցլերի կազմած վիճակագրության՝ ընդհանուր առմամբ տարահանվեց շուրջ 8000 հայ երեխա, որոնց տեղաբաշխեցին Սիրիայի և Լիբանանի որբանոցներում<sup>35</sup>: Ի դեպ, տարահանված երեխաների մի սովոր խումբ՝ տարբեր տարիքի շուրջ 1500 հայ աղջիկներ, տեղաբաշխվեցին Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի Ղազիրի որբանոցում, որի ղեկավարությունը ստանձնեց Յա. Քյունցլերը:

Ըստ Զ. Բարտոնի տվյալների՝ 1922-23թթ., Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի գործուն աշխատանքների շնորհիվ, մոտավոր հաշվարկով Թուրքիայից Սիրիա, Լիբանան և Հունաստան էվակուացվեց մոտ 30000 հայ և հույն որբ, որից՝ 12000 հայ երեխա կայսրության միայն հարավային, հարավարևելյան շրջաններից<sup>36</sup>:

Յա. Քյունցլերի կողմից տարահանված 8000 հայ երեխաները, որոնք ըստ էության փրկվեցին վերահաս ֆիզիկական բնաջնջումից, իրենց հետևում թողնելով պատմական հայրենիքը՝ հայտնվեցին նոր երկրում և բոլորովին նոր միջավայրում՝ ստանալով նոր կյանք սկսելու հնարավորություն:

<sup>33</sup> Շուշանյան Ս., *Հին և Նոր Խարբերդ*, «Արտագերս», 2006, էջ 88:

<sup>34</sup> Զուլիգերացի հայասէր Եագոպ Քիւնցլեր, *նշվ. աշխ.*, էջ 103:

<sup>35</sup> Սահակ Բ Կաթողիկոսը ամերիկյան Կարմիր խաչին ուղղված նամակի մեջ (21 մայիս, 1923) նշում է, որ հայկական խնամքի տակ եղած որբերի թիվը հասնում է 2250-ի, իսկ ամերիկյանինը՝ 6273: Տե՛ս Շոկիյեան Բ., *նշվ. աշխ.*, էջ 256:

<sup>36</sup> Տե՛ս Barton, J., *նշվ. աշխ.*, էջ 148:

**Պատերազմ, ցեղասպանություն և տարհանում.  
1922թ. Յակոբ Քյունցլերի կողմից հայ որբերի տարհանումն Օսմանյան  
կայսրությունից**

*Գոհար Խանումյան*

**Ամփոփում**

Հայոց ցեղասպանության հետևանքով 77 000 հայ որբ հայտնվեց Օսմանյան կայսրության տարբեր որբանոցներում: 1921-1922թթ. Փոքր Ասիայում քեմալականների կողմից քրիստոնյա բնակչության, հատկապես հայ երեխաների ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգի հետևանքով Օսմանյան կայսրության որբանոցներից տարհանվեց շուրջ 30 000 քրիստոնյա երեխա, որից 8 000 հայ որբ շվեյցարացի միսիոներ, Հայոց ցեղասպանության ականատես Յակոբ Քյունցլերի կողմից Թուրքիայի հարավային և արևելյան շրջաններից տեղափոխվեց Սիրիա և Լիբանան:

**Բանալի բառեր՝** որբեր, որբանոցներ, Օսմանյան կայսրություն, Յակոբ Քյունցլեր, որբերի տարհանում, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց:

**War, Genocide, Evacuation: The Evacuation of Armenian Orphans from  
the Ottoman Empire in 1922 by Jacob Kunzler.**

*Gohar Khanumyan*

**Summary**

As a result of the Armenian Genocide 77 000 Armenian orphans were placed in different orphanages of the Ottoman Empire. In 1921-1922, because of the threat of extermination of the remaining Christian population in the Ottoman Empire, especially children, by the Kemalist forces, 30 000 Christian orphans were evacuated. Among them 8 000 Armenian orphans were evacuated to Syria and Lebanon by the efforts of the Swiss missionary Jakob Kunzler.

**Keywords:** Orphans, orphanages, Ottoman Empire, Jacob Kunzler, evacuation orphans of American Near East Relief Committee.

**Война, геноцид, эвакуация:**

**эвакуация армянских сирот из Османской империи в 1922 году усилиями Якоба  
Кюнцлера**

*Гоар Ханумян*

**Резюме**

Вследствие Геноцида армян 77 000 армянских сирот оказались в различных приютах Османской империи. В 1921-22 годах в Малой Азии по причине угрозы физического истребления христианского населения, исходящей от кемалистов, из сиротских приютов Османской империи было вывезено около 30 000 христианских детей, из которых 8 000

армянских сирот были эвакуированы в Сирию и Ливан швейцарским миссионером Якобом Кюнцлером.

**Ключевые слова:** сироты, сиротские приюты, Османская империя, Якоб Кюнцлер, эвакуация сирот, Комитет помощи Ближнему Востоку.

**ԱՎԱՏՐԱՆԻԱՅԻ ՑՈՒՑԱՔԵՐԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՈՐԲԵՐԻՆ 1915-1930ԹԹ.**

*Լուսինե Արքահամյան*

Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի և քրիստոնյա այլ ժողովուրդների տեղահանության ու կոտորածների մասին լուրերը մեծ արձագանք գտան եվրոպական և ամերիկյան մի շարք պետություններում, ինչպես նաև հեռավոր Ավստրալիայում: Հայերի կոտորածների մասին լուրերն Ավստրալիա էին հասնում Մերձավոր Արևելքում գտնվող ԱՆԶԱԿ-ի<sup>1</sup> զինվորների, պատերազմական թղթակիցների հեռագրերի, ինչպես նաև մամուլի միջոցով: Մերձավոր Արևելքի հազարավոր կարիքավորներին օգնելու նպատակով Ավստրալիայում սկիզբ առավ անմախաղեպ մարդասիրական շարժում, որը տարածվեց գրեթե բոլոր նահանգներում՝ ընդունելով համազգային բնույթ:

1915թ. դեկտեմբերին Մելբուռնում կազմավորվեց Հայկական նպաստամատույց հիմնադրամը (Armenian Relief Fund), որի գործունեությանը մեծապես աջակցեցին Վիկտորիա նահանգի կառավարությունը, եկեղեցական առաջնորդները, մի շարք առաջադեմ գործիչներ և գործարարներ: Հիմնադրամի քարտուղարն էր միսս Մ.Ե. Սըրլը: 1915թ. դեկտեմբերի 9-ին «The Argus» թերթի միջոցով վերջինս կոչ արեց Ավստրալիայի ժողովրդին հետևել Ամերիկայի օրինակին և անել հնարավոր ամեն բան՝ հայերին օգնելու համար: Իր կոչում միսս Սըրլը նշում էր, որ «...թուրքական կառավարությունն աներևակայելի դաժանությամբ ոչնչացնում է մի ամբողջ ժողովուրդ» և «ահագնացող առաջընթաց է գրանցել այդ ուղղությամբ»<sup>2</sup>: Միսս Սըրլի կոչն արձագանք գտավ Մելբուռնում գործող մի շարք բարեգործական կազմակերպությունների կողմից (Ավստրալական կարմիր խաչը, Ավստրալիայի հայրենասիրական հիմնադրամը, Մերքիական նպաստամատույց հիմնադրամը և այլն), որի արդյունքում հավաքվեց շուրջ 300 ֆունտ սթեռլինգ<sup>3</sup> և ուղարկվեց Լոնդոն՝ «Հայ փախստականների հիմնադրամ»<sup>4</sup>: Հայկական նպաստամատույց հիմնադրամի մարդասիրական գործունեությանը մեծապես նպաստեց 1917թ. սկզբին Մելբուռնում ձևավորված «Հայաստանի բարեկամներ» կազմակերպությունը (Friends of Armenia), որի հիմնադիրներն էին Ալեքսանդր Լիփսերը (Մելբուռնի համալսարանի Թրինիթի քոլեջի դեկավարը), Ուիլյամ Հ. Էդգարը (Օրենսդիր խորհրդի անդամ) և Պատվելի Ջեյմս Ե. Թոմասը (Վիկտորիա նահանգի եկեղեցական խորհրդի նախագահը): Մարդասիրական օգնության գործում Ավստրալիայի քաղաքացիների մասնակցությունը կազմակերպելու նպատակով Հայկական նպաստամատույց հիմնադրամի և «Հայաստանի բարեկամներ» կազմակերպության

<sup>1</sup> ANZAC (Australian and New Zealand Army Corps Ավստրալիայի և Նոր Զելանդիայի բանակային զորամիավորում): 1915թ. ապրիլի 25-ին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի բանակային զորամիավորումները, Ուինսթոն Չերչիլի ծրագրի համաձայն, բրիտանական հրամանատարության ներքո ափ իջան Գալիպոլիի թերակղզում՝ դեպի Սև ծով ճանապարհ բացելու և Կ.Պոլիսը գրավելու նպատակով: Գալիպոլիի մարտերը սկսվեցին 1915թ. ապրիլի 25-ին՝ հայ մտավորականների ձեռքակալությունից մեկ օր անց, և ավարտվեցին 1916թ. հունվարի 9-ին: Այդ ժամանակահատվածում Գալիպոլիում զոհվեցին 8709 ավստրալացի և 2721 նորզելանդացի: Ապրիլի 25-ը՝ «ԱՆԶԱԿ-ի օրը», Ավստրալիայում հիշատակի ազգային օր է: Այդ օրն Ավստրալիան նշում է իր մարտական մկրտության օրը: Այդ մասին ավելի մանրամասն տես [http://web.archive.org/web/20130313050857/http://www.dva.gov.au/news\\_archive/Documents/The%20Gallipoli%20Campaign.pdf](http://web.archive.org/web/20130313050857/http://www.dva.gov.au/news_archive/Documents/The%20Gallipoli%20Campaign.pdf):

<sup>2</sup> «The Argus», 1915, դեկտեմբերի 9, էջ 5 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1584485>):

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>4</sup> 1915 թ. Լոնդոնի քաղաքացիայի նախաձեռնությամբ ստեղծվեց «Հայ փախստականների հիմնադրամը», որը դրամահավաք սկսեց օգնության կարիք ունեցող հայերի համար:



անդամները քարոզչական լայն գործունեություն ծավալեցին Ավստրալիայի ողջ տարածքում: Հանգանակություններ կազմակերպելու նպատակով տեղեկատվություն էր տարածվում հասարակության բոլոր շերտերի շրջանում: Դա արվում էր հիմնականում հանրությանն ուղղված առանձին անհատների ելույթների և կոչերի, թերթերի, քարոզչական գրքույկների, կրծքանշանների ու շարժանկարների միջոցով:

Հանգանակությունների կազմակերպմանն իրենց աջակցությունը ցուցաբերեցին նաև որոշ պաշտոնյաներ, ովքեր հատուկ կոչերով խրախուսում էին հանգանակություններ կազմակերպելու նպատակով տարբեր միջոցառումների իրականացումը: Նման մի քայլ էր Մելբուռնի քաղաքապետ Դեևիդ Հենեսիի, Վիկտորիա նահանգի եկեղեցական խորհրդի և «Հայաստանի բարեկամներ» կազմակերպության համատեղ նախաձեռնությունը<sup>5</sup>: 1917թ. ապրիլի 20-ին Մելբուռնի քաղաքապետարանում ունեցած իր ելույթում քաղաքապետն առաջարկեց ապրիլի 22-ը հայտարարել «Հայերի կիրակի»՝ հատուկ օր հայ գաղթականների և որբերի օգտին դրամահավաք իրականացնելու համար: Այս նախաձեռնությունը մեծ հաջողություն ունեցավ, և նման միջոցառումներ կազմակերպվեցին նաև հաջորդ տարիներին<sup>6</sup>: Հանգանակություններին մասնակցեցին տեղական և քաղաքային խորհուրդները, եկեղեցիները, կիրակնօրյա դպրոցները, ինչպես նաև գործարարներն ու հասարակ մարդիկ: Հանգանակություններից և նվիրատվությունից ստացված գումարն ուղարկվում էր Լոնդոն՝ «Հայ փախստականների հիմնադրամ», իսկ հանգանակված իրերի համար Ավստրալական կարմիր խաչի տարբեր մասնաճյուղեր տրամադրում էին իրենց պահեստները<sup>7</sup>:

Հայկական նպաստամատույց հիմնադրամն ակտիվորեն համագործակցում էր թերթերի և պարբերականների հետ: Ավստրալական բոլոր հայտնի թերթերը մանրամասն լուսաբանում էին Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակը: Մելբուռնում լույս տեսնող «The Age» թերթում միայն 1915թ. տպագրվեց հայերի կոտորածները լուսաբանող ավելի քան 40 հոդված<sup>8</sup>: «The Argus», «The Herald», «The Register», «Adelaide», «The Sydney morning Herald», «Sunday Times» և այլ հայտնի թերթերում հաճախ էին հոդվածներ հրապարակվում հետևյալ խորագրերով՝ «Միլիոնավոր հայեր աքսորվել են», «Հազարավոր հայեր մորթվել են», «Հայերի կոտորածները շարունակվում են», «Թուրքիայում կանայք բացահայտորեն վաճառվում են» և այլն: Բոլոր հոդվածներում շեշտվում էին ողբերգության հսկայածավալ մասշտաբները և անհապաղ մարդասիրական օգնության անհրաժեշտությունը: Պատերազմի առաջին տարիներին ավստրալական թերթերի համար տեղեկատվության հիմնական աղբյուրը բրիտանական մամուլն էր: Հետագայում հոդվածներում հաճախ ներառվում էին նաև տարածաշրջանից վերադարձած նպաստամատույցի աշխատակիցների հեռագրերն ու զեկույցները, ինչպես նաև ռազմագերիների վկայությունները:

Հայերի օգտին հանգանակություններ կազմակերպելու ուրույն եղանակ էր նաև կրծքանշանների թողարկումը: Առաջին աշխարհամարտի տարիներին նման կրծքանշաններ վաճառվում էին գնացքներում, երկաթուղային կայարաններում, հավաքույթների ժամանակ, և վաճառքից ստացված հասույթը փոխանցվում էր ի նպաստ հայ գաղթականների: 1917թ. կրծքանշաններ արտադրող «Commonwealth Button Fund» ընկերության թողարկած կրծքանշաններից մեկի վրա պատկերված էր Մերձավոր Արևելքի մի տեսարան՝

<sup>5</sup> «The Argus», 1917, 21 ապրիլի, էջ 16 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1612483>):

<sup>6</sup> «The Argus», 1919, 29 ապրիլի, էջ 7 (<http://trove.nla.gov.au/ndp/del/page/404630?zoomLevel=1>):

<sup>7</sup> Babkenian V., “A Humanitarian Journey: the Reverend James Edwin Cresswell and the Armenian Relief Fund”, *Journal of the Historical Society of South Australia*, number 37, 2009, p. 71.

<sup>8</sup> Babkenian V. “An S.O.S. from beyond Gallipoli”, *Victoria and the Armenian Relief movement, Victorian Historian Journal*, Vol 81, No. 2, November 2010, p.253.

սպիտակ աշտարակներով քաղաք և երեք արաբ՝ ուղտերի վրա նստած: Կրծքանշանի վրա գրված էր. «Մերբիա-Սիրիա-Հայաստան»: Այն թողարկվել էր հայ գաղթականներին և Բալկանյան պատերազմից տուժած սերբերին օգնելու նպատակով հանգանակություն իրականացնելու համար<sup>9</sup>: Մեկ այլ կրծքանշան թողարկեց «Atkinson&CO» ընկերությունը Ադելաիդում 1922-1923թթ. Ավստրալիայի Հայկական նպաստամատույց հիմնադրամի նախաձեռնությամբ: Կապույտ կրծքանշանի վրա պատկերված էր սպիտակ Դաշնային աստղը<sup>10</sup>:

Իր կազմակերպած քարոզարշավի ընթացքում Հայկական նպաստամատույց հիմնադրամը թողարկում էր նաև գրքույկներ: Դրանցից մեկը վերնագրված էր «Ս.Օ.Ս. Գալիփոլիից այն կողմ»: Դրանում լուսանկարների միջոցով ներկայացված էր հայերի ծանր վիճակը, և մեջբերված էր 1915թ. Թալեաթ փաշայի՝ նահանգային կառավարիչներին հղված հեռագրից մի հատված, որում հրամայում էր սպանել Օսմանյան կայսրության տարածքում բնակվող բոլոր հայերին՝ առանց խնայելու անգամ կանանց, երեխաներին և ծերերին<sup>11</sup>:

Մեկ այլ գրքույկ կրում էր «Վիրավոր հայերն օգնության խնդրանքով դիմում են ավստրալացիներին» խորագիրը: Գրքույկում, մասնավորապես, ասվում էր. «Ինչպե՞ս կարող եք օգնել հալածված հայերին. տարեկան 10 ֆունտ սթեռլինգը կկերակրի, կհագցնի և կկրթի մեկ երեխայի», իսկ ներքևի հատվածում նշված էին այն հասցեները, որտեղ քաղաքացիները կարող էին հանգանակություններ կատարել<sup>12</sup>:

Ուշագրավ է նաև 1919թ. Հայկական նպաստամատույց հիմնադրամի կողմից թողարկված «Հայաստանի բարեկամներ» վերնագրով գրքույկը<sup>13</sup>: Նպատակն էր կազմակերպել դրամահավաք՝ ավստրալացիներին ներկայացնելով Հայաստանի և հայ ժողովրդի հարուստ անցյալը և ներկայիս ողբերգությունը: Նրանում ներկայացվում էին հայերի ծագումը, քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն, պայքարը քրիստոնեական հավատի պահպանման համար, դարեր շարունակ կրկնվող կրոնական հալածանքներն ու կոտորածները, Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքների, ինչպես նաև Ադանայի ջարդերը պատկերող լուսանկարներ: Վերջին էջում նշված էր այն հասցեն, որտեղ պետք է ուղարկվեին հանգանակությունները:

1922թ. մայիսին, տեղում հայանպաստ աշխատանքները համակարգելու, հայկական նպաստամատույց հիմնադրամի նոր մասնաճյուղեր հիմնելու և դրանք Մերձավոր Արևելքի նպաստամատույցին միացնելու նպատակով, Ավստրալիա ժամանեց Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության միջազգային հանձնակատար Լինքոլն Ուիրթը<sup>14</sup>: Մինչ Ավստրալիա ժամանելը՝ նա Մերձավոր Արևելքի նպաստամատույցի կոմիտեներ էր հիմնել Հավայան կղզիներում, Ճապոնիայում, Չինաստանում, Կորեայում և Ֆիլիպիններում: 1922թ. հուլիսի 8-ին և օգոստոսի 9-ին Մելբուռնի և Սիդնեյի քաղաքապետարաններում նա հանդիպում ունեցավ Վիկտորիա նահանգի քաղաքային և հոգևոր առաջնորդների հետ, ներկայացրեց հայերի ծանր վիճակը՝ ընդգծելով, որ «մի ամբողջ ազգի կեսից ավելին ոչնչացվել է»<sup>15</sup>: Ուիրթն առաջարկեց Ավստրալիայի ժողովրդի կողմից

<sup>9</sup> Australian War Memorial, Heraldry Collection, Small fundraising badge "Servia Syria Armenia", ID number REL 39129 (<http://www.awm.gov.au/collection/REL39129/>).

<sup>10</sup> ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, քաժին 5, ֆ.հ. 69:

<sup>11</sup> Babkenian V., "An S.O.S. from beyond Gallipoli...", pp. 254-255.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 263:

<sup>13</sup> National Library of Australia, Digital Collections, Books and Serials, Call number FERG 2566, System number 2346165 (<http://nla.gov.au/nla.aus-vn1967551>).

<sup>14</sup> «The Argus», 1922, 6 հուլիսի, էջ 10 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1832557>):

<sup>15</sup> «The Argus», 1922, 8 հուլիսի, էջ 20 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1832858>):

հանգանակություններով լի մի նավ ուղարկել Մերձավոր Արևելք: Այդ առաջարկը հավանության արժանացավ, և 1922թ. սեպտեմբերի 6-ին Դաշնային կառավարության շոգե-նավերի (Commonwealth Government streamers) միջոցով Մերձավոր Արևելք ուղարկվեց առաջին օգնությունը, որը ներառում էր 100 տոննա ալյուր, խտացրած կաթ, հագուստ, կաշվե և բամբակյա իրեր: Մելբուռնի արքեպիսկոպոս Հերինգթոն Լիխն այլ հոգևորա-կանների հետ Մելբուռնի նավահանգստում օրհնեց փոխադրվող բեռը: Նավի վրա փակց-ված էր մեծ դրոշ, որի վրա գրված էր՝ «Ավստրալիայի նվերը Մերձավոր Արևելքի սովա-հար երեխաներին»: Ավստրալիայի վարչապետ Ուիլյամ Հյուիզի խոստման համաձայն բեռնափոխադրումն իրականացվեց անվճար<sup>16</sup>:

Առաջին աշխարհամարտի ավարտը պայմաններ ստեղծեց առավել արդյունավետ դրամահավաքի համար: Այն Ավստրալիայի հասարակության լայն շերտերին հնարավո-րություն ընձեռեց լուսանկարների և շարժական պատկերների միջոցով առավել հստակ ընկալելու Մերձավոր Արևելքի ողբերգության ծավալները: Օգտագործելով պատկերի զգայական ներգործությունը և գիտակցելով հայ գաղթականների ու որբերի ծանր վիճա-կը ներկայացնող լուսանկարների ազդեցությունը հասարակության վրա՝ Ավստրալիայի տարբեր քաղաքներում կազմակերպվեցին վավերագրական և գեղարվեստական ֆիլմե-րի ցուցադրություններ: Որպես «տեղեկատվական գովազդ»՝ կինոթատրոններում հաճախ կազմակերպվում էին նաև ֆիլմերի ու լուսանկարների ցուցադրություններ, ինչի շնորհիվ թեման հասանելի էր դառնում հասարակության լայն շերտերին: 1920թ. փետրվարի 28-ին «The Princess Theatre» թատրոնում Սիդնեյի և Մելբուռնի հայկական նպաստամատույց կոմիտեների նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հոշոտված Հայաստան» կամ «Հոգիներ-ի աճուրդ» ֆիլմի ցուցադրությունը բարեգործական նպատակներով<sup>17</sup>, իսկ 1919թ. դեկ-տեմբերի 28-ից սկսած՝ ավստրալական «Sunday Times» շաբաթաթերթն իր յուրաքանչյուր համարում ֆիլմի ցուցադրության գովազդի հետ մեկտեղ մեկ էջի սահմաններում ներկա-յացնում էր ցեղասպանությունը վերապրած 15 տարեկան Ավրորա (Արշալույս) Մարտի-կանյանի «Հոշոտված Հայաստան» գրքից հատվածներ<sup>18</sup>:

Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության նախաձեռնությամբ և Ավս-տրալիայի ու Նոր Զելանդիայի հայկական նպաստամատույց հանձնախմբերի ջանքերով 1922թ. նոյեմբերին Ամթիլիասում՝ ներկայիս Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության վայ-րում, հիմնվեց Ավստրալասիական որբանոցը<sup>19</sup>, որն իր հարկի տակ առավ շուրջ 1200 որբերի և գործեց մինչև 1929թ.: Որբանոցը, որն ուներ շուրջ 40 ուսուցիչ և նույնքան էլ դաստիարակ, զբաղվում էր որբերի խնամքով և մասնագիտական կրթությամբ: Այստեղ որբերին սովորեցնում էին մոտավորապես 14 արհեստ: Որբանոցից դուրս գալուց հետո նրանք պետք է պատրաստ լինեին իրենց օրենսդրված երկրի լիիրավ անդամը դառնալու: Տնօրեններ նշանակվեցին ԱՆԶԱԿ-ի վետերան Ջոն Նուդսենը և նրա կինը:

Որբանոցի ստեղծման, գործունեության, ինչպես նաև նպաստամատույց աշխատանք-ների կազմակերպման գործում նշանակալի դեր ուներ հատկապես պատվելի Ջեյմս Բրե-ստելը: Իբրև Հայկական նպաստամատույց հիմնադրամի գործադիր քարտուղար՝ նա

<sup>16</sup> «The Argus», 1922, 6 սեպտեմբեր, էջ 19 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1842638>):

<sup>17</sup> Babkenian V., “An S.O.S. from beyond Gallipoli...”, p. 260.

<sup>18</sup> «Sunday Times», 1919, 28 դեկտեմբեր, էջ 13 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/123220539?searchTerm=Ravished%20Armenia&searchLimits=fromdd=01||frommm=01||fromyyy=1915||toddd=30||tommm=12||toyyy=1930>): Babkenian V., “An S.O.S. from beyond Gallipoli...”, p. 260.

<sup>19</sup> «Sunday Times», 1923, 4 մարտի, էջ 14 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/120549523?searchTerm=Australasian%20orphanage%20established%20in%20Beirut&searchLimits=>):

1923թ. այցելեց Ավստրալասիական որբանոց: Վերադառնալով Ավստրալիա՝ Քրետուելը մանրամասն զեկույց կազմեց և լուսանկարների միջոցով ներկայացրեց հայ գաղթականների և որբերի դրությունը, թե ինչպես էին Ավստրալասիական որբանոցում հայ տղաները Ավստրալիայից ուղարկված կաշվից կոշիկ կարում և ինչպես էին հաց թխում ավստրալական ալյուրով<sup>20</sup>:

Լ. Ուիրթի ժամանումն Ավստրալիա նոր թափ հաղորդեց նպաստամատույց աշխատանքների իրականացմանը: Եթե 1917-1920թթ. դրամահավաքներ կազմակերպվում էին հիմնականում եկեղեցիներում, իսկ նվիրատվություններն ու դրամահավաքներից ստացված գումարն ուղարկվում էր Լոնդոն՝ «Հայ փախստականների հիմնադրամ», ապա Լ. Ուիրթի ժամանումից հետո հանգանակված միջոցներն օգտագործվում էին Հայկական նպաստամատույց կոմիտեների կողմից՝ ալյուր, կաթ և այլ սննդամթերք գնելու համար, որն ուղարկվում էր Ավստրալասիական որբանոց: Միայն 1927թ. Նոր Հարավային Ուելսի Հայկական նպաստամատույց կոմիտեն որբանոց ուղարկեց հին հագուստների, խտացրած կաթի, պահածոյացված մրգերի և բրդի չորս մեծ կապոց<sup>21</sup>:

Բոլոր այն քաղաքներում, որտեղ գործում էին Հայկական նպաստամատույց հիմնադրամի կոմիտեները, հանգանակություններ կազմակերպվում էին ոչ միայն դրամահավաքի, այլ նաև հին հագուստների հավաքման միջոցով, որը կազմակերպվում էր հիմնականում դպրոցների ու գրադարանների շրջակայքում, ապա տեղափոխվում նպաստամատույցի գրասենյակներ: Հին հագուստներ հավաքելու և հայ գաղթականներին փոխանցելու նպատակով հայտարարություններ էին տարածվում թերթերում: Նման հայտարարություններում ներկայացվում էին հայ լրջալների գոյության ծանր պայմանները, և նշվում էին այն հասցեները, որտեղ պետք է ուղարկվեին հանգանակությունները հագուստի և գումարի տեսքով<sup>22</sup>:

Դրամահավաք կազմակերպելու նպատակով Ավստրալիայի տարբեր քաղաքներում կազմակերպվում էին նաև արևելյան տոնավաճառներ: Սիդնեյում նման միջոցառումներից մեկի ժամանակ վաճառատեղաններն ու տաղավարները կրում էին Արևմտյան Հայաստանի քաղաքների անունները, իսկ վաճառողները հայկական ավանդական տարազներով էին<sup>23</sup>:

Ավստրալիայում քարոզարշավի իրականացմանն իրենց աջակցությունը ցուցաբերեցին նաև ժամանակի հայտնի հասարակական գործիչներ, դերասաններ ու երգիչներ: 1919թ. հունիսի 28-ին Հայկական նպաստամատույց հիմնադրամը կազմակերպեց «Ivanhoe Strollers» արական երգչախմբի համերգը, որից ստացված ողջ հասույթն ուղարկվեց Լոնդոն՝ «Հայ փախստականների հիմնադրամ»-ին<sup>24</sup>: 1919թ. վերջին ավստրալացի երգչուհի Մեսիլիա Ջոնը Մելբուռնում հիմնեց «Երեխաների փրկության հիմնադրամ» կազմակերպությունը, որն ակտիվորեն համագործակցեց Հայկական նպաստամատույց հիմնադրամի հետ: Հետագայում Հայկական նպաստամատույց հիմնադրամի բոլոր կոմիտեները միացան «Երեխաների փրկության հիմնադրամ»-ին<sup>25</sup>:

<sup>20</sup> «The Argus», 1923, 21 ապրիլի, էջ 6 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1891975>), «The Argus», 1923, 7 օգոստոսի, էջ 13 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/2013340>):

<sup>21</sup> Babkenian V., «Edith May Glanville: Champion of the Armenian Relief Fund», *Journal of the Ashfield & District Historical Society Inc.*, No. 17, 2008, p. 13.

<sup>22</sup> National Library of Australia, Digisted newspapers and more. (<http://trove.nla.gov.au/newspaper/result?q=Bundle+day+&fromdd=01&frommm=01&fromyyy=1915&todd=30&tommm=12&toyyy=1930>).

<sup>23</sup> Babkenian V., «Edith May Glanville ...», p. 11.

<sup>24</sup> Babkenian V., «An S.O.S. from beyond Gallipoli...», p. 260.

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 268:

Ավստրալիայում մարդասիրական շարժման կազմակերպմանն իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան նաև մի շարք առաջադեմ կանայք: Նրանցից շատերն անգամ մասնակցեցին Մերձավոր Արևելքում նպաստամատույց աշխատանքների իրականացմանը: Նրանց թվում էին նաև Հիլդա Քինգը, ով 1923թ. Ջեյմս Քրեստելի հետ այցելեց Ավստրալասիական որբանոց և մասնակցեց որբախնամ աշխատանքներին, Մելբուռնի համալսարանի գիտնական, 1923թ. Ազգերի լիգայի Ասամբլեայում Ավստրալիայի պատվիրակ Ջեսի Ուեբը, 1922-26թթ. ընթացքում Հայկական նպաստամատույց հիմնադրամի քարտուղար Էդիթ Գլանվիլը<sup>26</sup>:

Այսպիսով, 1915թ. Վիկտորիա նահանգում սկիզբ առած նպաստամատույց շարժումը կարճ ժամանակում տարածվեց և ընդգրկեց Ավստրալիայի գրեթե բոլոր նահանգները: Շարժմանն իրենց մասնակցությունը բերեցին մի շարք քաղաքական, հասարակական և հոգևոր առաջնորդներ, իսկ որոշ ավստրալացի կամավորներ էլ ներգրավվեցին Մերձավոր Արևելքում ցեղասպանությունը վերապրածների շրջանում նպաստամատույց աշխատանքների իրականացման մեջ: Ավստրալական նպաստամատույց կոմիտեներն իրենց գործունեությունը շարունակեցին մինչև 1930-ական թթ.: Նրանց գործունեության արդյունքում անխուսափելի ոչնչացումից, սովից ու հիվանդություններից փրկվեցին հազարավոր հայեր և Օսմանյան կայսրությունում բնակվող այլ քրիստոնյաներ:

### **Ավստրալիայի ցուցաբերած մարդասիրական օգնությունը հայ գաղթականներին և որբերին 1915-1930թթ.**

*Լուսինե Աբրահամյան*

#### **Ամփոփում**

Հոդվածում անդրադարձ է կատարվում Առաջին աշխարհամարտի տարիներին Ավստրալիայի ցուցաբերած մարդասիրական օգնությանը Մերձավոր Արևելքի հայ կարիքավորներին: 1915թ. Մերձավոր Արևելքի հազարավոր հայ գաղթականներին ու որբերին օգնելու և նրանց ապրելու հնարավորություն ընձեռելու համար Վիկտորիա նահանգում ստեղծվեց Հայկական նպաստամատույց հիմնադրամը, որն իր մասնաճյուղերն ունեցավ Ավստրալիայի գրեթե բոլոր նահանգներում: Տուժածների և կարիքավորների համար լայնածավալ մարդասիրական օգնություն ապահովելու նպատակով սկսվեց լայնածավալ քարոզչական գործունեություն, որի շնորհիվ էլ հնարավոր դարձավ հանգանակություններ իրականացնել: Համագործակցելով Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կազմակերպության հետ՝ Ավստրալիայի Հայկական նպաստամատույց հիմնադրամը 1922թ. Բեյրութում հիմնեց Ավստրալասիական որբանոցը, որն իր հարկի տակ առավ շուրջ 1200 հայ որբերի:

**Բանալի բառեր՝** ցեղասպանություն, մարդասիրական օգնություն, հանգանակություն, գաղթական, որբ, Օսմանյան կայսրություն, ԱՆԶԱԿ, Ավստրալիա, Մերձավոր Արևելք, Ավստրալասիական որբանոց:

<sup>26</sup> Babkenian V., "Edith May Glanville...", p. 9.

## Australia's Relief Activities to the Armenian Refugees and Orphans in 1915-1930.

*Lusine Abrahamyan*

### Summary

In 1915, news of the large-scale systematic massacres and deportation of Armenians in the Ottoman Empire during WWI sparked a nationwide relief movement in Australia in an attempt to aid thousands of Armenians in need of means to survive.

The relief campaign involved a broad circle of Australia's political, civic and religious leaders. The Australian government representatives, public figures and celebrities encouraged Australians to support the relief project. Newspapers and magazines printed articles informing the public about the situation in the Middle East and the need for urgent help. As a result of the campaign, a generous contribution was collected, and in 1922 an Armenian orphanage was founded in Beirut.

**Keywords:** Genocide, humanitarian assistance, donation, refugee, orphan, the Ottoman Empire, ANZAC, Australia, Near East, Australasian orphanage.

## Гуманитарная помощь армянским беженцам и сиротам, оказанная Австралией в 1915-1930 годах

*Лусине Абрамян*

### Резюме

Новости о массовом систематическом истреблении и депортации армян в Османской империи во время Первой мировой войны вызвали возмущение во всем мире, и Австралия не была исключением. Начиная с 1915 г. в Австралии развернулось широко-масштабное гуманитарное движение для оказания помощи миллионам нуждающимся и предоставления им возможности для выживания. В этом движении приняли участие как политические, так и общественные и религиозные деятели Австралии. Для осведомления общественности о необходимости оказания помощи в газетах и журналах печатались статьи, в которых представлялась ситуация на Ближнем Востоке и необходимость экстренной помощи. В результате этого движения были собраны крупные пожертвования, а в 1922г. в Бейруте был основан приют для армянских сирот.

**Ключевые слова:** Геноцид, гуманитарная помощь, пожертвование, беженец, сирота, Османская империя, АНЗАК, Австралия, Ближний Восток, Австрало-азиатский.

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅԱՐԱԴՈՒԹՅՈՒՆՈՒՄ «DEUTSCHER HILFSBUND  
FÜR CHRISTLICHES LIEBESWERK IM ORIENT» («ԱՐԵՎԵԼՔՈՒՄ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՈՒԹՅԱՆ») ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ**

*Հայկ Մարտիրոսյան*

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում գործող գերմանական միսիոներական կայանները թեև դժվարին պայմաններում, սակայն շարունակում են իրենց գործունեությունը՝ ի տարբերություն անգլիական և ֆրանսիական միսիոներական կազմակերպությունների, որոնք, որպես թշնամի պետությունների ներկայացուցչություններ, ստիպված էին հեռանալ երկրից: Մինչև պատերազմի մեջ մտնելը՝ ԱՄՆ-ի՝ որպես չեզոք երկրի միսիոներներն ու Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը (ՕԱԼԱՄ-ABCFM American Board of Commissioners for Foreign Missions) կարողանում են գործունեություն ծավալել Օսմանյան կայսրությունում: Այնուամենայնիվ, ելնելով Օսմանյան կայսրության և Գերմանիայի միջև դաշնակցային հարաբերություններից, գերմանացի միսիոներներն օսմանյան իշխանությունների հետ հարաբերություններում փոքր-ինչ արտոնյալ կարգավիճակ ունեին:

Մինչև Համաշխարհային պատերազմի սկիզբը՝ 1914թ. դրությամբ «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միությունն» (այսուհետ՝ ԱԲԲԳՕՄ)<sup>1</sup> Օսմանյան կայսրության տարածքում ուներ հինգ հիմնական կայան՝ Մեզրեի, Մարաշի, Վանի, Մուշի և Հարունիեի, որոնցում (ենթակայանների հետ միասին) ապաստան էր գտել շուրջ 2000 երեխա, իսկ կայաններում և հարակից գյուղերում գերմանացիների կողմից պահվող դպրոցներում կրթություն էր ստանում 3361 երեխա<sup>2</sup>:

**Մեզրեի կայանն** այդ կայաններից ամենամեծն ու զլխավորն էր: Կայանի ղեկավարն ուսուցիչ Յոհաննես Էհմանն էր, ով իր երկու գործընկերների հետ միասին այստեղ էր ժամանել դեռևս 1897թ. փետրվարին: Մեզրեի կայանը հիմնվել էր 1897թ. հունիսի 1-ին<sup>3</sup>: Սկզբից նեթ կայանը ղեկավարում էր Յոհ. Էհմանը, ով Օսմանյան կայսրություն ժամանած գերմանացի առաջին միսիոներներից մեկն էր: Կայանն իր գործունեությունն սկսում

<sup>1</sup> Նախապես այս կազմակերպությունը կոչվել էր «Հայաստանի օգնության գերմանական միություն»՝ Մայնի Ֆրանկֆուրտի և Բեռլինի հիմնական կոմիտեներով և մի քանի այլ ենթակոմիտեներով, սակայն հիմնադրումից որոշ ժամանակ անց վերանվանվել էր ԱԲԲԳՕՄ:

<sup>2</sup> *Sonnen-Aufgang, Mitteilungen des Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient e.V., Frankfurt am Main, Verlag des Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient e.V., 1914, Heft 5, Februar, S. 69.*

<sup>3</sup> 1896 թ. օգոստոսի 28-ին Մայնի Ֆրանկֆուրտում տեղի էր ունեցել «Հայաստանի օգնության գերմանական միության» երկրորդ համաժողովը, որի ժամանակ որոշում էր կայացվել Օսմանյան կայսրության հայաշատ մի քանի վայրերում, մասնավորապես Խարբերդում, Մարաշում և Վանում վարձակալված տներում չորս հարյուր որբ վերցնել, իսկ Կ.Պոլսի Սկյուտար թաղամասում (ավելի ուշ տեղափոխվում է եվրոպական մաս՝ Բերեք) «գերմանական ղեկավարմամբ» գերմանական որբանոց բացել, որտեղ ապաստան էր գտնելու 50 որբ: Հենց 1896 թ. վերջին էլ գերմանական ֆինանսավորմամբ, սակայն ամերիկյան ղեկավարմամբ որբեր են հավաքվում Խարբերդում: Գերմանացիների Խարբերդ ժամանելուց մի քանի ամիս անց՝ 1897 թ. հունիսի 1-ին, այստեղ հավաքված որբերը Յոհ. Էհմանի ղեկավարությամբ տեղափոխվում են Մեզրեի որբանոց, որտեղ այդ նպատակի համար նախապես վարձակալվել էր երկու տուն: Հենց հունիսի 1-ն էլ համարվում է Մեզրեում գերմանական միսիոներական գործի սկզբնավորման օր: St'u Lohmann E. (Hg.), *Skizzen und Bilder aus dem Orient*, Dinglingen (Baden), 1899, St. Johannis-Druckerei, S. 54.



է երկու որբանոցով և շուրջ 200 երեխայով<sup>4</sup>։ Համաշխարհային պատերազմի նախաշեմին այստեղ կար շուրջ 700 երեխա, դպրոցներում կրթություն էր ստանում 1055 երեխա (այդ թվում՝ նաև երեխաներ քաղաքից), կայանում ավելացել էր ինչպես որբանոցների, այնպես էլ աշխատակիցների թիվը։ Այժմ այստեղ կար որբանոցի վեց շենք, ուսուցչական անձնակազմի թիվը հասել էր 25-ի, եվրոպացի աշխատակիցներինը՝ 23-ի<sup>5</sup>։ Կայանում աշխատում էին մեծ թվով հայեր։ Այն ուներ մի քանի արհեստանոց՝ տեղական և եվրոպական կոշկակարության, մանածագործության, դարբնության, հյուսնության։ Բացի այդ այստեղ գործում էին ուսուցիչների պատրաստման սեմինարիա, 1913թ. պատվելի Ասատուր Եղոյանի և Յոհաննես Էհմանի ղեկավարությամբ հիմնադրված քարոզիչների պատրաստման Թաղեուսյան դպրոց, «Յուար» հանգստյան տուն քաղաքից ոչ հեռու գտնվող լեռներում, «Եփրատ-Սիրտահ» հիվանդանոց, հացի արտադրամաս և այլն։ Անցած ավելի քան մեկուկես տասնամյակի ընթացքում կայանն ակտիվ գործունեություն էր ծավալել ինչպես երեխաների հավաքագրման, խնամքի ու դաստիարակության, այնպես էլ կրթության, բժշկության, ավետարանականացման<sup>6</sup>, ենթակայանների հիմնման և այլ ուղղություններով։

Համաշխարհային պատերազմն ու Հայոց ցեղասպանությունը նոր դժվարություններ են առաջ բերում (1915թ. Մեզրեում կար 1350 սան<sup>7</sup>)։ Թուրքերը բռնագրավում են որբանոցների մի մասը՝ դարձնելով դրանք գորանոց և հիվանդանոց, գերմանացի աշխատակիցներից ոմանք վերադառնում են հայրենիք, հայ աշխատակիցներից ոմանք՝ տարագրվում, նվազում է ֆինանսավորումը և այլն։ Այնուամենայնիվ, մեծ դժվարություններով ու փորձություններով, զգալի կորուստներ կրելով՝ կայանը կարողանում է գոյատևել Համաշխարհային պատերազմի տարիներին։ Ըստ Մեզրեի Թաղեուսյան վարժարանի հիմնադիրներից մեկի՝ պատվելի Ա. Եղոյանի նամակի՝ Մեզրեն և Խարբերդն այն եզակի վայրերից էին, որտեղ Մեծ եղեռնից փրկված հայերը կարող էին ժամերգությունների և ավետարանական ընթերցումների մասնակցել։ Եթե այստեղ ժամերգություններին երբեմն հավաքվում էր 500 հոգի, հիմնականում՝ կանայք, ապա այլ վայրերում, որտեղ քարոզներով շրջել էր Յոհ. Էհմանը, մասնակիցների թիվը շատ քիչ էր եղել։ Նա եղել էր Մալաթիայում՝ քարոզելով նաև Քրիստոֆելի կույրերի առաքելության տանը, որտեղ միայն 10 կին էր համարձակվել գալ քարոզներ լսելու։ Նման իրավիճակ էր նաև Դիարբեքիում, Արաբկիրում և Այնթապում<sup>8</sup>։

Աշխարհամարտի ավարտից հետո սկիզբ է առնում մուսուլմանական տներից հայերի ազատագրման գործը։ Մեզրեի կայանը ևս ակտիվորեն ներգրավված էր դրանում։ Սակայն ազատագրվածներին և աքսորից վերադարձածներին անհրաժեշտ էր նաև հոգալ սննդի և կեցության համար։ 1919թ. մարտի կեսերին թուրքական տներից ազատվել և կայան էր բերվել 150 կին ու աղջիկ, իսկ մեկուկես ամիս անց՝ արդեն 300 հոգի<sup>9</sup>։

Ի տարբերություն գերմանական մի քանի միսիոներական կայանների՝ Մեզրեում, Մարաշում, Հարոնիեում, ինչպես նաև Ուրֆայում («Գերմանական արևելյան առաքելության» կայան), մյուս երկրների միսիոներական կայաններն Առաջին աշխարհամարտի ընթացքում դատապարտված էին փակվելու։ Վերջինները, որոնք փակվեցին կամ անցան գերմանացիների

<sup>4</sup> Baumann A., Die Gründung des Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient, in: Knipsel M. (Hrsg.), *Ernst Lohmann 1860-1936. Pionier, Gründer, Evangelist*. Berlin, Pro BUSINESS, 2011, S. 55.

<sup>5</sup> Sonnen-Aufgang. Heft 9, Juni 1914, S. 131-134.

<sup>6</sup> Բողոքական դավանանքի ուսուցման և Ավետարանի բացատրության դասեր։

<sup>7</sup> Ժամկոչեան Բ., *Պատմություն Մամուրեթ իւլ Ազիզի գերման որբանոցներու*, Պէյրուք, Printers & Publishers G. DONIGIAN & Sons, 1973, էջ 179։

<sup>8</sup> Sonnen-Aufgang, Heft 1, Oktober, 1917, S. 2-4; Heft 6, März, 1918, S. 42-44.

<sup>9</sup> Sonnen-Aufgang, Heft 2, November, 1919, S. 10-11.



խնամակալության ներքո, ամերիկյան կայաններն էին: Այլ երկրների առաքելություններն իրենց գործունեությունն Օսմանյան կայսրությունում վերսկսեցին միայն 1919թ.: Ի տարբերություն վերջինների՝ մինևույն 1919թ. գերմանական որբախնամ առաքելությունն Օսմանյան կայսրությունում ստիպված է լինում դադարեցնել իր գործունեությունը:

Պատերազմի ավարտից և Գերմանիայի պարտությունից հետո Անտանտի երկրների և հատկապես անգլիացիների պնդմամբ գերմանացի աշխատակիցներն ստիպված էին հեռանալ Օսմանյան կայսրությունից: Ամերիկացիները պատրաստակամություն են հայտնում զբաղեցնելու գերմանացիների տեղը, որոնց և փոխանցվում է միսիոներական գործը<sup>10</sup>: Որպես գերմանական կողմի ներկայացուցիչներ՝ Մեգրեում են մնում շվեյցարացի Վերենա Շմիդլին և դանիացի Կարեն Մարի Պետերսենը՝ միսիոներական կայանի հանձնումն ամերիկացիներին իրականացնելու համար: 1919թ. ամռանը Մեգրեի կայանը՝ որպես գերմանական միսիոներական կայան, արդեն դադարեցրել էր իր գործունեությունը, իսկ անձնակազմը՝ Յոհ. Էհմանն ու իր ընտանիքը, աշխատակցուհիներ Մինա Էնսլենը, Աննա Յենսենը, Կատարինե Մադերը, Կլարա Պֆայֆերը և Մարի Ռյոդերը, հեռացել էին Օսմանյան կայսրությունից՝ Ռոզենհայմ (Բավարիա)<sup>11</sup>: Գերմանացի աշխատակիցների հեռանալուց առաջ այստեղ հայերի կողմից կազմակերպվում է հրաժեշտի օր, որտեղ նրանց շնորհակալագիր է հանձնվում Մեգրեի ավետարանական համայնքի կողմից, ընդգծվում կայանի բոլոր աշխատակիցների և հատկապես վերջինիս ղեկավար Յոհ. Էհմաննի 22 տարի շարունակ կատարած մեծ ու շնորհակալ աշխատանքը, շեշտվում է, որ կայանի շնորհիվ այստեղ ապաստան է գտել ու փրկվել ավելի քան 1000 մարդ<sup>12</sup>: Բ. Ժամկոչյանի գրքում նշվում է, որ կայանի շնորհիվ փրկվել է մոտ 1500 հայ<sup>13</sup>: Փաստացի, Մեգրեի կայանը ոչ միայն կարողանում է ցեղասպանությունից ու տարագրությունից փրկել իր սաների ու աշխատակիցների մեծագույն մասին, այլև օգնության ձեռք մեկնել մի շարք այլ մարդկանց, երեխաների, իրենց աշխատակիցների ընտանիքներին և շատ ուրիշներին:

**Մարաշի կայանը** ևս փաստացի հիմնադրվել է 1896թ. (1896թ. օգոստոսի 28-ի վերոնշյալ որոշումը վերաբերում էր նաև Մարաշում որբեր հավաքագրելուն): 1896թ. հոկտեմբերի 28-ին Մարաշում ապաստան են գտնում առաջին որբերը: Շուրջ մեկուկես տարի կայանը ղեկավարվել է ամերիկացիների և տեղի հայերի կողմից: Միայն 1898թ. փետրվարի 1-ին Մարաշ է ժամանում գերմանացի միսիոներուհի Աննա Ռուբախը և անհրաժեշտ լեզվական գիտելիքներին տիրապետելուց հետո ստանձնում կայանի ղեկավարումը<sup>14</sup>: Այդ պահից ի վեր կայանն անցնում է գերմանական անմիջական ղեկավարման ներքո:

Հաջորդ մեկուկես տասնամյակի ընթացքում Մարաշի կայանն զգալիորեն մեծանում է: Սկզբնապես այստեղ գործում էր տղաների և աղջիկների մեկական որբանոց՝ «Բեթշալում» և «Բեթել»: Ժամանակի ընթացքում թեև այս անվանումները մնում են, սակայն դրանք դառնում են մի տեսակ շենքային համալիրներ՝ ներառելով որբանոցների մի քանի շենքեր: Մարաշի կայանը լուրջ փորձության է ենթարկվում 1909թ. կլիկիահայության կոտորածների ժամանակ, երբ կտրուկ ավելանում է որբերի թիվը: Կայանի աշխատակիցները, բժիշկ Բ. Մյուլերլայլեի, նրա կնոջ՝ Լուիզե Այտելի (հետագայում՝ Մյուլերլայլե), Պաուլա Շեֆերի և այլոց մասնակցությամբ արշավախումբ կազմելով, լինում են կոտորածներից

<sup>10</sup> Sonnen-Aufgang. Heft 6/7, März/April 1919, S. 40.

<sup>11</sup> Sonnen-Aufgang. Heft 11, August 1919, S. 72.

<sup>12</sup> Sonnen-Aufgang. Heft 1, Oktober 1919, S. 5-6.

<sup>13</sup> Ժամկոչյան Բ., Պատմություն ..., էջ 191:

<sup>14</sup> Berron P., Blicke in die Geschichte der Station Marasch, in: Schuchardt F. (H. g.), 25 Jahre im Orient: 1896-1921. Ein Gang durch die Arbeit des Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient, Frankfurt a. Main, Verlag Orient 1921, S. 23.

տուժած մի շարք վայրերում, օգնություն ցուցաբերում տեղացիներին՝ իրենց հետ կայան բերելով նաև շուրջ 200 որբացած երեխայի: Բացի այդ հայ ազգաբնակչությանը մեծ օգնություն է ցուցաբերում կայանում գործող «Սալեմ» հիվանդանոցը: Ընդհանուր առմամբ այս կայանում ևս իրականացվում էր որբախնամ, այրիախնամ, կրթական, բժշկական, ավետարանականացման գործունեություն: Համաշխարհային պատերազմի նախաշեմին զգալիորեն աճել էր ինչպես խնամամոռու երեխաների, այնպես էլ կայանի եվրոպացի և հայ աշխատակիցների թիվը, կայանում գործում էր «Սալեմ» հիվանդանոցը, մոտակա լեռներում՝ «Բեթանին» հանգստյան տունը, 1913թ. Աննի Ռոհների ղեկավարությամբ այստեղ հիմնադրված Իզական աստվածաշնչյան դպրոցը (Bibelfrauenschule)՝ կին քարոզիչներ պատրաստելու համար, մի շարք արհեստանոցներ և այլն:

Համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության հետևանքով առաջացած դժվարությունները հաղթահարելով՝ Մարաշի կայանը կարողանում է պահպանել իր գոյությունը: Կայանում մեծ գոհողությունների գնով հնարավոր է լինում պահել ու ապաստան տալ զգալի թվով երեխաների, ինչպես նաև աշխատակիցների ու նրանց ընտանիքներին: Կայանը հանձնելուց որոշ ժամանակ առաջ՝ 1919թ., Մարաշում ապաստան էր գտել շուրջ 1000 երեխա: Բացի այդ այստեղ մի կացարան էր հիմնվել այն հայ կանանց համար, ովքեր ազատվում էին թուրքական գերությունից<sup>15</sup>: Սակայն Մարաշում ևս Անտանտի երկրների որոշմամբ (Մեզրեի կայանի աշխատակիցներից քիչ ավելի ուշ), որպես գերմանահպատակներ, կայանի աշխատակիցներն ստիպված են լինում լքել Օսմանյան կայսրության տարածքը: 1919թ. սեպտեմբերին վերջիններս Հարունիեի կայանի աշխատակիցների հետ միասին հեռանում են կայանից՝ հոկտեմբերին ժամանելով Գերմանիա: Որպես գերմանական կողմի ներկայացուցիչ և գործը սահուն կերպով փոխարինելու եկած ամերիկացիներին փոխանցելու համար՝ այստեղ մնում է Մարի Տիմը:

Մարաշի գերմանական կայանը կարողանում է փրկել իր սաների ու աշխատակիցների մեծ մասին և վերապրել ցեղասպանությունն ու Առաջին համաշխարհային պատերազմը: Կայանի դժվարությունների նոր փուլն սկսվում է արդեն Աշխարհամարտից հետո: Այս գերմանական կայանը ևս դադարեցնում է իր գործունեությունը Անտանտի երկրների, մասնավորապես Ֆրանսիայի և Անգլիայի պահանջով: Եթե այլ երկրների միսիոներական կայանների պարագայում գործունեության դադարեցման պատճառը բացառապես պատերազմն էր, և փակումն էլ տեղի էր ունեցել դրանից առաջ կամ այդ ընթացքում ու թուրքերի նախաձեռնությամբ կամ պահանջով, ապա գերմանական միսիոներական գործի դադարեցման գլխավոր դերակատարներն Անգլիան ու Ֆրանսիան էին:

**Վանի կայանը** փաստացի հիմնադրվել է 1896թ., երբ օգոստոսի 28-ի վերոնշյալ համաժողովի որոշմամբ որբեր էին հավաքագրվելու մի քանի քաղաքներում, այդ թվում նաև Վանում, որտեղ սեպտեմբերի վերջին սկզբնապես ապաստան է գտնում 50 երեխա: Այս կայանը ղեկավարելու էին ամերիկացի Ռեյնոլդս ամուսինները: Ի տարբերություն մյուս հիմնական կայանների՝ Վանում կազմակերպության գործունեությունը բավականին երկար ժամանակ մնում է ամերիկյան ղեկավարման ներքո և առանց գերմանացի աշխատակիցների: ԱԲԲԳՕՄ-ի առաջին աշխատակիցը՝ քարոզիչ Ռյուսլերը, Վան է ժամանում 1901 թ., որից հետո՝ Պաուլինե Պատրունկին (վերջինս մինչ այդ գործում էր Ուրֆայում Յոհ. Լեփսիուսի «Գերմանական արևելյան առաքելության» կայանում), Կլարա Լիզեն, Քրիստիանե Դյուրերը, իսկ 1905թ.՝ շվեյցարացի Շայրիի ամուսինները և սկսում են ղեկավարել այն: Կայանում կար 250-280 երեխա՝ տեղակայված տղաների և աղջիկների մեկա-

<sup>15</sup> Sonnen-Aufgang, Heft 10, 1919, Juli, S. 63; Heft 2, 1919, November, S. 15.

կան որբանոցներում<sup>16</sup>։ Ժամանակի ընթացքում այստեղ մեծանում է անձնակազմը, գնվում է հողակտոր, թույլտվություն է ստացվում դրա վրա շինություն կառուցելու վերաբերյալ, կառուցվում է նաև դպրոցի շենք և այլն։ Գործունեության ընթացքում կայանն ունենում է նաև կորուստներ. 1908թ. հիվանդանում և մահանում է կայանի աշխատակցուհի Աննա Վեխթերը, իսկ 1915թ. ամռանը՝ Մարթա Կլայսը<sup>17</sup>։

Վանի կայանն ամենաշուտն է դադարեցնում իր գործունեությունը՝ կապված ռուսական սահմանին ամենամոտը լինելու և պատերազմի մեջ ներքաշվելու հետ։ Ապրիլ-մայիսյան բախումների ժամանակ Վանի գերմանական կայանի երեք շինություններում՝ երկու որբանոցում և դպրոցում, ապաստան էր գտել ավելի քան 2000 մարդ, կահավորվել էր պոլիկլինիկա<sup>18</sup>։

Ռուսական զորքերի՝ Վան մոտք գործելուց և առաջին նահանջից հետո վերջիններս իրենց հետ տանում են նաև Շայրիի ամուսիններին, նրանց դստերը՝ կայանի աշխատակից Իռենեին, և միսիոներուհի Աննա Գրայներին։ Շայրիի ընտանիքը նահանջից հետո որոշ ժամանակ նետվում է Թիֆլիսի բանտ, ապա ամերիկյան ու շվեյցարական դեսպանատների ջանքերով (վերջիններս շվեյցարացիներ էին) ազատ արձակվում և վերադառնում հայրենիք։ Աննա Գրայները որպես գերմանուհի ավելի երկար է մնում բանտում, ավելի ուշ Թիֆլիսից տեղափոխվում և որոշ ժամանակ անց է կացնում նաև Ալեքսանդրապոլի բանտում։ Կայանում մնացած երեխաները՝ 40-43 հոգի, հեռանում են ավելի ուշ՝ օգոստոսի վերջին՝ ռուսական երկրորդ նահանջի ժամանակ, խիստ հապշտապ, ռուս զինվորների ընկերակցությամբ և միսիոներուհի Կեթե Էհրհոլդի ու նրա օգնականուհու՝ 18-ամյա հայուհի Մարթայի ղեկավարությամբ։ Երեխաները տեղափոխվում են Թիֆլիս և տեղավորվում տեղի հյուրընկալ ընտանիքներում։ Կեթե Էհրհոլդին՝ որպես գերմանուհու, առանձնացնում են երեխաներից և նետում Թիֆլիսի բանտ։ Ի վերջո, ամերիկյան դեսպանատան ջանքերով Աննա Գրայները և Կեթե Էհրհոլդը ազատ են արձակվում և վերադառնում Գերմանիա<sup>19</sup>։

Վանում գործող գերմանական ու ամերիկյան միսիոներական կայանները, ի տարբերություն մյուս կայանների, իրենց գործունեությունը դադարեցնում են բացառապես պատերազմական գործողությունների պատճառով։ Եթե ամերիկյան մյուս միսիոներական կայանները հիմնականում կարողանում են գոյատևել մինչև 1917թ. ապրիլ՝ ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելը, ապա ռուսական առաջխաղացման պատճառով Վանի այս երկու կայանները դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ դրանցում ապաստան գտած երեխաները տեղափոխվում են Անդրկովկաս։ Գերմանական կայանը կարողանում է ոչ միայն պահպանել իր խնամակալության տակ գտնվող որբերին, այլև մինչև ռուսական զորքերի՝ Վան մոտք գործելն ապաստան է տալիս շուրջ 2000 հայ փախստականների Վանի շրջանի գյուղերից։ Ի տարբերություն ամերիկյան կայանի միսիոներների՝ գերմա-

<sup>16</sup> Spörri Joh., *Unsere Arbeit in Wan*, in; Schuchardt F. (H.g.), *նշվ. աշխ.*, էջ 38-40։ Տե՛ս նաև Kieser H.-L., *Der verpasste Friede. Mission, Ethnie und Staat in den Ostprovinzen der Türkei 1839-1938*, Zürich, Chronos Verlag, 2000, S. 161.

<sup>17</sup> Spörri Joh., նույն տեղում, էջ 47։ Մարթա Կլայսի մահվան հետ կապված որոշակի անհստակություն կա. եթե կայանի ղեկավար Յոհ. Շայրին գրում է, որ նա մահացել է քաղաքի պաշարման ժամանակ, ապա կազմակերպության պարբերականում գրված է, որ Մարթա Կլայսը մահացել է հուլիսի 30-ին Բիթլիսում բժավոր տիֆից, որտեղ նա թուրքական հոսպիտալում օրիորդ Մաք-Քլարենի հետ միասին զինվորներ էր խնամում։ *Sonnen-Aufgang*, Heft 3, 1915, Dezember, S. 24.

<sup>18</sup> Ehrhold K., *Flucht in die Heimat. Aus dem Kriegserlebnissen deutscher Missionsschwestern in der asiatischen Türkei*, Dresden-Leipzig, Verlag E. Ludwig Angelenk, 1937, S. 11.

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 31-44։ Կայանում առկա երեխաների փոքր թիվը պայմանավորված էր նրանով, որ ամառային արձակուրդներ էին, և երեխաները վերադարձել էին իրենց հարազատների և բարեկամների մոտ։

նական կայանի աշխատակիցները հետագայում ենթարկվում են հետապնդումների, ձերբակալությունների, բանտարկության և արտոյի:

**Մուշի կայանը** հիմնական կայաններից թվով չորրորդն էր, սակայն հիմնադրվել էր ոչ թե առաջին երեք կայանների հետ միասին, այլ դրանցից ավելի քան մեկ տասնամյակ անց՝ 1907թ., երբ մայիսին Բեննո և Աննա ֆոն Դոբելեր ամուսինները տեղափոխվել էին այստեղ, հավաքագրել որբերի, իրենց խնամակալության տակ վերցրել մինչ այդ հավաքված որբերին և հիմնել կայանը: Առաջին անգամ Ֆոն Դոբելեր ամուսինները Մուշ էին եկել 1907թ. փետրվարի 5-ին Բիթլիսից (նրանք որոշ ժամանակով հաստատվել էին այստեղ՝ տեղի ավանդույթներին և լեզվին ծանոթանալու համար) ամերիկացի միսիոներուհի օրիորդ Էլիի, մեկ թուրք զափթիեի և ութ հայի ուղեկցությամբ՝ լինելով նաև շրջակա բնակավայրերում՝ Մոկունքում, Դերգեվանքում և այլուր: 1907թ. ի վեր Մուշի կայանում գործում էին մեկական որբանոց աղջիկների և տղաների համար ու մի դպրոց: Շրջակա որոշ գյուղերում ևս կայանի աջակցությամբ գործում էին դպրոցներ<sup>20</sup>: Այստեղ ևս գործունեությունը բաժանվում է մի քանի հիմնական ուղղությունների՝ որբախնամ, այրիախնամ գործ, կրթություն, բժշկական գործ, ավետարանականացում: Մուշի պարագայում առկա էր մեկ լուրջ խնդիր, ինչը չկար մյուս վայրերում՝ տներ վարձակալելու խնդիրը. այստեղ խիստ դժվար էր հարմար տուն վարձակալել: Տեղի հայերը չունեին հարմարավետ, լուսավոր ու մեծ տներ, իսկ թուրքերն իրենց տները հաճախ չէին հանձնում վարձակալության կամ հանձնելուց որոշ ժամանակ անց կտրուկ բարձրացնում էին դրանց վարձը (դրանք առանց այդ էլ թանկ էին), ինչին նպաստում էին նաև վարձակալության պայմանագրերի կարճատև լինելը, պահանջարկը և այլն: Ելնելով այս ամենից՝ որոշում է կայացվում այստեղ սեփական որբանոցի շենք կառուցելու մասին: Կայանում, բացի որբանոցներից ու դպրոցից, կային նաև մանածագործության ու կարի արհեստանոցներ, հացի արտադրամաս և այլն: Կայանի հիմնական աշխատակիցներից էր նորվեգուհի Բյոդիլ Բյորնը, ով 1911թ. աշնանը ստանձնում է կայանի ղեկավարումը, քանի որ Ֆոն Դոբելեր ամուսինները վերադառնում էին հայրենիք՝ հանգստանալու: Անձնակազմի մեծ մասը հայեր էին: Կայանն անգամ Մուշ քաղաքից որոշ հեռավորության վրա 38 000 քառ. մետր տարածքով երկու մեծ հողակտոր է գնում, որտեղ նախատեսվում էր հետագայում որբանոցային համալիր հիմնել և տեղափոխել ամբողջ կայանը<sup>21</sup>:

1914թ. սկզբին՝ մինչև Առաջին աշխարհամարտը, կայանում ապաստան էր գտել շուրջ 120 երեխա: Դպրոցում կրթություն էր ստանում 198 երեխա, որի շուրջ կեսը որբանոցի սաներից չէին: Դպրոցում աշխատում էր յոթ ուսուցիչ: Եվս շուրջ 150 երեխա կրթություն էր ստանում շրջակա մի շարք գյուղերում<sup>22</sup>:

Սակայն այս կայանն ունենում է ամենակարճատև կյանքն ու ամենաողբերգական ճակատագիրը. այն դադարեցնում է իր գործունեությունը 1915թ. ամռանը կայանի հայ երեխաների տարագրման և ոչնչացման հետևանքով: 1915թ. այդ դժվարին ժամանակներում այս կայանում էին գործում նորվեգուհի Բյոդիլ Բյորնը և շվեդուհի Ալմա Յոհանսոնը: 1915թ. գարնանը կայանը թողնում է մինչ այդ այստեղ աշխատած Քրիստիանե Դյուրերը և տեղափոխվում Մեզրեի կայան, ապա՝ հայրենիք: Բյոդիլ Բյորնը ծանր հիվանդանում է տիֆով և միայն օգոստոսին է կարողանում Ալմա Յոհանսոնի հետ միասին Մեզրե տեղափոխվել: Վերջինս ականատես էր եղել այն կոտորածներին, որոնց ենթարկվել էր Մուշի

<sup>20</sup> Von Dobbeler B., *Im armenischen Hochland (Musch)*, in; Schuchardt F. (H.g.), *նշվ. աշխ.*, էջ 49-51:

<sup>21</sup> Sonnen-Aufgang, Heft 11, 1912, August, S. 164-166.

<sup>22</sup> Sonnen-Aufgang, Heft 5, 1914, Februar, S. 69.

հայությունը, և թե ինչպես հարյուրավոր հայ երեխաներ ու կանայք այրվել էին<sup>23</sup>: 1915թ. օգոստոսի 10-ին Բյուզնդ Բյուրնը և Ալմա Յոհանսոնը հեռանում են Մուշից՝ իրենց հետ վերցնելով իրենց հայ ուսուցչուհիներից կենդանի մնացածներին (թուրքերը չէին սպանել ուսուցչուհիներից ոմանց լոկ այն պատճառով, որ հարմար էին գտել օգտագործել նրանց գիտելիքներն իրենց հարեմներում): Այս կայանից շատ քչերին է հաջողվում փրկվել՝ միայն մի քանի ուսուցչուհու և օգնականուհու, ովքեր երկու միսիոներուհիների հետ միասին տեղափոխվում են Մեզրե: Կայանի փոքրիկներն ու կանայք ողջ-ողջ այրվել էին, տղամարդիկ՝ գնդակահարվել<sup>24</sup>:

Օսմանյան կայսրությունում գործող մյուս միսիոներական կայաններից Մուշի կայանն է արժանանում ամենադաժան ճակատագրին: Այստեղ բոլոր երեխաները, աշխատակիցներն ու նրանց ընտանիքները ողջակիզվում են՝ բացառությամբ մի քանի ուսուցչուհու: Թեև համեմատության համար կարելի է նշել, որ Մալաթիայում գտնվող Քրիստոֆելի կույրերի առաքելության սաներից շատերը ևս սպանվում կամ մահանում են, սակայն Մուշի դեպքը բացառիկ է իր դաժանությամբ, փրկվածների չնչին քանակով, իրադարձությունների արագ զարգացմամբ: Տարագրելու պատճառաբանությամբ բռնությամբ ու թուրք սպայի «պատվո խոսքով» կայանից խլված երեխաներն ու աշխատակիցները ողջակիզվում են՝ կրկնելով Մուշի շրջանի բազմահազար այլ հայերի ճակատագիրը: 1915թ. նոյեմբերին Մուշի արդեն նախկին կայանի միսիոներուհի Հ. Բյուրը վերադառնում է Մուշ՝ հավաքելու և հնարավորինս օգնելու հրաշքով դեռևս կենդանի մնացած հայերին՝ այստեղ մնալով մինչև 1916թ. փետրվարը՝ ռուսական զորքերի կողմից Մուշի գրավումը:

**Հարունիեի կայանը** միակ հիմնական կայանն էր, որը տեղակայված էր գյուղում (այս գյուղը կոչվում էր նաև Խառնե (Բախչեի շրջան), սակայն քանի որ գերմանացիներն այդ կայանն անվանում էին Հարունիեի, մենք հավատարիմ ենք մնացել այդ անվանը)<sup>25</sup>: Հարունիեն, լինելով Ադանայի վիլայեթի գյուղերից մեկը, անմասն չէր մնացել 1909թ. կոտորածներից: Դրանք այստեղ սկսվել էին ապրիլի 15-ին: Ըստ Հարունիեի քահանայի այրու՝ գյուղի բոլոր տղամարդկանցից կենդանի էին մնացել միայն հինգ-վեց հոգի: Սպանվել էին 157 տղամարդ և մեկ կին: Փրկվածները 14 օր շարունակ անցկացրել էին լեռներում: Այդ ընթացքում բռնություններն ու սպանությունները շարունակվել էին, թուրքերը տարել էին երիտասարդ հայ կանանց ու աղջիկներին<sup>26</sup>: Մարաշի կայանի աշխատակիցները շտապել էին այստեղ՝ փորձելով օգնություն ցուցաբերել տեղի և շրջակայքի ազգաբնակչությանը, սննդամթերք, դեղորայք տրամադրել, վերադարձին իրենց հետ Մարաշ տանելով շուրջ 200 որբացած երեխայի, նաև՝ կանանց: Սակայն Մարաշի կայանում որբ երեխաների քանակի կտրուկ ավելացման հետ կապված ծագած դժվարությունների պատճառով որոշում էր կայացվել Հարունիեում մի նոր կայան հիմնել, որբանոց կառուցել, որտեղ և տեղափոխվում է Մարաշում պահվող և կոտորածի շրջաննե-

<sup>23</sup> Grulich R., *Etnische Säuberung und Vertreibung als Mittel der Politik im 20. Jahrhundert*, Internationales Institut für Nationalitätenrecht und Regionalismus, Eichstätt, 1998, S. 48.

<sup>24</sup> Յոհանսոն Ա., *Մուշ 1915. Օրագիր* (թարգմ.՝ Տիգրանյան Ս.), Լոս Անջելես, տպարան «Արաքս», 2000թ., էջ 25-32: Տե՛ս նաև Յոհանսոն Ա., *Աքսոյալ ժողովուրդ. Մեկ տարի հայոց պատմությունից*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, էջ 20-26:

<sup>25</sup> Հարունիե (Խառնի, Խարնե, Խառնը, Հարուն, Հարունի դոլյակ և այլն) գյուղը գտնվում էր Ադանայի նահանգում՝ Ջերել-Բերեքեթի գավառում՝ Բաղչե գավառակում: 1909թ. ջարդից առաջ Հարունիեն ուներ 140 տուն, որից 130-ը թուրքերը ջարդի ժամանակ այրել էին և հայ բնակչությանը գրեթե ամբողջությամբ կոտորել: Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988 թ., հ. 2, էջ 679:

<sup>26</sup> Sonnen-Aufgang, Heft 1, 1909, Oktober, S. 8-9; Heft 2, 1909, November, S. 19-22.

րից հավաքված երեխաների մի մասը: 1910թ. դեկտեմբերի 5-10-ը Մարաշից Հարունիե է տեղափոխվում 80 տղա և 95 աղջիկ (մեկ այլ տվյալի համաձայն՝ 166 երեխա՝ 86 աղջիկ և 80 տղա), իսկ կայանը ղեկավարելու էր Յոհաննես Շտորքը՝ կնոջ՝ Ջիգրիդի (Ջիգրիդ Գրյունհագեն, հետագայում՝ Շտորք) հետ միասին: Այստեղ աշխատելու էին նաև Կեթե Յորկենը և Ինա Մայնքեն<sup>27</sup>: Ավելի ուշ կայանի կառավարիչներ են դառնում Բեննո և Ան-նա ֆոն Դոբելեր ամուսինները:

Հարունիեի կայանը մեծ դժվարություններով կարողանում է վերապրել Համաշխարհային պատերազմն ու Հայոց ցեղասպանությունը: Այստեղ կային տղաների և աղջիկների համար նախատեսված որբանոց, դպրոց, պոլիկլինիկա, իրականացվում էր հոգևոր-ավետարանական գործունեություն: 1916թ. սկզբներին այստեղ է տեղափոխվում նաև էստոնուհի Հեդվիգ Բյուլը, ում ֆոն Դոբելերների ու Յոհաննա Հաքերի հետ միասին վիճակված էր կրել այս կայանի գործունեության հետ կապված բոլոր դժվարությունները: Այս միսիոներները մեծագույն ջանքերի գնով կարողանում են փրկել որբերին՝ վերապրելով Համաշխարհային պատերազմն ու կոտորածները<sup>28</sup>:

Կլիկիկայում ֆրանսիական և թուրքական զորքերի բախումների, ինչպես նաև պատերազմում Գերմանիայի պարտությամբ պայմանավորված՝ Հարունիեի կայանը հայտնվում է նոր դժվարությունների առջև: Կայանի գերմանացի աշխատակիցներն ստիպված էին լքել Օսմանյան կայսրությունը: Վերջիններս մեկնում են Մարաշի կայանի աշխատակիցների հետ միասին: Հեդվիգ Բյուլն անձնագրային խնդիրների պատճառով դեռևս պետք է մնար կայսրությունում: Կայանն անցնում է ամերիկյան ղեկավարության ներքո, սակայն այս կարգավիճակով ևս երկար կյանք չի ունենում: 1920թ. մարտին կազմակերպվում է կայանի երեխաների փախուստը հայ աշխատակիցների և ուսուցիչների ղեկավարությամբ: Փետրվար-մարտ ամիսներին Հարունիեն դարձել էր ռազմադաշտ: Կայանում կար 170 երեխա: 1920թ. մարտի 26-ի գիշերը՝ 13 օրվա մարտերից հետո, երեխաները կայանի հայ աշխատակիցների ու հայ զինվորների ուղեկցությամբ (ֆրանսիացի զինվորները սպասում էին հարթավայրում) սարսափելի ցրտի ու խոնավ եղանակային պայմաններում անաղմուկ փախչում են նախ՝ մոտակա գյուղ (գերմանացիներն այն անվանում են Յարրըբաշը, առանց կորուստների այստեղ են հասնում 14 ժամվա քայլքից հետո՝ շրջանցելով երկու ժամանոց ճանապարհը), ապա՝ Ադանա, որտեղից էլ հետագայում՝ Ջնյուռնիա: Ադանայում Հարունիեի որբանոցի երեխաներն արժանանում են հայ օգնական ուժերի խնամքին: Նրանց մի մասն ապաստան է գտնում վրանային ճամբարներում, իսկ մյուս մասը՝ քաղաքի որբանոցներից մեկում<sup>29</sup>: Այս փախուստով Հարունիեի կայանը վերջնականապես դադարեցնում է իր գործունեությունը:

Հիմնված լինելով կլիկիկահայության կոտորածների հետևանքով որբացած երեխաներին իրենց բնօրրանում խնամելու նպատակով կայանը կարողանում է վերապրել նաև Աշխարհամարտը՝ փրկելով իր սաներին ու աշխատակիցների մեծ մասին: Այստեղ ևս գերմանական գործունեությունը դադարեցվում է Անգլիայի և Ֆրանսիայի որոշմամբ, սակայն

<sup>27</sup> Sonnen-Aufgang, Heft 6, 1911, März, S. 79; Heft 7, 1911, April, S.99.

<sup>28</sup> Գրիգորյան Վ., *Հայությանը նվիրված կյանք: Էստոնուհի Հեդվիգ Բյուլի հայանպաստ գործունեությունը Կլիկիկայում և Սիրիայում (1911-1951թթ.)*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 1996 թ., էջ 24:

<sup>29</sup> Sonnen-Aufgang, Heft 11/12, 1920, August-September, S. 74-76, S. 80; Heft 2, 1920, November, S. 10-11.: Պատմելով այս փախուստի մասին հոդվածի հեղինակն այն համեմատում է 1915թ. աքսորի հետ՝ նշելով, որ այն շատ ավելի նախընտրելի էր քան համեմատ, քանի որ ամեն ընտանիք իր տրամադրության տակ ուներ մի կենդանի և հետո էր վերցրել անհրաժեշտ իրերը: Այժմ փախչողներն ստիպված էին ամեն ինչ թողնել: Երեխաներն ու նրանց ուղեկիցները խոճուկ վիճակում էին:

այստեղ, ըստ կայանի երկարամյա միսիոներուի Հ. Բյուլի, առավել ակնառու էր Ֆրանսիայի «ներդրումը»<sup>30</sup>:

Ամփոփելով ԱԲԲԳՕՄ կայանների գործունեության դադարեցումն ու դրանց պատճառները՝ պետք է նշել, որ դրանով ավարտվում է Օսմանյան կայսրության հայաշատ շրջաններում շուրջ քառորդ դար տևած ԱԲԲԳՕՄ միսիոներական գործունեությունը: Բացի Մուշից, մյուս կայաններում հնարավոր եղավ վերապրել Առաջին աշխարհամարտը, փրկել տեղի երեխաներին, անձնակազմի մեծ մասին, անգամ ապաստան տալ ու փրկել զգալի թվով այլ հայերի: Այդ կայաններից երեքը գերմանացիները կարողացան ապրեցնել ու փոխանցել ամերիկացի միսիոներներին՝ Անտանտի երկրների կողմից արտաքսվելուց հետո իրենց տեղը զիջելով վերջիններին: Ի տարբերություն Օսմանյան կայսրությունում գտնվող այլ երկրների միսիոներական առաքելությունների ու դրանց կայանների, որոնց գործունեության դադարեցման զլխավոր պատճառը Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելն էր, իսկ ամերիկացիների պարագայում՝ ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելը, ապա գերմանական կայանների դադարեցման պատճառն այդ պատերազմի ավարտն էր ու Գերմանիայի պարտությունը: Միայն գերմանական որոշ կայանների էր վիճակված վերապրել Աշխարհամարտը:

**Օսմանյան կայսրությունում «Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient» («Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության») միսիոներական կայանների գործունեության դադարեցման դրդապատճառներն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո**

Հայկ Մարտիրոսյան

**Ամփոփում**

«Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միությունն» Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի նախաշնչին ուներ հինգ հիմնական կայան՝ Մեզրեում, Մարաշում, Վանում, Մուշում և Հարունիեում, որտեղ ապաստան էր գտել մոտ 2000 երեխա: Կազմակերպության հիմնական կայաններում, ենթակայաններում և շրջակա գյուղերի կրթական հաստատություններում սովորող երեխաների թիվը շուրջ մեկուկես անգամ ավել էր: Կայաններից երեքը՝ Մեզրեն, Մարաշը և Հարունիեն, վերապրելով Առաջին համաշխարհային պատերազմը, 1919թ. դրվեցին ամերիկյան միսիոներական ղեկավարության ներքո: Վանի կայանի անձնակազմը և երեխաները փոխադրվեցին Թիֆլիս: Ցավոք սրտի, հնարավոր չեղավ փրկել Մուշի կայանի երեխաներին: Փրկվեցին միայն մի քանի ուսուցչուհիներ՝ հետագայում երկու եվրոպացի միսիոների ուղեկցությամբ տեղափոխվելով Մեզրեի կայան:

**Բանալի բառեր՝** Գերմանացի միսիոներներ, առաքելություն, միսիոներական կայան, հիմնական կայան, օգնության միություն, որբանոց, միսիոներական կայանների փակում:

<sup>30</sup> Sonnen-Aufgang, 1920, März, Heft 6, S. 42-44; 1920, August-September, Heft 11/12, S. 76-78. Հեղվիզ Բյուլը նշում է, որ իր «աքսորման» պատճառն Օսմանիեի ֆրանսիացի մութեսարիֆի հետ հարաբերություններն էին: Վերջինս փորձում էր իր ցուցաբերած օգնությամբ որբանոցն աստիճանաբար ֆրանսիական և կաթոլիկական ազդեցության տակ գցել: Բյուլին հաջողվում է Ադանայի ամերիկյան միսիոներ պրն Թամբերսի միջոցով կարգավորել այս խնդիրը, սակայն այդ հաջողության «զինը» նրա աքսորի հրամանն էր:



**The Causes of the Termination of “Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient” (“German Society for Aid in Christian Charity Work in the Orient”) Missionary Stations’ Activities in the Ottoman Empire during and after the WWI**

*Hayk Martirosyan*

**Summary**

“Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient” had five main stations in the Ottoman Empire on the eve of the WWI: in Mezre, Marash, Van, Mush and Harunie, where about 2000 children had found shelter. The number of children studying in the main stations and substations of the organization, as well as in the educational institutions of the adjacent villages was one and a half times more. Three of the stations, in Mezre, Marash and Harunie, managed to survive the WWI and in 1919 these stations were put under the rule of American missionary leadership. The staff and the children of the station in Van were transferred to Tiflis. Unfortunately it was impossible to save the children of the station in Mush. Only few teachers were saved and then transferred to the station in Mezre accompanied by two European missionaries.

**Keywords:** German missionaries, mission, missionary station, main station, relief mission, orphanage, closing the missionary stations.

**Причины прекращения деятельности миссионерских станций “Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient” (“Союз немецкой помощи христианской благотворительности на Востоке”) в Османской империи во время и после Первой мировой войны**

*Այկ Մարտիրոսյան*

**Резюме**

В преддверии Первой мировой войны “Союз немецкой помощи христианской благотворительности на Востоке” имел пять основных станций в Османской империи – в Мезре, Мараше, Ване, Муше и Харуние, где содержались около 2000 детей. Число детей учебного возраста в основных станциях и миссионерских пунктах организации и в учебных заведениях близлежащих деревень было в полтора раза больше. Три станции – в Мезре, Мараше и Харуние – действовали в годы Первой мировой войны и в 1919 г. были переданы под управление американских миссионеров. Персонал и дети станции Вана были переведены в Тифлис. К сожалению, не удалось спасти детей станции Муша. Спаслись лишь несколько учителей, которые спустя некоторое время были переведены в Мезре.

**Ключевые слова:** немецкие миссионеры, миссия, миссионерская станция, основная станция, миссия помощи, сиротский приют, закрытие миссионерских станций.



## ԴԱԺԱՆՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Սուրեն Մանուկյան

Ցանկացած ցեղասպանության իրականացման համար անհրաժեշտ են մարդկանց մեծ զանգվածներ, ովքեր, ներգրավվելով սպանությունների գործընթացի մեջ, ի կատար են ածում քաղաքական էլիտայի կողմից մշակված և տեղական վերնախավի ներկայացուցիչների կողմից համակարգվող ծրագիրը:

Հասարակության տարբեր շերտերին ցեղասպանական լայնամասշտաբ գործողության մեջ ներգրավելու համար որոշակի նախապատրաստական աշխատանք է իրականացվում, որի նպատակն է շարքային քաղաքացուց հնազանդ և մոլեռանդ մարդասպան ստեղծել<sup>1</sup>:

Այս առումով շատ կարևոր է թշնամու կերպարի ստեղծման ու գոհերի անմարդկայնացման գործընթացը /dehumanization/ ոչ մարդկային հատկանիշներ վերագրելը, ինչը տեղի է ունենում տվյալ հասարակությունում հին և կարծրատիպային պատկերացումների վերհանման, ընդգծման, ինչպես նաև նոր գաղափարների մշակման և շրջանառության մեջ դնելու միջոցով:

Հասարակության գաղափարական մշակումը և թշնամու կերպարի ստեղծումը ձևավորում են ատելության մթնոլորտ, որը, սակայն, բավարար պայման չէ մարդկանց ցեղասպանական գործողությունների մեջ ներգրավելու համար: Սովորական մարդ արարածի համար սպանելը հեշտ գործողություն չէ: Մարդը դժվարությամբ է սպանություն գործում: Եվ այս հանգամանքը հաշվի առնելով՝ ցեղասպանություն ծրագրողներին գորել փաստարկներ են պետք՝ ցեղասպանական գործողությունները հիմնավորելու և իրագործման մղելու համար:

Այս հիմնավորումները ձևակերպելու՝ ռացիոնալացման ընթացքում առաջնորդները գտնում են այն «ձգանները», որոնք կրեթեն կրքերի թեժացման և կիմնավորեն ժողովրդական զանգվածների՝ սպանելու պատրաստականությունը: Ինչպես նշում է Մինետաքայի համալսարանի պրոֆեսոր Է.Վայցը. «Նրանք ցեղասպանությունը վերածում են պոպուլյար իրադարձության»<sup>2</sup>:

Հայոց ցեղասպանության ընթացքում մեծ զանգվածների ներգրավումը սպանության գործընթացի մեջ խթանելու համար օգտագործում են հետևյալ հնարքները՝ շարքային բնակչին փոխանցվում էր մեծ ու կարևոր գործողության մաս կազմելու, «պատմական իրադարձությանը» ներգրավված լինելու զգացումը, ինչպես նաև ընձեռվում էր գոհերի բարիքներին տիրանալու հնարավորությունը:

### ա/ ուտոպիական «Մեծ» գաղափարի օգտագործումը

Դաժանության հիմնավորման ձևերից մեկն ուտոպիական գաղափարի հռչակումն էր: Մարդկանց մղում են զանգվածային սպանությանը մասնակցելու՝ դրա դիմաց առաջարկե-

<sup>1</sup> Տարբեր ցեղասպանագետներ փորձել են տալ այս գործընթացի զարգացման փուլային մոդելը: Այսպես, Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության 2007-2009թթ. նախագահ, Ջորջ Մեյսոն համալսարանի պրոֆեսոր Գրեգորի Սթենտոնը առաջարկում է Ցեղասպանության զարգացման տասը աստիճանները՝ Դասակարգում /Classification/, Նշանավորում /Symbolization/, Խտրականություն /Discrimination/, Անմարդկայնացում /Dehumanization/, Կազմակերպում /Organization/, Բևեռացում /Polarization/, Նախապատրաստում /Preparation/, Հետապնդում /Persecution/, Ոչնչացում /Extinction/, Ժխտում /Denial/, մանրամասն տե՛ս Gregory H. Stanton, *The Ten Stages of Genocide* <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>.

<sup>2</sup> Eric D. Weitz, *A Century of Genocide: Utopias of Race and Nation*, Princeton University Press, 2005, p. 6.

լով դառնալ մեծ և կարևոր գործողության, հաճախ նույնիսկ ուտոպիական նախագծի մաս, ինչը նրանց կարևորության և «պատմական իրադարձության» մեջ ներգրավվածության զգացում էր տալիս:

Հայոց ցեղասպանության իրականացման ժամանակ նման գաղափարներից էր պանթուրքիզմը: Զիյա Գյոքալփի և Յուսուֆ Աքչուրայի առաջարկած գաղափարախոսությունը կոչ էր անում ոչնչացնել հայերին և այդ միջոցով ջնջել խոչընդոտը մեծ ռազմավարության ճանապարհից: Այն Մեծ Թուրանի կառուցումն էր, մի գերկայսրության, որը պետք է միավորեր բոլոր թուրքերին և թուրքախոս ժողովուրդներին Անատոլիայից մինչև Կենտրոնական Ասիա<sup>3</sup>:

Զիյա Գյոքալփի Kizilelma (Կարմիր խնձոր) դյուցազներգում կա մի հերոսուհի՝ ազնվական օրիորդ Այ Հանիմը, ով հետևյալ բառերն է արտասանում.

«Ժողովուրդը նման է պարտեզի,  
Մենք պետք է որ լինենք դրա այգեպանները  
Սկզբում պետք է կտրվեն վատ ճյուղերը՝  
Եվ հետո նոր շիվեր պատվաստվեն»<sup>4</sup>:

Ըստ պանթուրքիզմի գաղափարախոսների՝ հայերը հենց այդ վատ ճյուղերն էին, որոնցից պետք էր ազատվել նոր Թուրան կառուցելու ճանապարհին: Նրանք հայտարարվեցին «անհնազանդ տարրեր», խոչընդոտ միասնական թուրքական պետության կառուցման ծրագրերի համար, քանի որ հայերի հայրենիքը կիսում էր երևակայական պանթուրանական պետությունը՝ Փոքր Ասիայի և Միջին Արևելքի թուրքախոս ժողովուրդներին Կովկասում և Կենտրոնական Ասիայում ապրող ազգակիցներից: Հայկական սեպի վերացումն առասպելական Թուրանի արտից միշտ չէ, որ սպանություն էր ենթադրում: Սկզբնական շրջանում այն պետք է իրականացվեր մշակութային և լեզվական «թուրքացման» միջոցով<sup>5</sup>: Սակայն այս փորձերի տապալումից հետո խնդրի լուծման միջոց ընտրվեց ֆիզիկական ոչնչացումը: Այսպիսով, մեծ նախագծի իրականացման համար հայերը և մյուս քրիստոնյաները դատապարտվեցին ոչնչացման: Պատերազմն ընդամենը ցեղասպանության ծրագրի իրագործման համար հնարավորություններ ստեղծեց:

### **Բ/ «Հայրենիքի փրկության» գաղափարի շահարկումը**

Հայոց ցեղասպանության ծրագրի հեղինակներն օգտագործում էին նաև օսմանյան հայրենասիրության և իսլամական կրոնական մոլեռանդության զգացումները: Նրանք հայտարարում էին, որ հայրենիքը վտանգի մեջ է, և յուրաքանչյուր իսկական մուսուլմանի պարտքն է մասնակցել «Հայրենիքի փրկության» գործին: Դա նշանակում էր «մաքրել» երկիրը օտար, թշնամի տարրերից՝ հայերից, հույներից և ասորիներից:

Սա ժողովուրդների միջև «գրոյական գումարով խաղի»<sup>6</sup> սկզբունքների վրա հիմնված յուրատեսակ մի սոցիալ-դարվիճիստական տեսություն էր, որի համաձայն պետության և

<sup>3</sup> Norman M. Naimark, *Fires of Hatred: Ethnic Cleansing in Twentieth-Century Europe*, Harvard University Press, 2002, pp. 25–8.

<sup>4</sup> Մեջբերումը ըստ Mihran Dabag “Modern Societies And Collective Violence: The Framework Of Interdisciplinary Genocide Studies”, Graham C. Kinloch, *Genocide: Approaches, Case Studies, and Responses*, Algora Publishing, 2005, p. 50.

<sup>5</sup> Vahakn N. Dadrian, *Warrant for Genocide*, New Brunswick, N.J.: Transaction, 1999, pp. 97–98.

<sup>6</sup> Զրոյական գումարով խաղ անվանում են այն իրավիճակը, երբ մասնակիցներից մեկը որոշակի միավորների կորուստը բերում է հակառակորդի նույն չափով միավորների ձեռքբերման: Ավելին տես Ken Binmore, *Playing for real: a text on game theory*. Oxford University Press US, 2007.

ազգի գոյատևումն իբր պահանջում է Անատոլիայի ավելի մեծ հոմոգենիզացում /միատարրացում/:

Սալոնիկյան ժողովներից հետո<sup>8</sup>, ինչպես նաև Բալկանյան պատերազմներում (1912–13) ու Հյուսիսային Աֆրիկայում (1913) կրած պարտությունների ստորացման հետևանքով կայսրության հոմոգենիզացիան /միատարրացումը/ ընտրվեց իբրև «ազգային վերածննդի»/ «Հայրենիքի փրկության» հնարավորություն:

Ներքին գործերի նախարարության Հատուկ գրասենյակի ղեկավար Իսաան բեյը պնդում էր, որ այն ժամանակ, երբ ինքը Քիլիսի կայմակամ էր, Արդուլահադ Նուրի բեյը Կ.Պոլսից Հալեպ էր փոխանցում, որ տեղահանության նպատակն էր ոչնչացնել [հայերին], և ավելացնում, սակայն, որ նա անձամբ էր ստանում Թալեաթ բեյի [հայերի] ոչնչացման մասին հրամանները, և նա [Թալեաթը] փորձում էր համոզել, որ սա է երկրի փրկությունը<sup>9</sup>:

Հայերի ժողովրդագրական կշիռը նվազեցնելու փորձերը երկար պատմություն ունեն կայսրության գոյության ամբողջ ընթացքում: Օսմանյան կառավարիչները հետևողականորեն կեղծում էին մարդահամարները՝ ցույց տալու համար, որ հայկական բնակչությունն աննշան փոքրամասնություն է, իսկ Հայկական հարցը՝ արհեստական ստեղծված խնդիր: Պարբերական կոտորածները, հայկական բնակավայրերում Կովկասից և Բալկաններից եկող մուհաջիրների բնակեցումը, ինչպես նաև բռնի թուրքացումը նույն նպատակն էին հետապնդում: Միևնույն ժամանակ շարունակվում էր Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի /թուրքական տերմինաբանությամբ՝ Անատոլիայի/ փոխակերպումը «Թուրքական հայրենիքի»:

Վերջին գործընթացն ուժգնանում էր այն հանգամանքով, որ երիտթուրք առաջնորդներից, ինչպես նաև Հայոց ցեղասպանության անմիջական կազմակերպիչներից շատերն ազգությամբ թուրքեր էին: Արսեն Ավագյանը շեշտադրում է Թեշքիլաթի Մահսուսեի առաջնորդների չերքեզական արմատները<sup>10</sup>: Ավելին, երիտթուրք առաջնորդներից շատերը ներգաղթել էին Բալկաններից և գտնվում էին նոր հայրենիքի փնտրտուքում: Նրանք ընտրեցին Անատոլիան<sup>11</sup>, և Արևմտյան Հայաստանի մաքրագերծումը իդեալականորեն համապատասխանում էր նրանց նպատակներին:

Իսկ Բալկաններում և Կովկասում քրիստոնյաների հետ փոխհարաբերությունների նրանց դառը փորձառությունը հայերի նկատմամբ ատելություն էր ձևավորում:

Օրինակ, նույնիսկ Ջեյթունի չերքեզները և չեչենները, ովքեր արտագաղթել էին Կովկա-

<sup>7</sup> Ronald Grigor Suny, “Writing Genocide: The Fate of the Ottoman Armenians”, *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, edited by Ronald Grigor Suny, Fatma Muge Goccek, Norman M. Naimark, Oxford University Press, USA, 2011, pp. 34–35.

<sup>8</sup> Ըստ մի շարք գիտնականների՝ հենց Սալոնիկում տեղի ունեցած Իթթիհատի գերագույն մարմնի երկու ժողովներում կայացվեց հայերի ֆիզիկական բնաջնջման որոշումը:

<sup>9</sup> Երիտթուրքերի դատավարության մեղադրական ակտը, 10 Реджеб 1337 [12 апреля 1919] ЦГИА Арм. ССР, ф. 200, оп. 1, д. 237, л. 51–64 ըստ *Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов* (ред. М.Г. Нерсисян, Ереван, 1983, с. 561).

<sup>10</sup> Հատուկ կազմակերպությունն իր գոյության ընթացքում ունեցել է երեք ղեկավար, և նրանք բոլորը ազգությամբ չերքեզներ էին՝ Սուլեյման Ասրերին (ստեղծման պահից մինչև 1915թ. ապրիլի 14-ը), Ալի Բաշամփան (1915, մայիսի 24-ից – 1918 թ. հոկտեմբերի 31-ը), Հյուսամեթին Էրթուրքը (1918 թ. դեկտեմբերի 5-ը) տե՛ս Արսեն Ավաքյան, *“Геноцид армян: механизмы принятия и исполнения решений”*, Ереван, Музей-институт Геноцида армян, 2013:

<sup>11</sup> Երիտթուրքական հեղափոխությունից հետո Անատոլիայի նկատմամբ աճող հետաքրքրության մասին տե՛ս Erik J. Zürcher, *The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey*, I. B. Tauris, 2010, pp. 120–121:

սից ավելի քան 50 տարի առաջ, ջերմնառնդ կերպով ներգրավվեցին սպանության գործընթացի մեջ: Նրանք վրեժ էին լուծում իրենց գեթունցի հարևաններից, ում նույնացնում էին իրենց վտարած քրիստոնյաների հետ<sup>12</sup>: Միաժամանակ նրանք մրցակցում էին տեղաբնակների հետ հողային ռեսուրսների և ունեցվածքի համար: Հետագոտող Ուգուր Ունգորը, օրինակ, նկարագրում է՝ ինչպես տեղահանված հայերից հետո մնացած դպրոցական նստարանները, գրատախտակները, դասագրքերը և նույնիսկ թղթերն ու գրիչները Լքված գույքի հանձնաժողովների տեղական մասնաճյուղերի միջոցով փոխանցվում էին նորեկներին<sup>13</sup>:

Եվ այս ամենը քողարկվում էր «Հայրենիքի փրկության» կարգախոսով: Պատահական չէ, որ հենց այս բառերն էին օգտագործում հետագայում ոճրագործները՝ իրենց հանցագործությունն արդարացնելու համար: Այսպես, Դիարբեքիի մարդասպան նահանգապետ Մեհմեդ Ռեշիդն իր հուշերում արդարացնում էր հայերի տեղահանության որոշումը՝ փորձելով ժխտել իր դեմ առաջադրվող մեղադրանքները՝ բացատրելով իր գործողությունները «Հայրենիքին մատուցվող ծառայությամբ»<sup>14</sup>:

#### զ/ տնտեսական օգուտներ ստանալու հնարավորություն

Եթե Մեծ Թուրանի ստեղծման և Հայրենիքի փրկության գաղափարներն ընդունված հիմնավորումներն էին ցեղասպանության բարձրաստիճան ոճրագործների համար /որոշում կայացնողների և տեղական կազմակերպիչների/, ապա տնտեսական օգուտներ քաղելու հնարավորությունը չափազանց հրապուրիչ էր կայսրության մուսուլման բնակչության բոլոր շերտերի համար:

Պատմաբան Ադամ Ջոնսը ցեղասպանություն իրականացնողին խրախուսող էական հոգեբանական տարր է նշում «ազահությունը»<sup>15</sup>: Հայերի ունեցվածքին տիրանալու ձգտումը և ցեղասպանությանն ուղեկցող հսկայական չափերի կողոպուտը դառնում էին հայ բնակչության ոչնչացման ռացիոնալացման հիմնական բաղադրիչներից: Հայկական ունեցվածքը, գույքը, ապրանքները և նյութեղենը վերաբաշխվեցին կայսրության մուսուլման բնակչության միջև:

Իհարկե, կողոպուտի հիմնական բաղադրիչը հենց հարստանալու հնարավորությունն էր, սակայն ցեղասպանության հիմնական կազմակերպիչները փորձում էին «Մեծ գաղափար» ներդնել նույնիսկ այս թալանի մեջ: «Ազգային (թուրքական)» տնտեսության ստեղծման գաղափարը զարգացվեց Գյոքալփի և Աքչուրայի կողմից: Աքչուրան հավատում էր, որ «Եթե թուրքերը ձախողվեն բուրժուական դասի ստեղծման մեջ [...], միայն գյուղացիներից և պաշտոնյաներից կազմված թուրքական հասարակության գոյատևման հնարավորությունները շատ փոքր են»<sup>16</sup>:

<sup>12</sup> Արամյան, «Շահեզան դեղեկագիր», էջ 853 ըստ Aram Arkun, “Zeytun and the Commencement of the Armenian Genocide”, *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, նշվ. աշխ., էջ 238.

<sup>13</sup> BOA, DH.ŞFR 54/331, İAMM to Diyarbakır, July 7, 1915 ըստ Uğur Ümit Üngör, “Turkey for the Turks” Demographic Engineering in Eastern Anatolia, 1914–1945”, *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, նշվ. աշխ., էջ 299.

<sup>14</sup> Dr. Reşid'in Bey'in Hatıraları. “Sürgünden İhtihara”, Yayına Hazırlayan Ahmet Mehmetefendioğlu, İstanbul, ARBA, 1993. s. 43-70 ըստ Арсен Авакян, նշվ. աշխ.:

<sup>15</sup> Մյուս բաղադրիչներն են մարցիսիզմը, վախը և ստորացումը (Adam Jones, *Genocide: A Comprehensive Introduction*, Routledge, 2010, p. 262.

<sup>16</sup> Türk Yurdu, no. 140, Aug. 12, 1333/Aug. 25, 1916, 2521ff ըստ Gerard J. Libaridian, “What was Revolutionary about Armenian Revolutionist Parties in the Ottoman Empire?”, *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, նշվ. աշխ., էջ 124:

Մինչև երիտթուրքական հեղափոխությունը տնտեսության ամբողջ ճյուղեր՝ արտաքին առևտուր, բանկային գործ, ֆինանսական գործարքների ոլորտ, շատ արհեստներ գտնվում էին այլադավան փոքրամասնությունների ներկայացուցիչների ձեռքում<sup>17</sup>։ Թուրքերի մուտքն օսմանյան տնտեսության այդ ոլորտներ, «ազգային տնտեսության» համապատասխանեցումը մուսուլման արտադրողների շահերին իրականացվում էին բռնի մեթոդներով։ Այն արտահայտվում էր հայկական խանութների բոյկոտով, հայ դերձակներին և կոշկակարներին թուրք աշակերտներ վերցնելու պարտադրանքով։ 1913թ. Բալկանյան պատերազմի տարիներին բնակչությանը խորհուրդ էր տրվում գնել ապրանքներ միայն թուրք վաճառականներից, քանի որ քրիստոնյաների ապրանքները պիղծ հայտարարվեցին։ Այս ամենն ուղեկցվում էր բանկերի կողմից վարկերի տրամադրման մերժումով և հայ արտահանողների նկատմամբ կիրառվող վարչական ճնշմամբ։

Իթթիհադականները նույնիսկ խորհուրդ էին տալիս չվերադարձնել հայերից վերցված պարտքերը և չմշակել հայկական հողերը։ Այսպես, Այնթափում հայտարարվեց, որ դա անհիմաստ է անել, քանի որ «շուտով, մի հայ անգամ չի մնալու Այնթափում»<sup>18</sup>։

Հայոց ցեղասպանության հետևանքով առաջացած թուրքական բուրժուազիան իր նախնական կապիտալը կուտակեց հայկական ունեցվածքի ուղղակի բռնագրավման միջոցով։

«Վարչական ցուցումներ պատերազմի և արտակարգ քաղաքական պայմանների պատճառով տեղահանվող հայերի լքյալ գույքի վերաբերյալ» դեկրետը հրապարակվեց 1915թ. մայիսին և թույլ էր տալիս թուրքական պաշտոնյաներին տիրանալ հայերի ունեցվածքին<sup>19</sup>։ Նրանք ձեռք գցեցին հարուստ հայերի անշարժ գույքին։ Հասարակ մարդիկ նույնպես ձեռքբերումներ ունեցան՝ թալանելով իրենց հայ հարևանների տները և շարժական գույքը<sup>20</sup>։

Տեղահանված հայերի քարավանների մեկնելուց հետո հայկական թաղամասերը դառնում են հսկայական շուկաներ։ Հայկական ունեցվածքը (տների կահույքը, անկողնային պարագաները, տարատեսակ կահ-կարասին և ընդհանրապես տների կամ խանութների ամբողջ ունեցվածքը) վաճառվում էր աներևակայելի ցածր գներով<sup>21</sup>։

Իշխանությունները կազմեցին հանձնախմբեր՝ այդ ապրանքը ամենաէժան գնով վաճառելու համար, ինչը սովորաբար արվում էր այն դեպքերում, երբ տվյալ գույքի կամ ունեցվածքի սեփականատերն արդեն մահացել էր, սակայն մի տարբերությամբ, որ այս դեպքում գումարները ոչ թե տրվում էին հանգուցյալի ժառանգներին, այլ գնում էին թուրքական զանձապետարան։

Ականատես Ֆայեզ ալ-Ղուսեյնը գրում է. «Կարելի էր տեսնել երեսուն փառունդ արժո-

<sup>17</sup> Մանրամասն տե՛ս Инджикян О. Г., Буржуазия Османской империи, Академия наук Армянской ССР, Ереван, 1977.

<sup>18</sup> BNU/Fonds A. Andonian, P.J.1/3, file 4, Ayntab, “The deportation of Armenians in Ayntab,” f 1r-v, ըստ Raymond Kévorkian, *նշվ. աշխ.*, էջ 605.

<sup>19</sup> Dickran Kouymjian, *Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process*, [http://armenianstudies.csufresno.edu/faculty/kouymjian/articles/confiscation.htm#foot\\_out\\_01](http://armenianstudies.csufresno.edu/faculty/kouymjian/articles/confiscation.htm#foot_out_01).

<sup>20</sup> Մանրամասն տե՛ս Uğur Ümit Üngör, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, Continuum, 2011.

<sup>21</sup> Հետաքրքիր տեղեկություն է պարունակում Անգորայից վերապրող Մանուկ Մանուկյանի վկայությունն այն մասին, որ քաղաքի տարբեր մուտքերի վրա տեղադրվեցին անցակետեր՝ կանխելու համար օտարների մուտքը քաղաք և մասնակցությունը հայկական ունեցվածքի աճուրդներին, ինչի հետևանքով տեղացի թուրքերը ցածր գներով ձեռք բերեցին ցանկալի ապրանքները (BNU/Fonds A. Andonian, P.J.1/3, file 7, Angora, report by Manug Manugian, 28 December 1918, f 12, APC/APJ, PCI Bureau, Թ՝ 426, ըստ Raymond Kévorkian, *նշվ. աշխ.*, էջ 500:

ղությանը կարպետ, որ վաճառվում էր հինգով, չորս փառնդ արժողությամբ տղամարդու կոստյում, որ վաճառվում էր երկու մեջիդիեով և այդպես շարունակ: Սա հատկապես ակնառու էր երաժշտական գործիքների պարագայում՝ դաշնամուր և այլն, որոնք ընդհանրապես արժեք չունեին:

Բոլոր փողերը և արժեքները հավաքվում էին ժանդարմների հրամանատարի և վալի Ռեշիդ բեյի կողմից: Վերջինս դրանք վերցրել էր իր հետ, երբ գնում էր Կ.Պոլիս, և փոխանցել Թալեաթ բեյին...»<sup>22</sup>:

Պատկերացնելու համար կողոպուտի աստիճանը՝ բավական է մի քանի օրինակ բերել: Հուլուսի բեյի հեծելավաշտը, որը դեպի Կանգալ էր ուղեկցում տեղահանվող քարավանը, երեք վագոն լցրել էր ոսկեղենով և այլ թանկարժեք իրերով: Գողոնի մի մասը հասավ տեղական կառավարիչներին<sup>23</sup>: Տրապիզոնի նահանգապետը քաղաքը ռուսների կողմից գրավվելուց առաջ տեղափոխեց հայերի ինչքով լցված քառասուներկու բեռնանավ<sup>24</sup>:

Այսպիսով, ռացիոնալացումը կարևոր դեր է խաղացել Հայոց ցեղասպանության տարիներին ոճրագործների մասնակցությունն ապահովելու գործում: Արդեն իսկ հայերի նկատմամբ ատելությամբ լցված զանգվածները (ատելությունը ձևավորվել էր հին կարծրատիպերի հիման վրա իրականացվող նպատակաուղղված գաղափարական մշակման միջոցով) ստանում էին ուղղակի բռնություն և սպանություն իրականացնելու հիմնավորում: Այն քողարկվում էր վեհ, հաճախ իդեալիստական «Հայրենիքի փրկություն», «բոլոր թուրքալեզու ժողովուրդների մեկ միասնական պետության մեջ միավորման» և «Ազգային տնտեսության ստեղծման» գաղափարներով, սակայն իր հիմքում ընդամենը զանգվածային կոտորածները և կողոպուտն իրականացնելու ծրագիրն ուներ:

Ռացիոնալացումը միաժամանակ օգնեց ոճրագործներին հետագայում արդարացնել իրենց գործողությունները՝ քողարկելով դրանք վերոհիշյալ նպատակներով:

### **Դաժանության ռացիոնալացումը Հայոց ցեղասպանության տարիներին**

*Սուրեն Մանուկյան*

#### **Ամփոփում**

Ցանկացած ցեղասպանության իրականացման համար անհրաժեշտ են հասարակ մարդկանց մեծ զանգվածներ, ովքեր, ներգրավվելով սպանությունների գործընթացի մեջ, ի կատար են ածում քաղաքական էլիտայի կողմից մշակված և տեղական վերնախավի ներկայացուցիչների կողմից համակարգվող ծրագիրը:

Այս մարդասպանների հավաքագրման գործընթացը տեղի է ունենում հին, կարծրատիպային պատկերացումների վերհանման, ընդգծման, ինչպես նաև նոր գաղափարների մշակման միջոցով թշնամու կերպարի ստեղծման ու զոհերի անմարդկայնացման /*dehumanization*/ միջոցով, ինչպես նաև ռացիոնալացման՝ դաժանության հիմնավորման, օգտագործումով: Հայոց ցեղասպանության ընթացքում ռացիոնալացման համար օգտա-

<sup>22</sup> Fâiz al-Ghusayn, *Martyred Armenia*, London, C. A. Pearson, Ltd., 1917, pp. 32-33.

<sup>23</sup> APC/APJ, PCI Bureau, U 317. ըստ Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History*, I. B. Tauris, 2011, p. 461.

<sup>24</sup> Նիյազիի հարցաքննությունը Տրապիզոնի դատարանի 6-րդ նիստի ժամանակ, 1919 թ. ապրիլի 7: «Նոր կյանք», համար 168, ապրիլի 8, 1919, La Renaissance, no. 109, 8 April 1919 ըստ Raymond Kévorkian, *նշվ. աշխ.*, էջ 479:

գործվում էին հետևյալ հնարքները. շարքային բնակիչին փոխանցվում էր մեծ ու կարևոր գործողության մաս կազմելու, «պատմական իրադարձությանը» ներգրավված լինելու զգացումը, շահարկվում էր «Հայրենիքի փրկության» գաղափարը, ինչպես նաև ընձեռվում էր զոհերի բարիքներին տիրանալու՝ հայերի ունեցվածքը թալանելու հնարավորություն:

**Քանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, զանգվածային մասնակցություն, անմարդկայնացում, դաժանության ռացիոնալացում:

## **Rationalization of Cruelty during the Armenian Genocide**

*Suren Manukyan*

### **Summary**

Any genocide needs great masses of ordinary people who will involve in the process of killing and implement the premeditated plan of extermination, created by the political elite and organized by its local representatives.

The conscription of murderers provided by articulation and stress of old “cultural” stereotypes, development of new ideas to create an image of an enemy through social indoctrination, dehumanization of victims and rationalization of cruelty.

During the Armenian genocide the following methods of cruelty rationalization were used: the people were provided with a sense of taking part in a “historical event”, the usage of the idea of “saving the homeland” as well as the possibility to plunder and possessions of victims.

**Keywords:** Armenian Genocide, mass participation, dehumanization, rationalization of cruelty.

## **Рационализация жестокости в годы Геноцида армян**

*Сурен Манукян*

### **Резюме**

Для осуществления любого геноцида необходимы большие массы простых людей, которые вовлекаясь в процесс убийства, приводят в исполнение программу, разработанную политической элитой и скоординированную представителями местной верхушки.

Процесс вовлечения в процесс убийств происходит при помощи выведения на первый план, подчеркивания старых “культурных” стереотипов и разработки новых идей по созданию образа врага и дегуманизации жертвы, а также использования рационализации жестокости. В течение Геноцида армян использовались следующие средства рационализации – обывателю передавалось чувство сопричастности с большим и важным мероприятием, чувство вовлеченности в “историческое событие”, эксплуатировалась идея “спасения родины”, а также предоставлялась возможность для грабежа и присвоения имущества жертвы.

**Ключевые слова:** Геноцид армян, массовое участие, дегуманизация, рационализация жестокости.



**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ «ՇԱՐՔԱՅԻՆ» ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԸ.  
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆ  
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հասմիկ Գրիգորյան

Յեղասպանագիտության մեջ գերակայող տեսակետներից մեկի համաձայն՝ զանգվածային կոտորածներ կամ ցեղասպանություն իրականացնելու համար անհրաժեշտ է հասարակության անմիջական մասնակցությունը կամ առնվազն ակտիվ աջակցությունը: Այս հանգամանքը ենթադրում է զանգվածային կոտորածների կազմակերպումն ու հրահրումը կանխարգելելու համար հասարակության տարբեր սոցիալական խմբերի համոզմունքների, մտայնությունների, բռնություններին մասնակցելու նրանց նպատակների ու շարժառիթների ուսումնասիրության անհրաժեշտությունը<sup>1</sup>:

Ընդունված է համարել, որ ցեղասպանության ամենախոցելի զոհերը երեխաներն են<sup>2</sup>: Զանգվածային կոտորածների ու ցեղասպանության ժամանակ երեխաները զոհ են դառնում տարաբնույթ հիվանդությունների, սպանությունների, սեռական և այլ բռնությունների<sup>3</sup>:

Հարկ է նշել, որ երեխաների գործառնությունները որպես ցեղասպանության «հանցագործների» ավելի քիչ է ուսումնասիրված<sup>4</sup>: Յեղասպանության գործընթացում երեխաների մասնակցության խնդիրը հիմնականում լուսաբանվում է երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում՝ հղելով Միջազգային քրեական իրավունքին, ինչպես նաև Ռուանդայի ու նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարաններին: Երեխաների ներգրավվածության խնդիրը պատերազմական և մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություններում հիմնականում դիտարկվում է ռազմական և ռազմականացված ինստիտուտների մեջ անչափահասներին ընդգրկելու անընդունելիության տեսանկյունից: Երեխաներին՝ որպես զինվորների, օգտագործելու փորձը մարդկությանը հայտնի է դեռ վաղ անցյալից, որի միտումն Արևմուտքում սկսել է նվազել 20-րդ դարի կեսից, հատկապես, երբ պարտադիր զինվորական ծառայությունը փոխարինվեց մասնագիտացված զին-

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Valentino B., *Final Solutions: Mass Killing and Genocide in the Twentieth Century*, Ithaca and London, 2004, p. 31.

<sup>2</sup> Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան 1989 թ. ընդունել է, որ երեխաներ են համարվում մինչև 18 տարեկանները:

<sup>3</sup> Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանության 800.000 զոհերից 300.000-ը երեխաներ էին: Այս մասին տե՛ս [www.unicef.com](http://www.unicef.com). 11. 07. 2013: Հրեաների Հոլոքոստի ժամանակ զոհվել է 1,5 միլիոն երեխա: Տե՛ս [www.annefrank.dk](http://www.annefrank.dk). 11. 07. 2013: Հայոց ցեղասպանության տարիներին հազարավոր երեխաներ զոհ են դարձել հիվանդությունների, ողջակիզման, խեղդամահության, սեռական և այլ բռնությունների: Այս մասին մանրամասն տե՛ս Dadrian V., *Children as Victims of Genocide: The Armenian Case. The Issues of The History and Historiography of The Armenian Genocide*, 2003, No. 7, pp. 3-18.

<sup>4</sup> Սիեռա Լեոնեում երեխաները գործու մասնակցություն են ունեցել քաղաքացիական հասարակության ահաբեկչությանը՝ ընդհուպ մարդկանց վերջույթների անդամահատմանը: Մանրամասն տե՛ս International Criminal Justice and Children. UNICEF Innocenti Research Centre, 2002, p. 33, [www.unicef-icdc.org](http://www.unicef-icdc.org) Ռուանդայում հազարավոր երեխաներ օգտագործվել են որպես ցեղասպանության և պատերազմի գործիք: Որոշ երեխաներ միացել են թույսիների ոչնչացման գործողություններին, մյուսները ներառվել են «Ռուանդայի հայրենասիրական ճակատ» (Rwandan Patriotic Front-RPF) քաղաքական կուսակցության մեջ, ինչպես նաև՝ բանակի կամ տեղական ինքնապաշտպանական ուժերի, Ռուանդայի ազատության բանակի մեջ: Ռուանդայում որոշ երեխաներ ակտիվ մասնակցություն են ունեցել ցեղասպանությանը՝ ներգրավվելով մասնակցությանը (ռազմականացված կազմակերպություն) կազմի մեջ, մնացած երեխաներն ու պատանիները գործակցել են ընդհանուր քաղաքացիական հասարակության մասնակցության համատեքստում: Մանրամասն տե՛ս *Lasting Wounds: Consequences of Genocide and War on Rwanda's Children*. Human Rights Watch, 2003, p. 13. [www.reworld.org](http://www.reworld.org).



ծառայությամբ<sup>5</sup>: Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրությունում գոյություն ուներ դեմոկրատիկ կոչվող հարկի մի տեսակ, որի ժամանակ 8-20 տարեկան տղաներին բռնի կերպով հավաքագրել են եմիգրական կանոնավոր բանակի մեջ<sup>6</sup>, ինչը լեի իրավաբան Ռաֆայել Լեմկին կոդմից ձևակերպված սահմանման համաձայն ցեղասպանական գործողություն է<sup>7</sup>:

Human Rights Watch կազմակերպությունը 1995-2002թթ. հետազոտություն է իրականացրել՝ հիմնվելով միջազգային և տեղական կազմակերպությունների, երեխաների իրավունքների փորձագետների, Միավորված ազգերի կազմակերպության երեխաների ֆոնդի (UNICEF) և Ռուանդայի իշխանության պաշտոնյա անձանց հետ անցկացրած հարցազրույցների վրա: Կազմակերպությունը «ոճրագործ երեխաներին» դիտարկում է միջազգային օրենքով՝ միտում ունենալով կանխարգելել երեխաների ներգրավումը ռազմական և ռազմականացված ինստիտուտների մեջ, ինչպես նաև մասնակցությունը մարդկության դեմ գործադրվող բռնություններին: Սակայն, նույնիսկ այս պարագայում UNICEF-ը երեխաներին ավելի շատ դիտարկում է որպես զոհ, ովքեր շահագործվում են իշխանության կողմից, քան որպես ոճրագործ<sup>8</sup>: Իսկ «Երեխաների իրավունքների կոմիտեն» ընդգծում է, որ ցեղասպանությանը, ռազմական կամ մարդկության դեմ այլ հանցագործությունների մասնակցած երեխաներին պետք չէ դիտարկել առանձին կտրվածքով, և նրանց նկատմամբ պետք է կիրառել անչափահասների նկատմամբ գործող ընդհանուր սկզբունքները<sup>9</sup>:

Միջազգային իրավունքի համաձայն՝ հանցանք գործելու պահին 14 տարեկանից ցածր երեխաներն իրավական հետապնդման և պատասխանատվության չեն ենթարկվում: Չնայած այս հանգամանքին՝ Ռուանդայում գրեթե 5.000 անչափահասներ՝ 14-18 տարեկան, այդ թվում՝ նաև 14 տարեկանից ցածր, ձերբակալվել են ցեղասպանությանը մասնակցելու մեղադրանքով, որոնցից 4.000-ը UNICEF-ի 2002թ. տվյալներով դեռևս բանտարկված էին<sup>10</sup>:

\* \* \*

Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության համատեքստում հասարակության մասնակցության խնդրի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ցեղասպանություն իրականացնող «մարդկային ռեսուրսը» համալրում են նույնիսկ այնպիսի խմբեր, ինչպիսիք են՝ կանայք ու երեխաները, ովքեր իրենց դաժանությամբ չեն գիջում մեծահասակներին: Այս առումով հետաքրքրական է, թե ինչու և ինչպես են երեխաներն ընդգրկվում զանգվածային բռնությունների մեջ և ինչ գործառնությանն առանձնահատկություններ ունեն:

«Հանցագործ երեխաների» խնդիրն այլ ժողովուրդների ցեղասպանությունների համատեքստում դիտարկելուն նպաստում է այն հանգամանքը, որ ցեղասպանության հարցով կազմվել են միջազգային դատարաններ, տեղի են ունեցել հարցաքննություններ հենց ոճրագործների հետ, ինչն ուսումնասիրության լայն դաշտ է ստեղծում մասնագետների համար:

Հայոց ցեղասպանության պարագայում միջազգային դատավարության և դրա հետ կապված գործընթացների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում առավել հստակ ներկայացնելու «ոճրագործ երեխաների» գործառնությանն առանձնահատկությո-

<sup>5</sup> Rosen D., *Child Soldiers*, California, 2012, pp. 1-4.

<sup>6</sup> Զուլպյան Մ., «Դեմոկրատիկ»-ն (մանկահավաք) Օսմանյան կայսրության մեջ՝ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, *ՊԲՀ*, 1959, թիվ 2-3 (5-6), էջ 247-256:

<sup>7</sup> Մանրամասն տե՛ս Lemkin R., *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress*, Oxford University Press, 2008.

<sup>8</sup> *International Criminal Justice and Children*, pp. 33-34.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>10</sup> *Lasting Wounds: Consequences of Genocide*, p. 18.

յունները, տարիքային սանդղակը, դրդապատճառներն ու նպատակները: Հետևաբար, ուսումնասիրության շրջանակներում հիմնվել ենք ցեղասպանության վերապրողների, օտարերկրյա պաշտոնյաների ու ականատեսների հուշագրություններում, զեկուցագրերում տեղ գտած վկայությունների վրա:

Այդ վկայությունների համաձայն՝ Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած զանգվածային կոտորածների ու Հայոց ցեղասպանության համատեքստում մոտուլման<sup>11</sup> «ոճրագործ երեխաների» դերային առանձնահատկությունները կարող ենք դասակարգել հետևյալ կերպ՝ *դեռահասներ, ովքեր հալածում էին իրենց հասակակից հայ երեխաներին* (միջխմբային բախում հայ և մոտուլման երեխաների միջև), *մեծահասակներին նմանակող երեխաներ, սպանությունների անմիջական մասնակիցներ և երեխաներ, ովքեր պղծում էին հայերի դիակները*:

**• *Դեռահասներ, ովքեր հալածում էին իրենց հասակակից հայ երեխաներին (միջխմբային բախում հայ և մոտուլման երեխաների միջև)***

Հայոց ցեղասպանությունը վերապրած երեխաները հետագայում գրառած հուշագրություններում անդրադառնում են մոտուլման երեխաների հետ իրենց ունեցած փոխհարաբերություններին: Մոտուլման երեխաները հալածանքի են ենթարկել ոչ միայն իրենց հասակակից տղաներին, այլև աղջիկներին:

Պեհեսնիհայ Վահան Համամջյանը պատմում է, որ կոտորածները սկսելու նախօրեին իրենք խուսափել են թուրքական թաղամասերով անցնելուց, քանի որ թուրք երեխաները «մեռցնելու աստիճան» ծեծում էին հայ տղաներին, ովքեր ընկնում էին իրենց ձեռքը<sup>12</sup>:

Լինում էին նաև դեպքեր, երբ մի քանի թուրք երիտասարդներ որևէ պատրվակով հայկական թաղերից դուրս հայ երիտասարդի էին ծեծում ու անպատիժ մնում: Վերապրող Ռուբեն Խաչատրյանը<sup>13</sup> պատմում է. «Այդպես պատահեց Գրիգոր քեռուս տղայի՝ Պողոսի հետ, ով հայկական թաղի տներից մետք դեպի հարավ, ծառի տակ նստած ժամանակ հանկարծ հայտնվում են թուրք երիտասարդներ, նրան ծեծում և հեռանում: Ես այս ամենի ականատեսն էի: Նույնը պատահել էր նրա եղբոր՝ Հովհաննեսի հետ»<sup>14</sup>: Հաճախ թուրք երեխաները հալածում էին բռնագաղթերից հետո ընտանիքներում մնացած անձնող հայ որբերին: Տասներկուամյա Կարապետ Ջարիֆյանի՝ Խարբերդի գավառի Մեզրե գյուղաքաղաքի կոտորածների մասին վկայության համաձայն. «Նախապես թուրքերը լաւ էին վերաբերում հայերի հետ, բայց մի որոշ ժամանակից յետոյ սկսեցին վատանալ, այնպես, որ հայ երեխաները երբ դուրս էին գալիս, թուրք երեխաներից ծեծվում էին և հայիտյանքներ լսում»<sup>15</sup>: Հայոց ցեղասպանությունը վերապրած այնթապցի Մարիցա Թուրունճյանը<sup>16</sup> իր

<sup>11</sup> Այս եզրի մեջ ընդգրկել ենք գերազանցապես թուրք և քուրդ երեխաներին: Սույն հոդվածում այս ձևակերպումն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ սկզբնաղբյուրում հստակեցված չէ ոճրագործություններ իրականացնողների ազգային պատկանելությունը:

<sup>12</sup> Թէքէնան Ա., *Դրուագներ ապրիլեան Մեծ եղեռնին: Պեհեսնիհայությունեան գողգոթան (1914-1918)*, Պէյրուք, Լա Ֆոդո-Բրես, 1956, էջ 60:

<sup>13</sup> Ծնվել է 1903 թվականին Դերջան գավառի Բագառիճ ավանում:

<sup>14</sup> Խաչատրյան Ռ., *Եղեռնի հավերժ ծխացող հուշեր*, Երևան, Ռուբին Պրինտ, 2002, էջ 9: Հուշագրությունը գրի է առնվել կենսաթոշակի անցնելուց հետո, հավանաբար 1960-ական թվականներին:

<sup>15</sup> *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Մերաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք*, Երևան, Զանգակ-97, 2012, էջ 328:

<sup>16</sup> Հեղինակը Դեր-Ջորում ամուսնացել է ոստիկանապետ Ալի էֆենդու հետ, ով կնոջը պատմել է սույն պատմությունը:

հուշերում պատմում է ամուսնու տեսածը. «Մի օր գիշերով քաղաքին մեջ պտտած աստեն կը տեսնե՛ որ խումբ մը պատանիներ պարտեզներու մեջ կը հալածե՛ին հայ աղջիկ մը որ իբր հագուստ կը կրէր իր վրայ ցորենի պարկ մը...»<sup>17</sup>:

Յոգզաթ գավառի Բումտիկին գյուղում ծնված Գևորգ Յափուջյանը վերհիշում է մի միջադեպ, որը պատահել էր, երբ ինքը ծառայության էր քրդական ընտանիքում. «Արևը մոտենում էր իր մայրամուտին, որ ինձ ասացին հեռացած տավարը թեքեմ դեպի գյուղի կողմը և ես բաժանվելով նրանցից 200-300 մետր տարածություն մի փոքր բլուրի ետև, նրանց քշեցի դեպի ծառաների կողմը և այդ միջոցին հանկարծ շատ մոտիկ տարածությունից հայտնվեցին երկու թուրք պատանիներ, որ կլինեին 14-15 տարեկան և ես նրանցից որևէ վտանգ չսպասելով փախուստի չդիմեցի: Սակայն նրանք մոտենալով ինձ, մեկը մյուսին «Էյսան, բռնիր այս քեաֆիրին» ու երկուսով հարձակվեցին վրաս»<sup>18</sup>:

### • Մեծահասակներին նմանակող երեխաներ

Մուսուլման երեխաները, նմանակելով մեծահասակների վարքը, արտահայտում էին իրենց վերաբերմունքը քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ, ինչը հաճախ դրսևորվում էր զոհերի հանդեպ ցուցաբերված ծաղրանքի ձևով:

Վերապրողներից մեկը՝ վեցամյա Բյուզանդ Ճամբազյանը<sup>19</sup>, պատմում է. «Կիրակի մը, Մարաշի մեջ, եկեղեցիէն որբանոց կը վերադառնայինք: Ճամբուն վրայ թիւրք մանչուկ մը, բաւականին լայն շրջագծով, փոս մը կը փոռէր: Մեր վարժապետներէն, Խարբերդցի ազնիւ հայ մը, պ. Նշանը, հարցոց թէ ինչո՞ւ կը բանար այդ փոսը: Թիւրք մանչուկը համարձակութեամբ պատասխանեց՝ այս փոսը կը բանամ որ կեավորները մեջը իյնան»: Համաձայն վերապրողի վկայության՝ այն հարցին, թե գլավոր կոչվածները նրա եղբայրները չեն, թուրք երեխան պատասխանել է. «Ո՛չ: Ես թիւրք եմ, իսկ անոնք կեավոր»<sup>20</sup>: Բաղդադի երկաթուղու շինարարության ընկերության բժիշկներից մեկը՝ դոկտոր Հրեշտակյանը, Մարդինի աղբյուրի մոտ հանդիպել էր մերկ կանանց: Նրանք տերևներով ծածկել էին իրենց մերկությունը և ձեռքերով բռնել տերևները: Դոկտոր Հրեշտակյանը վկայում է, որ մուսուլման տղաները փայտերով խփում էին կանանց ձեռքերին, որպեսզի բաց թողնեն, և բղավում էին՝ թո՛ւ, թո՛ւ, էրմեն<sup>21</sup>:

Խարբերդում աշխատանքային գործունեություն ծավալած դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենը, նկարագրելով Մեզրե գնացող թուրք և քուրդ մարդկանց, գրում է. «Երբեք տեսած չեմ կատաղի եւ վայրի տեսք ունեցող նման մարդիկ: Նոյնիսկ իրենց պզտիկ տղաքը, ինքզինքնուն հասուն մարդու ձեւեր կու տային ու մեր ետեւէն կը պռռային՝ կեավո՛ր, քրիստոնեայ շուն»<sup>22</sup>: Հեղինակը պատմում է, որ թուրք տղաներն ու երիտասարդները հավաքվում և զվարճանում էին՝ հայերի չարչարանքները դիտելով: «Այսպիսի տոսկալի դէպք տակաւին տե-

<sup>17</sup> Աղեւտն վերապրողներ, *Տէր-Զօր*, Փարիզ, Պ. Էլէկեան, 1955, էջ 147:

<sup>18</sup> Յափուջյան Գ., *Հուշեր: Մահ եւ վերածնունդ*, Զեռագիր հուշեր, ՀՅԺԻ, թղթապանակ 169, էջ 89:

<sup>19</sup> Ծնվել է 1909 թվականին Ադանայում:

<sup>20</sup> Ճամպազեան Բ., Պատանի կեանքի մը պատմութիւնը: *Մատենաշար ապրիլեան եղեռնի*, թիւ 4, Անթիլիաս, Լիբանան, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 21:

<sup>21</sup> Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալէադ փաշա*, Պոսթրն, Պահակ, 1921, էջ 159: Հետաքրքրական է նշել, որ, ի տարբերություն Ռուսոյից, ունեցած ցեղասպանության օրինակի, Հայոց ցեղասպանության վերաբերյալ մեզ հայտնի ուսումնասիրություններում մուսուլման երեխաների կողմից սեռական բռնությունների գործադրում հաճախ չի հանդիպում, սակայն պետք է ընդգծել, որ նման դեպքեր գրանցվել են:

<sup>22</sup> Զէյքրպարն (Եագուպըն) Մ., *Օրագրութիւն: 1907-1919: Խարբերդ*, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1979, էջ 171:

սած չէի... Երկու ժանտարմաներ տեսայ որոնք ծեր կին մը կը քաշկռտէին զառիվար փողոցէ մը: Հոն 10-12 թուրք տղաք կային որոնք կը խնդային ու կը զուարճանային այս ցաւալի տեսարանէն»<sup>23</sup>: Իսկ սերաստացիների տեղահանության ժամանակ Մալաթիայի թուրք երեխաները ծաղրում էին և ասում. «Ամէնքդ պիտի ջարդենք, սպաննենք»<sup>24</sup>:

Վերապրող Սարգիս Պալապանյանն<sup>25</sup> իր հուշագրության մեջ երեխաների մասնակցությամբ հետաքրքիր դրվագ է նկարագրում. «Գիշերը, կախուած Յակոբին դիակը տախտակէ սանդուխի մը վրայ երկնցուցած, կու տան երկու խեղճ հայ զինուորներու ուսը եւ կը հրամայեն, որ տանին ու թաղեն զայն: Այս վերջինները, երբ կը սկսին ուսամբարձ տանիլ մեռելը, հարիւրաւոր թուրք լակտներ քարկոծելով ու հայհոյելով, անարգելով ու պոռաւով կը հետապնդեն զինուորները»<sup>26</sup>: Գրիգորիս վարդապետ Պալաքյանը Չանկրիում լինելու ժամանակ պատմում է տարածված համաճարակի մասին, որին զոհ էր գնացել նաև տեղի քահանա Տեր Սիմոնը. «Եւ երբ ողբացեալ քահանային դագաղը կը փոխադրէինք անձայն անշուշտ քաղաքէն դուրս այգիներու կողմ գտնուող հայոց գերեզմանատունը, թուրք տղայք յուղարկատրներս քարի կը բռնէին»<sup>27</sup>:

Հայոց ցեղասպանությունը վերապրած Պետրոս Ծատուրյանը պատմում է, որ մուսուլման շատ երեխաներ զալիս էին պարզապես իր վերքերը տեսնելու, և երբ ցույց էր տալիս, նրանք հարվածում էին և ծիծաղելով փախչում<sup>28</sup>:

Մեծահասակներից ընդօրինակված մեկ այլ վարքային դրսևորում էր այն, որ մուսուլման երեխաները, նմանակելով հավանաբար իրենց մայրերին, նույնիսկ տղամարդկանց հրահրում էին սպանել հայերին: Բիթլիսի տեղահանությունը վերապրած Հմայակ Բոյաջյանը տարիներ անց վերհիշում է. «Երբ Բիթլիսից դուրս էին բերում գյուղը վերադարձնելու համար, թուրք կանայք, երեխաները կտուրներին կանգնած բղավում էին՝ ինչո՞ւ եք կենդանի թողել, այդ ո՞ր եք տանում, կտտորէք»<sup>29</sup>:

### • Սպանությունների անմիջական մասնակիցներ

Օսմանյան կայսրությունում զանգվածային կոտորածների ու ցեղասպանության ժամանակ սպանությունների մեջ են ընդգրկվել նաև 6-15 տարեկան երեխաները, ովքեր զինված են եղել քարերով, դանակներով, սրերով և զենքով: Սպանություններին երեխաների մասնակցությունը եղել է անհատական և կրել է խմբային բնույթ: Երեխաների այն հատվածը, որը զինվել է կառավարության կողմից, բռնություններ է իրագործել վերահսկողության ներքո, իսկ երեխաների մի մասը մասնակցություն է ունեցել անհատապես և անձնական նախաձեռնությամբ, հաճախ՝ ծնողների ուղեկցությամբ:

1895թ. համիդյան կոտորածների ժամանակ Տրապիզոնում, Արաբկիրում կառավարությունը զինում էր տեղի բնակչությանը, այդ թվում՝ նաև 11 տարեկան երեխաներին<sup>30</sup>:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 158:

<sup>24</sup> Գաբրիելյան Կ., *Եղեռնապատում փոքրին Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սերաստիոյ, Պոսթըն, «Հայրենիք», 1924, էջ 228:*

<sup>25</sup> Ծնվել է 1882 թվականին Այնթապում:

<sup>26</sup> Պալապանեան Ս., *Կեանքիս տար ու պաղ օրերը: Այնթապ-Քեսապ-Հալեպ, Հալեպ, Շարք, 1983, էջ 104:* Հուշագրությունը գրի է առել 1960 թվականին:

<sup>27</sup> Պալաքեան Գ. Ծ. Վարդ., *Հայ գողգոթան: Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն: Պետլինէն դէպի Զօր: 1914-1920, Ա հատոր, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922, էջ 174:*

<sup>28</sup> Ծատուրեան Պ., Կեանքը որ ապրեցայ: *Մատենաշար ապրիլեան եղեռնի, թիւ 13, Անթիլիաս, Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 1969, էջ 49:* Հուշագրությունը գրի է առել 1962 թ.:

<sup>29</sup> Բոյաջյան Հմայակ, ՀՅԹԻ գիտական ֆոնդ, տեսագրությունների բաժին, ֆ հ. 6:

<sup>30</sup> *Братская помощь пострадавшим в Турции армянам. Литературно-научный сборник*, Москва, 1897, с. 51.

Ուրֆայի կոտորածների վերաբերյալ վերապրողներից մեկի հուշագրության մեջ կարդում ենք. «Ամենէն վերջ կու գային 10-12 տարեկան թուրք տղաքներ, որոնք ձեռքերնին շամփուր, դանակ եւ այլ տեսակ տեսակ գէնքեր ըլլալով գետինը փռուած Հայ դիակները կը զննէին եւ եթէ շնչատուր կամ ողջ մնացողներ գտնուէր, զանոնք կամ կը մորթէին եւ կամ շամփուրով կը ծակծկէին որ բոլորովին՝ մեռնին»<sup>31</sup>:

Հայոց ցեղասպանությունը վերապրող Ներսես Մազմանյանը<sup>32</sup> վկայում է, որ իրենց գյուղում կանանցից մեկի ձեռքերը հետևի մասից են կապել, իսկ մազերը կապել են կեռ զամբից, որոնք խրված են եղել հողի մեջ: Այս 6-8 տարեկան թուրք երեխաներին քշել են նրա վրա, ովքեր քարերով սպանել են կնոջը<sup>33</sup>:

Մուսուլման տղաների կողմից սպանություններ իրականացվելու մասին է պատմում վերապրող Մարտիրոս Պալմյանը<sup>34</sup>, ով մի քանի անգամ հանդիպել է նման երեխաների, երբ թաքնված է եղել Էնտերեսում<sup>35</sup>. «...Խանըմ էֆենտիս [ազգությամբ թուրք] ինծի տուաւ մանգաղ մը, տուպրակ մը եւ ինծի ընկերացուց իր վեց տարեկան զաւակը, որպէսզի պարտեզէն խոտ քաղեմ եւ տուն բերեմ: Պզտիկը ճամբան ինծի ցոյց կու տար իր մէջքի դանակին գեղեցկութիւնը եւ կը փնտռէր կեաւորներ, որպէսզի մորթէ զանոնք, որովհետեւ իր նոր ու գեղեցիկ դանակով արդէն մորթեր էր երկու կեաւորներ եւ շատ ուրախացեր էր»: Հեղինակը պատմում է, որ այս ամենը լսելով և տեսնելով 6-12 տարեկան մի խումբ թուրքերի՝ մանգաղն ու տուպրակը տվել է երեխային և հեռացել: Վերապրողը մեկ անգամ ևս բախվել է տասնամյա թուրք երեխայի, ով ցանկացել է սպանել իրեն. «Ես գիտցայ որ դուն կեաւոր ես: Տէն, այս դանակը նոր գնած եմ կեաւորներ մորթելու համար: Փորդ խոթեմ ըսելով դանակը ինծի մօտեցուցած պահուն բռնեցի հարուած մը տուի»<sup>36</sup>:

Մխիթար Հագրոյանի վկայությունը Բիթլիս գավառի Մոսկան գավառակի Խուրթ-Բռնաշեն գյուղախմբի մասին. «Այս գիւղից սպանուեցան չորս հոգի՝ Սերօ Յովհաննէսեան և իր եղբայր Աբրէն, Կարօ Կարապետեանը և իր եղբայր Ատալը: Մի քուրդ պատանի Անճալիլ Բուպադօլ լամուկ անուն, տասնհինգ տարեկան, դրանց տարաւ գիւղից դուրս, ասելով աշխատանք կայ անելու ու այնտեղ ատրճանակի հարուածներով սպաննեց»<sup>37</sup>:

Տասներկուամյա զեյթունցի վերապրող Հովսէփ Բշտիկյանը<sup>38</sup> Սուլեյմանիէից<sup>39</sup> Բոզանթի ճանապարհի իրադարձությունների մասին պատմում է. «Թուրք զինվորները մեր քովեն կերթային: Մեկ էլ թուրք լակոտ մը տեսավ մեր էշի վրա երկու կողմը հեյբայի մեջ դրված երեք-չորս տարեկան քույրս ու եղբայրս՝ ամեն մեկը մի կողմ: Էդ լակոտը մի ափ հող գետնից վերցրեց ու շարտեց եղբորս երեսին, եղբորս աչքերը տեղն ու տեղը կուրացան, ինքն ալ վախեն մեռավ»<sup>40</sup>:

<sup>31</sup> *Եղեսիոյ սոսկալի դէպքը եւ ողբերգութիւն կոտորածին Եղեսիոյ*, գրեց Եղեսիացի հայ մը, Շումլա, Յ. Աւետարանեան, 1904, էջ 13:

<sup>32</sup> Ծնվել է 1900 թվականին Սերաստիայի Գավրա գյուղում:

<sup>33</sup> Մազմանյան Ն., *Ձեռագիր հուշ*, ՀՅԹԻ, թղթապանակ 176:

<sup>34</sup> Ծնվել է 1895 թվականին Սերաստիայի Զառա գյուղաքաղաքում:

<sup>35</sup> Էնտերես՝ քաղաք Սերաստիայի նահանգի Շապին-Գարահիսար գավառում:

<sup>36</sup> Պալմյան Մ., *Համամարդը*, Պէյրուք, Տոնիկեան եւ որդիներ, 1978, էջ 16-17:

<sup>37</sup> *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրողների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու*: Հատոր II, Բիթլիսի նահանգ, Երևան, «Ջանգալ-97», 2012, էջ 81: Հուշագրությունը գրի է առնվել 1916 թվականին:

<sup>38</sup> Ծնվել է 1903 թվականին Ձեյթունում:

<sup>39</sup> Սուլեյմանիէ՝ գյուղաքաղաք Ադանայի նահանգի Մարաշի գավառակում:

<sup>40</sup> Սվազյան Վ., *Հայոց ցեղասպանություն. Ավանատես վերապրողների վկայություններ*, Երևան, «Գիտություն», 2011, էջ 446: Հուշագրությունը գրի է առնվել 1983/96թթ.:

• **Երեխաներ, ովքեր պղծում էին հայերի դիակները**

Յեղասպանությունը վերապրողների ու օտարերկրյա ականատեսների հուշագրություններում ու զեկուցագրերում երբեմն հանդիպում են այնպիսի վկայություններ, որոնցում նկարագրվում են մուսուլման երեխաների կողմից հայերի դիապղծության տեսարաններ: Դրանցից հատկապես ուշագրավ են երևույթի խաղային դրսևորումները:

Ազգությամբ հույն ֆրանսիացի լրագրող Ադոսիդես Ադանայի կոտորածների վերաբերյալ իր աշխատության մեջ գրում է. «Ամսի 26-ին, կեսօրից հետո, զբաղվեցին մահացածներին հավաքելով: Նրանց բեռնում էին սալակները, որոնք պետք է բեռնաթափվեին Սարոսում: Այդ քարավաններն ուղեկցող թուրք լակոտները զվարճանում էին՝ ծակծկելով դիերը, փորելով դրանց աչքերը, սրածայր ցուպիկներով ծակելով այտերը»<sup>41</sup>: Հալեայի հյուպատոս Ռյուսերը ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին 1915թ. սեպտեմբերի 2-ին ուղարկած զեկուցագրին կցել է պարոն Վ. Շաիկերի վկայությունը Մարաշի իրադարձությունների մասին, որում կարդում ենք. «Քաղաքից (Մարաշից) ֆերմա ճանապարհին քաղաքի ծայրամասում ես տեսա մարդկային գլուխ՝ ընկած գոմաղբի կույտի վրա, որը թուրք դեռահասները դրել էին որպես նշանակետ»<sup>42</sup>: Վերապրող Պետրոս Ծատուրյանը, իր հուշագրության մեջ նկարագրելով գաղթի ճանապարհները, որոնք լի էին մարդկային ոսկորներով, գրում է. «Գանկեր ամեն կողմ որոնց հետ կը խաղային քիւրտ լաճերը...»<sup>43</sup>:

Գևորգ Յափուջյանը պատմում է. «Անեղանելի վիճակ, խնամքի կարոտ, զրկված հարգատներից, վիշտ ու տառապանք, կյանքին սպառնացող վտանգներով հղի սև օրեր, միշտ ծաղր ու ծանակի ենթակա թուրք լակոտների կողմից, որ համատեղ գործ ունեն անասուններին արածեցնելիս, նաև ծառան ես այն ծառաների ևս, որ քեզ հրամայեն եզները շրջելու, ջուր բերելու, գյուղը հացի գնալու և այլ գործերի կատարման համար: Պակաս չէր բորբոքվում նաև մատաղ սրտիս վերքերը այն ժամանակ, երբ հաճախ ձորերում հանդիպում էինք տանջամահ եղած հայերի կմախքներին, զանգերին, ծնկոսկրներին, որոնց վերաբերյալ ծաղրանքով լակոտները ասում էին՝ «Էյ, քեաֆիր, տեն-տեն, սա քո հոր գլուխն է, կացինով ջարդված»<sup>44</sup>:

\* \* \*

Քննարկելով Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերի նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանը «ոճրագործ մուսուլման երեխաների» մասնակցության գործառնությանին առանձնահատկությունները՝ կարող ենք ասել, որ նրանց ընդգրկվածությունը բռնություններին չի եղել կազմակերպված և համակարգված: Նրանց ականա մասնակցությունը բացառապես եղել է շարքային քաղաքացիների ներգրավվածության համատեքստում, ինչը պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում առկա նախացեղասպանական սոցիալ-մշակութային մթնոլորտով:

Չնայած նախացեղասպանական փուլին բնորոշ սոցիալ-մշակութային միջավայրը բազմաշերտ էր, այդուհանդերձ հարկ է նշել այն երեք հիմնական սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մշակութային մեխանիզմները, որոնք լույս են սփռում կոտորածներին և ցեղասպանություններին հասարակության լայնածավալ մասնակցության խնդրի վրա:

<sup>41</sup> Ադոսիդես Ա., *Հայերը և երիտասարդ թուրքերը. Կիլիկիայի կոտորածները*, Երևան, «Գասփրինտ», էջ 36:

<sup>42</sup> Գուստ Վ., *Հայերի ցեղասպանությունը 1915-1916 (Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից)*, Երևան, «Հայագիտակ», 2008, էջ 338:

<sup>43</sup> Ծատուրեան Պ., *նշվ. աշխ.*, էջ 55:

<sup>44</sup> Յափուջյան Գ., *նշվ. աշխ.*, ձեռագիր հուշեր, ՀՅԹԻ, թղթապանակ 169, էջ 101:

## 1. Նախացեղասպանական քարոզչության ազդեցությունը

Ժողովրդական զանգվածներին ուղղորդելու և ցեղասպանությանը մասնակից դարձնելու համար իշխանությունները որպես քարոզչության ենթատեքստ օգտագործում էին «մշակութային մոդելները», որոնք հիմնականում յուրացվում են սոցիալիզացիայի<sup>45</sup> ընթացքում: Դրանով ստեղծում են հոգեբանական այնպիսի մթնոլորտ, որ անհատները կորցնում են իրենց բնորոշ հատկանիշները և արմատապես վերափոխում իրենց վարքագիծը:

Այդպիսի «մշակութային մոդելներից» է «օտարի» կերպարի վերաբերյալ պաթոզեն վտանգ պարունակող տեղեկատվությունը, որն Օսմանյան կայսրությունում հանգում էր գլխավորապես հայերի «ապստամբ» և «դավաճան» լինելու մասին լուրերի տարածմանը: Օսմանյան կայսրությունում «օտարի» կերպարի շուրջ սահմանը գծվում էր դարերով արմատացած կրոնահոգեբանական, կրոնաբարոյական աշխարհընկալման սկզբունքով՝ տարանջատելով հասարակությանը «ճշմարիտ հավատացյալների» և «անհավատների», համապատասխանաբար՝ մուսուլմանների և ոչ մուսուլմանների, իրենց՝ տիրապետողների և ենթարկվողների դերակատարությամբ:

Յուրայինի և օտարի միջև տարածությունը պարզ ֆիզիկական տարածություն չէ, այլ հոգեբանական: Հետևաբար ցեղասպանության ժամանակ զոհի ու հանցագործի միջև բարոյափոխության տարածության աճը դյուրացնում է ռճրագործության իրականացումը<sup>46</sup>: Բռնության կիրառման համար կարևոր է, թե ինչպես է «օտարի» կերպարը տեղավորվում ռճրագործների աշխարհընկալման համակարգում, ինչ նախնական վերաբերմունք գոյություն ունի նրա նկատմամբ և ինչ վերաձևավորման է ենթարկվում: Օսմանյան կայսրությունում հայերն ընկալվում էին որպես օտար, որն արտահայտող տեքստերից են «ոչ մարդ», «մակարյոյծներ», «անհավատներ», «շարժվող իրեր», «թափառական հրեաներ», «ռայա»<sup>47</sup> պիտակները: «Օտարի» ապամարդկայնացման գործընթացը հանգեցնում է զոհի սոցիալական մահվան<sup>48</sup>, որին էլ հաջորդում են հետապնդումն ու ֆիզիկական ոչնչացումը:

Ժողովրդական զանգվածներին համախմբող մշակութային մոդելներից է նաև Հայրենիքի գաղափարը: 1910թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Մալոնիկում 13 օր տևած Իթթի-հադի համագումարի կարգախոսն էր՝ «Թուրքիան միայն թուրքերի համար»: Առաջ քաշելով «Ետ դեպի Թուրան» լոզունգը՝ թուրք ազգայնամոլները հանդես էին գալիս թուրքական հին սովորությունների վերականգնման օգտին:

Ժողովրդական զանգվածների վարքը կառուցող մեկ այլ մշակութային մոդել է «սրբազան պատերազմը» (ջիհադը): Կոտորածների նկարագրություններում հաճախ հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ հայերի վրա հարձակվող մահմեդականները կրոնական բնույթի կոչեր են անում<sup>49</sup>:

<sup>45</sup> Անհատի՝ իր էթնիկ հասարակություն և մշակույթ ներգրավման գործընթացն ազգագրության մեջ արտահայտվում է «սոցիալիզացիա» կամ «ինկուլտուրացիա» հասկացություններով: Անհատի կողմից իր սոցիոմշակութային միջավայրի (մշակութային տարածության և ժամանակի, գործառության օբյեկտների, գործունեության, շփման, վարքագծային կրթության) յուրացման գործընթացն է:

<sup>46</sup> Waller J., *Becoming Evil*, Oxford, 2007, p. 197.

<sup>47</sup> Կիրակոսյան Ջ., *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.–1914թ.)*, Երևան, 1982, էջ 153:

<sup>48</sup> Հարկ ենք համարում նշել, որ Կ. Կարդը «սոցիալական մահ» հասկացությամբ բնորոշում է խմբի մշակութային ինքնության ոչնչացումը՝ որպես ցեղասպանության գլխավոր չարիք, քանի որ վերապրողները կորցնում են մշակութային ժառանգությունը և միջսերնդային կապը: Sten Card C., *Genocide and Social Death, Hypatia*, Vol. 18, No. 1, Winter, Indiana University Press. Մենք հողվածում հասկացությունը կիրառում ենք՝ ցուցելու նախացեղասպանական փուլին բնորոշ գործընթացը:

<sup>49</sup> Գրիգորյան Հ., «Մշակութային մոդելները» որպես ամբողջի վարքի կազմակերպման ազդակներ



## **2. Հասարակության հիերարխիկ (ուղղահայաց) կառուցվածքը**

Ձանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանն ամբողջ հասարակության, այդ թվում՝ նաև մուսուլման երեխաների, ներգրավվածությունը պայմանավորված է նաև տվյալ հասարակության ընդգծված ուղղահայաց կառուցվածքով: Ավանդական ուղղահայաց կառուցվածք ունեցող հասարակությունների կազմակերպման հիմքում խարսխված են հավաքական արժեքները, որոնք ծայրահեղ դրսևորմամբ կարող են վերածվել զանգվածային բռնության կամ ցեղասպանության հրամայականի, քանի որ կիրառվում են ներխմբային համերաշխություն հաստատելու համար և վերացնում բռնություն գործադրելը խոչընդոտող արգելքները<sup>50</sup>:

## **3. Իրավիճակային ճնշումը**

Հասարակության շարքային քաղաքացիները զանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանը մասնակցում են երկու կերպ. կամ ընդգրկվում են ռազմական և ռազմականացված ինստիտուտներում, կամ ներգրավվում փողոցային ոճրագործ խմբերում: Ժողովրդական զանգվածների՝ կոտորածներին ու ցեղասպանությանը մասնակից դառնալու գլխավոր ազդակներից են միջավայրի ճնշումը և խմբային համատեղման ազդեցությունները<sup>51</sup>: Օսմանյան կայսրությունում շարքային մուսուլման երեխաները զանգվածային բռնություններին ու անկարգություններին մասնակցում էին գլխավորապես իրավիճակային ճնշմամբ՝ ընդգրկվելով մեծահասակներից բաղկացած փողոցային խմբերում:

Երեխաների ընդգրկվածությունը զանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանը պայմանավորվում է նրանով, որ իրենց բնույթով լինելով դյուրագրգիռ՝ ավելի հեշտությամբ ու արագ են արձագանքում և ինտեգրվում բռնությունների իրագործմանը: Մուսուլման երեխաները մասնակցել են ոճրագործություններին, կողոպուտին՝ մեծամասամբ հետևելով կամ նմանակելով մեծահասակներին, արտահայտելով նույն վարքագծային մոդելները, ինչ գոյություն ունեին նրանց ընտանիքներում և հասարակության մեջ: Այս հանգամանքն իր հերթին պայմանավորված է նրանով, որ հասարակության մեջ կայուն էր դրված մեծահասակներին հնազանդվելու կանոնը, ինչը նպաստում է, որ երեխաներն ու պատանիներն ավելի պատրաստակամությամբ ենթարկվեն մեծահասակներին, ինչպես նաև՝ իշխանության հրահանգներին:

## **Հայոց ցեղասպանության «շարքային» իրականացնողները. երեխաների հանցագործությունների գործառնության ռազմականացվածությունները**

Հասմիկ Գրիգորյան

### **Ամփոփում**

Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զանգվածային սպանություններ ու ցեղասպանություն իրականացնող «մարդկային ռեսուրսը» համալրում են նույնիսկ

Հայոց ցեղասպանության համատեքստում, Մերձավոր Արևելք: Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվածների ժողովածու, VII, Երևան, 2011, էջ 98-103:

<sup>50</sup> Waller J., նշվ. աշխ., էջ 174-189:

<sup>51</sup> Մանրամասն տե՛ս Valentino B., նշվ. աշխ., էջ 46:



այնպիսի մարզինալացված խմբեր, ինչպիսիք են՝ կանայք ու երեխաները, ովքեր իրենց դաժանությամբ չեն զիջում մեծահասակներին: Հոդվածում խմբավորված և ներկայացված են Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերի դեմ իրագործված զանգվածային կոտորածներին ու ցեղասպանությանը մուսուլման երեխաների մասնակցության գործառնությանը առանձնահատկությունները:

Երեխաները հաճախ հանդես են գալիս որպես անմիջական մասնակիցներ, դեռահասներ, ովքեր հալածում էին իրենց հասակակից հայ երեխաներին (միջխմբային բախում հայ և մուսուլման երեխաների միջև), մեծահասակներին նմանակող երեխաներ, երեխաներ, ովքեր պղծում էին դիակները:

**Քանալի բառեր՝** ցեղասպանություն, զանգվածային կոտորած, երեխաներ:

### **The Ordinary Executors of the Armenian Genocide: Functional Peculiarities of Perpetrator Children's Participation.**

*Hasmik Grigoryan*

#### **Summary**

In order to understand mass violence, massacres and genocides, as well as to prevent their organization and implementation it is necessary to conduct a research of convictions of different social groups, the concerns they have, their goals and motives for participation in mass violence.

Recent studies show that the human resource implementing mass murder and genocide is in fact replenished by such marginalized groups as women and children, who were not less as cruel as the adults.

In this article examples of the functional peculiarities of participation of Muslim children in the mass murders and genocide committed against the Armenians in the Ottoman Empire at the end of the 19th and beginning of the 20th century are presented. Children have often appeared to be immediate participants; teens pursued their elders (intergroup conflicts between Armenian and Muslim children), children violated corpses while imitating adults.

**Keywords:** genocide, massacre, perpetrator children.

### **”Рядовые” исполнители геноцида армян: функциональные особенности детских преступлений**

*Асмик Григорян*

#### **Резюме**

Новейшие исследования показывают, что “человеческий ресурс”, приводящий в исполнение массовые убийства и геноцид, пополняют даже такие маргинальные группы как женщины и дети, которые своей жестокостью не уступают взрослым.

В статье сгруппированы и представлены функциональные особенности преступлений, совершенных мусульманскими детьми в контексте массовых убийств в Османской империи в конце 19-го начале 20-го века.

Дети и подростки часто выступают как прямые участники преступлений, преследуя своих сверстников (межгрупповые конфликты между мусульманскими и армянскими детьми), оскверняя трупы, подражая действиям взрослых.

**Ключевые слова:** геноцид, массовые убийства, дети.

## **ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՌԱՍԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ. ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Էդիտա Գոդյան

Հողվածը վերաբերում է ցեղասպանության ժխտման իրավական կարգավորմանը: Ներպետական և միջազգային իրավունքում ցեղասպանության ժխտումը նույնացվում է ռասիզմի և «ատելության սերմանման (քարոզի)»<sup>1</sup> հետ, որոնք դասվում են ծանր հանցագործությունների շարքում: Աշխատանքի նպատակն է ցույց տալ, որ միջազգային հանրային իրավունքի մի շարք դրույթներ ևս արգելում են ցեղասպանության, այդ թվում՝ նաև Հայոց ցեղասպանության ժխտումը:

Հայերի դեմ 1915-23թթ. իրականացված ցեղասպանության ժխտումը թուրքական իշխանությունների կողմից սկսվել է հանցագործության իրականացման ընթացքում: Չնայած Հայոց ցեղասպանության իրողության վերաբերյալ բազմաթիվ փաստերի առկայությանը՝ թուրքական իշխանությունների կողմից ժխտողականությունը շարունակվում է մինչև այսօր<sup>2</sup>:

Ժխտողական քաղաքականությունն իրականացվում է երկու հիմնական ուղղություններով՝ արտաքին քաղաքականության և ակադեմիական շրջանակների միջոցով, որոնք անմիջականորեն ֆինանսավորվում են կառավարության կողմից: Արտաքին քաղաքականության բնագավառում թուրքական իշխանություններն իրենց առջև հստակ նպատակ են դրել վերափոխել պատմությունը և վերահսկել Թուրքիայի ապագան<sup>3</sup>: Իսկ ակադեմիական շրջանակները քաղաքագետների համար գիտական հարթակ են նախապատրաստում՝ Հայոց ցեղասպանության ժխտման վերաբերյալ պնդումներն առաջ մղելու համար<sup>4</sup>:

Առանձնացնելով ցեղասպանության ժխտման 12 հնարավոր մարտավարություններ՝ հրեա հայտնի ցեղասպանագետ Իսրայել Չառնին նշում է, որ դրանք բոլորն էլ շարունակաբար կիրառվում են թուրքական իշխանությունների կողմից<sup>5</sup>: Արդյունքում, Հայոց ցեղասպանության ժխտումը վերածվել է հսկայական «արդյունաբերության»՝ հիմնված «գիտական անագնավության, կեղծ տեղեկատվության, քաղաքական ճնշումների ու սպառնալիքների վրա և ֆինանսավորվում է թուրքական իշխանությունների կողմից»<sup>6</sup>:

### **Ցեղասպանության ժխտումը՝ որպես ցեղասպանության գործողության վերջին փուլ**

Ըստ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության նախկին նախագահ Գ. Ստենթոնի՝ ցեղասպանությունը մեկանգամյա գործողություն է, այլ շարունակական գործընթաց, որը բաղկացած է 8 փուլից՝ դասակարգում, սիմվոլացում (խորհրդանշում), դեհումանիզացիա (անմարդկայնացում), կազմակերպում, բևեռացում, նախապատրաստում,

<sup>1</sup> Անգլերեն համարժեքը “Hate speech”:

<sup>2</sup> Տնս Theriault H., Genocide, Denial and Domination: Armenian-Turkish Relations from Conflict Resolution to just Transformation, *Journal of African Conflicts and Peace Studies* (April 2009) pp. 82-96.

<sup>3</sup> Տնս Richard Cohen, *Killing Truth*, The Washington Post, 31 May 1983, p. 81.

<sup>4</sup> Տնս David Holthouse, *State of Denial Turkey Spends Millions to Cover Up Armenian Genocide*, Southern Poverty Law Center Intelligence Report Summer 2008.

<sup>5</sup> Տնս Charny I, *Templates for Gross Denial of a Known Genocide: A Manual*, in *The Encyclopedia of Genocide*, volume 1, p. 168.

<sup>6</sup> <http://www.splcenter.org/get-informed/intelligence-report/browse-all-issues/2008/summer/state-of-denial>

բնաջնջում և ժխտում: Ժխտումը ցեղասպանության 8-րդ փուլն է, որը «մշտապես հաջորդում է յուրաքանչյուր ցեղասպանության»<sup>7</sup>: Գիտնականների մի ստվար զանգված կարծում է, որ հայտնի ցեղասպանությունների ծրագրված ժխտումը վտանգավոր գործողություն է և պետք է հավասարեցվի իրական ցեղասպանությանը ցուցաբերած անմիջական կամ ոչ անմիջական աջակցության հետ<sup>8</sup>:

Թուրքական կառավարության ժխտողական քաղաքականությունը հանգեցնում է հայ ազգաբնակչության հանդեպ նոր բռնությունների: Ժխտողականության յուրաքանչյուր դրսևորում նպաստում է հայատյացության՝ որպես ռասիզմի արմատացմանը Թուրքիայում:

Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ իրականացվող հակահայկական բողոքի ցույցերը Թուրքիայում և աշխարհի մյուս վայրերում ակնհայտորեն մատնանշում են հայերի դեմ առկա թշնամությունը: Ադրբեջանի կողմից հնարված այսպես կոչված Խոջալուի «ցեղասպանության» տարելիցի կապակցությամբ Թուրքիայում 2012թ. փետրվարի 26-ին տեղի ունեցած ակցիաները հայատյացության հստակ դրսևորում էին: Պատասառներից շատերը հայերի դեմ բացահայտ բռնության կոչեր էին պարունակում. «Այսօր՝ Թաքսիմը, վաղը՝ Երևանը. մենք կհարձակվենք ձեր վրա հանկարծակի, գիշերով», «Արարատը կդառնա ձեր գերեզմանը», «Դուք բոլորդ հայեր եք, բոլորդ վիժվածքներ եք» և այլն<sup>9</sup>:

2012թ. Ֆրանսիայի պառլամենտի կողմից Հայոց ցեղասպանությունը քրեականացնող օրինագծի ընդունումից հետո տարբեր երկրներում տեղի ունեցած բողոքի ակցիաները Թուրքիայի պատմության արյունալի էջերի հանդեպ հպարտության նոտաներ էին պարունակում, ինչը նույնպես ժխտողականության հերթական դրսևորում էր<sup>10</sup>: Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին այդ տրամադրություններն էլ ավելի են սրվում:

### Յեղասպանության ժխտումը՝ որպես ռասիզմի դրսևորում

Ռասիզմը սահմանվում է որպես «համոզմունք կամ նախապաշարմունք տվյալ ռասայի գերակայության վերաբերյալ՝ հիմնված այլ ռասաների հանդեպ թշնամանքի վրա»<sup>11</sup>: Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) բացատրական ակտը մատնանշում է, որ ռասիզմը ներառում է նաև այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ քսենոֆոբիան, հակասեմիտիզմը և անհանդուրժողականությունը: Միաժամանակ ակտը նշում է, որ ցուցակն ամբողջական ու վերջնական չէ<sup>12</sup>:

Նշված սահմանումները մեկ միասնական գաղափար են պարունակում, այն է՝ առելությունը որոշակի խմբի նկատմամբ: Յեղասպանության հանցագործությունը ներառում է ռասիզմի տարր, քանի որ, ինչպես մատնանշված է սահմանման մեջ, այն ուղղված է որոշակի ազգային, ռասայական, էթնիկական, կրոնական խմբի դեմ<sup>13</sup>: Յեղասպանության ժխտումը կրկին հանգեցնում է նրան, որ զոհերի խումբն առանձնացվում է, և տվյալ խմբի

<sup>7</sup> <http://www.genocidewatch.org/genocide/8stagesofgenocide.html>

<sup>8</sup> Այդ մասնագետների թվում են՝ Ի. Չառնի, Կուկկա, Վիդալ-Նագետ, Ռ. Սմիթ, Է. Մարկուսեն, Ռ. Լիֆտուն և այլն:

<sup>9</sup> <http://www.hurriyetdailynews.com/ngo-files-complaint-against-minister.aspx?pageID=238&nid=14874>

<sup>10</sup> <http://wn.com/anti-Armenian>, <http://www.youtube.com/watch?v=enFwWrXxMK4>, Armnews, 16. 04. 2012.

<sup>11</sup> Տե՛ս *Racism and Human Rights*, ed. Walden, Raphael, Leiden: Brill Academic Publishers, 2004, p. 8.

<sup>12</sup> Տե՛ս ECRI general policy recommendation N°7 on national legislation to combat racism and racial discrimination, 13 December 2002, p.56.

<sup>13</sup> Տե՛ս Cassese, Antonio, *International Criminal Law*, 2nd ed., New York: Oxford University Press, 2008, pp.138-140.

հանդեպ նախկին ատելությունն ու անցյալի ժխտման անհրաժեշտությունը կրկնապատկում են նրանց հանդեպ թշնամանքը՝ որակվելով որպես ռասիզմ:

Այսօր մի շարք ազգային և միջազգային դատական որոշումներում Հոլոքոստի ժխտումը որակվում է որպես ռասիզմի դրսևորում<sup>14</sup>: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշմամբ Հոլոքոստի ժխտումը «ռասայական խտրականության ամենալուրջ դրսևորումն» է<sup>15</sup>: ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների կոնվենցիային կից Մարդու իրավունքների հանձնաժողովի պնդմամբ Հոլոքոստի ժխտումը հակասեմիտիզմի տարածման կարևորագույն լծակ է<sup>16</sup>:

Չնայած նրան, որ հակասեմիտիզմի մասին տեղեկացվածության մակարդակը բավական բարձր է, հայատյացության հանդեպ հանդուրժողականությունը տարածված երևույթ է և քաղաքական առումով ընդունելի է համարվում Հայոց ցեղասպանության ժխտումը<sup>17</sup>: Մինչդեռ Թուրքիայում հայատյացությունը բավական երկար տարիների պատմություն ու տեսական հիմք ունի: Ինչպես ասում էր թուրքական ազգայնական շարժման գաղափարախոսներից մեկը՝ Դոկտոր Նազըմը. «անհրաժեշտ է ոչնչացնել հայ ազգը ամբողջությամբ, այնպես որ ոչ մի հայ երկրագնդի վրա չմնա, և Հայաստան կոչված գաղափարը վերանա»<sup>18</sup>:

Չնայած Հոլոքոստի հետ առկա բազմաթիվ նմանություններին՝ Հայոց ցեղասպանության ժխտումն ավելի վտանգավոր ու խտրական է, քանի որ, ի տարբերություն հրեաների ցեղասպանության, Հայոց ցեղասպանությունը չի ճանաչվել այն իրականացրած պետության՝ Թուրքիայի կողմից: Ավելին, Թուրքիան շարունակում է եռանդուն կերպով ժխտել ցեղասպանության իրողությունը, ինչը հիմք է ծառայում հայերի հանդեպ ատելության ու թշնամանքի ուժեղացմանը: Յուրաքանչյուր ոք, ով փորձում է Թուրքիայում բարձրացնել հայկական խնդիրը, հետապնդվում է քրեական օրենսգրքի 301 հոդվածով՝ մեղադրվելով «թուրք ժողովրդին վիրավորելու» մեջ<sup>19</sup>: Թուրքական իշխանությունների ժխտողական քաղաքականությունն ավելի է սրում թուրք հասարակության մեջ հակահայկական տրամադրությունները, ինչի վառ օրինակներից է «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը, ինչին հետևեցին հետագա բռնությունների կոչեր պարունակող ակցիաներ. «Գորշ գայլերն այստեղ են, որտեղ են Հրանտները»<sup>20</sup>:

### **Ցեղասպանության ժխտումը ներպետական և միջազգային իրավունքում**

Որոշ երկրների ներպետական օրենսդրություններ քրեորեն պատժելի են համարում ցեղասպանության, ինչպես նաև մարդկության դեմ իրագործված և պատերազմական այլ հանցագործությունների ժխտումը: Մի շարք երկրներ ընդունել են օրենքներ, որոնք բացա-

<sup>14</sup> Հոլոքոստի թանգարան, ԱՄՆ. “The Holocaust” *Holocaust Encyclopedia*. <http://www.ushmm.org/wlc/en/?ModuleId=10005143>. Accessed on {18.04.2012}.

<sup>15</sup> Տե՛ս *ECmHR Udo Walendy v. Germany*, No. 21128/92, decision of 11 January 1995.

<sup>16</sup> Տե՛ս *Robert Faurisson v. France*, Communication No. 550/1993, U.N. Doc. CCPR/C/58/D/550/1993(1996), para 9.7.

<sup>17</sup> Տե՛ս Stephen Zunes, *Obama and the Denial of Genocide*, March 11, 2010, [http://www.fpif.org/articles/obama\\_and\\_the\\_denial\\_of\\_genocide](http://www.fpif.org/articles/obama_and_the_denial_of_genocide)

<sup>18</sup> Տե՛ս G.S. Graber, *Caravans to Oblivion: The Armenian Genocide, 1915*, New York: John Wiley, 1996, pp. 87-88.

<sup>19</sup> Համաձայն այդ հոդվածի՝ այն անձը, որը հասարակայնորեն զրպարտում է թուրք ազգին, Թուրքիայի Հանրապետությանը կամ Թուրքիայի Ազգային մեծ ժողովին, պետք է պատժվի բանտարկությամբ՝ 6 ամսից մինչև 2 տարի ժամկետով:

<sup>20</sup> Տե՛ս Pinar Ögünç, *Evening out One Misery with Another*, <http://www.hurriyetdailynews.com/evening-out-one-misery-with-another-.aspx?pageID=238&nID=14788&NewsCatID=396>.

հայտորեն պատժում են Հոլոքոստի<sup>21</sup> և/կամ այլ ցեղասպանությունների ու մարդկության դեմ կատարված հանցագործությունների ժխտումը<sup>22</sup>: Կան նաև երկրներ, որտեղ օրենսդրական ակտերը թեև ակնհայտորեն չեն քրեականացնում ցեղասպանության ժխտումը, սակայն այդ արարքը պատժվում է այլ ընդհանուր դրույթներով, որոնք վերաբերում են «ատելություն սերմանող»<sup>23</sup> կամ ռասիստական արտահայտություններին<sup>24</sup>:

Ցեղասպանության ժխտումը պատժելի է նաև միջազգային իրավունքում: Թեև Ցեղասպանության կանխարգելման և պատժման մասին կոնվենցիան բացահայտորեն չի անդրադառնում ցեղասպանության ժխտմանը, սակայն կոնվենցիայի նախնական տարբերակը դրույթներ էր պարունակում «ատելություն քարոզող» կամ «ռասիզմ սերմանող» հայտարարությունների վերաբերյալ: Ատելության սերմանումն արգելված է նաև մարդու իրավունքների մասին միջազգային կոնվենցիաներով: Մարդու իրավունքների վերաբերյալ համաշխարհային դեկլարացիայի 7-րդ հոդվածը սահմանում է, որ «Իրավունքի առջև բոլորը հավասար են և առանց որևէ խտրականության օգտվում են իրավունքի հավասար պաշտպանությունից: Բոլորն ունեն կոնվենցիայով ամրագրված իրավունքների պաշտպանություն ընդդեմ խտրականության բոլոր դրսևորումների կամ խտրականության սադրանքների»<sup>25</sup>: Միաժամանակ «խոսքի ազատության իրավունքը ենթակա է այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և նպատակ են հետապնդում ճանաչել և հարգել մյուսների իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև՝ ժողովրդավարական հասարակության մեջ պահպանել ընդհանուր բարեկեցությունը, բարոյականությունն ու հասարակական կարգը»<sup>26</sup>:

Դեկլարացիայի հոդված 29(3)-ը սահմանում է, որ իրավունքներն ու ազատությունները ոչ մի կերպ չեն կարող կիրառվել ՄԱԿ-ի նպատակների և սկզբունքների դեմ: Մարդու իրավունքների դեկլարացիայի 30-րդ հոդվածն ընդգծում է, որ «Դեկլարացիայում մատնանշված և ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես իրավունք՝ խախտելու փաստաթղթով ամրագրված մեկ այլ իրավունք կամ ազատություն»<sup>27</sup>: Նշված բոլոր հոդվածները կարող են մեկնաբանվել որպես ցեղասպանության ժխտման արգելում, քանի որ տվյալ դեպքում, հիմնվելով խոսքի ազատության իրավունքի վրա, խախտվում են մյուսների արժանապատվության, համբավի, որոշ դեպքերում նաև կյանքի իրավունքները:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի արգելման մասին կոնվենցիայի 4-րդ հոդ-

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 8-9: Նաև՝ Michael J. Bazyler, *Holocaust Denial Laws and Other Legislation Criminalizing Promotion of Nazism*, von Oppenheim Research Fellow, International Institute for Holocaust Studies, Yad Vashem Professor of Law, Whittier Law School, California, USA.

<sup>22</sup> Տե՛ս R. Smith, *Legislating against Genocide Denial: Criminalizing Denial or Preventing Hate Speech*, <http://beta.genocidepreventionnow.org/Portals/0/docs/smith.pdf> Rwanda journalists jailed for genocide denial launch supreme court appeal <http://www.guardian.co.uk/world/2012/jan/29/rwanda-journalists-genocide-denial-appeal>.

<sup>23</sup> Ատելության քարոզը հաղորդակցության ձև է, որի միակ նպատակը որոշակի խմբի հանդեպ ատելության ցուցադրումն է, հատկապես այնպիսի հանգամանքներում, երբ հաղորդակցությունը հավանաբար կհանգեցնի բռնության: Այն ատելության սադրանք է որոշակի ռասայական, էթնիկական, ազգային, կրոնական և այլ խմբերի նկատմամբ: <http://definitions.uslegal.com/h/hate-speech/>.

<sup>24</sup> Ֆինլանդիան, Հունգարիան, Իտալիան, Իռլանդիան, Լատվիան, Հունաստանը, Մալթան, Լեհաստանը, Նիդեռլանդները, Մեծ Բրիտանիան այն երկրների շարքում են, որտեղ «ժխտողական գաղափարները» կարող են պատժվել հասարակական անդորրի պահպանման կամ ռասիստական նպատակներով պայմանավորված հայտարարությունների կամ վարքի վերաբերյալ ընդհանուր քրեական դրույթներով:

<sup>25</sup> Տե՛ս The Universal Declaration on Human Rights, Article 7.

<sup>26</sup> Տե՛ս The Universal Declaration on Human Rights, Article 29 (2).

<sup>27</sup> Նույն տեղում, հոդված 29 (3):

վածը բավական լայն պարտավորություններ է սահմանում անդամ-պետությունների համար՝ ատելություն սերմանող քարոզչության հետ կապված: Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ միջազգային կոնվենցիայի հոդված 20 (2)-ը պարտավորեցնում է անդամ-պետություններին օրենքով արգելել «ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն սերմանելը, ինչը դրդում է խտրականության, թշնամանքի կամ բռնության»<sup>28</sup>:

Չնայած խոսքի իրավունքի վերաբերյալ իր բավական լայն սահմանմանը՝ Միջամերիկյան կոնվենցիան 15(5)-րդ հոդվածով նախատեսում է, որ «երբ պատերազմի քարոզչությունը կամ ռասայական ատելության սերմանումը դրդում են բռնությունների, դրանք օրենքով պատժելի հանցանքներ են»<sup>29</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածը մատնանշում է, որ «կոնվենցիայի և ոչ մի դրույթ չի կարող դիտարկվել որպես իրավունք՝ ներգրավվելու որևէ գործողության մեջ կամ իրականացնելու որևէ գործողություն՝ միտված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված այլ իրավունքների ու ազատությունների խախտմանը»<sup>30</sup>: Եվրոպայի խորհուրդը Կիբերհանցագործության կոնվենցիայի և դրա լրացուցիչ արձանագրության մեջ, ինչպես նաև Ռ-ասիզմի և անհանդուրժողականության եվրոպական հանձնաժողովի 7-րդ ընդհանուր խորհրդատվական բանաձևում բացահայտ անդրադառնում է ցեղասպանության ժխտմանը: Կիբերհանցագործության կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անդամ-պետություն պարտավորվում է ընդունել օրենսդրական ակտեր՝ քրեականացնելու համակարգչի միջոցով հասարակության մեջ այնպիսի նյութերի տարածումը, որոնք «ժխտում, էականորեն նսեմացնում, արդարացնում կամ ընդունում են ցեղասպանություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ հանդիսացող գործողություններ, որոնք այդպիսին սահմանված են միջազգային իրավունքով կամ ճանաչվել են Միջազգային քրեական դատարանի կամ միջազգային այլ պարտադիր ուժ ունեցող որոշումներով և իրականացվում են միտումնավոր և անօրինական»<sup>31</sup>:

Այսպիսով, ցեղասպանության ժխտումը ռասիզմի և ռասայական խտրականության ձև է, ինչը պատժելի է ինչպես ներպետական որոշ օրենսդրություններում, այնպես էլ միջազգային իրավունքի որոշակի դրույթներով ու նորմերով: Հետևաբար, Հայոց ցեղասպանության ժխտումը, որը նույնպես ներառում է ռասիզմի տարրեր, պատժելի է միջազգային իրավունքի տեսանկյունից:

### **Ցեղասպանության ժխտումը՝ որպես ռասիզմի դրսևորում. մոտեցումները միջազգային իրավունքում**

Էդիտա Գզոյան

#### **Ամփոփում**

Ցեղասպանությունը մեկանգամյա գործողություն չէ, այլ շարունակական գործընթաց՝ բաղկացած 8 փուլից: Ժխտումը ցեղասպանության 8-րդ փուլն է, որը «մշտապես հաջորդում է յուրաքանչյուր ցեղասպանության»: Գիտնականների մի սովորական գանգված կարծում է, որ հայտնի ցեղասպանությունների ծրագրված ժխտումը վտանգավոր գործողություն է և պետք է հավասարեցվի իրական ցեղասպանության անմիջական կամ ոչ անմիջական աջակցության հետ:

<sup>28</sup> ՏՆՍ International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, Article 4.

<sup>29</sup> ՏՆՍ Inter-American Convention on Human Rights, Article 15 (5).

<sup>30</sup> ՏՆՍ European Convention on Human Rights, Article 17.

<sup>31</sup> ՏՆՍ Additional Protocol on Cybercrime, Article 6.

Ազգային և միջազգային դատարանների որոշումները ևս հստակորեն մատնանշում են, որ ցեղասպանության ժխտումը կամ ցեղասպանության որևէ իրողության մինիմալացումը կամ աղավաղումը ռասայական խտրականության ձևեր են և պետք է պատժվեն օրենքով: Միջազգային իրավունքի մի շարք գործիքներ ևս ակնհայտորեն կամ ոչ ակնհայտորեն պատժելի են համարում ցեղասպանության ժխտումը:

Հայոց ցեղասպանության ժխտումը՝ որպես հայերի դեմ ռասայական խտրականության ձև, ևս պատժելի է միջազգային իրավունքում:

**Քանալի բառեր՝** Հայոց ցեղասպանության ժխտում, խտրականություն, հայատյացություն, ժխտողականություն, միջազգային իրավունք:

### **Genocide Denial as a Form of Racism: Approaches in International Law**

*Edita Gzoyan*

#### **Summary**

Genocide is not a single act but a process. The International Association of Genocide Scholars identified 8 stages of Genocide: denial is the last stage.

Many researchers consider the deliberate denial of a known genocide as a harmful act that should be put on the same footing as indirect and direct contributions to the actual genocide. National and international court decisions clearly demonstrate that genocide denial trivialization or distortion of its facts is a form of racism, which is punishable by law. This article presents the denial of the Armenian Genocide as a form of racism in the context of international law.

**Keywords:** Denial of the Armenian Genocide, racism, anti Armenianism, denialism, International Law.

### **Отрицание геноцида как форма расизма: международно-правовые подходы**

*Эдита Гзоян*

#### **Резюме**

Геноцид не однократное действие, а продолжающийся процесс. Отрицание геноцида является последней 8-й стадией этого процесса. Многие ученые считают, что отрицание геноцида – опасное действие и должно быть наказуемо как преступление. Решение национальных и международных трибуналов также демонстрируют, что отрицание геноцида или искажение фактов являются формой расизма и дискриминацией, что также наказуемо законом. В статье рассматривается вопрос отрицания Геноцида армян как форма расизма и подходы к нему в международном праве.

**Ключевые слова:** отрицание Геноцида армян, расизм, антиармянство, отрицание, международное право.



## ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ՄԻԱՎՈՐ

Խաչատուր Կորելյան

Յեղասպանության հանցագործությանը նվիրված թանգարանների հիմնական նպատակներից են ճեղասպանության հիշողության պահպանումը և փոխանցումը նոր սերունդներին՝ վերջիններիս կրթելու և իրազեկելու միջոցով<sup>1</sup>։ Այս հաստատությունների բոլոր հիմնական բաղկացուցիչ մասերը՝ մշտական ցուցադրությունը, ժամանակավոր ցուցադրությունները, վերկայքը, աշակերտների, ուսանողների և մեծահասակների համար նախատեսված ուսումնական ծրագրերը, ինչպես նաև արխիվները և գրադարանները, գործիքներ են կրթադաստիարակչական առաքելությունն իրագործելու համար<sup>2</sup>։ Սակայն վերոնշյալներից ամենաարդյունավետ և միաժամանակ լայն շրջանակներ ընդգրկող միջոց կարելի է համարել թանգարանային ցուցադրությունը։ Վերջինս թանգարանային հաղորդակցության հիմքն է, որի շնորհիվ ապահովվում է մշակութային և գիտական արժեքներին մարդու անմիջական շփման հնարավորությունը<sup>3</sup>։ Միաժամանակ թանգարանային ամբողջ գործունեությունը կառուցվում է թանգարանային առարկայի հիման վրա<sup>4</sup>։ Այն հավաքածուների, ֆոնդերի առանցքային միավորն է, որի վրա կառուցված են դասակարգման, հաշվառման, պահպանման և ցուցադրության հիմնական գործառնությունները<sup>5</sup>։

Հոդվածում կփորձենք ներկայացնել թանգարանային առարկայի հատկանիշները, դիտարկել, թե ինչպես է այն ներկայացնում ճեղասպանության պատմությունը, ինչպիսի տպավորություն է գործում այցելուների վրա և ինչ չափով է այն վերականգնում ազգի հիշողությունը։ Վերոնշյալ դիտարկումներն արված են Հայոց ճեղասպանությանը և Հրեից հոլոքոստին նվիրված թանգարանների<sup>6</sup> մշտական ցուցադրությունների օրինակով։

### **Թանգարանային առարկայի հատկանիշները**

Առաջին անգամ «թանգարանային առարկա» հասկացությունը շրջանառության մեջ է դրվել 1930-ականներին Ն. Դրուժինինի<sup>7</sup>, Ն. Ֆեոդորովի և Ֆ. Շմիտի կողմից<sup>8</sup>, սակայն տեսականորեն այս հասկացությունը մշակվել է միայն մի քանի տասնամյակ անց<sup>9</sup>։ XX

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Berenbaum M., *The World Must Know: The History of the Holocaust as Told in the United States Holocaust Memorial Museum*, Washington: United States Holocaust Memorial Museum, 2006, p. xvi: Harel D., *Facts and Fewlings: Dilemmas in Designing the Yad Vashem Holocaust History Museum*, Jerusalem: Yad Vashem, 2010, pp. 10-11: Williams P., *Memorial Museum: The Global Rush to Commemorate Atrocities*, Oxford, New York: Berg, 2007, p. 21: Մարության Հ., *Միացյալ Նահանգների Հոլոքոստի մեմորիալ թանգարանը Ամերիկյան արժեքների համատեքստում*. – [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=792&sphrase\\_id=2531](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=792&sphrase_id=2531); <http://genocide-museum.am/arm/director.php>; <http://www.yad-vashem.org/yv/en/about/index.as>; <http://www.ushmm.org/information/about-the-museum>:

<sup>2</sup> Տե՛ս Berenbaum M., *նշվ. աշխ.*, էջ xvi:

<sup>3</sup> *Российская музейная энциклопедия*, Ред. коллег: Янин В. и др., т. 2, М.: Прогресс, 2001, с. 355.

<sup>4</sup> Պողոսյան Դ., *Թանգարանի մշակութային հաղորդակցության միջավայր*, Երևան: Հեղինակային հրատարակություն, 2008, էջ 98:

<sup>5</sup> *Основы музееведения*, Отв. редактор Шулепова Э., М.: Едиториал УРСС, 2005, с. 42.

<sup>6</sup> Ուսումնասիրվել են Հայոց ճեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետ՝ ՀՅԹԻ), Միացյալ Նահանգների Հոլոքոստի հուշային թանգարանի (այսուհետ՝ ՄՆՀՀԹ), Յադ Վաշեմի (Հոլոքոստի մահադատների և հերոսների [մասին] հիշողության [ապահովման] իրավասու մարմին) մշտական ցուցադրությունները:

<sup>7</sup> Юренева Т., *Музееведение*, М.: Академический Проект, 2006, с. 322.

<sup>8</sup> *Основы музееведения*, էջ 39.

<sup>9</sup> Юренева Т., *նշվ. աշխ.*, էջ 322-323: *Основы музееведения*, էջ 39-40.

դարի վերջին և հատկապես XXI դարի սկզբին թանգարանագիտության մեջ փոխվել են «թանգարանային առարկա» հասկացության բնորոշումը և վերջինիս ընկալումը<sup>10</sup>։ Ներկայումս առավել տարածված է խորհրդային անվանի թանգարանագետ Ա. Ռազզոնի հետևյալ սահմանումը. «Թանգարանային առարկան իրականությունից առանձնացված, հավաքածուի մեջ ընդգրկված և երկարատև պահպանվելու ընդունակ թանգարանային նշանակության իր է, որը հասարակական կամ բնագիտական տեղեկատվության, գիտելիքի և զգացմունքի ստույգ աղբյուր է, պատմամշակութային արժեք, ազգային ժառանգության մաս»<sup>11</sup>։ Հայտնի թանգարանագետ Ի. Մարտիկի տեսակետի համաձայն՝ թանգարանային առարկան որոշակի իրականության վավերագիր է, վկայություն, ինքնության հիմք, մարդկային հմտության արդյունք, որը իմացության կամ ճանաչողության հիմքում դրված տեղեկատվության մի մասն է<sup>12</sup>։ Մեկ այլ սահմանումով թանգարանային առարկան «հավաքածուների մեջ ընդգրկված պատմամշակութային կամ բնության օբյեկտ է, որն ունի թանգարանային արժեք և բազմաբովանդակ պատմական գիտելիքի ու զգացմունքային ներգործության աղբյուր է»<sup>13</sup>։

Գործնական ոլորտի պահանջմունքներին առավել համապատասխանում է թանգարանագիտության առարկայական մոտեցումը, ըստ որի՝ իրերի թանգարանայնությունը կապվում է դրանց որոշակի որակական հատկանիշների<sup>14</sup> հետ։ *Տեղեկատվական (информативный), արտահայտչական (экспрессивный), գրավչական<sup>15</sup> (аттрактивный), ներկայացուցչական (репрезентативный), գուգադրման (ассоциативный)* որակների<sup>16</sup> շնորհիվ է թանգարանային նշանակության օբյեկտը հատուկ գիտական գործունեության արդյունքում ընդգրկվում թանգարանային միջավայրում<sup>17</sup>։

Տեղեկատվական որակը թանգարանային առարկայի՝ որևէ գործընթացի, պատմության կամ անհատի մասին աղբյուր լինելու հնարավորությունն է։ Թանգարանային առարկայի տեղեկատվական ներուժը բաղկացած է երեք առանձին բաղադրամասերից՝ առարկայի արտաքին բնորոշիչներից (չափը, քաշը, գույնը, նյութը և այլն), տեղեկատվությունից, որն իր վրա կրում է նյութը (տեքստ, սեպագրեր, պատկերներ, նշաններ և այլն) և վերջապես այդ առարկայի ծագման պատմությունից<sup>18</sup>։

<sup>10</sup> Основы музееведения, էջ 41.

<sup>11</sup> Պողոսյան Դ., *նշվ. աշխ.*, էջ 98:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Основы музееведения, էջ 65.

<sup>14</sup> Հարկ ենք համարում նշել, որ հայ իրականության մեջ թանգարանագիտական բառերերի մասնագիտական բառարանի բացակայությունը լուրջ բացթողում է, և շատ դեպքերում յուրաքանչյուր ուսումնասիրող ստիպված է ներկայացնել իր սեփական թարգմանությունը:

<sup>15</sup> Մեր կարծիքով ավելի ճիշտ է կիրառել «գրավչական որակ» բառերը, այլ ոչ թե «ձգողական որակ», որն առաջարկվում է Դ. Պողոսյանի կողմից: Փաստենք, որ «аттрактивность» բառերը ռուսական թանգարանագիտության մեջ ներմուծված, անգլալեզու բառեր է, որի հիմքում «attract» բայն է, որը, ըստ «Oxford Advanced Learner's Dictionary»-ի, ունի չորս իմաստ, որոնցից երեքն ավելի մոտ են հայերեն «գրավել», «հրապուրել» բառերին և միայն չորրորդ իմաստով է այն նշանակում «ձգել»: Բացի դրանից «аттрактивность» բառերը ռուսական թանգարանագիտության մեջ թարգմանվում է նաև «привлекательный» (տե՛ս Основы музееведения, էջ 45): Ըստ Ա. Ղարիբյանի ռուս-հայերեն բառարանի՝ վերջինս նույնպես թարգմանվում է «գրավիչ», «հրապուրիչ»: Ելնելով վերոբերյալից՝ ավելի նպատակահարմար ենք գտնում կիրառել «գրավչական որակ» բառերը:

<sup>16</sup> Որոշ մասնագետներ թանգարանային առարկային վերագրում են միայն երեք որակական հատկանիշ՝ տեղեկատվական, արտահայտչական, գրավչական: Հարցի շուրջ մանրամասն տե՛ս Юренева Т., *նշվ. աշխ.*, էջ 324-326:

<sup>17</sup> Հարցի շուրջ մանրամասն տե՛ս Основы музееведения, էջ 42-46:

<sup>18</sup> Մանրամասն տե՛ս Основы музееведения, էջ 42-44: Юренева Т., *նշվ. աշխ.*, էջ 324-325:

Արտահայտչական որակը թանգարանային առարկայի՝ այցելուի զգայական ոլորտի վրա ազդելու, նոր ապրումներ առաջացնելու ունակությունն է: Թանգարանային առարկայի զգայականությունը կարող է կապված լինել նրա հնության, գեղագիտական արտահայտչամիջոցների, այս կամ այն հայտնի մարդու հետ կապված լինելու փաստի, եզակիության և ընդհակառակը՝ իր հեշտ ճանաչելիության հետ<sup>19</sup>:

Գրավչությունը թանգարանային առարկայի՝ այցելուի ուշադրությունը գրավելու հատկանիշն է, որը պայմանավորված է իր արտաքին բնութագրիչներով: Գրավչությունը հիմնականում պայմանավորված է առարկայի՝ չափից ավելի մեծ կամ փոքր լինելու, արտառոցության և այլնի հետ<sup>20</sup>:

Ներկայացուցչական որակով թանգարանային առարկան նմանօրինակ բազմաթիվ իրերի գոյության վավերագիրն է կամ բնորոշ ներկայացուցիչը, որը հնարավորություն է տալիս լավ հասկանալու միևնույն շարքի այլ երևույթներ<sup>21</sup>: Այս որակը հատուկ է ազգագրական, հնագիտական բնույթի թանգարաններին, որտեղ ներկայացվում են ժողովրդի կենցաղը, նյութական մշակույթը, արտադրական գործընթացներն ու ստեղծված արժեքները<sup>22</sup>:

Զուգադրման որակի շնորհիվ առարկան նոր միջավայրում (թանգարան) փոխկապակցվում է թանգարանային այլ օբյեկտների հետ, հանդես գալիս որպես ընդհանուր մշակութային տեքստի բաղադրիչ<sup>23</sup>:

### **Թանգարանային առարկան ցեղասպանությունների փորձառությունների մասին տեղեկատվության և ապրումների աղբյուր**

Ինչպես արդեն նշվեց, ցուցադրությունը թանգարանային հաղորդակցության հիմքն է, իսկ առարկան՝ թանգարանային հաղորդակցության կարևորագույն օղակը<sup>24</sup>: Ահա այս գաղափարների վրա հիմնվելով՝ անվանի թանգարանագետ Դ. Քամերոնը թանգարանային հաղորդակցության ակտի իրականացումը ներկայացնում է հետևյալ ձևով<sup>25</sup>.

Հասցեագրող - միջնորդ - հասցեատեր

(Թանգարանային աշխատող) - (թանգարանային առարկա) - (այցելու)

Ինչպես տեսնում ենք, թանգարանի աշխատակազմը «պատմություն ստեղծող» յուրօրինակ «կառույց է», որն իր առջև խնդիր ունի նախ ընտրել առարկաներ և ապա «խոսեցնել» դրանք և ներկայացնել պատմությունը, որը, ելնելով թանգարանի առջև դրված խնդիրներից, կարող է լինել տարբեր:

Փորձենք ներկայացնել, թե Հայոց ցեղասպանությանը և Հրեից հոլոքոստին նվիրված թանգարանների մշտական ցուցադրություններում թանգարանային առարկաների ինչպիսի հատկանիշներ են կիրառվում ցեղասպանության հիշողությունը վերարտադրելու համար: Այսպես, Հայոց ցեղասպանության առանձնահատկություններից մեկը կարելի է համարել հայրենազրկումը, որն իր արտացոլումն է գտել նաև ՀՅԺԻ-ի նախկին մշտական

<sup>19</sup> Մանրամասն տե՛ս *Основы музееведения*, էջ 44-45: Юренева Т., *նշվ. աշխ.*, էջ 325: Պողոսյան Դ., *նշվ. աշխ.*, էջ 101-102:

<sup>20</sup> Մանրամասն տե՛ս *Основы музееведения*, էջ 45: Юренева Т., *նշվ. աշխ.*, էջ 325: Պողոսյան Դ., *նշվ. աշխ.*, էջ 102-103:

<sup>21</sup> Մանրամասն տե՛ս *Основы музееведения*, էջ 46:

<sup>22</sup> Տե՛ս Պողոսյան Դ., *նշվ. աշխ.*, էջ 103:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Մանրամասն տե՛ս *Основы музееведения*, էջ 51: *Российская музейная энциклопедия*, էջ 355: Պողոսյան Դ., *նշվ. աշխ.*, էջ 98:

<sup>25</sup> *Основы музееведения*, էջ 51:

ցուցադրությունում: Այն արտահայտվում է ցուցադրության առաջին սրահում ներկայացված XVI-XIX դարերի ընթացքում թողարկված եվրոպական քարտեզներով, Արևմտյան Հայաստանի վեց նահանգները ներկայացնող լուսանկարներով, ինչպես նաև նահանգների հողերով լի անոթներով<sup>26</sup>: Հայոց ցեղասպանության փորձառությանը վերաբերող մեկ այլ դրվագ է մինչ օրս շարունակվող մշակութային ցեղասպանությունը, որի դրսևորումներից մեկը հետաքրքիր և պատկերավոր ներկայացված է մշտական ցուցադրությունում. Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի առաջին հրատարակության ոչնչացումը հանրապետական Թուրքիայում (Շիշլիի հայկական գերեզմանոցում): Բավականին ցայտուն ցուցադրված է այրված գիրք, որը ինքնին արդեն գրավում է այցելուին, և անմիջապես հարց է ծագում. «ինչու՞ է գիրքը այրված», «ինչ կապ ունի սա Հայոց ցեղասպանության հետ» և կամ «ինչ գիրք է սա»: Փաստորեն առաջին կարևոր քայլն արված է. այցելուի մեջ առաջացել է հետաքրքրություն, երկրորդ քայլն այս հետաքրքրության բավարարումն է, որն այցելուն կարող է ստանալ ցուցանմուշին կից ցուցատախտակից, որը պարունակում է հակիրճ, բայց և բովանդակալից տեղեկատվություն հիշյալ առարկայի մասին: Նման ձևով այցելուն մշակութային ցեղասպանության մասին ստանում է որոշակի տեղեկատվություն և փորձառություն, ինչն ինքնին մասն է դառնալու այն ամբողջի, որը կոչվելու է ցեղասպանության հիշողություն: Նույն թեմային է վերաբերում նաև Վան քաղաքի հյուսիսային պարիսպների մոտ թուրքերի կողմից ավերված Ս. Վարդան եկեղեցու պատից պոկված խաչքարի բեկորը: Այս դեպքում նույնպես այցելուն առարկայական ձևով է զգում մշակութային ցեղասպանության հետևանքները: Հայոց ցեղասպանության ժամանակ հայ որբերի «արժեքը» ներկայացնելու համար օգտագործված Աբդուլ Համիդ II-ի շրջանի ոսկեդրամը բացատրում է տիրող իրավիճակը՝ «մեկ հայ՝ մեկ ոսկի»:

Հրեից հոլոքոստին նվիրված թանգարաններում նույնպես կան նմանատիպ լուծումներ: Այսպես, ՄՆՀՀԹ-ում այցելուներին Հրեից հոլոքոստի զոհի և վերապրածի կենսագրությանը ծանոթացնելու արդյունավետ մեթոդ է մշակվել. այցելուներին մուտքի մոտ տալիս են «վկայական» (identification card), որտեղ ներկայացված է Հրեից հոլոքոստի զոհի կամ վերապրածի կենսագրությունը<sup>27</sup>, որը տեղեկատվության աղբյուրից բացի, երեխաների նկարներով, այցելուի մեջ կարող է հուզական ապրումներ առաջացնել: Սակայն, ինչպես նշում է ազգագրագետ Լ. Աբրահամյանը, այս լուծումն ավելի հուզական կլիներ, եթե թանգարանի մուտքի մոտ տրվեր «վկայականի» հիմնական մասը, իսկ ելքի մոտ՝ դրա վերջաբանը, որտեղից այցելուն կիմանար իր «երկրորդ եսի» ճակատագիրը, կստանար նրա զոհ լինելու կամ կենդանի մնալու մասին տեղեկությունը<sup>28</sup>: Հուզական զգացումների մեկ այլ աղբյուր է զնացքի վագոնը, որը Հոլոքոստին նվիրված թանգարանների ցուցադրություններում ամենագրավիչ առարկաներից է<sup>29</sup>: Հրեաների մեծ մասն այսպիսի զնացքներով է տեղափոխվել համակենտրոնացման ճամբարներ: Այցելուին անմիջապես գրավում է այսպիսի «մեծ» թանգարանային առարկան և անմիջապես առաջացնում մի շարք հարցեր, որը, կրկին ուղղորդվելով տեքստով կամ ֆիլմով, պատասխանում է այցելուի հարցերին, որից հետո այցելուն կրկին ձեռք է բերում Հոլոքոստի փորձառությունը, և այն իր մեջ ձևավորում է ցեղասպանության հիշողությունը: Այսպիսի կարևոր լուծումներից է նաև գրքերի,

<sup>26</sup> Լուսանկարը տե՛ս ՀՅԹ-ի գիտական ֆոնդ, բաժին 6, թիվ 119:

<sup>27</sup> Sten Weinberg J., Elieli R., *The Holocaust Museum in Washington*. New York: Rizzoli International Publications, 1995, p. 71.

<sup>28</sup> Абрамян Л., *Музей как свидетель и как создатель истории: Заметки культуролога о музее Холокоста в Вашингтоне и других музеях, демонстрирующих великие трагедии человечества*, 1994 (անտիպ):

<sup>29</sup> Լուսանկարը տե՛ս Weinberg J., Elieli R., *նշվ. աշխ.*, էջ 153: Harel D., *նշվ. աշխ.*, էջ 39, 79:

կոշիկների և սանրերի կույտի ցուցադրումը Հոլոքոստին նվիրված թանգարաններում: Այս դեպքում առանձին առարկան գրավչություն կամ արտահայտչականություն չունի, սակայն քանակը և ներկայացման ձևը ցուցադրության այս հատվածին տալիս են գրավչություն և արտահայտչականություն: Այցելուն այստեղ ընկալում է, որ, ասեմք, յուրաքանչյուր զույգ կոշիկը համարժեք է մեկ մարդկային կյանքի: Սա շատ բարձր զգայականություն է ապահովում, որը գրեթե չի մոռացվում այցելուի կողմից:

Առարկայական իրերից բացի, կարևոր ցուցանմուշների շարքում են լուսանկարները և փաստաթղթերը: Վստահ կարելի է փաստել, որ այս ուղղվածության թանգարանների ցուցադրություններում ամենահաճախ կիրառվող առարկաները լուսանկարներն են: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ լուսանկարն ինքնին ապացույց է և, ինչպես եզրակացնում է Ռոլան Բարթը, լուսանկարում մենք երբեք չենք կարող ժխտել իրերի եղելության փաստը<sup>30</sup>: Եվ Հայոց ցեղասպանության, և՛ Հրեից հոլոքոստին նվիրված թանգարաններում լուսանկարների օգնությամբ ներկայացված են մինչցեղասպանական կյանքը, մարդկային զրկանքներն ու տառապանքները, հոգևոր, մշակութային հաստատությունների ոչնչացումը և այլն: Ինչ վերաբերում է փաստաթղթերին, ապա սրանք նույնպես մշտական ցուցադրության կարևոր մասն են, հատկապես տվյալ ցեղասպանության դիտավորությունը ներկայացնող փաստաթղթերը: Սակայն անվարան կարելի է ընդգծել, որ վերջինս, մի կողմից պարունակելով շատ տեղեկատվություն, չունի գրավչություն, և այցելուները շատ հաճախ բաց են թողնում ցուցադրության այդ հատվածը<sup>31</sup>:

Նշենք նաև, որ որոշ դեպքերում և՛ Հայոց ցեղասպանությանը, և՛ Հրեից հոլոքոստին նվիրված թանգարանների նախկին ցուցադրություններում այցելուի վրա զգայական ազդեցություն թողնելու համար իրականացվել են, մեր կարծիքով, ոչ ճիշտ մոտեցումներ. ՀՅԹ-ի նախկին ցուցադրությունում ընդգրկված էր ցեղասպանության զոհի գանգ<sup>32</sup>, որը միգուցե այցելուին «գրավում էր», սակայն առաջացնում էր բացասական զգացողություններ, և այդ իսկ պատճառով վերոհիշյալ առարկան չընդգրկվեց 2007 թվականի նորացված մշտական ցուցադրությունում<sup>33</sup>: ՄՆՀՀԹ-ում ևս հրաժարվեցին բավական ազդեցիկ «մազերի ծովի» ցուցադրումից<sup>34</sup>: Այդ առիթով ՄՆՀՀԹ-ի արտաքին կապերի տնօրեն Ալվին Ռոզենֆիլդը նույնպես գտնում է, որ այնպիսի առարկաներ, ինչպիսիք են՝ մոխիրը, մազերը, ոսկորները, մահվան հիշողության հետ են կապված, և դրանք տհաճություն են պատճառում այցելուներին՝ առաջացնելով զգայական և հոգևոր խեղումներ<sup>35</sup>:

Ցեղասպանության և մարդկային ողբերգություններին նվիրված շատ թանգարաններ ներկայումս հրաժարվում են իրենց մշտական ցուցադրություններում ներառել ոսկորներ, մոխիր, մազեր և նմանատիպ այլ առարկաներ, որը, մեր կարծիքով, պայմանավորված է նաև այս հարցին ավելի մարդասիրական մոտեցում ցուցաբերելով<sup>36</sup>:

<sup>30</sup> Barthes R., *Camera Lucida: Reflections on Photography*, New York: Hill & Wang, 1981, p. 76: Մեջբերվում է ըստ՝ Williams P., *Memorial Museum: The Global Rush to Commemorate Atrocities*, Oxford, New York: Berg, 2007, p. 51.

<sup>31</sup> Մանրամասն տե՛ս *Основы музееведения*, էջ 45,47:

<sup>32</sup> Լուսանկարը տե՛ս ՀՅԹ-ի գիտական ֆոնդ, բաժին 6, թիվ 119:

<sup>33</sup> ՀՅԹ-ի տնօրեն Հայկ Դեմոյանը այս թեմայի շուրջ քննարկումների ժամանակ նշեց նաև, որ շատ կարևոր է հողին հանձնել Հայոց ցեղասպանության զոհերի մասունքները, այլ ոչ թե դրանք ցուցադրել և հոգեկան խեղումներ առաջացնել հատկապես երեխաների շրջանում:

<sup>34</sup> Մանրամասն տե՛ս Linental E., *Preserving Memory: The Struggle to Create America's Holocaust Museum*, New York: Columbia University press, 2001, pp. 214-216.

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 213:

<sup>36</sup> ՀՅԹ-ի մշտական ցուցադրությունից դուրս եկավ զոհի գանգը, իսկ ՄՆՀՀԹ-ի մշտական

Ամփոփելով գալիս ենք այն եզրակացության, որ թանգարանային առարկան պարունակում է բոլոր այն հատկանիշները, որպեսզի նախ՝ գրավի, որոշակի ապրումներ առաջացնի, ապա՝ տեղեկատվություն տրամադրելու միջոցով այցելուի մեջ վերականգնի ցեղասպանության հիշողությունը: Սակայն դա բավականին բարդ աշխատանքի արդյունք է, որը ենթադրում է ոչ միայն ցուցանմուշների ճիշտ ընտրություն, այլ նաև նրանց հերթափոխի սահուն և գրագետ անցում, որտեղ մեկը լրացնում է մյուսին և դառնում թանգարանի կողմից ներկայացված պատմության մի մասնիկը:

Այնուամենայնիվ, այս նոր վերականգնված հիշողությունը չենք կարող համեմատել ցեղասպանությունը վերապրածի հիշողության հետ, քանի որ նա դեպքերի ակնամատեսն է եղել, և նրա մոտ, ինչպես վկայում են վերապրածների հուշագրությունները, ցեղասպանության հիշողությունն անհատականացված է եղել. վերապրածները հիշում են կոնկրետ դեպքեր, անձանց, այն դեպքում, երբ թանգարանային ցուցադրությունը չի կարող ընձեռել նմանատիպ հնարավորություն (անհնար է մի ամբողջ գործընթաց իր բազմաշերտությամբ ներկայացնել սահմանափակ տարածքում և սահմանափակ քանակությամբ նյութերի միջոցով), սակայն վերջինս կարողանում է նոր սերունդներին փոխանցել ցեղասպանության հավաքական հիշողությունը:

### **Թանգարանային առարկան՝ որպես ցեղասպանության հիշողությունը վերականգնող միավոր**

*Խաչատուր Կոբեյյան*

#### **Ամփոփում**

Հոդվածում հեղինակը ներկայացնում է թանգարանային առարկայի հատկանիշները և ցեղասպանության հիշողությունը վերականգնելու համար Հայոց ցեղասպանության ու Հրեից Հոլոքոստի թանգարանների մշտական ցուցադրություններում դրանց օգտագործման ձևերը: Ընդգծելով թանգարանային առարկայի կարևորությունը թանգարանային հաղորդակցության և ցեղասպանության հիշողության վերականգնման գործընթացում՝ հեղինակը ցույց է տալիս որոշ առարկաների՝ ոսկորներ, մոխիր և մազեր, ցուցադրման ժամանակավրեպությունը և հուշային իրերի ընդգրկման արդիականությունը: Վերջիններքը, զուգորդվելով փաստաթղթերի, լուսանկարների հետ, կարող են գրավել այցելուին և տեղեկատվություն տալ ցեղասպանության մասին: Եվ վերջապես թանգարանային ցուցադրությունը վերականգնում է հավաքական հիշողությունը, այլ ոչ թե անհատականը, որն ունենի վերապրողները:

**Բանալի բառեր՝** թանգարանային առարկա, թանգարանային հաղորդակցություն, Հայոց ցեղասպանություն, Հոլոքոստ, ցեղասպանության հիշողություն:

ցուցադրությունում գտնվող մագալույտը (հրեաներին գազախցիկ ուղարկելուց առաջ նրանց մազերը կտրում էին) փոխարինվեց վերջինիս լուսանկարով: Հարցի շուրջ մանրամասն տեսն Williams P., *նշվ.* աշխ., էջ 38-46:

## Museum Exhibit Items as Units of Genocide Memory Rebirth

*Khachatur Kobelyan*

### Summary

In this paper, the author shows the attributes of a museum exhibit item and the ways of using it as a unit for restoring the Genocide memory on the example of the Armenian Genocide and Jewish Holocaust museums' permanent exhibitions. Underlining the importance of the museum exhibit items as an important link in the process of museum communication and recovery of the Genocide memory, the author shows the untimeliness of such items as bones, ashes and hairs in modern memorial museums as well as timeliness of including memorial objects well connected with the documents and photographs, which can attract visitors, providing them with information about the Genocide. And finally, the museum exhibition restores the collective memory and not the individual memory of the Genocide survivors.

**Keywords:** Museum object, Museum communication, Armenian genocide, Holocaust, Genocide memory.

### Музейный предмет как восстанавливающая единица памяти геноцида

*Хачатур Кобелян*

### Резюме

В статье на примере постоянных выставок музеев Геноцида армян и Холокоста показаны свойства музейного предмета и способы его использования как единицы восстановления памяти геноцида. Подчеркивая важность музейного предмета как звена в процессе музейной коммуникации и восстановления памяти о геноциде, автор в то же время показывает несвоевременность в экспозициях таких музейных предметов, как кости, прах и волосы, но уместность мемориальных объектов, которые, будучи хорошо связанными с документами и фотографиями, могут привлечь посетителей, давая им информацию о геноциде. И, наконец, музейная экспозиция восстанавливает коллективную память о геноциде, а не индивидуальную память переживших геноцид.

**Ключевые слова:** музейный предмет, музейная коммуникация, Геноцид армян, Холокост, память геноцида.



## THE SEMANTIC ANALYSES OF ARMENIAN GENOCIDE IN THE AMERICAN POLITICAL DISCOURSE

Sona Hakobyan

*The article is devoted to the events of Armenian Genocide from linguistic point of view. The historical events represented in the American political discourse are analyzed and represented from the event-semantic point of view. Doing semantic analyses of the events represented in the American political discourse, we come to use such notions as logical existential quantifications, predicates, arguments as well as thematic roles (agent, patient) to express the deep meaning of the event represented by the verb used in the discourse. To reveal the deep meaning of the verb we also come to use such parameters as CAUSE or BECOME predicates. We make an attempt to reveal the essence of the political discourse by analyzing the events pointed at issue<sup>1</sup>.*

Nowadays political discourse is considered an essential study and research area within the framework of politics and mainly within that of linguistics. Political discourse analyses are held by numerous linguists aiming to find out the essence and deep meaning of the political text and talk. Political discourse analyst is mainly considered with the study of politically-related speeches and writings which are banned to certain events or topics.

Armenian genocide is one of the most tragic event of the 20<sup>th</sup> century and has been pointed at issue by many political forces and states. It seems to be under discussion till its recognition as the latter is a must and a kind of moral duty. I posit this claim taking into consideration the fact of the U.S House Joint Resolution 148, adopted on April 8, 1975 according to which April 24 was designated as “National Day of Remembrance of Man's Inhumanity to Man”, and the President of the United States was authorized and requested to issue a proclamation calling upon the people of the United States to observe such day as a day of remembrance for all the victims of genocide, especially those of Armenian ancestry<sup>2</sup>.

These tragic events are mainly discussed from the historical, political and legal point of view. My objective is to discuss them mainly from the linguistic point of view and especially from the deep semantic point of view by revealing their political essence. I share those linguists' opinions about the *event semantics* who study historical and life events from linguistic standpoint by adopting the idea that the *event* is a grammatical category and is considered a logical parameter for explaining the deep meaning of the utterance uttered by politicians.

In semantic theories the notion of events is used in different ways but the term event-based semantics mainly comes from those views which share the proposal of Davidson (1967) that certain predicates take an implicit variable<sup>3</sup> over events as an argument<sup>4</sup>. This event argument is

---

<sup>1</sup> The idea of the following research method and the topic in general is suggested by the Doctor of Philology, Professor Suren Zolyan.

<sup>2</sup> H. Res. 106 (110th): Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution

<sup>3</sup> A symbol or name that stands for a value. For example, in the expression  $x + y$ ,  $x$  and  $y$  are variables.

<sup>4</sup> In linguistics, an **argument** is an expression that helps complete the meaning of a predicate. Most predicates take one, two, or three arguments. A predicate and its arguments form a *predicate-argument structure*. The discussion of predicates and arguments is associated most with (content) verbs and noun phrases (NPs), although other syntactic categories can also be construed as predicates and as arguments. Arguments must be distinguished from adjuncts. While a predicate needs its arguments to complete its meaning, the adjuncts that appear with a predicate are optional.



accommodated by analyzing the predicate as having one more argument place than is assumed in traditional analyses<sup>5</sup>.

The semantic literature has further contributed to the realization that the grammar recognizes the existence of complex events having an internal structure. Numerous streams of research have converged on the idea that complex events consist of inner and outer events where the outer one is associated with causation and agency<sup>6</sup> whereas the inner one is associated with telicity<sup>7</sup> and change of state.

In my analyses I come to use the predicate CAUSE to represent the relation between a causer argument x and an inner expression involving a change of state in the argument y. The majority of researchers doing their research in this field follow this strategy and most of them represent the change of state with the predicate BECOME; e.g. wipe the floor clean

X CAUSE [y BECOME (AT) z] BY[x ‘wipe y’]] (Levin and Rapoport 1988, p.2,  
example 2a)

With the help of these predicates verb meaning is represented by decomposing the predicate into more basic predicates. Event-based semantic analyses are held within the framework of generative semantics and such kind of representations put semantics into the syntax and eventual representation is considered to be both semantic and syntactic representation. McCawley represents the verb *kill* within generative semantics like this:




FIGURE 1 McCawley 1968, p.73, Figure3.

American political discourse about the events of Armenian genocide is very complicated

<sup>5</sup> Davidson D., *The logical form of Action sentences*, Oxford University Press 1967, pp. 105-122.

<sup>6</sup> In linguistics a **grammatical agent** is the cause or initiator of an event. *Agent* is the name of the thematic role (also known as the thematic relation). The word comes from the present participle *agens*, *agentis* (“the one doing”) of the Latin verb *agere*, to “do” or “make”. The grammatical agent is often confused with the subject but these two notions are quite distinct: the former is based explicitly on its relationship to the action or event expressed by the verb, whereas the latter is based on the flow of information, word order, and importance to the sentence.

<sup>7</sup> In linguistics, **telicity** (from the Greek *telos* meaning “end” or “goal”) is the property of a verb or a verb phrase that presents an action or event as being complete in some sense. A verb or verb phrase with this property is said to be *telic*, while a verb or verb phrase that presents an action or event as being *incomplete* is said to be *atelic*.

from the political point of view but the world's political positions give a great importance to it on this issue. The United States of America is considered the most powerful political force in the world and every year on April 24 the whole world and especially Armenian nation expects American President to pronounce the word "*genocide*" by putting spurs for the recognition of these terrific events all over the world.

In the U.S House Joint Resolution 148, adopted on April 8, 1975 according to which April 24 was designated as 'National Day of Remembrance of Man's Inhumanity to Man' from the viewpoint of event-semantics the linguistic expression *Man's Inhumanity to Man* is considered a single event, i.e. there has been carried out an inhuman action. It is a complex event consisting of outer and inner events. In the outer event man is the agent(the cause or initiator of an event) which causes change of state in the argument *Man*. The argument structure for a word is a minimal specification of its lexical semantics. Much research has been conducted on the assumption that argument structure is the strongest determinant on the acquisition of verb meaning.[Gleitman,1990,Pinker 1989]

### EVENT

INHUMANITY – cruel, evil action<sup>8</sup>

ARGSTR = ARG1 [Animate individual (MAN) ]

ARG2 [Physical essence (MAN)

∃ e INHUMANITY (Man, man', e)

∃ e (CRUEL ACTION( e) & AGENT (man, e) & PATIENT (man', e)

Agent CAUSE Patient BECOME ON (evil, tyranny) STATE

The predicate CAUSE is represented as a relation between a causer argument x(Man1) and inner expression involving a change of state in the argument y(Man2). The change of state is represented with the predicate BECOME.

By looking through and studying the USA official records on this issue we come across numerous resolutions, congressional reports where the events of 1915 are mainly estimated as **massacres, atrocities, misery**.

In the U.S Senate resolution 359 , for instance, it is stated that *the Senate of foreign relations have clearly established the truth of the **reported massacres** and other **atrocities** from which the Armenian people have suffered*<sup>9</sup>. In the Senate Concurrent resolution 12, it is *resolved by the Senate, that in view of the **misery, wretchedness and hardships** which these people are suffering...*<sup>10</sup> In the Concurrent resolution 12, the events are described as deplorable conditions of **insecurity, starvation and misery**: *The people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation and misery now prevalent in Armenia. (U.S. Senate Concurrent Resolution 12 February 9, 1916)*

From the viewpoint of the event semantics these are all separate events each having their specific event structure. Coming to generative tradition I posit that the word **massacre** is decomposed like the word **kill**. So we have the following structure:

WORD: Massacres- to massacre (verb)


ARGSTR= ARG1=animate-individual 0

ARG2= physical essence /Armenian people/

<sup>8</sup> Webster's New World Treasures, prepared by Charlton G. Laird, The United States of America, 1971, 315p

<sup>9</sup> U.S Senate resolution 359, May 11, 1920

<sup>10</sup> U.S Senate concurrent resolution 12, February 9, 1916, <http://www.armenian-genocide.org> 20.01.2014



In CAUSE predicate argument, a causer argument is not represented, i.e. the outer event is absent but the inner one undergoes change of state by *becoming not alive*.

Another event comes to be **atrocities**, which is defined as *a cruel and a violent act*<sup>11</sup>. It is a fact and as it stated in their discourse *it is true* that Armenian people have suffered from these atrocities, i.e. the inner expression undergoes change of state, but the outer event, i.e. the causer argument is again missing.


It is a well-known fact that context crucially influences the structure and processing of text and talk. Contexts are able to function as the interface between situational and social structures and discourse structures become the subjectively represent relevant aspects of situations and society and directly interfere the mental processes of discourse production and comprehension. Teun A. Van Dijk once stated that a well-known generative grammar should include a pragmatic component which he further called a *Context Grammar*. Context grammars must specify how given pragmatic structures, i.e. contexts impose constraints upon the structure of utterances [Dijk, 1972:57]. Context grammar accounts how the surface structure, the meaning and the reference of sentences are determined by the specific properties of the context, such as its topological structure (place and time of the utterance-act) and the mental structures of the speech participants; knowledge, belief, intention, ability, etc.. From the viewpoint of context grammar, topological parameters may present social roles and relations as well. Adopting this view, complex events are represented both by outer and inner events where the outer events represent the place or time of the event; *Starvation is prevalent in Armenia now/ Insecurity is prevalent in Armenia now*.

Starvation  $\longrightarrow$  to starve (verb )  
 ARDSTR = ARG1 = time /place  
 ARG2 = state  
 Shadow-ARG= Armenian people

In the argument of CAUSE predicate, a certain time (now) as well as place(in Armenia) comes to be used as an argument for the verb *to starve* i.e. starving condition is prevalent in Armenia and it is prevalent *now*; as mentioned in discourse. The indexical expression *now* points out the fact that discourse makers know what time it is, who is the causer agent of those

<sup>11</sup> Oxford Advanced Learner's Dictionary , by A.S Hornby, Oxford University Press 2005, p. 81.

conditions and who comes to that state. It is a fact that only animate being starves and in the situation of American discourse these beings come to be Armenian people. Here we find out the occurrences of shadow arguments<sup>12</sup> as well.



The event again can be described as a state which is prevalent in Armenia. The causer argument comes to be the time parameter and in shadow argument people are enclosed to be endangered despite the fact of being not mentioned in the utterance's syntactical structure. It participates in the logical expression and has its conceptual reference only in discourse makers' mind.

Coming to presidential statements, it is worthwhile to take into consideration those characteristics of American political discourse which indicate the nation's togetherness. The use of the pronouns *we*, *us*, *our* creates the impression that the president and the audience are in the same team and share the same beliefs. In the same way the nominal phrase *the United States* is used for the same purpose and from the political discourse point of view these factors make the speech more reliable and responsible. *The United States responded to the victims of the crime against humanity by leading international diplomatic and private relief efforts* (Bush, George H.W. (1989-93) Armenian Remembrance Day, April 20, 1990) *Today we remember a great tragedy of the twentieth century: the deportations and massacres of roughly one and a half million Armenians in the final years of the Ottoman Empire* (Statement by the President Clinton, April 24, 2000) *On this day of remembrance, we honor the memory of the victims of one of the greatest tragedies of the 20th century, the mass killings and forced exile of as many as 1.5 million Armenians at the end of the Ottoman Empire.* (Bush, George W. (2001-2009) Presidential Message: Armenian Remembrance Day - April 24, 2008) *Ninety four years ago, one of the great atrocities of the 20th century began. Each year, we pause to remember the 1.5 million Armenians who were subsequently massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire.* (Statement of President Barak Obama on Armenian Remembrance Day - April 24, 2009) In discourse production speakers generally start from their personal mental model of an event or situation. The model organizes the subjective beliefs of the speaker about such situation [Dijk, 1997:211]. Nearly all presidents start from their personal event model which comprises their subjective attitudes to those terrible events, their sorrow and nation's togetherness. American nation is terrified, shocked by the events of 1915 which resulted in 1.5 million victims. Once such models of events are constructed, speakers use a number of linguistic strategies to reach discourse productivity. According to the presidential statements there had been massacres, 1,5 million Armenians were massacred, killed and murdered in the final years of the Ottoman Empire. Sometimes they turn the events to be taken place in Ottoman Empire (*On this solemn day, I join Armenians from around the world in remembering the victims of the*

<sup>12</sup> Parameters which are semantically incorporated into the lexical item. They are not necessarily expressed in syntax. **James Pustejovsky** "The Generative Lexicon" Massachusetts Institute of Technology, 2000, pp. 65-66.

<sup>13</sup> New Webster's dictionary and Roget's Treasures, New York: 1991.

1915 massacres in the Ottoman Empire. /Bill Clinton, Armenian Remembrance Day, April 22, 1994/), or at the end of the Ottoman Empire (Today, we commemorate an appalling tragedy of the 20th century, the massacre of as many as 1.5 million Armenians through forced exile and murder at the end of the Ottoman Empire / George W. Bush, Armenian Remembrance Day, April 24,2002/).A trivial detail should be taken into consideration: Ottoman Empire doesn't exist nowadays and the use of this phrase partially points out USA's evasive politics on genocide issue. They fail to mention the doer and the carrier of these terrible events and from event-based semantics point of view the adverbial modifier of *place* or *time* take an argument position in CAUSE predicate of the verbs, defining those events. From this angle an event can be characterized as a complex event consisting of outer and inner events. The inner expression undergoes change of state. i.e. in CAUSE predicate argument 1.5 million Armenians BECOME massacred, killed (NOT ALIVE).

According to Oxford Advanced Learner's Dictionary (A.S. Hornby 2005) and Webster's New World Treasures(Charlton G. Liard 1971) word meanings expressing the 1915<sup>th</sup> events are defined as follows:

- **Massacre- to kill** a large number of people, especially in a cruel way.(verb)
  - **Murder – to kill** deliberately and illegally (verb)
    - **Mass killings – to kill in a mass way**
- **Atrocity** – 1.A cruel and violent act, especially in a war, 2. murder = kill

From the above mentioned 1.5 million Armenians appear to be killed in the final years/ at the end of Ottoman Empire. The history gives us a hint that the Armenian genocide, i.e. the atrocities committed against the Armenian people of the Ottoman Empire by the Young Turkish Government, did take place during those years. Actually, there exists an event ( $\exists e$ ) expressed by an existential quantification<sup>14</sup>, the *patient*<sup>15</sup> of that event comes to be Armenian people who undergo change of state and “become not alive”. In CAUSE predicate argument, the adverbial modifier fills the position of agent. Constructions that capture argument structure generalizations, like lexical predicates(CAUSE,BECOME), have roles associated with them; these are termed *argument roles* and correspond roughly to traditional thematic roles such as *agent, patient, instrument, source, theme, location*, etc. At the same time, as they are defined in terms of the semantic requirements of particular constructions, argument roles in this framework are more specific and numerous than traditional thematic roles (Goldberg 1995). Argument roles capture generalizations over individual verbs’ participant roles, i.e. each verb is assumed to be conventionally associated with a certain number of participant roles. Only a subset of those roles, namely the roles which are lexically *profiled*, are obligatorily expressed. Lexical profiling, following the general spirit of Langacker (1987, 1991), is designed to indicate which participant roles are associated with a verb’s meaning. Fillmore (1977) similarly notes

<sup>14</sup> In predicate logic, an **existential quantification** is a type of quantifier, a logical constant which is interpreted as “there exists,” “there is at least one,” or “for some.” It expresses that a propositional function can be satisfied by at least one member of a domain of discourse. In other words, it is the predication of a property or relation to at least one member of the domain. It asserts that a predicate within the scope of an existential quantifier is true of at least one value of a predicate variable. (Saunders Mac Lane, Ieke Moerdijk, (1992) *Sheaves in Geometry and Logic* Springer-Verlag 58)


<sup>15</sup> A participant which the verb characterizes as having something happen to it, and as being affected by what happens to it.

that certain participant roles are obligatorily “brought into perspective” achieving a certain degree of “salience.” Certain types of argument roles are inherently more likely than others to be profiled and therefore obligatorily expressed. For instance, animate roles are generally more salient and central than place or location roles (Clark 1978; Goldberg 1995). However, in American political discourse the place and location roles are more vividly expressed and come to fill the argument position of agent.

So, in the American presidential discourse genocide events are constructed like the below mentioned:

$(\exists e) [\text{Agent}(e, x) \ \& \ \text{CAUSE}(e', s) \ \& \ \text{Theme}(e', \text{the Armenian people}) \ \& \ \text{BECOME}(e' \ s)]$

Complex Events




the final years of the Ottoman Emp.     1.5 million Armenian people  
 at the end of the Ottoman Emp.  
 in the Ottoman Emp.

the warning days of Ottoman Empire ( *Barack Obama April 24,2012*)

The 31<sup>st</sup> president Herbert Hoover, however, in his memoirs once mentioned those *who realized* such terrible events, i.e. from the semantic event point of view the causer argument is represented in his speech and from this angle the complex event comprises a causer agent and the inner expression which undergoes a change of state. (*«The association of Mount Ararat and Noah, the staunch Christians who were massacred periodically by the Mohammedan Turks.../ The Memoirs of Herbert Hoover, 1952 /*)

*There exists an event, where the Mohammedan Turks massacred the staunch Christians.*

$(\exists e) [\text{Agent}(e, \text{Mohammedan Turks}) \ \& \ \text{CAUSE}(e' \ \text{Theme}(\text{the staunch Christian}) \ \& \ \text{BECOME}(e' \ s) \ \text{massacred}(\text{NOT ALIVE})$




One important point should also be taken into consideration on this issue; the USA's president Barack Obama calls the worst atrocities of the 20<sup>th</sup> century as Meds Yeghern<sup>16</sup>, i.e. the massacres of 1.5 million Armenians. ( *Today, we commemorate the Meds Yeghern, one of the worst atrocities of the 20<sup>th</sup> century. In doing so we honor the memory of the 1.5 million Armenians who were brutally massacred or marched to their death in the warning days of the Ottoman Empire.* / Statement by the president on Armenian Remembrance Day, April 24, 2012/)

The Meds Yeghern is also considered to be an event, which comprises **massacres** and **killings** of 1.5 million Armenians. In its CAUSE predicate argument, the adverbial construction comes to be used as an agentive and involves a change of state in its inner expression ( Armenians BECOME massacred and NOT ALIVE).

The whole essence of the event semantic analyses of American political discourse is enclosed in the below mentioned figure;

**To massacre, murder, kill**



To sum, it is worthy to say that genocide events find their representations in American political discourse in many different ways and event-based semantics gives the opportunity to interpret these events from political discourse point of view. First, it becomes clear that the syntactic realization of a verb argument is constrained by the role that the argument plays in the meaning of the verb. In contemporary theories of argument realization, thematic roles are seen as emergent construct defined by the semantic structures they are embedded. According to this, verb can be decomposed into primitive lexical predicates (CAUSE,BECOME) which give the opportunity to interpret the whole event represented by that verb. The thematic role agent is defined as an argument of predicate CAUSE and a patient is an argument of BECOME. On the other hand, from the viewpoint of context grammar, adverbial modifiers of place and time come to be used by thematic roles. From this aspect, in American political discourse, the adverbial modifier is mostly used in an agentive role and the time/place argument causes change of state in the inner expression of the event. Sometimes in complex event the outer event is missing while state is presented which is a fact by hook or by crook. Finally, from logical point of view, it can be stated that though American politicians construct mental models about those terrible events in their discourse, but fail to recognize the fact without mentioning who realized those activities indeed. Moreover, they use the name *Ottoman Empire*, which does not exist nowadays, i.e. they realize and recognize the events taken place in the historical years of the Ottoman

<sup>16</sup> **Եղեռն (Yeghern)** – ոճիր, չարիք, սպանություն, կոտորած (Massacre, killing): Է. Բ.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան (E.B Aghayan, 'The explanatory Dictionary of contemporary Armenian language')* 1976, p. 323.



Empire. In the American political discourse the terrible events of 1915 are mainly described by the underlined verbs in the above mentioned analyses and these very verbs reveal the hidden meanings of the utterance by lexical decomposition of predicate. Thus, the main contribution of event semantics on discourse analyses is to make the meaning of the sentences more explicit. It uses logical parameters, but it makes much more sense than the pure logical language and from American discourse point of view it reveals all hidden political implications concerning the events of 1915 as well as their evasive policy.

## References

1. Davidson D., *Essays on actions and events*. Oxford: Oxford University Press, 2001 pp.105- 122(*The logical form of Action sentences*, 1967)
2. Dijk T., *Cognitive Context models and discourse*, In M. Stamenow (Ed.). *Language Structure, Discourse and the Access to Consciousness*; Amsterdam, Benjamins, 1997, pp. 189-226
3. Dijk T., *Political Discourse and Political Cognition 1997*//<http://www.let.uva.nl/~teun/>
4. Pustejovsky J. “ *The generative Lexicon*” MIT press Cambridge, Massachusetts 2000 pp. 61-140
5. Pustejovsky J. & Tenny C. “*Events as grammatical objects*” (*The converging perspectives of Lexical semantics and Syntax*) 2000 pp 3-32

[http://www.anca.org/genocide\\_resource/index.php](http://www.anca.org/genocide_resource/index.php) 27.01.2014

<http://www.armenian-genocide.org/> 27.01.2014

## Ամերիկյան քաղաքական խոսույթում ներկայացված Հայոց ցեղասպանության իմաստաբանական վերլուծություն

Սոնա Հակոբյան

### Ամփոփում

Այսօր քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը լեզվաբանական և քաղաքագիտական հետազոտությունների առանցքային մասն է կազմում: Քաղաքական խոսույթի ուսումնասիրությամբ և վերլուծությամբ բացահայտվում է քաղաքական ուղերձի կամ դիրքորոշման եղելությունը: Ավելին՝ լեզվաբանական ուսումնասիրություններում այսօր կիրառվում է «իրադարձությունների իմաստաբանության» նոր տեսությունը, որն ուղիներ է բացում այս ուսումնասիրությունների համապարփակ ներկայացման համար: Հոդվածում «իրադարձությունների իմաստաբանություն» հիմքով վերլուծվում են ԱՄՆ քաղաքական խոսույթում Հայոց ցեղասպանության և թեմային առնչվող իրադարձությունները: Իրադարձությունների լեզվական մեկնաբանությունն իրականանում է տրամաբանական, իմաստաբանական և շարահյուսական մեխանիզմների համատեղմամբ՝ բացահայտելով խոսույթում ներկայացված իրադարձության խորքային իմաստը և պատճառահետևանքային կապերը:

**Բանալի բառեր՝** իրադարձությունների իմաստաբանություն, իրադարձություն, իրավիճակ, պրեդիկատ, փոփոխական, արգումենտ, խոսույթ, իրավիճակային քերականություն, քաղաքական խոսույթ, Հայոց ցեղասպանություն, ԱՄՆ:



## **The Semantic Analyses of Armenian Genocide in the American Political Discourse**

*Sona Hakobyan*

### **Summary**

The study of political discourse is now considered to be one of the main parts of linguistic and political studies. The research leads to the revealing of the political talks' or statements' basic essence. Moreover, within the framework of linguistic studies nowadays a new theory under the name of "Event - based semantics" is used and this new theory opens essential study ways for this kind of research. The events of Armenian Genocide presented in American political discourse are analyzed and represented in the following article. The linguistic representation of events is realized by combining logical, semantic and syntactical mechanisms which give us a hint to reveal the events' deep meaning and causal relations presented in discourse.

**Keywords:** Event-semantics, event, state, predicate, variable, argument, discourse, context grammar, political discourse, Armenian Genocide, USA.

## **Семантический анализ Геноцида армян в американском политическом дискурсе**

*Сона Акопян*

### **Резюме**

Сегодня изучение политического дискурса является ключевой частью политических и лингвистических исследований. Исследования ведут к тому, что благодаря рассмотрению и анализу политического дискурса выявляется вся суть речи или политической позиции. Более того, в рамках изучения лингвистики употребляется новая теория под названием «семантика событий», благодаря которой выявляются комплексные методы этого же исследования. В данной статье на основе семантических событий подвергается анализу геноцид 1915 года, представленный в американском политическом дискурсе. Совмещение логических, семантических и синтаксических механизмов, выявляющих глубокий смысл и причинно-следственные связи в дискурсе, реализуется лингвистическим толкованием событий.

**Ключевые слова:** Семантика событий, событие, ситуация, предикат, переменная, аргумент, дискурс, ситуационная грамматика, политический дискурс, Геноцид армян, США.

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

### ԾՊՏՅԱԼ ԵՎ ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԹՈՒՐԲԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Մելինե Անումյան

Վերջին տարիներին Թուրքիայում նախկինում արգելված մի շարք թեմաներ, պայմանավորված Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու խնդրով և հարակից այլ գործոններով, սկսել են արծարծվել և համեմատաբար ազատ քննարկվել թուրքական մամուլում: Նման արգելված թեմաներից մեկն էլ Հայոց ցեղասպանությունից հետո Արևմտյան Հայաստանում և հանրապետական Թուրքիայի այլ շրջաններում մնացած արևմտահայության բեկորների՝ ծայտյալ և այլադավան հայերի խնդիրն էր:

Թուրք մտավորական շրջանակներին, ներառյալ՝ լրագրողները, առավելապես հուզող հարցն է, թե ինչ դեր են կատարել ու շարունակում կատարել բարձր դիրքի հասած հայ և այլազգի կրոնափոխները Թուրքիայի քաղաքական կյանքում:

Այսպես, Թուրքիայի Չանաքքալեի «Մարտի 18» համալսարանի ռեկտոր Սեդաթ Լաչիները դեռևս 2005թ. սեպտեմբերին «Միջազգային ռազմավարական հետազոտություններ» հասարակական կազմակերպության մամուլ օրգանում հրապարակված «Հայ դյոնմենները»<sup>1</sup> հոդվածում գրում էր. «Ամենակարևորն այն է, որ իրական ինքնության մասին իմանալով կամ չիմանալով՝ հայ և հույն դյոնմենները կարևոր դեր խաղացին Թուրքիայի և թրքության վերակառուցման մեջ: Անհնար է Թուրքիայի պատմությունը գրի առնել կամ ըմբռնել՝ առանց հասկանալու նրանց անցած ուղին: Բացի այդ, ուսումնասիրության է արժանի նաև դյոնմենների դերը Թուրքիայի ներքին քաղաքականության մեջ»<sup>2</sup>:

Ժամանակակից թուրքական մամուլը որոշակի տեղ է հատկացնում հավատափոխ եղած հայերի տեղաբաշխվածության, թվաքանակի, գործունեության ոլորտների հարցերին, բերում ծայտյալ հայերի՝ արմատներին վերադառնալու և կրոնադարձության դեպքերի օրինակներ:

«Միլլի գազեթե» թուրքական պարբերականը 2005թ. դեկտեմբերի 28-ի համարում տպագրված «Մեր մեջ գտնվող ծայտյալ հայերը» հրապարակման մեջ նշում է, թե «Թուրքիայում ներկայում ենթադրաբար ապրում են շուրջ 30-40 հազար հայեր, ովքեր երկար տարիներ կարողացել են թաքցնել իրենց ինքնությունը թուրքի և քրդի ազգության տակ»: Թերթը նաև ներկայացնում է թուրք հայտնի պատմաբան, պրոֆեսոր Սալիմ Ջյոհջեի տեսակետները սույն խնդրի շուրջ. «Հայերի վերաբերյալ իր ուսումնասիրություններով հայտնի դոկտոր, պրոֆեսոր Սալիմ Ջյոհջեի տեսակետի համաձայն՝ որպես մուսուլման հանդես եկող կրիստո հայերը ներկայում շարունակում են պահպանել Հայ առաքելական եկեղեցու ավանդույթները: Ջյոհջեն հայտնելով, որ վերջերս որոշ ուսումնասիրություններ են կատարվել այս մարդկանց վերաբերյալ, ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ մոտ ապագայում նրանք օգտագործվելու են հայերի երազանքներն իրականություն դարձնելու գործում: Ջյոհջեն նշում է, որ տեղահանությունից հետո իսլամացածների թիվը կազմում է մոտ 100 հազար հոգի: Կրոնափոխ եղածները մեծամասամբ գրանցված են Ստամբուլի, Դիարբեքիրի, Ադրյամանի, Բաթմանի, Սվասի, Թունջելիի, Մալաթիայի, Էլյազիզի, Կայսերիի, Մերսինի և Մարդինի նահանգներում: Ջյոհջեն բացատրում է, որ 1995թ. հետո

<sup>1</sup> Dönme-թուրքերենում բառացի՝ «շրջված», այն կիրառվում է նաև «մահմեդականություն ընդունած» կամ «այլադավան դարձած» իմաստներով:

<sup>2</sup> Sedat Laçiner, *Ermeni Dönmeler*, Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu, 08.09.2005, <http://www.usakgundem.com/yazar/110/ermeni-d%C3%B6nmeler.html>.

ավելացել են գաղտնի ու հավատարմիս հայերին առնչվող գործողությունները, իսկ 2003թ. մուսուլմանի անվան տակ մոտ 120 հայ է դիմել Չավուշօղլուում գտնվող եկեղեցին վերաբացելու խնդրանքով: Ջյոհջեն շեշտում է, որ նրանք հանդես են գալիս նաև իրենց նախկին գույքը հետ բերելու նախաձեռնություններով: Ըստ Ջյոհջենի, թեև նրանց մեջ կան իսկական մահմեդականներ, սակայն կրիպտո՝ ծպտյալ հայերը մուսուլման են միայն անձնական վկայականներով: Ջյոհջեն ընդգծելով, թե համոզված է գաղտնի հայերի վտանգավոր լինելու մեջ, որպես օրինակ նշում է, որ հատկապես վերջին տարիներին նրանց ուղղությամբ աշխատանքներ են կատարվում հայկական խմբերի կողմից: Ջյոհջեն պաշտպանում է այն տեսակետը, ըստ որի՝ ջանում են նրանց հիշեցնել իրենց իրական ինքնության մասին և դրամական աջակցություն ցուցաբերում: Ջյոհջեն հայտնում է, որ համոզված է, թե հայերին գիտակցաբար կհիշեցնեն իրենց արմատների մասին, և շուտով նրանք Թուրքիայից հողի փոխհատուցում կպահանջեն»<sup>3</sup>:

Պրոֆեսոր Սալիմ Ջյոհջեն նույնիսկ կարծիք է հայտնում, թե ծպտյալ հայերն այդ նպատակով մինչև 2015թ. ահաբեկչական պայքար կսկսեն Թուրքիայում<sup>4</sup>:

Ծպտյալ հայերի ներգրավվածությունը ձախակողմյան հոսանքներում, ինչպես նաև ձախ ահաբեկչական կազմակերպություններում վերջին տարիներին թուրքական մամուլում հաճախակի հնչեցված տեսակետներից է, որը պարբերաբար մամուլի օրակարգ է բերվում նաև Թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) նախկին նախագահ, պրոֆեսոր Յուսուֆ Հալաչօղլուի կողմից: Վերջինս, ծայրահեղության մեջ ընկնելով, Քրդական աշխատավորական կուսակցությունում (ՊԿԿ) նման հայերի թիվը հասցնում է մինչև 80 տոկոսի<sup>5</sup>, իսկ ժամանակին Թուրքիայի փոխվարչապետ, ներկայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեքը 2010թ. օգոստոսին, ակնարկելով Քրդական աշխատավորական կուսակցության հայ անդամներին, ասում է. «...հայկական ահաբեկչության ու Քրդական աշխատավորական կուսակցության ահաբեկչության միջև գոյություն ունի սերտ համագործակցություն. նրանք արյան եղբայրներ են: Հայկական ահաբեկչության փուլից դուրս եկան. գործը հանձնեցին այս կողմին: Ներողություն եմ խնդրում արտահայտությանս համար, բայց այն հանգամանքը, որ ահաբեկիչների մի մասը թլպատված չէ, արդեն իսկ խոսում փաստ է: Այսինքն՝ դրանք ընդամենը խոսակցություններ չեն: Մենք լավ գիտենք՝ ով ինչ է»<sup>6</sup>:

Կրոնափոխ հայերի առնչությամբ թուրքական մամուլում արծարծվող թեմաներից մեկն էլ թուրքական ցեղապաշտությամբ տառապող հայտնի իսլամացած հայերն են: Հարկ է նշել, որ նման որոշ հայեր էլ ոչ վաղ պատմության ընթացքում և ներկայում աչքի են ընկնում իրենց արտահայտված հայատյացությամբ և թուրք ազգայնամոլությամբ: Կա նաև տեսակետ, ըստ որի՝ նրանցից շատերը հոգեբանորեն իրենց թշնամի են համարում հայության այն հատվածին, որը, ի տարբերություն իրենց, կարողացել է հավատարիմ մնալ իր արմատներին<sup>7</sup>:

Նման հայտնի իսլամացած հայերի ցանկ է ներկայացնում Իբրահիմ Աքսոյը «Հայ թուրքերը» հոդվածում, որը տպագրվել է 2006թ. օգոստոսին «Navkurd» քրդական կայքէջում: Հոդվածն սկսելով «Թուրքական ցեղապաշտության ջատագովներն իրականում

<sup>3</sup> Milli Gazete, 28.12.2005.

<sup>4</sup> Ռուբեն Մելքոնյան, *Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում* (ընդհանուր պատկերի ուրվագծման փորձ), [http://www.noravank.am/upload/pdf/321\\_am.pdf](http://www.noravank.am/upload/pdf/321_am.pdf).

<sup>5</sup> <http://www.haber3.com/pkknin-yuzde-80i-ermen-i-563161h.htm>.

<sup>6</sup> Çiçek'ten Ermeni PKK'lılar iması!, Radikal, 21.08.2010, [http://www.radikal.com.tr/turkiye/cicekten\\_ermen-i\\_pkklilar\\_imasi-1014804](http://www.radikal.com.tr/turkiye/cicekten_ermen-i_pkklilar_imasi-1014804).

<sup>7</sup> Ռուբեն Մելքոնյան, *Հայերի բռնի իսլամացումը Ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները*, Երևան, 2010, էջ 108:

որքանով են թուրք» նախադասությամբ՝ հողվածագիրը բերում է նման հայերի մի քանի օրինակներ, որոնց շարքում են նաև Աթաթուրքի հոգեդուստր Սաբիհա Գյոքչենը, Թուրքոթ Օզալի մայրը՝ Հաֆիզե Օզալը, Դելեթ Բահչելին, Մեսութ Յըլմազը և այլք<sup>8</sup>:

Թուրքական մամուլում ծպտյալ և այլադավան հայության թեմայի շուրջ ակտիվ քննարկումներ արձանագրվեցին հատկապես 2007թ. սկզբներին, որը պայմանավորված էր Հրանտ Դինքի թաղման արարողությանը «Բոլորս հայ ենք» վանկարկող հոծ զանգվածի մասնակցությամբ: 2007թ. հունվարի 31-ին թուրքական «Cafesiyaset» լրատվական կայքը գրում է. «...Թուրքիայում գոյություն ունի մի լուրջ խնդիր՝ ծպտյալ հայերի հարցը, ըստ որի՝ այս պահի դրությամբ մեր երկրում են բնակվում մոտ 80 հազար գաղտնի հայեր: Դա խնդրի մի կողմն է, իսկ մյուսն այն է, որ այս ծպտյալ հայերի մի մասը կարևոր պաշտոններ է զբաղեցնում պետական հաստատություններում և կրթական համակարգում»<sup>9</sup>:

Այս թեմայով քննարկումները դարձյալ ակտիվացան 2007թ. ամռան վերջերին, այն բանից հետո, երբ օգոստոսի 18-ին Կեսարիա քաղաքում կայացած գիտաժողովի ժամանակ Յուսուֆ Հալաչօղլուն արտահայտեց այն միտքը, թե Թուրքիայում քրդերի մեծ մասն ունի թուրքմենական ծագում, իսկ ալևի քրդերը կրոնափոխ հայեր են, ովքեր անվանափոխ ու դավանափոխ են եղել իր խոսքերով՝ 1915թ. «տեղահանությունից», այսինքն՝ ցեղասպանությունից փրկվելու նկատառումով<sup>10</sup>:

Թուրքական մամուլում Հալաչօղլուի հայտարարության առնչությամբ արձանագրվեցին թե՛ դրական, թե՛ բացասական արձագանքներ: Սակայն, կարևորն այն էր, որ Հալաչօղլուն տեղիք տվեց կրոնափոխ հայության հարցի վերարժանմանը, թեմա, որն անմիջականորեն առնչվում է Հայոց ցեղասպանությանը:

2007թ. սեպտեմբերի 7-ին «Ռադիկալ» օրաթերթում տպագրվեց պատմաբան Ֆուադ Դյունդարի «Այն թեզը, որն իրթթիհադականներն անգամ չեն արտահայտել. Ալևի քրդերի հայկականությունը» վերնագրով հոդվածը, որում հեղինակը հետևյալ դիտարկումներն էր անում. «...Հալաչօղլուն «ալևի քրդերի հայկականությունը» վերաբերող իր խոսքով ցանկացել է մի գնդակով երկու նապաստակ խփել՝ թե՛ քրդերի թիվը քիչ ցույց տալ և թե՛ ասել, որ 1915թ. կոտորածներ չեն եղել, և որ անհետացած հայերն ալևի են դարձել: (...) Միակ բանը, որ կարելի է ի նկատի ունենալ նրա ասածներից, իսլամի ընդունման հետ առնչվող խնդիրն է: 1915թ. ամռանը, երբ հրապարակվում է «առանց բացառության բոլոր հայերի» տեղահանության հրամանը, լինում է զանգվածային մահմեդականացման դիմում, որով հետև հայերի համար դեպի մահ տանող աքսորից ամեն գնով ազատվելու և ողջ մնալու միակ ճանապարհն իսլամ ընդունելն էր: Երբ զանգվածաբար ի հայտ են գալիս իսլամ ընդունելու հարցումներ, Թալեաթ փաշան հրամայում է հավատարիս եղածներին ազատել տեղահանությունից: Սակայն միայն 3 շաբաթ անց, երբ իսլամ ընդունել ցանկացողների թիվը լրջորեն մեծանում է, Թալեաթը հրամայում է, որ եթե անգամ կրոնափոխ էլ լինեն, գաղթից չազատվեն: Որոշ ժամանակ անց էլ հայտարարում է, որ հավատարիս լինելու դիմումները չընդունեն, որովհետև նմանատիպ դիմումները «մոլորեցնող են ու ժամանակավոր»: Հրամայում է, որ պետք է ընդունել միայն այն ընտանիքների դավանափոխության դիմումները, որոնց թույլ է տրվել մնալ Անատոլիայում: Չնայած կենտրոնից եկած կտրուկ հրամանին՝ նահանգապետներն ու գավառապետները շարունակում են ընդունել

<sup>8</sup> İbrahim Aksoy, *Ermeni Türkleri*, Navkurt, Ağustos 2006, [http://www.navkurd.net/nivisar/aksoy/ermeni\\_turkleri.htm](http://www.navkurd.net/nivisar/aksoy/ermeni_turkleri.htm).

<sup>9</sup> Cafesiyaset.com.tr, 31.01.2007.

<sup>10</sup> Kürtler Türkmen, *Kürt Alevileri Ermeni*, Aktif Haber, 20.08.2007, <http://www.aktifhaber.com/kurtler-turkmen,-kurt-alevileri-ermeni-128303h.htm>.

կրոնափոխ լինելու մասին դիմումները, որից հետո Թալեաթը, իսլամ ընդունելու մասին մի գրավոր հրահանգ պատրաստելով, կտրականապես հրամայում է ոչ մի դավանափոխություն չընդունել՝ տեղահանությունից ազատվածներից ու կենտրոնի հրամանով իրենց տեղում մնացածներից բացի: Մի ճանապարհ է մնում՝ ամուսնությունը: Իթթիհատականները հրամայում են միայն ամուսնանալու պայմանով ընդունել մահմեդականացման հարցումները: Այսինքն՝ այդ հրամանով, ըստ էության, հայտնած են լինում, որ ընդունելի է միայն մուսուլման տղամարդկանց հետ ամուսնացող հայ կանանց կրոնափոխությունը»<sup>11</sup>:

Թուրքական մամուլում հրապարակվում են նաև իսլամացած հայերի հանդեպ դրական վերաբերմունք արտահայտող հոդվածներ, որոնցում հանդուրժողականություն է քարոզվում նման հայերի նկատմամբ:

Այսպես, օրինակ, «Յենի Աքթյուել» հանդեսը 2007թ. սեպտեմբերի 6-ի համարում այս թեմայով մի ծավալուն հոդված հրապարակեց՝ «Իրենց անցյալի հետ են առերեսվում նրանք, ում մեծ մայրերն ու մեծ հայրերը հայ են. պատմում են մուսուլման հայերը» վերնագրով: Հոդվածում նշելով, որ կրոնափոխ հայերի մասին Հալաչօղլուի խոսքերը մեծ արձագանք են գտել, ընդգծվում էր նաև, որ տվյալ քննարկումը հասարակության որոշ շերտերում դեռ վախ և անհանգստություն էր հարուցում: Այս հրապարակման մեջ բերված են նման մի շարք հայերի անհատական պատմությունները: Հոդվածում մեջբերվում է նաև «Թոփլումսալ Թարիհ» ամսագրի նախկին խմբագիր, «Բիրզամանլար» հրատարակչության տնօրեն Օսման Քյոքերի կարծիքը, ըստ որի՝ հայերի մահմեդականացման դեպքեր են գրանցվել ոչ միայն 1915թ., այլև թուրքերի՝ այս տարածքներ մտնելուց ի վեր: Քյոքերը նաև անհիմն էր համարում Հալաչօղլուի այն պնդումը, թե հայերն իսլամացման միջոցով իբրև թե փրկվել են ցեղասպանությունից:

«...Անհնար է՝ հայերը, «Մենք ալեի բուրդ ենք» ասելով, փրկվելին զինվորների ձեռքից, իսկ այն անտեր-անտիրական մնացած կանանց և երեխաների մահմեդականացումը, որոնց ամուսինները կամ հայրերը մահացել էին կամ էլ նախապես աքսորվել, ոչ թե բացառություն էր, այլ այն ժամանակվա պետական քաղաքականություն»<sup>12</sup>:

Ծալտյալ և այլադավան հայերի խնդիրը թուրք լրագրողների կողմից քննարկվում է նաև կրթական համակարգում նման հայերի առկայության համատեքստում: Այսպես, 2008թ. Մեհմեդ Շեքեր Էյզին «Միլլի գազեթե» օրաթերթում գրելով, թե դեռևս 2005թ. օգոստոսին Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Երկրորդը Փարիզում հրատարակվող «Լա Քոլուա» պարբերականին տված հարցազրույցում հաստատել էր, թե ներկայիս Թուրքիայում գոյություն ունեն հայկական ծագմամբ մեկ ու կես միլիոն թուրքեր և մուսուլմաններ, և որ հայոց պատրիարքարանի տվյալներով ամեն տարի հայկական արմատներով շուրջ 60 մահմեդականներ են դիմում պատրիարքարան, որպեսզի վերադառնան իրենց կրոնին, նաև հիշեցնում էր, որ Թուրքիայում են պաշտոնավարում քրիստոնյա ծագում ունեցող մոտ 21 դեկաններ ու ռեկտորներ, «որոնց տների գետնահարկերում գաղտնի զանգակատներ կան»<sup>13</sup>:

Մեկ այլ ազգայնամոլ հոդվածագիր՝ Արսլան Բուլուրը, 2008թ. ապրիլի 6-ին հրապարակված «Ծալտյալ հայ ազգային կրթական համակարգում» հոդվածում ընթերցողների

<sup>11</sup> Fuat Dündar, *İttihatçıların bile dile getirmediği tez: Alevi Kürtlerin Ermeniliği*, Radikal, 07.09.2007 <http://www.radikal.com.tr/Radikal.aspx?aType=RadikalHaberDetayV3&ArticleID=825101&Date=27.04.2011&CategoryID=99>.

<sup>12</sup> Gökçen Dinç, *Anneanesi, babaanesi, dedesi Ermeni olanlar geçmişle yüzleşiyor: Müslüman Ermeniler anlatıyor*, Yeni Aktüel, 06.09.2007, <http://www.yeniaktuel.com.tr/tur103,116@2100.html>.

<sup>13</sup> Mehmet Şevket Eygi, *Köşebaşlarında gizli Hristiyanlar, gizli Yahudiler*, Milli Gazete, 03.03.2008, <http://www.milligazete.com.tr/index.php?action=show&type=writersnews&id=17302>

ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ Ազգային կրթության նախարարության կողմից հրատարակված՝ 11-րդ դասարանի համար նախատեսվող աշխարհագրության դասագրքերում տպագրված Թուրքիայի քարտեզում Արարատ լեռը նշվել է հենց Արարատ ձևով՝ թուրքական «Ադրի» փոխարեն, և շեշտում. «Հայոց ցեղասպանության պնդման խորհրդանիշ եղող Արարատը թուրքական դասագրքերում հայերեն կարող էր գրել միայն երակներում հայկական արյուն ունեցող մեկը»<sup>14</sup>:

Ծպտյալ հայերը թուրքական լրատվամիջոցներում շատ հաճախ ներկայացվում են որպես Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգ: Ըստ մամուլ որոշ օրգանների՝ այն հայերը, ովքեր իսլամանալով հանդերձ, շարունակում են պահպանել իրենց հայկական ինքնագիտակցությունը, կարող են վրեժ լուծել Թուրքիայից: Այսպես, օրինակ, թուրք հեղինակներից Յուսուֆ Գեզգինը 2008թ. մարտի 24-ին «Աքթիֆհաբեր»-ում հրապարակված «Անատոլիայի զարթոնքը և ծպտյալների միացյալ ճակատը» հոդվածում անում էր ոչ օբյեկտիվ հետևություններ ծպտյալ հայերի և մյուս ծպտյալների միաբանման մասին. «Սաբաթայականները»<sup>15</sup> տեսնելով, որ Քրդստանի աշխատավորական կուսակցությունն ու ահաբեկչական արգելակն անգամ չկարողացան խոչընդոտ հանդիսանալ անատոլիացու զարթոնքին, ընտրեցին մյուս ծպտյալ օտարների հետ համատեղ ճակատ կազմելու ճանապարհը, ծպտյալներ, որոնց հետ նախկինում ախյան էին եղել և առանձնապես չէին կարողացել համերաշխ ապրել պատմության ընթացքում»<sup>16</sup>:

Իսկ «Անայուրթ Գազեթեսի» թերթի հեղինակներից Մուստաֆա Ներուզ Սընաջըն հիշյալ պարբերականի՝ 2008թ. ապրիլի 26-ի համարում տպագրված «3 Թ-ե ծրագիրը և գաղափարը՝ կրիպտո» վերնագրով հոդվածում ահազանգում է, այսպես կոչված, «3 Թ-ե» ծրագրի մասին, որը պետք է, ըստ հեղինակի, իրագործվի ծպտյալ հայերի միջոցով<sup>17</sup>: Նշենք, որ այս ծրագիրն իր անվանումը ստացել է թուրքերեն *tanıma* (ճանաչում), *tazminat* (փոխհատուցում) և *toprak* (հող) բառերից, որոնք երեքն էլ սկսվում են *t* տառով:

2008թ. դեկտեմբերի 16-ին «Թեքքիշիլիք գազեթե» թերթի լրագրողներից Հասան Թահսինը «Հայաստանի ընդարձակմանն ուղղված ջանքերը» հոդվածում, նշելով Թուրքիայում ոչ քիչ թվով ծպտյալ հայերի գոյության փաստը, որոնց, ըստ հեղինակի, պարբերաբար աջակցել են ԽՍՀՄ-ն ու ՊԱԿ-ը, գրում է. «Ալիի քրդի ինքնության տակ պատսպարված ծպտյալներն ունեն մեկ նպատակ: Նրանց հիմնական մտադրությունն է Մեծ Հայաստանի ստեղծման ծրագրին ծառայելը»<sup>18</sup>:

2008թ. վերջերին ծպտյալ հայերի թեմայի վերաբարձմանը տեղիք տվեց Ժողովրդահանրապետական կուսակցության պատգամավոր Ջանան Արըթմանի կողմից հրապարակ նետված՝ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի մոր հայ լինելու վարկածը: Արըթմանի հայտարարությանը որպես արձագանք՝ «Թարաֆ» օրաթերթի սյունակագիրներից Մուրադ Բելգեն հետևյալ հռետորական հարցերն էր ուղղում նշված պարբերականի՝ 2008թ. դեկտեմբերի 20-ի համարում՝ եզրահանգումները թողնելով ընթերցողներին. «...ինչպես է եղել, որ այդ հայ կինը թուրքի հետ է ամուսնացել: Ընտանիքը թոյլ է տվել և մեծ

<sup>14</sup> Arslan Bulut, *Milli Eğitim'de kripto Ermeni!*, Yeniçağ Gazetesi, 06.04.2008, <http://www.yenicaggazetesi.com.tr/milli-egitimde-kripto-ermen-i-3279yy.htm>.

<sup>15</sup> Խոսքը կրոնափոխ հրեաների՝ Շաբաթայ (Սաբեթայ) Ցվիի հետնորդների մասին է:

<sup>16</sup> Yusuf Gezgin, *Anadolu'nun uyanışı ve Birleşik Kripto Cephe*, 24.03.2008, [http://www.aktifhaber.com/author\\_article\\_detail.php?id=3824](http://www.aktifhaber.com/author_article_detail.php?id=3824).

<sup>17</sup> Mustafa Nevruz Sinacı, *3 T Projesi ve IDEA Kripto*, Anayurt Gazetesi, 26.04.2008, <http://www.anayurtgazetesi.com/default.asp?page=yazar&id=1350>.

<sup>18</sup> Hasan Tahsin, *Ermenistan'ı genişletme çabaları*, Tekkışilik Gazetesi, 16.12.2008, [www.tekkisilikgazete.com/content/view/1399/5/](http://www.tekkisilikgazete.com/content/view/1399/5/).

ոգևորությամբ է ընդունել այդ ամուսնությունը: Թե՛ ընտանիք չի ունեցել: Եթե չի ունեցել, ապա ի՞նչ պատճառով: Ինչու՞ այս երկրում այսքան մարդկանց ընտանիքներում միշտ որևէ հայ կին է լինում (չգիտես ինչու երբեք՝ ոչ տղամարդ)»<sup>19</sup>:

2009թ. այս թեման թուրքական մամուլում քննարկվում էր նաև Էրդողանի կառավարության ներկայացրած «Քրդական և հայկական նախաձեռնությունների» (Kürt ve Ermeni açılımları) շրջանակներում:

2009թ. հոկտեմբերին թուրքական մամուլում նկատելի էր ընդհանուր հայկական թեմատիկայի հանդեպ հետաքրքրության աճ, որը պայմանավորված էր ցյուրիխյան արձանագրությունների ստորագրմամբ:

Նույն Մեխնեդ Շևքեթ Էյգին «Միլլի գազեթե»-ի՝ 2009թ. հոկտեմբերի 12-ի համարում տպագրված «Քրդական նախաձեռնություն, թե՛ Հայկական հարց» վերնագրով հոդվածում արձանագրելով, թե Թուրքիայում գոյություն ունեն երկու տեսակի հայեր՝ բացահայտ և ծպտյալ, շեշտում էր գաղտնի հայերի ծրագրերը միշտ օրակարգում պահելու և գիտակցելու անհրաժեշտությունը<sup>20</sup>:

Միևնույն հեղինակը, 2010թ. հունվարի 31-ին հրապարակված «Հայ որբեր» հոդվածում համոզմունք արտահայտելով, թե ծպտյալ հայերի մի մասը ցանկանում է վրեժ լուծել իր արտահայտությամբ «1915-18թթ. աղետի» համար, մտահոգություն էր հայտնում, որ նման ծպտյալները ցանկանում են «աղավաղել թուրքական մշակույթը և հատուկ քարոզչություն տարածելով՝ ճանապարհի հարթում Թուրքիայի մասնատման համար»<sup>21</sup>:

Ծպտյալ և կրոնափոխ հայերի թեման թուրքական մամուլում շարունակել է քննարկվել նաև 2010թ.: Այսպես, 2010թ. մարտի 30-ին «Թարաֆ» օրաթերթը ներկայացրել է Բոդազիչի համալսարանի պրոֆեսոր Սելիմ Դերինգիլի հարցազրույցը<sup>22</sup>: Պրոֆեսորն ընդգծելով, թե 1915-ին ոչ բոլոր իսլամացած հայերն են փրկվել մահից, շեշտում էր նաև, որ «դեռևս Թանզիմաթի ժամանակաշրջանից սկսած՝ ցանկություն է եղել նվազեցնել հայ բնակչության թիվը, և պետությունը դեռ այն տարիներին բյուրոկրատական խնդիրներ է հարուցել ոչ մուսուլմանների համար»: Դերինգիլը հայտնում էր նաև, թե «հանրապետական շրջանում ևս հայերին ու բոլոր ոչ մահմեդականներին ուղղված ոչնչացման մի նոր ալիք է եղել, որը ոչ միշտ է արտահայտվել սպանելով»: Ըստ պրոֆեսորի՝ այդ ոչնչացումը հանրապետական շրջանում կատարվում էր նաև մարդկանց կյանքի համար անբարենպաստ պայմաններ ստեղծելու, նրանց կյանքը դժոխքի վերածելու միջոցով, երբ մարդիկ ստիպված գաղթում էին արտասահման. «Ես նոր եմ բացահայտել, որ դեպի Թուրքիայի արևմուտք գաղթել պարտադրող 1934թ. վերաբնակեցման օրենքը կիրառվել է նաև հայերի նկատմամբ»: Նա նաև խոսում էր այն ուշագրավ տարբերության մասին, որը նկատելի է օսմանյան և հանրապետական շրջանների միջև. «Այն դեպքում, երբ խալիֆայական պետություն Օսմանյան կայսրությունում հայերը հնարավորություն ունեին պետական բարձր պաշտոններ զբաղեցնել, աշխարհիկ, ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունում խոսք անգամ լինել չի կարող որևէ հայի՝ արտաքին գործերի նախարարություն, բանակ կամ ոստիկանություն մուտք գործելու մասին: Օրենքով ոչ մի արգելք չկա, բայց Թուրքիա-

<sup>19</sup> Murat Belge, *Annesi Ermeni'ymiş*, 'Taraf' Gazetesi, 20.12.2008, <http://www.taraf.com.tr/murat-belge/makale-annesi-ermeniyimis.htm>

<sup>20</sup> Mehmet Şevket Eygi, *Kürt Açılımı mı, Ermeni meselesi mi?*, "Milligazete", 12.10.2009, <http://www.milligazete.com.tr/makale/kurt-acilimi-mi-ermeni-meselesi-mi-140545.htm>

<sup>21</sup> Mehmet Şevket Eygi, *Ermeni Yetimleri*, Milligazete, 31.01.2010, <http://www.milligazete.com.tr/makale/ermeni-yetimleri-151602.htm>.

<sup>22</sup> *Kürt-Ermeni çok fazla*, Taraf Gazetesi, 30.03.2010, <http://www.taraf.com.tr/haber/kurt-ermeni-cok-fazla.htm>.



յի Հանրապետությունը էթնիկ արմատների վրա հիմնված կազմավորում է: Հավասարություն և այլ նման բաները հեքիաթ են: Հեքիաթ է նաև քաղաքացիությունը: Հանրապետությունը ստեղծվել է «վստահելի և ոչ վստահելի» տարրերի հիման վրա»<sup>23</sup>:

2010թ. ծախսերի հայերի թեման ակտիվացել է հատկապես սեպտեմբեր ամսին, երբ Ադրբայժանի Սուրբ Խաչ եկեղեցում մատուցված պատարագին մասնակցել էին նաև Պոլսո հայոց պատրիարքի ընդհանուր փոխանորդ Արամ Աթեշյանի իսլամացած զարմիկները, որոնք հրապարակավ հայտնեցին, որ մկրտվելու համար սպասում են Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու վերաբացմանը: Թեման անմիջապես լայն արձագանք է ստացել թուրքական լրատվամիջոցների կողմից, քանի որ այն արժարժվում էր Պոլսո հայկական համայնքի հոգևոր առաջնորդի մակարդակով: «Հյուրիերը» 2010թ. սեպտեմբերի 21-ին տպագրել է «Արդեն քրիստոնյա են գրել տալիս իրենց անձնագրերում» հոդվածը, որում ներկայացվում էին Արամ Սրբազանի քրոջ թոռների անհատական պատմությունները<sup>24</sup>:

Չի հապաղել նաև Յուսուֆ Հալաչօղլուի բացասական արձագանքը, որը թեմային անդրադարձել է սեպտեմբերի 22-ին «Թուրք օջաքլարը» կայքէջում: Հալաչօղլուն հայտարարելով, որ Թուրքիայում են ապրում առնվազն 500 հազար ծախյալ հայեր, առաջ է քաշել նաև այն տեսակետը, թե «ովքեր այս ճշմարտությունն ասելու համար իրեն մեղադրում են ցեղապաշտության մեջ և առանց դատի դատապարտում, այսօր հրապարակում են դա, որովհետև հոգ են նախապատրաստում հայերին փոխհատուցում տալու համար»<sup>25</sup>:

Նույն օրը ազգայնական շրջանակներին մոտ գտնվող «Յենի Չաղ» օրաթերթը գրել է, որ «Թուրքիայի հիմնական խնդիրը ծախյալ հայերն են»<sup>26</sup>:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ արևմտահայության մնացորդացի՝ ծախյալ և այլադավան հայերի թեման վերջին տարիներին եղել է թուրքական լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Թուրքական ՁԼՄ-ներում նման հայերի հանդեպ ընդհանուր առմամբ նկատելի է երկու տեսակի վերաբերմունք՝ բացասական և դրական: Բացասական, երբ թուրքական՝ հիմնականում աջակողմյան մամուլի էջերում իսլամացած ու հատկապես ծախյալ հայերը դիտվում են որպես Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգ, ու դրական, երբ թուրքական ձախակողմյան պարբերականներում ներկայացվում են նման հայերի ապրումները: Եթե բացասական վերաբերմունք արտահայտող հրապարակումներում ընթերցողներին կոչ է արվում զգոն լինել ծախյալ հայերի, հատկապես բյուրոկրատական ու կրթական համակարգում բարձր պաշտոնների հասած նրանց ներկայացուցիչների նկատմամբ, ապա դրական հոդվածներում բերվում են նման հայերի անհատական պատմությունները, և փորձ է արվում ընթերցողների շրջանում էմպատիա առաջացնել բռնի իսլամացված հայերի, հատկապես ցեղասպանության տարիներին թուրքերի և քրդերի հետ ամուսնանալ հարկադրված հայ կանանց ապրած ողբերգությունների հանդեպ:

Հարկ է նշել, որ ծախյալ և այլադավան հայերի խնդրի քննարկումները թուրքական մամուլում տեղիք են տալիս նաև նման հայերի առաջացման անմիջական պատճառ դարձած Հայոց ցեղասպանության հիմնահարցի և դրան հարակից այլ հարցերի արժարժանին ու լուսաբանմանը:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Okan Konuralp, *Artık kimliklerine Hristiyan yazdırıyorlar*, Hürriyet Gazetesi, 21.09.2010, <http://www.hurriyet.com.tr/gundem/15828167.asp>.

<sup>25</sup> Cenk Tutarlı, Prof. Dr. Halaçoğlu'ndan *Kimliklerine Hristiyan yazdıranlarla ilgili bir değerlendirme*, Odatv.com, 23.09.2010, <http://www.yenikanal.com/guncel/226698-ProfDrYusuf-HalaoludanKimliklerine-Hrstiyan-Yazdranlarla-Ilgili-Bir-Deerlendirme.html>.

<sup>26</sup> Arslan Bulut, *Devletin içindeki gizli Ermeniler!*, Yeniçağ Gazetesi, 22.09.2010, <http://www.yg.yenicaggazetesi.com.tr/yazargoster.php?haber=14987>.



## Ծպտյալ և իսլամացած հայերի հարցի արծարծումը ժամանակակից թուրքական մամուլում

Մելինե Անումյան

### Ամփոփում

Ծպտյալ և ալլադավան հայերի թեման վերջին տարիներին եղել է թուրքական լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Իսլամացած և ծպտյալ հայերը թուրքական ՋԼՄ-ներում ներկայացվում են որպես սպառնալիք՝ ուղղված Թուրքիայի ամբողջականությանը: Ըստ որոշ մամուլ օրգանների՝ այն հայերը, ովքեր իսլամացվելով հանդերձ, շարունակում են պահպանել իրենց հայկական ինքնագիտակցությունը, կարող են վրեժ լուծել Թուրքիայից: Բայց և այնպես, թուրքական որոշ պարբերականներ դրական վերաբերմունք են արտահայտում նման հայերի հանդեպ՝ ներկայացնելով նրանց պատմությունների ողջ ողբերգականությունը:

**Բանալի բառեր՝** ծպտյալ հայեր, իսլամացած հայեր, բռնի իսլամացում, թուրքական մամուլ, թուրքական ՋԼՄ-ներ, Հայոց ցեղասպանություն:

## Crypto and Islamized Armenians' Issues in Modern Turkish Media

Meline Anumyan

### Summary

The issues of crypto and heterodox Armenians have always been in the center of attention of Turkish media. Islamized and crypto Armenians have always been presented in Turkish media as a threat against Turkish integrity. According to some media representatives, those Armenians who were subjected to forced Islamization, but still keep Armenian identity, can take revenge from Turkey. But still, some print media representatives have positive approach towards them; they even present the entire tragedy of their history.

**Keywords:** crypto Armenians, islamized Armenians, forces islamization, Turkish media, Armenian Genocide.

## Обсуждение вопроса крипто и исламизированных армян в современной турецкой прессе

Мелине Анумян

Тема исламизированных и криптоармян в течении последних лет находится в центре внимания турецких средств массовой информации. Исламизированные и криптоармяне в турецких СМИ представляются как угроза целостности Турции. Согласно некоторым органам прессы те армяне, которые исламизируясь продолжают сохранять свое армянское самосознание, могут отомстить Турции.

Несмотря на это некоторые турецкие газеты выражают положительное отношение к таким армянам представляя всю трагичность их истории.

**Ключевые слова:** криптоармяне, исламизированные армяне, насильственная исламизация, турецкая пресса, турецкие СМИ, Геноцид армян.

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ՝ 1895-1896թթ. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ  
ԱՐՏԱՅՈՒՐԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «CHOCOLATERIE D'AIGUEBELLE»  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԳԱՅԻՆ ԲԱՅԻԿՆԵՐՈՒՄ**

*Ինեսա Ստեփանյան*

1895-1896թթ. ընթացքում, փորձելով հակազդել Օսմանյան կայսրությունում հայերի իրավունքներին, Հայկական հարցին վերջ տալու նպատակով կազմակերպվեցին կոտորածներ, որոնց զոհ գնաց շուրջ 300000 հայ<sup>1</sup>: Կոտորածներն ընդգրկել են Օսմանյան կայսրության 12 վարչական միավորներ, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթ: Արևմտահայերի կոտորածներից բացի, ավերվել և հրկիզվել են նրանց մշակութային հաստատությունները, հատկապես դպրոցներն ու եկեղեցիները: Այդ իրադարձությունները ժամանակին մեծ արձագանք են գտել և լայնորեն լուսաբանվել են թե՛ տեղի, թե՛ միջազգային մամուլի կողմից: Բացի այդ խնդրին անդրադարձել են բազմաթիվ գրքեր և պարբերականներ:

Ի տարբերություն եվրոպական պետությունների վարած քաղաքականության՝ բոլորովին այլ էր ժամանակի եվրոպական մամուլի, մտավորականների և հասարակական գործիչների արձագանքը: Հայ ժողովրդի դեմ իրագործվող հրեշավոր քաղաքականությունը խստորեն դատապարտեցին Ժան Ժորեսը, Վիկտոր Բերարը, Անատոլ Ֆրանսը, Յոհաննես Լեփսիուսը և ուրիշներ՝ իրենց կառավարություններից պահանջելով կտրուկ միջոցներ գործադրել՝ այդ ամենը դադարեցնելու համար: Այդ ժամանակվա եվրոպական մամուլում բազմաթիվ հոդվածների հրապարակումներից բացի հայտնվեցին մի շարք լուսանկարներ, թուրք ոճրագործների և հատկապես սուլթան Աբդուլ Համիդ II-ի ծաղրանկարները, փոստային բացիկներ և այլն:

Ոչ պակաս տարածված էին նաև գովազդային ներդիր-բացիկները: Դրանցում պատկերվում էին տարբեր թեմատիկ նկարներ կամ տեսարաններ, իսկ դարձերեսին՝ համապատասխան նյութի մասին բովանդակային թռուցիկ գրություններ: Այսպիսի ներդիր-բացիկները մեծ տարածում գտան տարբեր նախասիրություններ ունեցող մարդկանց շրջանում և դարձան թեմատիկ հավաքածուների առարկա:

Հոդվածում կդիտարկենք ֆրանսիական «Chocolaterie d'Aiguebelle»<sup>2</sup> շոկոլադագործական ընկերության՝ 1890թթ. հայերի կոտորածների կապակցությամբ թողարկած բացիկները: Այդ պատկերազարդումների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն և կարևորություն է ներկայացնում, քանի որ արժեքավոր տեղեկություններ հաղորդելուց բացի, դրանցում խիստ արտահայտիչ և յուրօրինակ կերպով ցուցադրվել են հայության դեմ գործադրված բռնությունները:

«Շոկոլատրդի դ'Էգեբել» ընկերությունը հիմնադրվել է Էգեբել<sup>3</sup> վանքի վանականների կողմից: 1868թ. Էգեբել վանքի հարևանությամբ ստեղծվում է «Chocolaterie d'Aiguebelle»-ի առաջին գործարանը: Ընկերության գործունեությունն ընդլայնվեց 1885թ., երբ ղեկավարությունը ստանձնեց Ժան-Բատիստ Շոտառը: Արդեն 1891թ. որպես կայացած արտադրություն՝ ընկերությունն իր երկրորդ գործարանը բացեց Դոնգերում<sup>4</sup>: Տարեցտարի ընկերության արտադրանքի ծավալներն ավելի էին մեծանում: Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես 1941թ., Մարոկկոյում, այնուհետև նաև Ալժիրում բացվեցին «Chocolaterie d'Aiguebelle»-ի մասնաճյուղերը: Հաղթահարելով

<sup>1</sup> Հանքի Պառլի, *Սարսափի երկրին մեջ*, Կ. Պոլիս, 1919, էջ 7:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս ընկերության պաշտոնական կայքէջում, [www.aiguebelle.com](http://www.aiguebelle.com):

<sup>3</sup> Գտնվում է Ֆրանսիայի Ռոն-Ալպ շրջանի Դրոմ դեպարտամենտում:

<sup>4</sup> Համայնք Ֆրանսիայի հարավ-արևելքում, Ռոն-Ալպ շրջանի Դրոմ դեպարտամենտում:

տնտեսական դժվարությունները՝ ընկերությունը կայացավ և գործեց մինչև 1978թ.՝ դառնալով Ֆրանսիայի թվով ութերորդ շոկոլադագործական ֆաբրիկան։ 1982թ. այն դարձավ ֆրանսիական շոկոլադագործության և հրուշակագործության «Cemoui»<sup>5</sup> խմբի անդամ և վերաբացվեց «Aiguebelle»-ի անունով։

Շոկոլադի վաճառքը խթանելու նպատակով ընկերությունը սկսեց թողարկել նաև պարբերական գովազդային ներդիր-բացիկներ, որոնք ապահովեցին երեք կարևոր ձեռքբերումներ։ Առաջին հերթին դա նորույթ էր, որով հերթական անգամ ուշադրություն հրավիրվեց ընկերության գործունեության վրա։ Երկրորդ՝ բացիկները մեծ տարածում գտան հանրության լայն շրջաններում, դարձան թեմատիկ հավաքածուների առարկա՝ ավելացնելով «Chocolaterie d'Aiguebelle»-ի հավատարիմ սպառողների քանակը։ Եվ երրորդ՝ բացիկներն ունեին ճանաչողական և ուսուցողական առաքելություն։ Ներդիր-բացիկների թեմաները բազմազան էին՝ ընդհուպ կենդանական և բուսական աշխարհ, բնություն, հեքիաթների հերոսներ, մշակույթի և գիտական գործիչներ, քաղաքներ, երկրներ, ճարտարապետական հուշարձաններ, պատմական իրադարձություններ, պատերազմական տեսարաններ և այլն։

Ընկերության առաջին թողարկումներից էր 1896թ. «Հայաստանի կոտորածները» («Massacres d'Arménie») խորագրով քրոմավիմագրական գովազդային բացիկների շարքը, որը բաղկացած էր 12 միավորից։ Առավել ուշագրավ է այն, որ հենց այդ հավաքածուն 1900թ. միջազգային ցուցահանդեսի ժամանակ ստացավ ոսկե մեդալ<sup>6</sup>։

Անշուշտ, այս ձեռնարկի գաղափարախոսության հիմքում քարոզչությունն էր։ Ընկերությունը նպատակ ուներ իր արտադրանքի բոլոր սպառողներին տեղեկացնել Օսմանյան կայսրությունում հայ քրիստոնյաների զանգվածային կոտորածների մասին։ Աղբյուրների սակավության պատճառով դժվար է հստակ պարզել, թե ֆրանսիական շոկոլադագործական ընկերությունն ինչ նպատակներով է հայանպաստ տեղեկատվական գործունեություն ծավալել, որը հնարավորություն էր տալիս շարքային եվրոպացուն հաղորդակից լինելու արևմտահայերի ճակատագրին։

Այս բացիկներն ուշագրավ են ոչ միայն իրենց ձևավորման և գունագարդման տեսանկյունից, այլև բովանդակային առումով։ Ըստ ժամանակագրության՝ առաջինը պատկերում է 1895թ. հոկտեմբերին Տրապիզոնի հայերի կոտորածը<sup>7</sup>։ Նկարում խաղաղ, անպաշտպան բնակչության՝ կանանց, ծերերի և երեխաների սպանության տեսարան է։ Տրապիզոնում դեպքերը զարգանում են ակնթարթային արագությամբ։ Թալանվում են հայերի խանութները, արհեստավորների կրպակները։ Այդ ամենը կատարվում էր զինվորների ու պետական պաշտոնյաների անմիջական մասնակցությամբ։ Ավերվում են շրջակա բոլոր գյուղերը, ոչնչացվում են ազգային հաստատությունները, հայերի մի մասն իսլամացվում է։ Ընդամենը երեք ժամվա ընթացքում Տրապիզոնում սպանվում է տարբեր հաշվարկներով 500<sup>8</sup>-600<sup>9</sup> խաղաղ բնակիչ։ Հայերը կրում են նաև զգալի նյութական կորուստներ։

Հաջորդ բացիկում պատկերված են կապուչինյան<sup>10</sup> վանահայրերը և Մալաթիայի գեփիները։ Խոսքը վերաբերում է 1895թ. հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 9-ը Մալաթիայում

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս ընկերության պաշտոնական կայքէջում, [www.aiguebelle.com](http://www.aiguebelle.com)։

<sup>6</sup> Նույն տեղում։

<sup>7</sup> Ternon Y., Kebedjian J.C., *L'Arménie d'Antan*, HC Editions, 2009, p. 122, տե՛ս նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետ՝ ՀՅԹԻ) գիտական ֆոնդեր, ք.-13, Ազգագրերի, թուղիկների, ծաղրանկարների ֆոնդ. ֆ. հ. 1170։

<sup>8</sup> Ներսիսյան Մ. Գ., Սահակյան Ռ. Գ., *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*, Երևան, «Հայաստան», 1991, էջ 169։

<sup>9</sup> Ternon Y., *նշվ. աշխ.*, էջ 122։

<sup>10</sup> Կապուչիններ՝ կաթոլիկ միաբանություն՝ հիմնված 1525թ.։

տեղի ունեցած կոտորածների նկարագրությամբ<sup>11</sup>: Չնայած նախօրոք մշակված ծրագրի համաձայն՝ զենք էր բաժանվել նաև մուսուլմաններին՝ այնուամենայնիվ այստեղ հայերը կարողացան ինքնապաշտպանություն կազմակերպել: Թուրքերը զինադադար են առաջարկում, ապա անսպասելի վերսկսում կոտորածը: Մոլեռանդ ամբոխը հարձակվում է տեղի հայկական եկեղեցու վրա, որտեղ ապաստանել էին մեծ թվով հայեր: Մալաթիայում սպանվում է ավելի քան 3000 հայ, այրվում մոտ 1000 տուն<sup>12</sup>:

Հավաքածուի հաջորդ բացիկում պատկերված են Արաբկիրի հայերը 1895թ. նոյեմբերի կոտորածների ժամանակ<sup>13</sup>: Արաբկիրում թուրքերին էին միացել նաև քրդական ավազակախմբերը: Նրանց հարձակումների ընթացքում ավերվում է մոտ 2700 տուն, սպանվում՝ 3000 հայ, ինչպես նաև առևանգվում են բազմաթիվ կանայք և երեխաներ<sup>14</sup>:

Կյուրինի<sup>15</sup> ջարդերը ներկայացնող բացիկում պատկերված է Կյուրինի ինքնապաշտպանության տեսարան՝ վերնագրված հետևյալ կերպ՝ «Կյուրունի ինքնապաշտպանությունը 1895թ. նոյեմբերի 12-ին»: Չնայած հայերի՝ մոտ 4 ժամ տևած դիմադրությանը՝ բնակավայրը պաշարվում է շուրջ 2000 քրդերի ու թուրքերի կողմից, իսկ նոյեմբերի 28-ին՝ վերջնականապես գրավվում: Հայերին պատկանող տներն այրվում և ավերվում են, մեծ թվով կանայք՝ հափշտակվում քրդերի կողմից<sup>16</sup>:

Չնայած այն բանին, որ կառավարությունը նախապես խոստացել էր պաշտպանել օտարերկրացիների կյանքն ու ունեցվածքը, այդուհանդերձ համիդյան կոտորածների զոհ դարձան նաև բազմաթիվ օտարերկրացիներ, այդ թվում՝ հոգևորականներ ու միսիոներներ:

Թուրք զինվորի կողմից հայր Սավատորեի սպանության տեսարանը պատկերված է շարքի հերթական բացիկում: Դեռևս 1895թ. հոկտեմբերի վերջին Ենիջե կոյի ֆրանցիսկյան հոգևորականները գտնվում էին Մարաշի թուրքական իշխանությունների պաշտպանության ներքո: Սակայն 1895թ. նոյեմբերի 18-ին Մուջուկդերեսիում սպանվում է ֆրանցիսկյան հոգևորական հայր Սավատորեն<sup>17</sup>: Վերջինիս սպանությունը թուրք զինվորների կրոնական մոլեռանդության ակնհայտ դրսևորումն էր, քանի որ կաթոլիկ հոգևորականներին սպանությունը չէր մտնում համիդյան կոտորածների ծրագրի մեջ:

«Massacres d'Arménie» շարքի բացիկներից մեկում ներկայացվում են 1896թ. Կ. Պոլսի Ղալաթա թաղամասում հայերի կոտորածները<sup>18</sup>: Պատկերված է սպանողի տեսարան՝ փողոցում ընկած հայ զոհերի մարմիններով: Կ. Պոլսում կոտորածները սկսվել էին դեռևս 1896թ. օգոստոսի 14-ին՝ «Բանկ Օտտոմանի» գրավումից հետո, որի հետևանքով քաղաքում մեծ թվով հայեր զոհվեցին, մոտ 6000 մարդ<sup>19</sup>:

Այսպիսով, ֆրանսիական հանրահայտ ընկերության այս հայանպաստ գործունեությունը՝ բացիկների թողարկման տեսքով, քարոզչական առաջին հաջողված փորձերից մեկն էր, որն ուղղված էր 20-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած զանգվածային կոտորածները դատապարտելուն: «Chocolaterie d'Aiguebelle»-ի քարոզչական

<sup>11</sup> ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, Բ.-13, Ազդագրերի, թուրքիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1170:

<sup>12</sup> Ա. Ալպոլանեան, *Պատմություն Մալաթիոյ Հայոց*, Պէյրուք, 1961, էջ 901:

<sup>13</sup> Ternon Y., Kebedjian J. C., *նշվ. աշխ.*, էջ 122, տե՛ս նաև ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, Բ.-13, Ազդագրերի, թուրքիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1315:

<sup>14</sup> *Братская помощь пострадавшим в Турции армянамъ*, Москва, 1897, стр. 52:

<sup>15</sup> Կյուրին՝ գյուղաքաղաք Մեբաստիայի մահանգում:

<sup>16</sup> Ternon Y., Kebedjian J. C., *նշվ. աշխ.*, էջ 122:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 122, ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, Բ.-13, Ազդագրերի, թուրքիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1171:

<sup>18</sup> ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, Բ.-13, Ազդագրերի, թուրքիկների, ծաղրանկարների ֆոնդ, ֆ. հ. 1205:

<sup>19</sup> *Լեռ, Անցյալից* (հուշեր, թղթեր, դատումներ), «Խորհրդային Կովկաս», Թիֆլիս, 1925:

և հայանպաստ գործունեությունը մեկնարկ դարձավ հետագայում հայերի զանգվածային կոտորածներին և Հայոց ցեղասպանության տարբեր տարելիցներին նվիրված քարոզչական բացիկների թողարկման համար:

**Արևմտահայության՝ 1895-96թթ. զանգվածային կոտորածների արտացոլումը  
ֆրանսիական «Chocolaterie d'Aiguebelle» ընկերության  
գովազդային բացիկներում**

*Ինեսա Ստեփանյան*

**Ամփոփում**

Հոդվածում ներկայացվում է ֆրանսիական «Շոկոլատրեդի դ'Էգեբել» ընկերության՝ 1896թ. թողարկած 12 միավորից բաղկացած գովազդային ներդիր-բացիկների շարքը՝ նվիրված 1895-1896թթ. հայերի՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած կոտորածներին: Ծարքն անվանվել է «Հայերի կոտորածները»: Հոդվածում ներկայացված բացիկներում պատկերված են Տրապիզոնի (1895թ.), Մալաթիայի (1895թ.), Արաբկիրի (1895թ.), Կյուրինի (1895թ.), Կ.Պոլսի Ղալաթա թաղամասի (1896թ.) հայերի ջարդերը, ինչպես նաև ֆրանցիսկյան հոգևորական հայր Սալվատորեի սպանությունը (1895թ.): Այս քայլը կարևոր էր հատկապես Եվրոպայի ուշադրությունը հայերի կոտորածների վրա հրավիրելու տեսանկյունից:

**Բանալի բառեր՝** կոտորածներ, ջարդեր, հայեր, բացիկներ, «Շոկոլատրեդի դ'Էգեբել» («Chocolaterie d'Aiguebelle»), Օսմանյան կայսրություն:

**The reflection of the 1895-1896 Armenian massacres in the French “Chocolaterie d'Aiguebelle” company postcards**

*Inessa Stepanyan*

**Summary**

This article refers to the issue of 12 advertisement postcards devoted to the Armenian massacres of 1895-1896 by the French Company "Chocolaterie d'Aiguebelle" in 1896. It was titled "Massacres d'Arménie". The postcards, presented in the article, depict the Armenian massacres in Trabzond (1895), Malatia (1895), Arabkir (1895), Kyurin (1895), the Galatha district in Constantinople (1896) and the murder of the Franciscan priest father Salvatore. Such an approach helped to draw the attention of Europe to the massacres of Armenians.

**Keywords:** Armenians, massacre, postcards, Ottoman Empire, "Chocolaterie d'Aiguebelle".

**Отражение сцен массовых истреблений западных армян 1895-96 гг.  
в открытках французской компании “Chocolaterie d’aiguebelle”**

*Инецца Степанян*

**Резюме**

Статья посвящена выпуску 12 рекламных вкладышей-карточек, отражающих резню армян 1895-1896гг. в Османской империи, которые были изданы в 1896г. французской компанией "Chocolaterie d'Aiguebelle". Серия назвалась "Резня армян". На карточках, представленных в статье, отображены погромы армян Трапизона (1895), Малатии (1895), Арабкира (1895), Кюрина (1895), квартала Галаты в Константинополе (1896), а также убийство францисканского священника падре Сальваторе (1895). Выпуск карточек способствовал привлечению внимания Европы к истреблению армян.

**Ключевые слова:** резня, истребление армян, Османская империя, карточки, "Chocolaterie d'Aiguebelle".

## Հեղինակների մասին

**Հայկ Գեմոյան,** պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար: Տասներկու մենագրության հեղինակ է: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության պատմություն, Ղարաբաղյան հիմնահարց, Թուրքիայի քաղաքականությունը հետխորհրդային տարածքում:

**Սեդա Պարսամյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Զբաղվում է մշակութային ցեղասպանության, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

**Ռոբերտ Թաթոյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության զոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի վարիչ: Զբաղվում է արևմտահայության ժողովրդագրության հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

**Անի Ոսկանյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Ուսումնասիրության թեման է «Օսմանյան բանակը և հայ զինվորականությունը»:

**Գևորգ Վարդանյան,** պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ: «Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923թթ.)», Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012.- 196 էջ/ մենագրության հեղինակ: Զբաղվում է Հայոց ցեղասպանության հարակից զոհերի կոտորածների պատմության և ցեղասպանության ժխտման ուսումնասիրությամբ:

**Գոհար Խանումյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Ուսումնասիրության թեման է «Որբահավաք աշխատանքներն Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության տարիներին»:

**Լուսինե Աբրահամյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ էքսկուրսավար: Զբաղվում է «Հայերի օգտին մարդասիրական օգնություն ցուցաբերելու մեթոդների և եղանակների կիրառումը պետությունների և կազմակերպությունների կողմից 1894-1930թթ.» թեմայի ուսումնասիրությամբ:

**Հայկ Մարտիրոսյան,** զբաղվում է Օսմանյան կայսրությունում գերմանական միսիոներական գործունեության, մասնավորապես «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության» գործունեության հետազոտությամբ:

**Սուրեն Մանուկյան,** պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: 2012-2013թթ. Ֆուլբրայթ հետազոտական ծրագրի կրթաթոշակառու: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության սոցիալ-հոգեբանական ասպեկտը և համեմատական ցեղասպանագիտություն:

**Հասմիկ Գրիգորյան,** ՀՅԺԻ թանգարանային, գրադարանային, արխիվային ֆոնդերի բաժնի վարիչ-գլխավոր ֆոնդապահ: Ուսումնասիրությունների ոլորտը՝ հայոց ցեղասպանության ազգաբանական և մշակութաբանական ասպեկտները սոցիոլոգիա և սոցիալ-հոգեբանություն:

**Էդիտա Գզոյան**, պատմական գիտությունների թեկնածու, իրավունքի մագիստրանտ: ՀՅԹԻ ավագ գիտաշխատող: Հեղինակել է «Հայաստանի Առաջին Հանրապետությունն ու Ազգերի Լիգան» (Երևան, «Գիտություն» հրատ., 2013, 218 էջ) մենագրությունը:

**Խաչատուր Կոբեկյան**, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: Զբաղվում է ցեղասպանության թանգարանների կազմավորման և դրանց մշտական ցուցադրությունների առանձնահատկությունների ուսումնասիրությամբ:

**Սոնա Հակոբյան**, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Լեզվաբանության և հաղորդակցման տեսության» ամբիոնի հայցորդ, Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն մասնագիտությամբ:

**Մելիսե Անումյան**, պատմական գիտությունների թեկնածու, «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամի թուրքերեն բաժնի պատասխանատու, երկու մենագրության հեղինակ:

**Ինեսա Ստեփանյան**, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվների պատասխանատու:



Տպագրությունը՝ օֆսեթ:  
Թուղթը՝ օֆսեթ:  
Տպաքանակը՝ 300

ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԿՈԼԼԱԺ» ՏՊԱԳՐԱՏԱՆԸ  
Երևան, Սարյան 4  
Հեռ.՝ (374 10) 52 02 17  
Էլ. փոստ՝ [collageltd@gmail.com](mailto:collageltd@gmail.com)  
[www.collage.am](http://www.collage.am)